Ս. ՎՐԱՑԵԱՆ

ԿԵՆԱՆՔԻ ՈՒՂԻՆԵՐՈՎ

ԼԵՌՔԵՐ
ԼԵՄՔԵՐ
ՎՊՐՈՒՄՆԵՐ

Գ. ՀԱՏՈՐ

ԳԻՐՈՒԹ
1963

ARAM webaram.com

ARAM webaram.com

Ս. ՎՐԱՑԵԱՆ

ԿԵԱՆՔԻ ՈՒՐԻՆԵՐՈՎ

ՊԷՊՔԵՐ
ՊԷՄՔԵՐ
ԱՊՐՈՒՄՆԵՐ

Գ· ՀԱՏՈՐ

ՏՊԱՐԱՆ ՄՇԱԿ
ՊԷՅՐՈՒԹ
1963

ARAM webaram.com

ARAM webaram.com

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Ինձ թւում էր, թէ պարապ վախտի խաղալիք էր «կեանքի ուղիներով»ը, բայց ընթերցողները այդպէս չընդունեցին. ճնճղատները ճոյնիսկ գրական բաներ կարծեցին գտնել մէջը:

Առաջին հատորը վաղուց անգտանելի է: Երկրորդը՝ սպառուելու վրայ: Քաջալերուած այդ իրողութիւնից՝ հեղինակը լոյս է ընծայում ահա նաեւ երրորդ հատորը՝ սպառնալով շարունակել աւելին:

Այս՝ երրորդ հատորն էլ կազմուած է միեւնոյն ծրագրով եւ նոյն ձեւով ինչ որ երկրորդը: Իմ օրերի պատմութիւնն է՝ այն սահմաններում եւ այնպէս, ինչպէս ես եմ տեսել ու զգացել եւ ապրել ի հարկէ: Կարելի է ասել՝ իմ պատմութիւնը:

Այս հատորն եւս բաղկացած է երկու բաժնից: Առաջին բաժնում յուշեր են, 1914 թուականի աշունից սկսած մինչեւ 1917 թ.: Երկրորդում տրուած են առանձին դէմքերի եւ դէպքերի պատմուածքներ՝ դարձեալ յուշերի ձեւով: Ոմանց ի թերահաւատից կարող է թուալ, թէ այս վերջիններն մանաւանդ, գրական մտայղացում են: Ո՛չ, իրապէս պատահած բաներ են:

Ինձ ասում են՝ ինչո՞ւ չես խոբանում նիւթի մէջ, ինչո՞ւ դէպքերի եւ երեւոյթների վերլուծումով չես զբաղւում: Ուզում են ասել՝ չեմ փիլիսոփայում:

Նախ՝ որովհետեւ ես չեմ սիրում շատ իմաստուն բաներ, ոչ էլ իմաստակ մարդկանց, ընդհանրապէս, ես զուրկ եմ փիլիսոփայելու կարողութիւնից: Այդ շնորհը հանճարներին է վերապահուած:

Երկրորդ՝ ինձ աւելի հետաքրքրում է առարկայական ճշմար-

ARAM webaram.com

տութիւնը· հարազատօրէն արձանագրել փաստերը եւ իրողութիւնները, որքան հնար է, sine ira et studio:

Ի հարկ է, այս տեսակ գործերի մէջ բացարձակ առարկայականութիւն կարելի չէ երեւակայել, մանաւանդ, երբ հեղինակը իմն էլ դերակատար է: Ես էլ, հաւանաբար, չեմ եղել միշտ անաչառական եւ, այսպէս ասած, դիրքորոշուել եմ դէպքերի եւ դէմքերի հանդէպ, բայց ճշմարտութեան եւ գնահատութեան գլխաւոր դերը վերապահուած է բանիմաց ընթերցողին: Ընթերցողն է, վերջին հաշուով, գերագոյն դատաւորը: Գիտակից ընթերցողին է վերապահուած վճռական խօսքը՝ դատելու, թէ՛ հեղինակի ներկայացրած նիւթը եւ թէ՛ հեղինակին իրեն:

Իւրին բան չէ կեանքի փոքրկայոյզ շրջանների ընկերային երեւոյթների եւ դէպքերի պատմական յարակցութիւնն ու օրինակաւորութիւնը որոշել: Դրա համար անհրաժեշտ է որոշ ժամանակ եւ որոշ տարածութիւն: Միայն մարքսիստի համար ամէն բան պարզ է ու յստակ: Մարքսը իր այսինչ գրկի այսինչ էջում այսպէս է ասել· Լենինը այսինչ ճառում կամ այսինչ գրքում այսպէս է պատգամել· ամենազօր դիալեկտիկան այս է հրահանգում: Հետեւաբար··· մարդիկ մեթոտ ունեն, եւ գիտութեան բոլոր դռների բանալին իրենց ձեռքին է, փոյթ չէ, թէ, յանախ, ոչ դուռ ունին, ոչ բանալի:

Մեզ համար «վարդապետը ասաց»ի փիլիսոփայութիւն գոյութիւն չունի: Վարդապետի խօսքի ոյժը, անշուշտ, մեծ է, բայց ոչ ամենազօր: կեանքի հոլովոյթը իր օրինաչափութիւնն ու տրամաբանութիւնը ունի, որ չի չափւում միայն «վարդապետ»ի կանգունով եւ հանրապարտադիր չէ ամէն ժամանակի եւ բոլոր պայմանների համար: Հեղինակի պարտականութիւնն է ներկայացնել իր նկարագրած ժամանակաշրջանի նշգրիտ պատկերը՝ ազատութիւն տալով ընթերցողին ճանել ու դատել եւ ձիշդ եզրակացութիւնների յանգել:

Այս հատորի առանցքը կարելի է նկատել հայ կամաւորական շարժումը, 1914–16 թուականներին, հայոց նորագոյն պատմութեան ամենանշանակալից երեւոյթներից մէկը:

Հայ կամաւորական շարժման պատմութիւնը չէ գրուած եւ յոյս չկայ, որ գրուի էլ երբեւիցէ լրիւ ու հարազատ: Հայոց Ազգային Բիւրոյի եւ Հայ Կամաւորական Խումբերի Կարգադրիչ Մարմնի ու կամաւորական առանձին խումբերի դիւանական թղթերն, եթէ չեն փչացած, բոլշեւիկների ձեռքին են: Մինչեւ այժմ, բոլշեւիկ պատմագրութիւնը կամաւորական շարժման վերաբերող որեւէ նիւթ երե-

ARAM webaram.com

ւան չի հանել նոյն իսկ բարոզչական նպատակներով:

Ազգային Բիւրոյի եւ Հայ Կամաւորական խումբերի կարգադրիչ Մարմնի «դիւանները»ը մնացել էին Թիֆլիսում. Հայաստան չէին փոխադրուած: Թիֆլիսում էին մնացել եւ թուրքահայոց կոտորածներին եւ կորուստներին վերաբերուող հարուստ նիւթերը, որոնք հաւաքւում էին յատուկ յանձնախումբի միջոցով Ցովհ. Թումանեանի նախագահութեամբ եւ արեւելահայ ու արեւմտահայ մտաւորականների մասնակցութեամբ, ինչպէս Տիգրան Ցովհաննիսեան, Զապէլ Եսայեան եւ ուրիշներ: Ցաւալի է, երբ այդ թանկագին եւ անկրկնելի նիւթերն եւս ոչնչացրել են «ամբոխները խելագարուած»:

Եւ միա՞յն «ամբոխները». բոլշեւիկեան իշխանութիւնը ինքն էլ վագոններով դիւանական թղթեր էր ուղարկում Թաւրիզ, ծախելու համար պարսիկ նպարավաճառներին, որպէսզի պանիր կամ չամիչ փաթաթեն մէջը: — Հայաստանի եւ հայ ժողովրդի պատմութեան վերաբերեալ անգնահատելի նիւթեր:

Բայց երանի թէ միայն պանիր փաթաթէին: Հայ բոլշեւիկները ինչե՛ր չփաթաթեցին... Սկսելով ուրացումով ու մերժումով ամէն բան, որ ազգային է, զուտ հայկական, գաղափարապէս ու նիւթապէս բնաջնջելով ազգային ամէն արժէք՝ հիմա ուզում են հաւատացնել, թէ հայոց ազգը իրենք են, Հայկ Նահապետից սկսած մինչեւ ընկեր Մացակ ու Սիսակ իրենցն է հայոց պատմութիւնը: Եւ հասան մինչեւ այնպիսի ցնդաբանութեան, որ Սարդարապատն ու Բաշ Աբարանը, Մայիս 28ն էլ իրենք են կերտել՝ վաղը, երեւի, հաւատացնելու համար, որ Երեւանի բանտում կացինահարուած դաշնակցականները իրենք են կացինահարել իրենց... Եւ, անշուշտ, հաւատացողներ էլ կը գտնուին: Հիւլէական այս զարմանալի դարում ամէն բան հնարաւոր է եւ... ներելի:

Այս հատորը գրուած չէ հիւլէական դարի փիլիսոփայութեան բարոյականով ու ոգիով: Մենք՝ անուղղայ «յետադիմականներս տուրք ենք տալիս խաւարամտութեան: Այսինքն՝ արձանագրում ենք հարազատօրէն ինչ որ եղել է, ինչպէս որ եղել է, ինչ որ տեսել, զգացել եւ ապրել ենք նախահիւլէական դարաշրջանում, երբ մարդ դեռ նկատում էր մարդ եւ ոչ ընկերային արտերի պարարտացման աղբ, երբ սրբազան գաղափարները իմաստ էին եւ չէին պղծուած սուտով, կեղծիքով, խաբեբայութեամբ, երբ միայն բիրտ ոյժը չէր մարդկանց փոխյարաբերութիւնները ճշդող, ինչպէս վայրենի գազանների աշխարհում, այլ ի զօրու էին եւ բարոյական ազդակները,

ARAM webaram.com

երբ, մի խօսքով, մարդ դեռ ասուն էր համարւում եւ ոչ անասուն կամ մեքենայ. մարդկայնութեան չափանիշները տարբեր էին: Եւ, բնականաբար, հիւլէական գաղափարներով ու բարոյականութեամբ սնուած մարդիկ, իրաւամբ, մեզ կարող են համարել խաւարամիտ, չետադիմական, զգացական ու ռոմանտիկ, որովհետեւ չեն ըմբռնում եւ չեն շարժւում ժամանակի փիլիսոփայութեան համաձայն:

Փոյթ չէ: Ժամանակի փիլիսոփայութիւնն էլ պէտք է հաստատուած լինի յաւիտենական, հանրապարտադիր սկզբունքների վրայ, որոնց հիմքը մարդն է, իրրեւ գիտակից եւ բարոյական անհատականութիւն: Կայ կեանքի յաւիտենական փիլիսոփայութիւն, որ ասում է.— *Լաւ է խեղդուել գուլալ ջրերի մէջ, քան թէ ամբողջ կեանքում թաւալուել տիղմում:*

Ս. ՎՐԱՑԵԱՆ

Մայիս 28, 1961
Պէյրութ

ARAM webaram.com

ԹԻՖԼԻՍՈՒՄ 1914-ԻՆ

Ձիշտ օրը չեմ յիշում, Օգոստոսի վերջն էր, կարծեմ, 1914ին։ Արեւոտ առաւօտ էր, երբ ես կարինից հասայ Թիֆլիս։

Յաջորդ օրն իսկ մօտս եկան Անդրանիկը, Դրօն եւ Համազասպը, Ընդհ. Ժողովի եւ հետագայ դէպքերի մասին տեղեկութիւններ առնելու համար։ Ընդհ. Ժողովի մասին արդէն գիտութիւն ունէին Գէորգ Ղազարեանը եւ Համազասպը, բայց ըստ երեւոյթին, ընկերները բաւարարուած չէին եւ ուզում էին նոր լուսաբանութիւններ ունենալ, մանաւորապէս պատերազմի հետ կապուած հարցերի մասին, որոնց շուրջ Համազասպի եւ Գ. Ղազարեանի հաղորդած տեղեկութիւնները այնքան էլ յստակ չէին. այսպէս, Համազասպը ասել էր, թէ Ընդհ. Ժողովը դրական վերաբերում ունէր դէպի կամաւորական շարժումը, իսկ Ղազարեանը հակառակն էր յայտնել։

Հասկանալի է, որ այս հակասութիւնը հետեւանք էր այն բանի, որ Համազասպը բուռն կողմնակիցն էր կամաւորական շարժման եւ արդէն իսկ գործի էր ձեռնարկել, իսկ Ղազարեանը վերապահ դիրք ունէր։

Ես տուի գուսպ, փաստացի լուսաբանութիւնները, որ կամաւորական հարցը Ընդհ. Ժողովի օրակարգի առարկայ չի եղել, որ միայն պատերազմի ընդհանուր հարցի քննութեան առընչութեամբ, մի քանի ընկերներ անդրադարձել են կուսակցութեան հետեւելիք քաղաքականութեան ռուս-թրքական պատերազմի դէպքում։ Այսպէս, Ռուբէն Տէր Մինասեանը, Տարօնի ներկայացուցիչ, առաջարկեց կամաւորական խումբեր կազմել թուրք բանակի կողքին ռուսների դէմ, բայց միտքը այնքան տարօրինակ թուաց, որ նոյնիսկ քուէարկութեան չդրուեց։ Ընդհ. Ժողովը կամաւորական հարցով չզբաղուեց, այլ

ARAM webaram.com

յանձնեց 9 հոգինոց քաղաքական յանձնախումբի անօրինութեան:

Ընդհ. Ժողովը վերջացած էր, երբ Կարին եկան Իթթիհատի ներկայացուցիչները Նալչի բէյը եւ Բէհաէդդին Շաքիրը մի խումբ կովկասցի մահմեդականների եւ պարսիկ յեղափոխականների հետ: Իթթիհատի ներկայացուցիչները եկել էին բանակցելու Հ. Յ. Դ. Ընդհ. Ժողովի հետ, բայց որովհետեւ Ժողովը փակուած էր, բանակցութիւնների մէջ մտան Հ. Յ. Դ. Հայաստանի Բիւրոյի ներկայացուցիչների՝ Ռոստոմի ու Վռամեանի եւ քաղաքական յանձնախումբի անդամներից մի քանիսի հետ: Բանակցութիւնները տեւեցին մի քանի օր եւ դրական հետեւանք չունեցան: Իթթիհատի ներկայա-



Հ. Յ. Դ. 8ՐԴ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԸ ԿԱՐԻՆՈՒՄ

ցուցիչները առաջարկում եւ պահանջում էին, որ Հ. Յ. Դաշնակցութիւնը, պատերազմի դէպքում, Կովկասեան բանակի թիկունքում ապստամբութիւններ կազմակերպէ կովկասեան մուս ժողովուրդների հետ միասին: Փոխարէնը, յաղթութեան պարագային, խոստանում էին ստեղծել ինքնավար Հայաստան, Թուրքիայի հովանաւորութեան ներքեւ: Դաշնակցութեան ներկայացուցիչները աշխատում էին համոզել, որ Թուրքիան պատերազմի չմասնակցի, մնայ չէզոք, որ Թուրքերի վարած հակահայ քաղաքականութեան հետեւանքով հնարաւոր չէ Կովկասում առաջ բերել որեւէ ձեւի շարժում ի նպաստ Թուրքիայի, որ պատերազմի դէպքում, Հայ ժողովուրդը կը մնայ

ARAM webaram.com

օրինապահ եւ կը կատարէ իր քաղաքացիական բոլոր պարտականութիւնները: Այսքանը, սակայն, Թուրքերին չէր գոհացնում, եւ բանակցութիւնները վերջացան առանց որոշ արդիւնքի:

Իմ հաղորդած տեղեկութիւնները ակնյայտնի կերպով հաճոյք չպատճառեցին ընկերներին: Համազասպը, որ մասնակցել էր Ընդհ. Ժողովին, ասել էր, թէ Ժողովը զրական վերաբերում էր ցոյց տուել կամաւորական շարժման հանդէպ, հիասթափուեց, ու դժգոհ մնաց, որ ես չհաստատեցի իր ասածը: Անդրանիկը եւ Դրօն ուզում էին որոշ եւ վճռական տեսակէտ լսել, որ ես չէի կարող տալ: Եւ, իսկապէս, անբնական եւ ցաւալի կացութիւն էր ստեղծուել. Ընդհ. Ժողովը չէր կարողացել եւ չէր կարող զրական կամ բացասական բանաձեւ ընդունել կամաւորական հարցի մասին եւ լուծումը թողել էր յաւուկ յանձնախումբին, որ ի վիճակի չեղաւ հաւաքուել եւ քննել հարցը: Միւս կողմից, կամաւորական տարերային շարժում էր սկսուել հանրային կարծիքի ճնշման եւ ուռ բանակի հրամանատարութեան ներշնչման տակ, խմբապետներ էին կանչուել Թիֆլիս, բայց որեւէ իրաւասու մարմնի կողմից որոշում չէր տրուած: Հ. Յ. Դաշնակցութեան Բիւրօն կովկասեան մարմինների ոյժոնական ժողով էր հրաւիրել Սեպտեմբերի վերջերը, բայց վաստօրէն արդէն սկսուել էր կամաւորական խումբերի պատրաստութիւնը:

Համազասպը, որ առանձնապէս խանդավառուած էր կամաւորական գործով, գժգոհ էր, որ անհարկի կերպով ձգձգւում էր խնդիրը. հասո ու բարակը փնտռելու ժամանակը չէր: Հրապարակ էին եկել զանազան բախտախնդիրներ, ինչպէս երաժիշտ Գրիգոր Սիւնին, որոնք Շիրակի եւ Կարսի շրջանում արդէն ձեռնարկել էին կամաւորների արձանագրութեան:

Դրօն եւս այն կարծիքի էր, որ պատմական անհրաժեշտութիւն է կամաւորական շարժումը, եւ Դաշնակցութիւնը առանց ուշացումի, պէտք է իր վրայ առնէ այդ շարժման ղեկավարութիւնը:

Ինձ աւելի հետաքրքրական էր Անդրանիկի կարծիքը: Նա ամբողջ ժամանակ լուռ լսում էր եւ միայն մերթ ընդ մերթ ուժով սեղմում էր իր վարդի բեխերը, որ, ինչպէս վերջը հասկացայ, խիստ ջղայնութեան նշան էր:

— Ինչո՞ւ ես լուռ, Անդրանիկ, դո՞ւ ինչու չես խօսում, ասաց Համազասպը՝ նոյնպէս ջղայնացած:

— Ի՞նչ կ'ուզես, որ խօսիմ, պատասխանեց Անդրանիկը, հոն ալ, հոս ալ վարժապետներ են... Աւիկա վարժապետներու գործ չէ... Ես չեմ հասկնար, ինչ կ'ըլլայ: Հեռագիր առէ, թէ անմիջապէս եկուր


ARAM webaram.com

Հայր Աբրահամի մօտ։ Եկայ, բայց... չեմ հասկնար, ինչ կ'ըլլայ։

Իսկապէս ես ալ շատ բան չհասկցայ։ Մի քանի օրից պիտի գումարուէր խորհրդակցական մի ժողով կամաւորական հարցի մասին, որին ներկայ պիտի լինէի եւ ես, իսկ մինչ այդ աշխատեցի ծանօթանալ ընդհանուր կացութեան։

Յաջորդ առաւօտ գնացի «Հորիզոն» օրաթերթի խմբագրատուն, մեր Կովկասեան անպաշտօն թերթը, որ սեփականութիւնն էր մխիթարեանէր Համբարձում Մելիքեանի։

Ուշադրաւ մարդ էր Համբարձում Սերգկյեւիչ Մելիքեանը թէ՛ արտաքինով, թէ՛ ընկերային դիրքով եւ թէ՛ հասարակական դերով։



ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄԵԼԻՔԵԱՆ

Բարձրահասակ, աղպղպեղ մազերով ու մօրուքով, բարեսիրտ, լեզուանի՝ ուր եւ լինէր աչքի կ'ընկնէր հասարակութեան մէջ։ Նախկին հնչակեան, Բաքուում նաւթային գործերով մեծ հարստութեան տէր դարձած՝ հեռացել էր հնչակեաններից եւ դարձել էր հասարակական գործիչ, որպէս անկուսակցական։ Թիֆլիս փոխադրուելով՝ մտել էր այստեղի հասարակական կեանքի մէջ, իբրեւ համակիր դաշնակցական։ Սիրում էր բարեկամութիւն անել մտաւորականների եւ արուեստագէտների հետ։ Իր զաւակներին տուել էր հայկական կրթութիւն։ Ներանցից մէկը՝ Սուրէնը, Ֆրանսայում կրթութիւն ստացած՝ մտաւ կամաւորական խմբերի մէջ, դարձաւ Հայաստանի Հանրապետութեան բանակի սպայ, իբրեւ վարչապետի համհարզ։ Յ. Քաջազնունիի առաքելութեան հետ գնաց Ամերիկա եւ, խորհրդայնացումից յետոյ, վայրապօրէն ապաստանեց բոլշեւիկների կողմից։

Երբ 1908ին, ցարական հալածանքների հետեւանքով, Կովկասի դաշնակցական մտաւորականութեան մեծ մասը բանտարկուեց, կամ անցաւ արտասահման, «Հորիզոն» օրաթերթը, որ Աբեւելեան Բիւրոյի

ARAM webaram.com

պաշտօնաթերթին էր, կարելի է ասել, մնաց անտէր: Համբ. Մելիք-եանը առաջարկեց, իրեն յանձնել թերթը՝ պայմանով, որ խմբագիրը նշանակուի կուսակցութեան հաւանութեամբ, թերթը հետեւի կուսակցութեան ուղղութեան եւ ելքի ու մուտքի պատասխանատուն ինքը լինի, իբրեւ սեփականատէր: Կուսակցութիւնը համաձայնուեց, եւ «Հորիզոն» կարճ ժամանակում ապահովուեց եւ բարգաւաճեց:

Ես ծանօթ էի Թիֆլիսի մեր օրաթերթի նախկին խմբագրատան, որ շատ էլ փայլուն չէր, այժմ էլ սպասում էի նման մի բան տեսնել, բայց անչափ եղաւ զարմանքս եւ հիացումս, երբ տեսայ ամերիկեան ձեւով կազմակերպուած օրինակելի մի խմբագրատուն:



ՍՈՒՐԷՆ ՄԵԼԻՔԵԱՆ


«Հորիզոն»ը գտնւում էր քաղաքի կենտրոնում, Սոլոլակ փողոցում, Երեւանեան հրապարակի բերանը, քաղաքապետարանի մօտ եւ դրաւում էր մի մեծ չէնքի ամբողջ երկրորդ յարկը: Խմբագրատունը բաղկացած էր մի մեծ վարչական սրահից, Պր. Մելիքեանի գրասենեակից, երեք խմբագիրների եւ քարտուղարների սենեակներից եւայլն. բոլորը լաւ կահաւորուած եւ մաքուր: Վարչական սրահում տիրում էր կենդանութիւն. միւս սենեակների դռները փակ էին: Ինձ ընդունեց Պր. Մելիքեանը իր գրասենեակում, հիւրասիրեց մի բաժակ թէյով եւ տարաւ ցոյց տալու խմբագրատունը: Վարչութեան կազմն էր մեր ընկերներից Բաթումի հայոց դպրոցի նախկին աւագ ուսուցիչ Սիմոն Մկրտիչեանը եւ մի քանի աղջիկներ ու տղաներ, որոնք պատկառանքով ոտքի ելան Մելիքեանի առջեւ:

Խմբագրութեան քարտուղար եւ համարը կազմող ու ձեռագիրների սրբագրիչ էր վիպասան Նար Դոսը՝ լուրջ դէմքով, անժպիտ,

ARAM webaram.com

կարծես ամբողջ աշխարհի հոգսը ուսերին էին բեռցրել:

Գէորգեան ճեմարանում, եկեղեցական կալուածների դրաւման օրերին, մենք կազմել էինք հայախօսական ընկերութիւն ճեմարանցիներից եւ վաղարշապատցի ուսանողներից եւ դիմնազիստականներից բաղկացած. ամէն մի ուսերէն բառ գործածողը պէտք է վճարէր մէկ կոպէկ տուգանք: Այդպիսով դոյացել էր 25–30 ռուբլի, որով հրատարակեցինք Նար Դոսի մէկ փոքրիկ պատմուածքը հեղինակի արտօնութեամբ: Երբ Նար Դոսին յիշեցրի այս դէպքը, ուզեց մի բան ասել, բայց միայն շրթունքները շարժեց այնպիսի արտայայտութեամբ, որ կարելի էր հասկանալ՝ շատ ուրախ եմ, բայց եւ կարելի էր հասկանալ՝ ի՞նչ ես գահլա տանում...:



ՆԱՐ ԴՈՍ

Նար Դոսի սենեակում, առանձին սեղանի վրայ, աշխատում էր երկար մօրուքով, կարճահասակ, կանացի տեսքով մի պարոն՝ Տիգրան Փիլոմեան, վրացերէնի թարգմանիչը:

Վերջը ես բարեկամացայ այս լռակեաց ու խորհրդաւոր մարդու հետ, որ 80ական թուականներին երկիր դնացող առաքեալներից էր եւ իր հետաքրքրական յուշերը հրատարակեց «Հորիզոն»ում:

Կողքի սենեակում, դլուխը կախ աշխատում էր Նիկոլ Աղբալեանը, որի հետ ես լաւ ծանօթ էի: Իսկ սրան կից սենեակում, սեղանի վրայ անկարդ դիզուած թղթերի մէջ թաղուած էր դէրվիշի կերպարանքով, սեւ, երկար եւ չսանրուած մազերով սեւ աչքի պէս փայլուն աչքերով մի պարոն:

— Այս էլ մեր Արշակ Ղազարեանն է, ասաց Մելիքեանը, ծանո՞թ էք:

ARAM webaram.com

Ես ծանօթ չէի։ Ծանօթացանք։

Երրորդ եւ ամէն, այսինքն առաջնորդող յօդուածները գրող խմբագիրը Արշակ Ջամալեանն էր, որի հետ ես լաւ ծանօթ էի Գէորգեան Ճեմարանից եւ Վիեննայի Ընդհ. Ժողովից։ Մելիքեանը դուռը բացեց եւ խնդալով ասաց.

— Այստեղ էլ երբեմն կարելի է հանդիպել Գր. Ջամալեանին։ Հիմա ո՞վ է իմանում ուր է։ Տղայ ուղարկեցինք, որ գտնէ եւ խմբագրական բերէ, եթէ միայն գրել է։ Արշակը այդպէս է. մի օրում կարող է տասը խմբագրական գրել, եւ տասը օրում մի խմբագրական կարող է չտալ...



ԱՐՇԱԿ ՋԱՄԱԼԵԱՆ

Երբ խմբագրատան բոլոր մասերը տեսնելուց յետոյ, վերադարձել էինք Մելիքեանի առանձնասենեակը, աղմուկով ներս մտաւ բարձրահասակ, նուրբ կազմով ու ժպտուն դէմքով մի պարոն։

— Ծանօթացէք, Գր. Յովհաննէս Թումանեան, ասաց Մելիքեանը։

Սակայն, ծանօթացընելու պէտք չկար. ո՞ւմ ծանօթ չէր «Շուն ու կատու»ի հեղինակի պատկերը։

Ես յիշեցրի նրան, որ Պետերբուրգում ուսանող եղած միջոցիս, չեմ յիշում ինչ առթիւ, իրենից նամակ էի ստացել, որով խորհուրդ էր տալիս ինձ ձգել ամէն բան եւ նուիրուել գրականութեան։ Բայց ես մտիկ չարի եւ դարձայ դաշնակցական գործիչ։

— Բա, քո տունը չաւերի, էդ հօ իսկի խելօք բան չէ։ Դաշնակցական գործիչ իմ տատս էլ կարող է լինել, բայց գրող...

Նոյն կարծիքի էր եւ Լէօն։

Թումանեանը ինչ-որ մի յօդուած էր բերել «Հորիզոն»ի հա-

ARAM webaram.com

մար, բայց խմբագրութեան յանձնելուց առաջ ուզում էր կարդալ Մելիքեանին: Ես հրաժեշտ տուի ու հեռացայ:

Այդ օրը, մինչեւ ուշ գիշեր անցաւ այցելութիւններով ու տեսակցութիւններով: Երբ կէս գիշերից յետոյ վերադառնում էի տուն, նկատեցի, որ մեր տան մօտ, հատ ծառի ետեւը աչխատում էր պահուել կարճահասակ մի երիտասարդ: Լրտես է, անցաւ մտքովս: Այդպէս ցերեկ ու գիշեր մեզ լրտեսում էին նաեւ կարինում:



ԱՂԵՔՍԱՆԴՐ ԽԱՏԻՍԵԱՆ

Նոյնը պատահեց եւ յաջորդ գիշեր: Այս անգամ կարճահասակ պարոնը անցաւ մօտովս եւ յարգանքով բարեւեց: Այդպէս էին անում եւ թուրք լրտեսները: Կասկած չկար. այս մարդը լրտեսում էր ինձ: Թիֆլիս հասած օրս ես պարտաւոր էի արձանագրուել ոստիկանութեան մօտ, բայց անցագիր չունէի եւ չէի արձանագրուել:

Դրութիւնս պարզեցի Խաչ. կարճիկեանին, որ Ամերիկեան Բիւրոյի անդամ էր եւ կուսակցութեան ներկայացուցիչ արտաքին աշխարհում:

— Ինձ քէօք պահիր, ասաց նա, եւ առաւ հեռախօսը:

Քաղաքապետութիւն Խատիսեանին պարզեց իմ պարագան, եւ Խատիսեանը ժամադրութիւն նշանակեց ինձ ճաշի ժամուն իր տանը:

Որոշուած ժամին ես տուի Խատիսեանի բնակարանի զանգը: Խատիսեանը դեռ չէր եկել: Սպասուհին հրամցրեց ինձ գահլիճ եւ գնաց իր գործին:

Անցաւ կէս ժամ, անցաւ մէկ ժամ, երկու ժամ, — տանը ոչ

ARAM webaram.com

մէկ կենդանի չունէր, ոչ մէկ չարժում։ Սպասուհին միայն մի անգամ ներս մտաւ դանգատուելու.

— Այսպէս է ամէն օր։ Չես իմանում պարոնը ի՞նչ գործի է, տիկինը ո՞ւր է։ Քանի անգամ տաքացնում եմ կերակուրը, բայց վերջը պաղ ճաշ է ուտում։ Սպասեցէք, քանի որ ասել է, կը գայ...

Եւ, իսկապէս, եկաւ ...երեք ժամ ուշ։ Միասին մտանք սեղանատուն։ Չեւի համար հրաւիրեց ճաշի, բայց ես հրաժարուեցի։ Մինչ ինքը ուտում էր, ես պատմեցի իմ գործը։

Եթէ սպասուհու ասածը չափազանցութիւն չէր, պէտք էր զարմանալ, թէ ինչպէ՞ս էր դիմանում այս մարդը։ Առաւօտ նախաճաշ էր արել երկու բաժակ թէյով եւ հաց ու պանիրով եւ մինչեւ ժամը երեք բերանը փչրանք չէր դրել, բացի մի բաժակ թէյից։ Հիմա էլ ահա ի՞նչ էր կերածը, մի աման ապուր, որի մէջ լողում էին գետնախնձորի կտորները, մի քանի կտոր տապակած միս — ժառկոյլ — կողքին մակարոնի՝ նոյնպէս պաղ, իբրեւ անուշ՝ չաքարով խմորեղէն — բլիճիկի, եւ վերջը՝ մի բաժակ թէյ։ Ուտելուց յետոյ, անմիջապէս պիտի երթար գործի։

Երբ ես աւարտեցի իմ պատմութիւնը, սկսեց հարցուփորձ անել կարինի եւ ընդհանուր թուրքիայի գործերի մասին։ Թէյի վերջին ումպը խմելուց յետոյ, իր այցետոմսի վրայ մի քանի բառ գրելով՝ մեկնեց ինձ.

— Կ՚երթաք քաղաքի ոստիկանապետի մօտ, այս այցետոմսը կու տաք, նա կ՚անէ ինչ որ պէտք է։

Արդէն ուշ էր, ես չտապեցի ոստիկանապետի մօտ։

Պէտք է կարէի Գոլովինսկի երկար պողոտան մի ծայրից մինչը, անցնէի Վերայի կամուրջը դէպի Կաենիեւսկայա փողոցը, որի վրայ գտնւում էր ոստիկանապետի մեծ տունը։ Դուռը բաց էր, եւ ներսը, ընդունարանում, մարդ–մարդասան չէր երեւում։ Բախեցի դիմացի դուռը, պատասխանող չեղաւ։ Բաշխեցի դուռը եւ չուարած մնացի բացուած սենեակի առջեւ։

Սենեակի մէջտեղը, յատակին, չորս թաթի վրայ, կեցած էր ոստիկանապետը։ Մէջքին հեծած 3–4 տարեկան մի տղայ, որ աղմուկով, ձեռքով ու ոտքով քշում էր իր նժոյգը։

Սենեակում մէկէն տիրեց լռութիւն։ Զին ու ճիաւորը զարմանքով նայեցին ինձ։ Ոստիկանապետը ոտքի ելաւ դէմքի մի արտայայտութեամբ, որ, կարծես, հիմա կը պայթի զայրոյթից կամ ծիծաղից։ Բայց չպայթեց, այլ հարցրեց.

ARAM webaram.com

— Ինչո՞վ կարող եմ ծառայել ձեզ:

Ես մեկնեցի նրան Յատիսեանի այցեառմսը: Աչք նետեց վրան եւ տղային դուրս հանելով՝ հրաւիրեց նստելու:

Ես ներկայացրի նրան իմ խնդիրը:

— Ուրեմն, ասաց նա մի չեշտով, որ կարող նշանակել կատակ, բայց կարող էր եւ շատ լուրջ լինել, ուրեմն, Պր. Յատիսեանը ուզում է, որ ես փոխանակ բանտ ուղարկելու ձեզ Թուղթ տամ, որ ազատ քէֆ անէք քաղաքում: Հապա եթէ այդ պատճառով ուզեն ինձ բանտ նստեցնել, ո՞վ ինձ Թուղթ պիտի տայ:

Ես խոհեմութեամբ, չպատասխանեցի:

— Զարմանալի բաներ են տեղի ունենում այս աշխարհում, չարունակեց նա, տարօրինակ բաներ... դուք չէ՞ք զարմանում:

Նա նորից աչք նետեց Յատիսեանի այցեառմսի վրայ եւ ասաց.

— Գիտէ՞ք ինչ, սիրելիս. դուք ինձ չէք ներկայացել. ես ձեզ չեմ տեսել: Ատուած ձեզ հետ, գնացէք ապրեցէք ուր եւ ինչպէս ուզում էք: Աշխատեցէք մեր ձեռքը չընկնել, իսկ եթէ ընկնէք, վերջը կը նայենք: Գնացէք, այդպէս էլ ասացէք Ալեքսանդր Իվանովիչին:

Այդպէս էլ արի: Շուտով յայտարարուեց դաշնակցականների ընդհանուր ներում, եւ ես այլեւս պէտք չունեցայ ոստիկանապետի թղթի:

Հետաքրքրական է եւ չարունակութիւնը:

Երբ ես ոստիկանապետի մօտից վերադարձայ տուն, մեր դրան առջեւը, ցախաւելը ձեռքին, կանգնած էր դիշերուայ «լրտես»ը, որ յարգանքով բարեւեց ինձ ժպտալով.

— Բարի երեկոյ, աղա ջան:

— Ապա, դու ո՞վ ես ,հարցրի ես զարմացած:

— Ես էս տան դվոռնիխն (դռնապան) եմ, աղա ջան:

Հարցուփորձից պարզուեց, որ Յնուսցի էր, անունը Յէչօ, մի քանի տարի է դռնապանութիւն էր անում այս տան մէջ: Իմացել էր, որ «աղա»ն երկրէն էր եկած, դիշերները հսկում էր դուրսը մինչեւ իմ տուն դալը, որպէսզի մի բան չպատահէր...

Յէչոյի հետ մենք վերջը լաւ բարեկամներ դարձանք:

Մի քանի օրից, յետոյ, ես ներկայ եղայ Արեւելեան Բիւրոյի նիստին: Իսկապէս, Ընդհ. ժողովի որոշումով Արեւելեան եւ Արեւմտեան Բիւրոների դրութիւնը ջնջուած էր, ստեղծուած էր Հայաստանի Բիւրօ՝ Պոլսի ու Կովկասի հատուածներով, բայց Կովկասում Արեւելեան Բիւրոյի անունը մնացել էր:

ARAM webaram.com

Նիստը նշանակուած էր Պաչ. Կարճիկեանի տանը: Ըստ սովորութեան, առաջ ընթրիք, ապա՝ ժողով: Ներկայ էին մօտ 15 հոգի, Բիւրոյի անդամներ եւ խորհրդակցական ձայնով ընկերներ, որոնցից յիշում եմ Պաչ. Կարճիկեանին, Արշակ Ջամալեանին, Աւ. Սահակեանին (Հայր Աբրահամ), բժ. Ց. Տէր Դաւթեանին, Արշ. Թադէոսեանին, Ցուվս. Արղութեանին, Ն. Աղբալեանին, բժ. Ց. Զաւըրեանին, Աւ. Շահխաթունեանին, Գ. Ղազարեանին:

Ժողովը լսեց իմ զեկուցումը Ընդհ. Ժողովի եւ Ժողովից յետոյ կարինում պատահած դէպքերի մասին եւ բազմաթիւ հարցեր տրուեցին: Առհասարակ, իմ հաղորդած տեղեկութիւնները ճնշիչ տպաւորութիւն գործեցին ժողովականների վրայ: Իմ զեկուցումը պաղ ջուր լցրեց ընկերների մէջ տիրող լաւատես տրամադրութեան վրայ:

Նոյն ժողովում կարդացուեցին Ջրաբերդի (Կարս) եւ Քարի (Ալեքսանդրապոլ) կենտ. կոմիտէների նամակները, որոնք հաղորդում էին իրենց շրջաններում տիրող խանդավառութեան մասին՝ արտայայտուելով կամաւորական խումբերի կազմութեան ի նպաստ:

Կարճիկեանը տեղեկութիւններ տուեց կուսակցութեան ընդհանուր վիճակի մասին: Լըժինի գործած աւերը անցել էր. ամէն տեղ կուսակցութիւնը վերակազմութեան եւ բուռն վերելքի շրջան էր ապրում: Ամէն վերջը պիտի գումարուէր ռայոնական ժողով, որ պիտի որոշէր նաեւ կուսակցութեան բռնելիք դիրքը կամաւորական հարցում: Պոլսից Վան էր անցել Կոմսը: Սպասւում էր Արմէն Գարօն, որ պիտի երթար Կարին: Վանից սպասւում էին Ց. Քալայճունին եւ Դաշնակցական Պէչօն:

Ժողովը որեւէ որոշում չտուեց, աւելի տեղեկատու բնոյթ ունէր:


Շուտով Վանից եկան Քալայճունին եւ Պէչօն: Առաջինը խիստ հակառակ էր կամաւորական շարժման եւ պնդում էր, թէ Վասպուրականի բոլոր ընկերները հակառակ էին կամաւորական խումբերի կազմութեան, իսկ Պէչօն համամիտ չէր Քալայճունին:

Քալայճունին եւ Պէչօն զեկուցում տուին Ազգային Բիւրոյում, որին ես էլ հրաւիրուած էի ներկայ լինելու:

Ազգային Բիւրօն կեանքի կոչուած էր Պօղոս Նուպարի պատուիրակութեան օժանդակելու համար հայկական հարցի պաշտպանութեան գործում: Կաթողիկոսը յատուկ կոնդակով օրհնել էր նրա կազմութիւնը: Անկուսակցական բնոյթ ունէր: Նախագահն էր Վրաստանի թեմի առաջնորդ Մեսրոպ Եպ. Մադիատրոսը, փոխ-նախագահ-

ARAM webaram.com

ներ էին Թիֆլիսի քաղաքագլուխ Ա. Խատիսեանը եւ Ներսէսեան դըպրոցի տեսուչ Յովսէփ Խունունցը: Անդամներն էին Յով. Թումանեան, Սամ. Յարութիւնեան, Լէօ, փաստաբան Սպենդիարեան, քժ. Կ. Ստեփանեան, Հ. Առաքելեան (որ վերջը դուրս եկաւ), Ն. Աղբալեան, Խաչ. Կարճիկեան, փաստաբաններ Յովս. Ամիրխանեան, Աղ. Գոպովեան, վաճառականներ Աֆրիկեան, Հ. Մելիքեան, Սեր. Կիւլպէնկեան եւ ուրիշներ — հասարակական բոլոր խաւերի եւ հոսանքների ներկայացուցիչներ:



ՅՈՎՀԱՆՆԷՍ ՔԱՋԱԶՆՈՒՆԻ

Մինչեւ 1914 թ. ամառը Ազգ. Բիւրօն զբաղուած էր բացառապէս հայկական հարցով: Համաշխարհային պատերազմի ընկերվին նա իր վրայ առաւ եւ համաւորական խումբերի կազմութեան գործը:

Ազգ. Բիւրօն տեղաւորուած էր մէկ յարկանի ընդարձակ շէնքում, Լերմոնտովսկայա փողոցի վրայ, թիւ 12:

Ժողովում, որին առաջին անգամ մասնակցում էի ես, ներկայ էին մօտ 30 հոգի: Բացի անդամներից կային եւ հրաւիրուածներ: Մեսրոպ Եպ. պատմեց իր այցելութեան մասին Կոմսուհուն. փոխարքայի կինը շատ էր հետաքրքրուում հայերով: Խատիսեանը տեղեկութիւններ տուեց փոխարքայ Կոմս Վորոնցով-Դաշկովի հետ ունեցած տեսակցութեան մասին: Նիւթը մոքիցս ելել է, բայց փոխարքան էլ շատ էր հետաքրքրուում հայերով: Բժ. Յ. Զաւրեանը խօսեց Կովկասեան բանակի սպայակոյտի հայերի հանդէպ ցոյց տուած համակրանքի մասին: Թւում էր, թէ ինչ-որ բանակցութիւններ էին տեղի ունենում,

ARAM webaram.com

որոնք, սակայն, որոշ ձեւ չէին ստացել: Ձեկուցումների ընթացքին այս ու այն կողմից եղած բացատրություններից երեւում էր, որ ամէնքը համամիտ էին կամաւորական չարժման:

Ի վերջոյ, խօսքը տրուեց Յ. Քալաշնունիին, որ ինձանից քիչ հեռու նստած՝ անվերջ ծխում էր: Ցաւում եմ չատ, որ անկարող եմ վերյիշել նրա զեկուցման մանրամասնութիւնները: Նա նկարագրեց Վասպուրականի ընդհանուր վիճակը, պատերազմից առաջ ոգեւորութիւնը բարենորոգումների առթիւ, ընդհանուր զօրակոչի առաջ բերած չփոթն ու քաոսը, թուրքերի ակներեւ հակահայ տրամադրութիւնը, հայերի օրինապահ ընթացքը, եւայլն. ապա վճռական կերպով եւ ջղայնացած, յայտնեց, որ ամէնքը հակառակ են կամաւորութեան կովկասում:

Քալաշնունիի այս յայտարարութիւնը հաճելի չէր ներկաներին:

— Դո՞ւք ինչ կ'ասէք, Պր. Խաչատուր, հարցրեց Մեսրոպ Եպ.ը Խէչոյին:

Խէչօն, յանկարծակիի եկած, ոտքի կանգնեց իր պարթեւ հասակով, նայեց աջ ու ձախ եւ անուշ ժպիտով ասաց.

— Ե՞ս... ե՞ս ինչ պիտի ասեմ... մենք գինուոր ենք. ինչ որ որոշէք, այնպէս էլ կ'անենք...:

Ամէնքը ծիծաղեցին Խէչոյի միամտութեան վրայ, բայց Խէչօն միամիտ չէր, այլ ներկաներին միամտի տեղ էր դնում:

Կարճ ժամանակում նա արդէն տուել էր իր որոշումը. կամաւորական չարժումը անխուսափելի էր, եւ ինքը պիտի լինէր առաջին կամաւոր արձանագրուողներից մէկը:

Ի վերջոյ, խօսք տրուեց ինձ զեկուցման համար: Իմ զեկուցումն էլ չդոհացրեց կամաւորական հարցով հետաքրքրուողներին:

Այս ժողովն էլ տեղեկատու բնոյթ ունէր եւ որեւէ որոշում չտրուեց:

Հոգեբանօրէն Կովկասահայերը ապրում էին նոյն վիճակը, ինչ որ 1877–78 թուականների ռուս–տաճկական պատերազմի եւ յաջորդ օրերին, բայց այն ժամանակ Կովկասի ռուսական իշխանութիւնը դէմ էր հայկական չարժման. մի Շերեմէտեւի ծուռ հայեացքը բաւական եղաւ, որպէսզի Գրիգոր Արծրունիի ազմկարար խմբակը հրապարակից քաշուէր: Այժմ փոխարքայ կոմս եւ կոմսուհի, պինուորական եւ քաղաքական իշխանութիւն «հետաքրքրում» էին հայկական դործերով եւ քաջալերում հայերի կամաւորական տրամադ-


ARAM webaram.com

բութիւնները, հրահրում էին հայերի ռուսասիրական մտքերը. ինչպէ՞ս կարելի էր դիմանալ: Երգը ծանօթ խօսքերով.

«Ասում ես դիմացիր, ես ո՞նց դիմանամ»:

×

Հայկական Թիֆլիսը դեռ գոնուում էր կամաւորական խումբերի կազմութեան թոհուբոհի մէջ, երբ Հ. Յ. Դ. Ռոկանապատի կեդրոնական կոմիտէից հեռագիր ստացուեց.



ՆԻԿՈԼ ԴՈՒՄԱՆ

— Հիւսիսային Կովկասի հանքային ջրերում 1914 Սեպտեմբեր 23ին, յանկարծամահ էր եղել Նիկոլ Դումանը: Դիակը պիտի բերուէր թաղուելու համար Թիֆլիս:

Դագաղը Թիֆլիսի կայարանը հասաւ առանձին վագոնով: Հետը եկել էին Ռոկանապատի կեդրոնական կոմիտէի անդամները Աբր. Գիւլխանդանեան, Լեւոն Թադէոսեան (Պապաչա), Գր. Աղաջանեան, Դումանի պէնքի ընկերներն ու պաշտօնեաները:

Անհաշիւ բազմութիւն էր հաւաքուած Թիֆլիսի կայարանը: Դագաղը կայարանից դուրս հանեցին ընկերները ձեռքի վրայ: Յուղարկաւորութեան ճանապարհի վրայ, կայարանից մինչեւ Վանքի եկեղեցին, ամէն երթեւեկութիւն դադրեցուած էր: Աբեւոտ, պայծառ օրով, խունկ ու չքականով՝ հազարաւոր բազմութիւն հետեւում էր դագաղին լուռ ու մտախոհ:

Եկեղեցական արարողութիւնից յետոյ Վանքի եկեղեցում, առաջնորդ Մեսրոպ Եպ.ի նախագահութեամբ, նոյն հոծ բազմութիւնը հետեւեց դագաղին մինչեւ Խոջիվանքի գերեզմանատունը, ուր Նիկոլ Դումանի դին յանձնուեց հողին Ս. Զաւարեանի գերեզմանի կողքին:

ARAM webaram.com

Նիկոլ Դումանի յուղարկաւորութիւնը խաղաղ ցոյցի բնոյթ առաց։ Ինձ ծանօթ էին ցարական իշխանութեան ձեռք առած վայրագ միջոցները Գրիգոր Արծրունիի յուղարկաւորութեան ժամանակ։ Այժմ նոյն ցարական ոստիկանները գառնուկի անմեղութեամբ դիտում էին ցուցարարներին։

Ժամանակները փոխուել էին...։

Ինձ համար մինչեւ այժմ էլ որոշ չեն Նիկոլ Դումանի մահուան պարագաները։ Ասում էին յանկարծամահ է եղել։ Դրօն չէր հաւատում այդ լուրին։ Նա աւելի հաւանական էր համարում ժողովրդի մէջ տարածուած ինքնասպանութեան լուրը։ Ասում էին — եւ Բագուի ընկերները չէին հերքում, — թէ Նիկոլ Դումանը Հանքային Ջրերում լսելով, որ կամաւորական շարժում է սկսուած կովկասահայերի մէջ, որ Անդրանիկ, Քեռի եւ այլ խմբապետներ կանչուած են Թիֆլիս, իսկ ինք չի կարող մասնակցել, ատրճանակով վերջ է տուել կեանքին։

Հետապային ստուգուեց, որ, այո՛, Նիկոլ Դումանը ինքնասպանութիւն է գործել։

Ես որոշ ժամանակ վայելել էի Նիկոլ Դումանի ընկերութիւնը կարինում, երբ նա Ռոստոմի մօտ հիւր էր։ (Տե՛ս այս գրքի նախորդ հատորը)։

Դումանը խիստ տառապում էր յօդացաւերից։ Նրան չօգնեցին եւ Հելվանի հանքային ջրերը Եգիպտոսում, ոչ էլ Եւրոպայի բուժական միջոցները։

Իբրեւ Հ. Յ. Դաշնակցութեան պատուիրակութեան անդամ Դումանը մասնակցել էր Ընկերվարական Միջազգային Համագումարին Քոփէնհագէնում։ Վերջը վերադարձել էր Բագու, իր նախկին պաշտօնին, Նաւթարդիւնաբերողների Ընկերութեան մէջ։ Սակայն իր առողջական վիճակը օրէ օր աւելի վատանում էր։ Յօդացաւը, ապա խլերդը մաշել էին նրա մարմինը։

1914ի ամառը, Դումանը Հանքային Ջրերում էր, գրեթէ ուժասպառ վիճակի մէջ։ Պատերազմի հետեւանքով հայերի մէջ ստեղծուած եռուզեռը, բնականաբար, յուզում էին եւ նրա միտքը։ Հեռու մնալ կեանքի եռուզեռից, չմասնակցել գինակիցների հետ գալիք մարտերին, նրա հոգին չէր կարող հաշտուել այդ մտքի հետ։

Դումանի նկարագրի տէր մարդկանց համար անկարելիութեան չափ դժուար է մեկուսացումը կեանքից։ Եւ նա վերջ տուեց իր անտանելի դրութեան իմացեալ մահով։

ARAM webaram.com

ԿԱՄԱՒՈՐԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Թիֆլիսի մթնոլորտը, պայթելու աստիճան յագեցած էր կամաւորական հարցով. անհրաժեշտ էր լուծում մը դտնել:

Վերջապէս հերթը հասաւ խորհրդակցական ժողովին, որ պիտի զբաղուէր կամաւորական հարցով: Սա էլ դեռ վճռական որոշում չպիտի տար, այլ նիւթ պիտի ծառայէր Ազգային Բիւրոյի եւ ռայոնական ժողովի համար: Ազգային Բիւրօն առանձին խորհրդակցութիւններ էր կատարում եւ բանակցութիւններ վարում Կաթողիկոսի եւ Կովկասի իշխանութեանց հետ:

Խորհրդակցական ժողովը տեղի ունեցաւ բժ. Ց. Զաւրեանի քովէ՝ Տիկ. Լիդիա Կրնստոֆորովնա Իստամանովայի բնակարանում: Ներկայ էին Հ. Ց. Դաշնակցութեան Բիւրոյի եւ Մեծ Քաղաքի (Թիֆլիս) կենտ. Կոմիտէի անդամները, խմբապետները եւ ականաւոր անհատ ընկերներ: Անուն անուն կարող եմ յիշել հետեւեալներին. Խ. Կարճիկեան, բժ. Ց. Տէր Դաւթեան, Աւ. Սահակեան, Իշխան Ց. Արղութեան, բժ. Ց. Զաւրեան, Ց. Քալաշնունի, Ն. Ադբալեան, Ա. Զամալեան, Գ. Ղազարեան, Ա. Շահխաթունեան, Անդրանիկ, Քեռի, Դրօ, Համազասպ, Խէչօ եւ ուրիշներ:


Ժողովը դեռ չսկսած՝ մի ծանր միջադէպ տեղի ունեցաւ Ց. Քալաշնունիի եւ բժ. Ց. Զաւրեանի միջեւ:

Բժ. Զաւրեանը ներս մտնելով՝ ուզեց բարեւել Քալաշնունիին: Վերջինս մերժեց ձեռք տալ, անարդական խօսք ուղղեց Զաւրեանին, որի իմաստն էր՝ ռուսական ապաստաւոր: Զաւրեանը կաս-կարմիր կրաբեց եւ աւելի խիստ անարդական խօսքով պատասխանեց: Քալաշնունին բռունցքը ճօճելով՝ խոյացաւ Զաւրեանի վրայ: Ընկերները միջամտեցին, եւ միջադէպը հարթուեց: Պատահածը, սակայն, սարսա-

ARAM webaram.com

վելի մի բան էր: Ինձ թուում էր, որ երկու աւագ եւ բոլորի կողմից յարգուած ընկերները ընդմիշտ կը խզեն յարաբերութիւնները իրար հետ: Մի քանի օր վերջը, ես բժ. Զաւրեանին ու Քաջազնունիին տեսայ կողք-կողքի նստած, քաղցր զրուցելով, միասին ճաշելիս ընկերների հետ: Կարծես ոչինչ չէր պատահել նրանց միջեւ:

Խորհրդակցական ժողովի սկիզբը թէեւ շատ բուռն եղաւ, բայց անցաւ խաղաղ մթնոլորտում: Օրակարգի միակ առարկան կամաւորական հարցն էր: Խ. Կարճիկեանը, Բիւրօյի կողմից բացեց ժողովը եւ զեկուցում տուեց քաղաքական ընդհանուր կացութեան եւ եւրոպական պատերազմի ընթացքի մասին:



Բժ. Յ. ԶԱԻՐԵԱՆ

Յայտնեց, որ ռուսթրքական պատերազմը անխուսափելի է երեւում: Որ Կովկասի հայութիւնը եռուզեռի մէջ է. ամէն կողմից պահանջ է լսւում ձեռնարկելու կամաւորական խումբերի կազմութեան: Որ Պոլսից էլ տեղեկութիւններ կան, որ այնտեղի ընկերները համամիտ են կամաւորական չարժման: Որ Ընդհ. ժողովը որոշում չունի այդ հարցի մասին: Որ չուտով գումարուելիք ռայոնական ժողովը պիտի որոշէ կուսակցութեան բռնելիք դիրքը այդ հարցում: Եւ որ ներկայ ժողովը խորհրդակցական բնոյթ ունի, այսպէս ասած, մտքերի լուսաբանութեան համար:

Կարճիկեանը իր զեկուցումը վերջացրեց թէ չէ, Անդրանիկը ոտքի ելաւ:

— Մենք, ասաց նա, եկած ենք հոս ձեր հեռագրի վրայ, թէ՝ մեկնեցէք Հայր Աբրահամի մօտ: Կը կարծէինք, թէ ամէն բան վերջացած է, դէնք պէտք է առնենք եւ կռուի երթանք: Հիմա մեզի կ'ընէք


ARAM webaram.com

խորհրդակցական ժողով... Ձեմ հասկնար, ի՞նչ կ'ըլլայ... Ըսէ, ին-չո՞ւ կանչեցիր մեզ հոս, կէս լուրջ, կէս կատակ խօսքը ուղղեց Աւ. Սահակեանին (Հայր Աբրահամին):

Ամէնքը քահ քահ ծիծաղեցին: Ի՞նչ կարող էր պատասխանել խեղճ Հայր Աբրահամը:

Երկրորդ զեկուցումը ներկայացրեց բժ. Յ. Զաւրեանը:

Պարզուեց, որ եւրոպական պատերազմի առաջին իսկ օրերին փոխարքայ Կոմս Վորոնցով-Դաշկովը առաջնորդ Մեսրոպ Եպ.ի եւ քաղաքապետ Ա. Խատիսեանի միջոցով յայտնել է ցարի բաղձանքը, որ Հայերն էլ Լեհերի նման, կամաւորական խմբեր կազմեն Կովկասեան ճակատի վրայ ռուս-թրքական պատերազմի դէպքում: Ի հատուցումն Հայերի մատուցած ծառայութեան, յաղթութեան պարագային, ցարը խոստանում էր թրքահայ հողերի վրայ, մինչեւ Ալեքսանդրէտ, հաստատել ինքնավար Հայաստան՝ Ռուսաստանի հովանաւորութեան ներքեւ: Ոմանք պընդում էին, որ ցարը խոստացել է միացնելով թրքահայ եւ ռուսահայ հողերը՝ ընտանդծել ինքնավար Հայաստան:



Ա.Ի. ՍԱՀԱԿԵԱՆ

Մեսրոպ Եպ.ը եւ Խատիսեանը այս մասին զեկուցել են Ազգ. Բիւրոյին եւ յատուկ պատուիրակի միջոցով հաղորդել Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ Ե.ին, որ համակրական վերաբերում է ցոյց տուել:

Այնուհետեւ սկսուել են գործնական բանակցութիւններ: Մեսրոպ Եպ. եւ Ա. Խատիսեան միջնորդի եւ բանակցողի դեր են կատարել փոխարքայի պալատի եւ Ազգ. Բիւրոյի ու Կաթողիկոսի միջեւ. Խատիսեանը եւ բժ. Զաւրեանը յարաբերութեան մէջ էին Կովկասեան բանակի սպայակոյտի հետ:

ARAM webaram.com

Կովկասեան բանակի բարձր հրամանատարութիւնը առաջարկում էր, առայժմ, կազմել չորս զուտ հայկական խումբեր, որոնք պիտի զինուէին պետական զէնքերով, եւ պիտի առանձին հազուստ եւ անունդի համար որոշ գումար: Խումբերի հրամանատարական կազմը պիտի լինէր հայերից, բայց իւրաքանչիւր խմբի մօտ պէտք է գտնուէր մէկ սպայ: Խումբերը պէտք է ենթարկուէին ճակատի հրամանատարներին եւ պիտի կատարէին, գլխաւորապէս, յատկապահ հետախուզական դեր: Սպայակոյտը համաձայն էր, որ չորս խմբերի հրամանատարներ նշանակուին Անդրանիկը, Քեւրին, Դրօն եւ Համազասպը:

Ազգային Բիւրօն, առնելով նաեւ կաթողիկոսի կարծիքը, փաստօրէն յայտնել էր իր սկզբունքային հաւանութիւնը, բայց դեռ պաշտօնական համաձայնութիւն չէր կայացել:

Փոխարքան խօսք էր արել եւ ցարի կողմից հայերին ուղղած կոչ հրատարակելու մասին, լեհերի օրինակով, բայց մերոնք մերժել էին, վախենալով, որ այդ կարող է վատ անդրադառնալ Թրքահայերի վրայ:

Զաւրեանի զեկուցումից յետոյ, դարձեալ առաջին խօսք առնողը եղաւ Անդրանիկը: Նա բողոքեց առանձին առանձին խումբեր կազմելու առաջարկի դէմ: Ներա կարծիքով, հայկական բոլոր խմբերը պէտք է կազմէին մէկ միաւոր, մէկ անձի հրամանատարութեան տակ:

Այնուհետեւ սկսուեցին ճառերը, ըստ էութեան: Իրար յետեւից խօսք առնողները տարբեր խօսքերով կրկնում էին միեւնոյն բանը. այսպիսի առիթ պատմութեան մէջ քիչ է պատահում. պէտք է օգտուել առիթից, սեփական «երկաթէ չերեփ»ներով մասնակցել պատերազմին՝ վերջը «հարիսա» առանալու համար:

Կարճիկեանը խնդրեց, որ հակառակ կարծիքի եղողները արտայայտուէին: Ամենքի աչքերը դարձան դէպի Քալջանունին, որ նստած էր մօտս, գլուխը կախ, ջղային շարժումներով խաղում էր իր ժամացոյցի ոսկի շղթայի հետ եւ անընդհատ ծխում:

Նա դանդաղ ոտքի ելաւ եւ դրեթէ դողալով արտասանեց.

— Այո, ես հակառակ կարծիքի եմ, բայց դուք արդէն որոշում տուել էք, ի՞նչ էք սպասում ինձանից. արիւն ձեր ի գլուխ ձեր:

Նստեց եւ, գլուխը կախ, շարունակեց ծխել:

Ճառախօսութիւնները չարունակուեցին մինչեւ կէս գիշեր: Մի քանի հոգի միայն կամաւորութեան հակառակ արտայայտուեցին,

ARAM webaram.com

որոնց թւում եւ այս տողերի հեղինակը, բայց դրանք թէ որակով եւ թէ քանակով այնքան փոքր էին, որ որեւէ ազդեցութիւն չէին կարող ունենալ:

Թանկ որ ժողովը խորհրդակցական բնոյթ էր կրում, բանաճեւ չքուէարկուեց, բայց առանց բանաճեւ քուէարկելու էլ պարզ էր, որ ճնշիչ մեծամասնութիւնը կողմնակից էր համաւորական չարժման:

Երբ դումարուեց Հ. Ց. Դ. Կովկասեան Ռայոնական ժողովը, համաւորական հարցը ոչ միայն հասարակութեան մտքի մէջ, այլեւ գործնականում էլ փաստօրէն արդէն լուծուած էր, եւ խմբապետները սկսել էին զինակիցներ հաւաքել:

Դիմաւորանում եմ վերյիշել նաեւ Ռայոնական ժողովի բոլոր մանրամասնութիւնները: Այստեղ էլ, բնականաբար, օրակարգի գլխաւոր հարցը համաւորական չարժումն էր. չեմ յիշում՝ Քաջազնունին կա՞ր ժողովում, բայց համաւորական գործի դէմ բուռն պայքար մղողը, այս անգամ, երիտասարդութիւնն էր՝ ուսանող Կորիւն Ղազարեանը, Հիպերիկ Զոլախեանը եւ Բագրատ Թոփչեանը, ճեմարանաւարտ ուսուցիչ Սահակ Թորոսեանը եւ մի քանի ուրիշներ: Սրանք հակառակ էին որեւէ գործակցութեան ցարական կառավարութեան հետ:

Համաւորական չարժման դէմ Ռայոնական ժողովում մի քանի ճառեր խօսեցի եւ ես: Իմ հակառակութիւնը ես հիմնաւորում էի երկու պատճառով: Նախ համաւորական չարժումը անխուսափելի կերպով պիտի ստանար Թրքահայկական կերպարանք. խմբապետները եւ մարտիկները մեծ մասով պիտի լինէին Թրքահայեր, որ պիտի հակասէր կուսակցութեան քաղաքականութեան՝ օրինապահ մնալ սահմանի երկու կողմերում էլ: Երկրորդ՝ կարող էր վտանգել Թրքահայերի ֆիզիքական գոյութիւնը:

Ժողովում, ի պաշտպանութիւն համաւորական չարժման, երկար ճառեր խօսեցին Ծաչ. Կարճիկեանը, Նիկ. Աղբալեանը, բժ. Ց. Զաւրեանը, Ա. Սահակեանը, Ա. Շահխաթունեանը, Ա. Զամալեանը եւ ուրիշներ: Քուէների ահագին մեծամասնութեամբ ընդունուեց բանաճեւ ի նպաստ համաւորական չարժման:

Այսօր, կէս դար վերջը, դիւրին է քննադատել, ռոմանտիկ համարել Հ. Ց. Դաշնակցութեան ընթացքը համաւորական հարցում, բայց ա՛յն օրերին, Համաշխարհային Առաջին Պատերազմի նախորդող միջազգային պայմաններում, մարդկային նախաձեռնութեան առջեւ

ARAM webaram.com

Հայերի մասնակցությունը պատերազմին, Դաշնակից ազգերի կողքին, թուում էր քաղաքական տրամաբանության միակ ուղին, հայկական հարցի լուծման տեսակէտից:

Սխալուեցի՞նք: Այո՛, սխալուեցինք: Տուժեցի՞նք: Այո՛, տուժեցինք: Բայց սխալուեցինք ու տուժեցինք ազգովին:

Եթէ ուրիշ ճանապարհ կար կամ կարելի էր նախատեսել, որ մենք ընդունակ չեղանք տեսնելու կամ նախատեսելու, նշանակում է այդքա՛ն էր մեր ազգային հասունության աստիճանը:

Կամաւորական շարժումով բացուեց մի նոր էջ Հայոց նորագոյն պատմության դարաշրջանում:

ARAM webaram.com

ԿԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԽՈՒՄԲԵՐ

Ես բացակայ էի Թիֆլիսից, երբ Ազգային Բիւրօն էլ որոշել էր ձեռնարկել կամաւորական խումբերի կազմութեան կառավարութեան առաջարկած պայմաններով: Ազգ. Բիւրօն որոշել էր նոյնպէս հարցի քաղաքական եւ նիւթական մասը պահել իր ձեռքում, իսկ խումբերի կազմակերպումն ու ղեկավարութիւնը վստահել Հ. Ց. Դաշնակցութեան:

Ռայոնական ժողովից անմիջապէս յետոյ, Հ. Ց. Դ. Բիւրօն խմբապետների եւ կամաւորական գործով զբաղուող ընկերների հետ անցաւ գործի: Առաջին հերթին նշանակուեցին չորս խմբերի հրամանատարները:

Առաջին խումբ՝ Անդրանիկ, օգնական վաշտապետի աստիճանով՝ Սեպուհ: Երկրորդ խումբ՝ Դրօ. օգնականի տեղը մնաց բաց: Դրօն պնդում էր, որ ես ընդունեմ այդ պաշտօնը, բայց Բիւրօն չհամաձայնուեց: Վերջը, երբ Պոլսից եկաւ Արմէն Գարօն, նա դարձաւ Դրոյին օգնական:

Երրորդ խումբ՝ Համազասպ, օգնական՝ Վ. Վալադեան:

Չորրորդ խումբ՝ Քեռի, օգնական՝ Միշա Արզումանեան:

Անդրանիկը այս անգամ էլ առարկեց չորս խմբերի կազմութեան եւ նրանց միմիանցից հեռու դասաւորելու դէմ: Որպէսզի հայ կամաւորները ի վիճակի լինէին ռազմական մեծ զադաչաններ (խնդիրներ) լուծելու, պէտք է գոնէ հայկական բրիգադ կազմէին: Անդրանիկի կերպով նա ձգտում էր խումբերի ընդհանուր հրամանատար դառնալու, որին համաձայն չէին միւս խմբապետները: Ի վերջոյ, որոշուեց, որ Առաջին խումբը միւս խումբերից 2–3 անգամ աւելի

ARAM webaram.com

զինուոր ունենայ: Այս կարգադրութիւնից էլ դոհ չէր Անդրանիկը, բայց համաձայնուեց:

Նոյն ժողովում ստեղծուեց հայ կամաւորական խումբերի կարգադրիչ Մարմին, որ պիտի դրաղուէր կամաւորներ հաւաքելով, խումբի կազմութեամբ, նիւթական մատակարարութեամբ ու հաչիւներով, խումբերին վերաբերուող արտաքին յարաբերութեամբ եւլն.: Տնտեսական–հաչուական բաժնի վարիչ նչանակուեց Նիկոլ Աղբալեանը, ներքին վարչական յարաբերական գործերի վարիչ՝ Աբր. Գիւլխանդանեանը. ինճ նչանակեցին ընդհանուր քարտուղար–գործավար: Գիւլխանդանեան չատ չանցած քաչուեց գործից եւ մեկնեց Բաղու: Մինչեւ վերջ մեր պաչտօնում մնացինք Նիկոլը եւ ես:



ՍԵՊՈՒՀ

Մի քանի փոփոխութիւններից յետոյ, կարգադրիչ Մարմինը ստացաւ հետեւեալ կազմը. բժ. Ց. Զաւրեան, Իչխան Ցովսէփ Արղութեան, Արմէն Գարօ, Նիկոլ Աղբալեան, Ա. Գիւլխանդանեան, Ս. Վրացեան: Վերջը արտաստհմանից գալուց յետոյ, աւելացաւ եւ Ռոստոմը:

Գրեթէ հայկական բոլոր կենտրոններում կազմուեցին տեղական Ազգ. Բիւրօներ կամ հայկական կոմիտէներ կամաւորական չարժման աջակցելու, իսկ վերջը եւ գաղթականներին օգնելու համար: Զանազան վայրերում գոյութիւն ունեցող տիկնանց եւ օրիորդաց միութիւնները նըւիրուեցին կամաւորներին օժանդակելու գործին, ինչպէս եւ նոյն կարգի կազմակերպութիւններ ու միութիւններ: Ոգեւորութիւնը կամաւորական խումբերի չուրջ, մանաւանդ առաջին չրջանում, անկեղծ էր եւ համաժողովրդական:

Կամաւորներ հաւաքելու նպատակով յատուկ մարդիկ ուղար-

ARAM webaram.com

կըւեցին վանադան չրջաններր, բայց չուտով բոլորը յետ կանչուեցին, որովհետեւ կամաւորների ինքնաբուխ հոսանքը այնքան մեծ եղաւ, որ խումբերը արագ լեցուեցին:



ՐԱՖ. ՋԱՒՐԻԵԱՆ



ԱՐՄԷՆ ԳԱՐՕ



ԻՇԽ. ԱՐՂՈՒԹԵԱՆ




ՌՈՍՏՈՄ



Ս. ՎՐԱՑԵԱՆ.



Ն. ԱՂԲԱԼԵԱՆ



Ա. ԳԱՒԼԵԱՆՑԵԱՆ

ՀԱՅ ԿԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԽՈՒՄԲԵՐԻ ԿԱՐԳԱԴՐԻՉ ՄԱՐՄԻՆ

Ապր. Բիւրօն որոշեց ինձ եւս ուղարկել Ռումանիա, թէ՛ կամաւորական գործը կազմակերպելու եւ թէ՛ փորձելու, Բուլղարիայի վրայով, յարաբերութեան մէջ մտնելու Պոլսի հետ: Թուրքիայից

ARAM webaram.com

դրեթէ կարուած էինք, եւ լուրերի չգոյութիւնը մեծ մտահոգութիւն էր պատճառում ամէնքին:

Ռումանիա մտնելու արտօնութիւն պէտք էր Բուքրէշից առնել: Կովկասեան բանակի սպայակոյտից հեռագրուեց Բուքրէշի ռուսական դեսպանին: Մի քանի օրից եկաւ պատասխան, թէ ռումանական կառավարութիւնը մօրժում է ինձ վիզա տալ՝ առարկելով, որ ես մի անդամ կեղծ անցագրով մտել եմ Ռումանիա եւ արտաքսուել եմ: Ապշեցուցիչ էր, որովհետեւ ինձ հետ նման դէպք չէր պատահել:

Գաղտնիքը բացուեց, երբ Ռոստոմը եկաւ արտասահմանից: Ռոստոմը ծիծաղելով պատմեց իր հետ պատահած դէպքը: Նա իմ անցագրով Վիեննայից մտել էր Ռումանիա եւ Բուքրէշում ձերբակալուել. անցագիրը առել էին ձեռքից եւ իրեն էլ արտաքսել երկրից:

Դէպքը պատիւ կը բերէր Ռումէն Սիքուրանցային, բայց իմ ճամբորդութիւնը Ռումանիա՝ ձախողեց...

Մէկ անդամ որ որոշում արուեց, խումբերի կազմակերպութեան գործը անարգել առաջ տարուեց. Ազգային Բիւրոյի եւ կարգադրիչ Մարմնի խառն նիստում վերջնականապէս հաստատուեց հետեւեալ ծրագիրը.

Կառավարութեան արտօնութեամբ կազմւում են չորս հայ կամաւորական խումբեր, որոնց նպատակը պէտք է լինի աջակցել ռուս բանակին եւ ծառայել հայ ժողովրդի պաշտպանութեան գործին:

Ըստ կարգի, խումբերի հրամանատարներ են նշանակւում Անդրանիկ, Դրօ, Համազասպ եւ Քեռի:

Առաջին՝ Անդրանիկի խումբը պիտի բաղկանայ 1000–1500 կամաւորներից: Միւս երեք խումբերը՝ իւրաքանչիւրը 400–450 հոգուց:

Կովկասեան Բանակի Սպայակոյտի որոշումով հայկական խումբերը տեղաւորւում են հետեւեալ կէտերում.

Ա. խումբ՝ Սալմաստում, Վանի ուղղութեամբ:

Բ. խումբ՝ Խոյում, Բայազէդի ուղղութեամբ:

Գ. խումբ՝ Կաղզուանում՝ Ալաշկերտի ուղղութեամբ:

Դ. խումբ՝ Օլթիում, Կարինի ուղղութեամբ:

Կարգադրիչ Մարմնի կենտրոնը՝ առ այժմ Թիֆլիսում:

Կարգադրիչ Մարմնին յատկացուեց, Ազգային Բիւրոյի չէնքից մի քանի փողոց այն կողմ, Ա. Յատիսեանի մեծ չէնքը, ընդարձակ բակով: Շէնքը երկյարկանի էր, յարակից մի ուրիշ չէնքով:

ARAM webaram.com

Առաջին չէնքի վարի յարկը եւ կողքի չէնքը յատկացուեցին կամաւորներին, իբրեւ զօրանոց եւ բակը, իբրեւ մարզանքի վայր: Վերի յարկում տեղաւորուեց Կարգադրիչ Մարմինը, որ աւելի յայտնի էր Շտաբ անունով:

Այս Շտաբից էին անցնում պանագան կողմերից Թիֆլիս հասնող բոլոր կամաւորները, արձանագրւում ու բժշկական քննութեան էին ենթարկւում եւ մէկ-երկու օր հանգստանալուց, Թիֆլիսը տեսնելուց յետոյ ուղարկւում էին իրենց խումբերը:

Այս գործը ես էի վարում: Իմ ձեռքի տակ ունէի յատուկ մարդիկ· դրագիր Գրիգոր Պալասբէգեանը, երկաթուղիով ճանապարհ դնող Յարութիւն Յառաթեանը, սուրհանդակ Սուրէնը, դրադիր Ոստանիկը, որ խմորատիպով «Լրաբեր» էր պատրաստում խումբերի գործողութեանց մասին, փոստաճի Դաւիթը (Դաւիթխանեան), որ կամաւորների նամակների գործն էր վարում, բժիշկ, բուժակ եւայլն:

Իմ ձեռքից անցել են բազմաթիւ երիտասարդներ — եւ ոչ-երիտասարդներ — որոնցից ոմանք յետագային դարձան նշանաւոր: Այսպէս, Անաստաս Միկոյեանը, որ կարճ ժամանակ Շտաբում մնալուց յետոյ, Ա. Ջամալեանի կազմած աշակերտական խմբի հետ մեկնեց ճակատ, Անդրանիկի մօտ: Այնտեղ Անդրանիկից ծեծ կերաւ ու հեռացաւ ոչ միայն կամաւորական խմբից այլեւ Դաշնակցութիւնից:

Երկրորդ՝ անյայտ կամաւորը, վերջը՝ խիղախ կարմիր հրամանատար Հայկ Բժիշկեան – Գայը (Հայ): Ներկայացաւ Շտաբ 10-15 ընկերներով: Արձանագրուեցին: Ստացան մի քանի օրուան ապրուստի դրամ: Վերջը անհետացան: Երբ Հնչակեանները ձեռնարկեցին առանձին խումբի կազմութեան, լսեցինք, որ Բժիշկեանը մխացել է նրանց: Երեք տարի վերջը, ռազմական կոմունիզմի օրերին, Ռուսաստանի քաղաքացիական պատերազմի չրջանում լսուեց կարմիր հեծելազօրքի հրամանատար Գայի անունը, որ վերջը իր 20·000 ձիաւորով դերի ընկաւ Լեհերի ձեռքը: Հայկ Բժիշկեանն էր:

Շտաբից անցաւ եւ ապագայ Հայ Յեղկոմի տխրահռչակ անդամ Աւիս Նուրիջանեանը, իբրեւ կամաւորական խումբի սանիտար: Եթէ չեմ սխալւում, նա էլ է տեսել Անդրանիկի ապտակի համը:

Հոկտեմբերին, Թիֆլիսում իրենց գործերը լրացնելուց յետոյ, խմբապետները սկսեցին մեկնել իրենց վայրերը, վերջին խորհրդակցութիւնը ունենալով Կարգադրիչ Մարմնի հետ: Ամէնից ա-

ARAM webaram.com

ռաջ մեկնեց Դրօն: Կարդադրիչ Մարմնի հետ նա դժուարութիւններ չունեցաւ, ինչպէս եւ Քեռին: Առանց առարկութեան համաձայնուեց եղած նիւթական յատկացման: Ինձանից ձեռք քաշելով՝ իրեն օգնական էր ընտրել Արմէն Գարոյին եւ առանց ազմուկի՝ ճանապարհուեց Իդդիր:

Արմէն Գարօն Պոլսից դուրս էր եկել Կովկասի ճանապարհով, կարին երթալու համար, բայց երբ Թիֆլիս հասաւ, կարինի ճանապարհը արդէն փակուած էր: Մնաց Թիֆլիսում եւ մի քանի կամաւորական չարժման: Մի շարք ընկերներ աշխատեցին կեցնել նրան այդ քայլից, բայց նա չլսեց:«Մի քանի ամսից մենք կարին կը լինենք», ասում էր նա:



ԱՐՄԷՆ ԳԱՐՕ

Որքան յիշում եմ,երկրորդ մեկնողը եղաւ Քեռին դէպի Կարս–Օլթի: Սա էլ, առանց առարկութեան, ընդունեց Կարդադրիչ Մարմնի բոլոր որոշումները եւ անդամակից հետացաւ:

Համազասպի հետ Կարդադրիչ Մարմինը որոշ տարակարծութիւններ ունեցաւ: Նա սիրում էր արտաքին փայլ ու ցոյց, իր ընտրած տղաներին հագցրել էր թանկագոյ կտորով հագուստներ եւ պահանջում էր լրացուցիչ դումարներ: Աղբալեանը առանձնապէս հակառակում էր: «Եթէ հէնց առաջին օրից այսպիսի չեղումներ անենք, ասում էր նա, այն ժամանակ սրանք կ'ուտեն մեզ»: Բայց Համազասպը չէր համոզւում եւ բամբ ձայնով պնդում էր իր պահանջի վրայ: Կարդադրիչ Մարմինը, սակայն, մնաց անդրդուելի:

Համազասպը Թիֆլիսից մեկնեց Թանթանայով, ինչպէս վա-

ARAM webaram.com

յել է պատերազմի դաշտ գնացող հերոսին:

Բայց մասնաւորապէս ազգակայարոյց եղաւ Անդրանիկի մեկնումը: Պէտք է ասել, որ օրուայ հերոսը Անդրանիկն էր: Փողոցում առարկայ էր հասարակութեան ուշադրութեան եւ ցոյցերի: Թիֆլիսի հայ հարուստները պատիւ էին համարում նրան ճաշով հիւրասիրել: Կամաւոր եկողները ձգտում էին նրա խումբը ընդունուել: Ազգային Բիւրոյի բոլոր նիստերին նա հրաւիրուում էր առանձին ակնածանքով:

Կարգադրիչ Մարմինն էլ, իր հերթին, յատուկ, հոգածութիւն էր ցոյց տալիս դէպի Անդրանիկի խումբը, որ 1100 կամաւոր ունէր, մինչ միւսները հազիւ 400ական հոգինոց էին: Անդրանիկը ինչ մարդ կամ նիւթական միջոց պահանջէր, անյապաղ կատարուում էր: Առաջին խումբի մէջ էին բժ. Զաւրեանը, իրրեւ քաղաքացիական օգնական, Գասպար Իփէկեանը՝ պարենաւորման մասի վարիչ, զինուորական օգնական վաշտապետ Սեպուհը, վաշտապետներ Սմբատը, Գրիգոր Ամիրեանը, Նիկոլ Յակոբեան եւայլն — բոլորը մտաւորական եւ ռազմական առաջնակարգ ուժեր: Թոստոմը զբաղուում էր այս խումբով:

Բայց եւ այնպէս Անդրանիկը դոհ չէր երեւում եւ յաճախ ջղայնութիւն էր ցոյց տալիս: Նրա հոգեկան այս վիճակը բացատրում էին նրանով, որ նա յոյս ունէր գլխաւորել հայ կամաւորական չարժումը ընդհանուր հրամանատարի դերում, բայց ահա ինչ դուրս եկաւ — չորս անջատ խումբեր իրենից անկախ հրամանատարներով եւ ինքը հրամանատար միայն մէկ խումբի: Այդ էլ բաւական չէր — ինչ որ մի կարգադրիչ Մարմին վարժապետներից բաղկացած, ինչպէ՞ս չդառնանար: Այս դառնութիւնը երբեք չհեռացաւ նրա սրտից: Մէկին որ ուզում էր անարգել, արհամարհանքով ասում էր՝ «վարժապետ»:

Անդրանիկի մեկնումը Թիֆլիսից ժողովրդական ցոյցի բնոյթ ստացաւ: Գնացքի չարժուելուց շատ առաջ կայարանը արդէն լեցուած էր ամէն սեռի եւ դասակարգի պատկանող մարդկանցով: Ժամը երեկոյեան 9ի մօտ էր, որ երեւաց իւրայիններով չրջապատուած Անդրանիկը վազրի կերպարանքով եւ խրոխտ քայլերով անցաւ խելայեղօրէն ծափահարող եւ կեցցէ պոռացող բազմութեան միջից դէպի գնացքը, ուր նոյնպէս խռնուած էր խայտաղէտ բազմութիւնը: Վագոնի դիմաց, բուռն ծափերի եւ ուռաների տակ, առաջ անցան Օրիորդաց Միութեան անդամները եւ Անդրանիկին նուիրեցին գեղեցիկ մի դրօշակ: Հազարաւոր բերաններից հնչեց.

ARAM webaram.com

Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ մեռնի,
Բայց երանի որ իւր ազգի
Ազատութեան կը զոհուի:

Օր. Արմենուհի Տիգրանեանը մի կրակոտ ճառ արտասանեց Օրիորդաց Միութեան կողմից, որ աւելի եւս բարձրացրեց բազմութեան ոգեւորութիւնը:

Ապա Անդրանիկը մտաւ վագոն եւ մօտ մէկ ժամ մարդիկ մտնում էին ներս հերոսի ձեռքը սեղմելու կամ համբուրելու եւ բարի ճանապարհ ու յաղթական վերադարձ մաղթելու համար:

Գնացքը մեկնեց մեծ ուշացումով:

Հոկտեմբերի կէսն էր արդէն, մէկ էլ կարպապրիչ Մարմնի գրասենեակում երեւաց Գասպար Իփէկեանը: Անդրանիկն էր ուղարկել կամաւորների համար տաք հագուստներ եւ տաք կօշիկներ հաւաքելու: Իսկ քանի անգամ մենք «վարժապետներս» պնդել էինք, որ խումբի համար տաք հագուստներ եւ տաք կօշիկներ պատրաստել տանք: Անդրանիկը միշտ ծպտրով մերժում էր: «Պէտք չկայ, ասում էր նա, տղաներուս ոտքը տրեխ կը հագցնեմ, տոպրակներու մէջ հալուա կը լեցնեմ, եօթը օրէն վան եմ»:

Այժմ Իփէկեանը պատմում էր, որ Սալմաստում բարձունքները ձիւնով ծածկուած էին, գիշերները ջուրը սառում էր եւ օրէց օր աւելի էր ցրտում. մանաւանդ գիշերուան պահակներն ու հետախոյզները չէին դիմանում ցրտին:

Միւռնեցիները, մանաւանդ Քեռին եւ Դրօն, հագուստի եւ ուտելիքների, ինչպէս եւ ձիերի սարքի տեսակէտից ամէն պատրաստութիւն տեսել էին ժամանակին:

Հոկտեմբերի կէսերին արդէն օդը յագեցած էր վառօդի հոտով. ջրային, լարուած վիճակ էր տիրում ամէն կողմ: Թիֆլիսում օր ու գիշեր սպասում էինք Թուրքերի հետ պատերազմի յայտարարութեան լուրին: Արեւմտեան ճակատում Ռուսների գործերը լաւ չէին, եւ ականջէ-ականջ խօսում էին, թէ Կովկասից զօրամասեր են փոխադրում Գերմանական ռազմաճակատ:

ARAM webaram.com

ՑԱՐԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Շնորհիւ իմ անձնական կապերի ռուս պինուորական շրջաններ հետ, Նոյեմբեր ամսի կէսերին ես իմացայ խիստ գաղտնի պահուող մի լուր. չուտով Թիֆլիս պիտի գար Նիկոլայ ցարը Կովկասեան ռազմաճակատը այցելելու համար:

Ազգ. Բիւրոյում մէկից աւելի անգամներ խօսք էր եղել խնդրելու կաթողիկոսին, որ երթայ Պետերբուրգ եւ ներկայանալով թագաւորին՝ Հայկական Հարցի լուծման պաշտօնական խոստում առնէ: Հիմա թագաւորը ինքն էր գալիս կաթողիկոսի մօտ: Հարկաւոր էր, ուրեմն, օգտուել առիթից:

Ազգային Բիւրոյի առաջին նիստում ես հաղորդեցի այդ լուրը: Խատիսեանը զարմացած նայեց երեսիս եւ ասաց, թէ նման բան գոյութիւն չունի: Ցետոյ յայտնեց, թէ, այո, նման բան գոյութիւն ունի, բայց դեռ խիստ գաղտնի է պահւում: Եւ ժողովականներից գաղտնապահութեան խօսք առնելով՝ տուեց մանրամասնութիւնները. ցարը իր չքախումբով մի քանի օր պիտի մնար Թիֆլիսում, ապա պիտի մեկնէր Կարս եւ առաջաւոր դիրքեր: Փոխարքան իրեն՝ Խատիսեանին էր վստահել Թիֆլիսի ընդունելութեան կազմակերպումը եւայլն:

Խատիսեանի դեկուցումից եւ մաքերի կարճ փոխանակութիւնից յետոյ, որոշուեց՝ ա) անմիջապէս կաթողիկոսին հրաւիրել Թիֆլիս, որպէսզի ներկայանայ ցարին. բ) պատրաստել ցարին ներկայացնելիք ուղերձի ռուսերէն բնագիրը, որի համար ընտրուեց երեք հոգինոց մի յանձնախումբ — Սամ. Յարութիւնեան, Խաչ. Կարճիկեան եւ Ցովհ. Սպենդիարեան: Ուղերձը պիտի ներկայացնէր հայկական բաղձանքները — ինքնավարութիւն վեց վիլայէթների եւ կի-

ARAM webaram.com

լիկիայի՝ Ռուսաստանի հովանաւորութեան ներքեւ:

Յաջորդ օրն իսկ փաստաբան Յովսէփ Ամիրխանեանը մեկնեց էջմիածին, առաջնորդի եւ Ազգային Բիւրոյի կողմից հրաւիրելու Կաթողիկոսին: Եւ մի քանի օր վերջը Կաթողիկոսը ժամանեց Թիֆլիս:

Գէորգ Ե. Սուրէնեան Կաթողիկոսը Թիֆլիսցի էր եւ, իրրեւ առաջնորդ, պաշտօնավարել էր Թիֆլիսում: Այդ էր պատճառը, երեւի, որ նրա մասին չատ բարձր կարծիքի չէր Թիֆլիսահայ մտաւորականութիւնը՝ ըստ փիլիսոփայութեան, թէ «մարգարէ ի գաւառի իւրում ոչ ունի պատիւ»: Նրան համարում էին ոչ չատ խելացի, ոչ դիւանագէտ, ոչ նոյնիսկ կենցաղագէտ: Ոմանք նրան բիձա էին կոչում: Այդ պատճառով Սամսոն Յարութիւնեանի պէս մարդիկ իրենց զգում էին Կաթողիկոսի խորհրդականի դերում:

Ընդհակառակը, պատմութիւնը կարող է հաստատել, որ, հակառակ աննախընթաց դժուարին պայմանների, Գէորգ Ե. Կաթողիկոսը մնաց իր կոչման բարձրութեան վրայ: Յարի հետ հանդիպման ժամանակ էլ նա պատուով դուրս եկաւ իր դերից: Խրիմեան չէր, ի հարկէ, որ դէմքի եւ խօսքի զեղեցկութեամբ հմայէր մարդկանց, բայց ոչ էլ Մակար էր եւ ոչ Զէօրէքչեան:

Որքան մօտենում էր ցարի գալու օրը, այնքան եռուզեռը սաստկանում էր Թիֆլիսում: Ոստիկանութիւնը զօրաշարժի էր ենթարկել իր բոլոր ուժերը եւ քաղաքի ամբողջ բնակչութիւնը: Անթերնայ մաքրւում էին փողոցները ու հրապարակները ցարի անցնելիք ճանապարհի վրայ: Զարդարւում էին չէնքերի ճակատները: կամարներ էին կանգնեցնում «Բարի Գալուստ» եւ այլ մակագրութիւններով: Առանձնապէս ուշադրաւ էր վարից Երեւանեան հրապարակի մուտքին կառուցուած մեծ կամարը այսպիսի մակագրութեամբ խոշոր տառերով.

ՀՆԱՄԵԱՑ ԹԻՖԼԻՍ ՔԱՂԱՔԸ ԵՐԿՐՊԱԳՈՒԹԻՒՆ Է ԱՆՈՒՄ ԻՐ ԳԵՐԱԳՈՑՆ ՏԻՐՈՋ(*)

Քաղաքագլուխ Խատիսեանին էին վերագրում այս խօսքերը, որոնցից առանձնապէս վրդովուած էին վրացիները. «Պերեսալիլ» ասում էին նրանք — ապը չափից աւելի է դրել:

Ոստիկանութիւնը հրահանգել էր նաեւ Թիֆլիսի բոլոր թեր-

(*) Դրեւնից գորոդ Թիֆլիս չելոմ բյոտ սվոյեմու վերխովնոմու խոզէայինու:

ARAM webaram.com

թերին թագաւորի գալու օրը պատշաճ խմբագրական նուիրել «Մեծ Դէպքին»: «Հորիզոն»ի խմբագրութիւնը եւ մերձաւոր աշխատակիցները բուռն ժողովներ ունեցան այդ առթիւ: Ի՞նչ եւ ինչպէ՞ս կարող էր ասել ընկերվարական մի թերթ — թէկուզ եւ անկուսակցական անունով — տակաւին Նիկոլայ ցարի նման մի ողոմելի բռնապետի մասին, մանաւանդ, խիստ դրաքննութեան տակ:

Կային կարծիք յայտնողներ, որ այդ օրը «Հորիզոն»ը լոյս տեսնի առանց խմբագրականի, նոյնիսկ փակուելու գնով: Այդ կը լինէր անտրամաբանական մի քայլ. մի կողմից մասնակցել պատերազմին կամաւորական խմբերով, իսկ միւս կողմից այդպիսի ցոյց: Ցարի Թիֆլիս հասնելու օրը «Հորիզոն»ը իր յաւելուածով լոյս տեսաւ շատ պաշտպաւոր առաջնորդող յօդուածով, որի հեղինակութիւնը հանրային կարծիքը վերագրում էր Վ. Վալադեանին: Ես խմբագրական վերջին ժողովում ներկայ չէի եւ չեմ կարող ականատեսի վկայութիւն տալ:

Ցարը Թիֆլիս հասաւ Նոյ. 26ին եւ փառաւոր ընդունելութեան արժանացաւ: Հասած օրն իսկ այցելեց կրօնական համայնքների եկեղեցիները, նախ՝ օրթոտոքս Սիոնի տաճարը, ապա հայերի Վանքի մայր եկեղեցին, վերջը մահմեդականների մզկիթը:

Առանձնապէս հանդիսաւոր եղաւ ցարի եւ իր չքախումբի ընդունելութիւնը Հայոց Վանքում: Երեք օր առաջ, Նոյ. 24ին, էջմիածնից եկել էր Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ Ե., որ այժմ, հոգեւորականութեամբ շրջապատուած, ընդունեց ցարին վանքի տաճարի դաւիթում: Վանքը եւ շրջապատը բռնուած էր խուռն բազմութեամբ:

Մինչեւ Նոյ. 29 ցարը մնաց Թիֆլիսում, ապա մեկնեց Կարս ու Սարըղամիշ եւ Դեկտ. 1ին վերադառնալով Թիֆլիս՝ շտապեց հեռանալ Ռուսաստան: Թրքական ճակատից վատ հոտեր էին հասնում:

Նոյ. 29ին տեղի ունեցաւ կովկասեան երեք ազգութիւնների՝ հայերի, վրացիների եւ մահմեդականների ներկայացուցիչների ընդունելութիւնը: Առանձնապէս ուշագրաւ էր հայկական պատգամաւորութիւնը, որին անդամակցում էին, ի միջի այլոց, Թիֆլիսի քաղաքագլուխ Ալ. Խատիսեանը, Հայոց Բարեգործական Ընկերութեան նախագահ Սամ. Ցարուխիւնեանը, Հայաստանի ապագայ պետական վերաքննիչ Մինաս Բերբերեանը, պատմաբան Լէօն, «Հորիզոն» օրաթերթի սեփականատէր Համբ. Մելիքեանը, հայկական դպրոցական հոսանքների ներկայացուցիչներ եւայլն:

ARAM webaram.com

Ցանուն հայ բնակչութեան «մեծ թագաւորին» ուղերձ կարդաց Սամսոն Ցարուխիւնեանը: Չեմ կարծում, թէ այդ ուղերձը թէ՛ իր ոճով եւ թէ՛ բովանդակութեամբ կարելի է առանց ամաչելու կարդալ այսօր: Հայ բնակչութեան պատգամաւորութիւնը արկանում էր առ ոտս Նորին Մեծութեան, իր հաւատարիմ հպատակութեան ու անձնուիրութեան զգացումները եւ յայտնում էր, որ միայն քրիստոնեայ Ռուսաստանն է պաշտպանել հայերին հարեւան մահմեդականների դէմ: Հայերը աղօթում են ռուս զէնքի յաջողութեան համար. թող ռուսական դրօշակը ծածանի Վոսփորի եւ Դարդանելի վրայ: Թող ձեր կամքով, մեծ թագաւոր, Տաճկաստանում Քրիստոսի հաւատի համար տառապող հայ ժողովուրդը իր յարութիւնը տօնի Ռուսաստանի հովանու ներքեւ նոր պատ կեանքի համար(*):

Ի հարկէ, ժամանակի համար բնական ու հասկանալի — եւ հաճելի — խօսքեր էին, բայց մոռանում էինք, որ մեզ լսում էին մեր հարեւանները, որոնք բնաւ չէին բաժանում մեր զգացումները «խաչապաչա թագաւորի» վերաբերմամբ. մահմեդականները արտատրուփ ապաւում էին «թուրք եղբայրներին», որոնք պիտի ազատէին իրենց ռուսական տիրապետութիւնից. վրացիների աչքը ուղղուած էր դէպի Գերմանիա...

Պէտք է ասել, սակայն, որ վրաց ու մահմեդական պատգամաւորութիւնները էլ նոյն լեզուով էին արտայայտւում «մեծ թագաւորի» առջեւ, ինչ որ եւ հայերը...

Ինչպէս յիշեցինք, Նոյ. 24ին էջմիածնից Թիֆլիս էր եկել Ամենայն Հայոց Կաթողիկոսը, յատկապէս ցարին տեսնելու համար:

Այդ տեսակցութեան հետ հայկական շրջանակները որոշ յոյսեր էին կապում: Առաջուց մշակուել էին այն հարցերը, որոնք պիտի տեսակցութեան առարկայ դառնային: Բնականաբար, ընդհանուր հետաքրքրութեան առարկան Հայկական Հարցն էր, այսինքն՝ Թըրքահայաստանի ապագան: Ընդհանուր եւ ամէնքին բաւարարութիւն տուող բանաձեւն էր. Թրքահայաստանի վեց նահանգների եւ Կիլիկիայի ինքնավարութիւն՝ Ռուսաստանի հովանաւորութեան ներքեւ:

Լաւ եմ յիշում Ազգային Բիւրոյի արտակարգ դպրանի նիստը, ուր վերջնականապէս քննուեց Կաթողիկոսի եւ ցարի տեսակցութեան հարցը: Ներկայ էին, յատուկ հրաւէրով՝ Ազգային Բիւրոյի, Հ.Ց.Դ.

(*) Մանրամասնութիւնները տես իմ «Հայրենիք Տարեգիրք», 1947 թ. էջ 124–129:

ARAM webaram.com

Բիւրոյի եւ կամաւորական խումբերի կարգադրիչ Մարմնի անդամները եւ մի քանի յատուկ հրաւիրուած անձեր:

Առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսը, իբրեւ նախագահ, ժողովը բանալով՝ զեկուցեց իր խօսակցութեան մասին Կաթողիկոսի հետ:

Կաթողիկոսը լիովին համաձայն էր մեր բանաձեւին: Յատկեանը մանրամասն տեղեկութիւններ տուեց ցարի այցելութեան եւ փոխարքայի պալատում տիրող հայանպաստ տրամադրութեան մասին. վրացիները, մասնաւորապէս ազնուականները, դժգոհ էին Կոմս Վորոնցով-Դաշկովից, բայց, մանաւանդ, Կոմսուհուց, որոնք չարունակ առաջ էին քաշում հայերին: Գոհ չէին եւ հայերի ընթացքից: Վրաց ազնուականութեան պետը ասել էր. «Հայերը մոռանում են, որ իրենք հիւր են Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիսում...»:

Սամսոն Ցարուխիւնեանը կարդաց իր կազմած նախագիծը այն ուղերձի, որ Կաթողիկոսը պիտի ներկայացնէր ցարին, եւ որ ընդունուեց դրեթէ անփոփոխ: Խօսք բացուեց ուղերձի հիմնական մասի՝ Հայկական Հարցի շուրջ — ինքնավար Հայաստան մինչեւ Ա-լեքսանդրեան՝ Ռուսաստանի հովանաւորութեան ներքեւ:

Առաջին խօսք առնողը պատմաբան Լէօն էր: Այսօրուան պէս յիշում եմ նրա մոայլ դէմքը (սեւ ակնոցներ էր կրում) եւ ջղային ճառը: Նա սկսեց Ղարաբաղից (ինքը Ղարաբաղցի էր) եւ Լոռիից, որոնք Հայաստանի հիւսիսային ամրոցներն էին, առանց որոնց Հայաստանը անպաշտպան կը լինի հիւսիսից, անցաւ Տրապիզոնի նահանգին, որի պահանջը հայերի կողմից, երեխայական էր: Հայաստանի պատմական եւ բնական սահմանը Պոնտոսի լեռնաշղթան է. Տրապիզոնը երբեք Հայաստանի մաս չի կազմել: Ազգագրական տեսակէտից նա աւելի յոյն-վրացական է. վրացիները աւելի մեծ իրաւունքով իրենցն են համարում Տրապիզոնի նահանգը, հետեւաբար, մեր պահանջը բախում առաջ պիտի բերէ մեր եւ վրացիների միջեւ:

Աւելի հաւանական էր, որ պատերազմի հետեւանքով Տրապիզոնի չրջանը դրաւէին ռուսները, ամրողջացնելու համար Սեւ ծովի եզերքների չղթան՝ Նովորոսիյսկ – Տուապսէ – Սոխում – Բաթում – Տրապիզոն, դուցէ մինչեւ Սամսոն:

Ըստ Լէոյի, հայերը պէտք է չատ չխօսէին Տրապիզոնի մասին: Պատմութիւնը հայերին երբեք չի մղել դէպի Սեւ ծով, ընդհակառակը հայերին հրել է Միջերկրականի կողմը: Կիլիկեան թագաւորութիւնը միջադէպ չէր Հայոց Պատմութեան մէջ, այլ ազգային տարերքի մղում: Մեր պահանջը պէտք է լինէր մինչեւ Մերսին եւ Ա-լեքսանդրէտ...

ARAM webaram.com

Լէոյի երկար եւ կերգով արտասանուած ճառը արժանացաւ բուռն ծափերի, որպէս ժամանակի ընդհանուր զգացումներու արտայայտութիւն: Ցիշում եմ Ցովհ. Թումանեանի խօսքերը. «Մենք պինդ պէտք է կանգնենք էրզրումի բարձունքներում եւ նայենք դէպի Միջերկրական»:

Քաջագնունին էր, կարծեմ, որ փորձեց պաշտպանել Սեւ ծովը ընդդէմ Միջերկրականի, բայց յաջողութիւն չունեցաւ. ե՛ւ Սեւ ծով ե՛ւ Միջերկրական, մինչեւ Մերսին եւ Ալեքսանդրէտ — այս էր ընդհանուր մտայնութիւնը:

Ճառեր խօսուեցան՝ լուրջ եւ անլուրջ, ժողովը տեւեց մինչեւ ուշ գիշեր: Ամէնքը ուզում էին հաւատալ, որ կաթողիկոսի եւ ցարի տեսակցութիւնը վճռական նշանակութիւն պիտի ունենար Հայկական Հարցի լուծման համար՝ ըստ հայկական բաղձանքների:

Տեսակցութիւնը տեղի ունեցաւ, որից յետոյ ցարը մեկնեց Կարս եւ այնտեղից Սարըղամիշ այցելելու համար ռազմաճակատի դործօն զօրամասերին:

Կարսի բնակչութիւնն էլ, մեծ մասով հայերը, ջերմ ընդունելութիւն էր սարքել: Կարսի բնակչութեան կողմից բարի գալուստի ճառ է խօսել փաստաբան Գր. Ծամոյեանը: Այսինքն՝ փորձել է խօսելու: Ծիծաղով պատմում էին, որ Ծամոյեանը թագաւորին տեսնելով այնքան չփոթուել է, որ լեզուն կապուել է:

— Ձերդ Մեծութիւն, արտասանել է եւ կեցել՝ անկարող շարունակելու:

Նորից՝ «Ձերդ Մեծութիւն» եւ կեցել:

— Հասկացայ, հասկացայ, ասել է ցարը, չնորհակալ եմ, եւ առաջ է անցել:

Ցարը հասիւ Սարըղամիշ հասած՝ լուրեր են ստացւում, որ թուրքերը չարժուել են Կովկասի ուղղութեամբ: Էնվէր փաշայի նշանաւոր արշաւանքի սկիզբն էր:

Ցարը շտապով վերադարձաւ Թիֆլիս եւ փութով մեկնեց Խուսաստան:

Կիրակի, Դեկտ. 7ին, Թիֆլիսի հայութիւնը չքեղ ընդունելութիւն սարքեց ի պատիւ Ամենայն Հայոց կաթողիկոսի: Էջմիածին մեկնելուց առաջ Գէորգ Ե. վեհափառը ուզում էր չփման մէջ մտնել հայ հասարակութեան հետ եւ յայտնել ցարի հետ իր ունեցած տեսակցութեան արդիւնքը:

Ներսիսեան դպրոցի Ալ. Մանթաշեանի դրամով կառուցուած

ARAM webaram.com

վտանգել չէնքի սրահը բերնէ բերան լեցուած էր Թիֆլիսի հայ ընտրանիով: Կաթողիկոսին եւ իր չքախումբին ոգեւորուած ընդունելութիւն ցոյց տրուեց: Ներսիսեան դպրոցի քառաձայն երգչախումբը, երաժշտապէտ Սպ. Մելիքեանի դեկավարութեամբ, խանդավառ մթնոլորտում, երգեց «Մեր Հայրենիք»ը, որից յետոյ Առաջնորդ Մեծրոպ եպիսկոպոսը ներկաների կողմից ողջոյնի խօսք ասաց: Կաթողիկոսը պատասխանեց:

Նա ասաց, թէ ցարը սիրալիր ընդունելութիւն է ցոյց տուել իրեն եւ ուշադրութեամբ ու համակրանքով լսելով կաթողիկոսի ուղերձը, պատասխանել, թէ՝ «Ձերդ Սրբութիւն, ձեր բոլոր բաղձանքները կը կատարուեն, անհոգ եղէք»:

Սուրէնեան կաթողիկոսը, ի հարկէ, Խրիմեան չէր: Ոչ նրա պերճախօսութիւնը ունէր, ոչ նրա կրակը, ոչ էլ հմայքը, բայց ներկաները բուռն խանդավառութեամբ ծափահարում էին նրան: Ձեր բոլոր ցանկութիւնները կը կատարուեն, նշանակում է Թուրքահայաստանը կը լինի ինքնավար եւ ազատ, մինչեւ Ալեքսանդրէտ...

Ո՞վ կարող էր մոքից անցընել, որ մինչ ցարը մի կողմից հայերին օրօրում էր ոսկի յոյսերով, միւս կողմից իր դաշնակից Անգլիացիների եւ Ֆրանսացիների հետ առակարկութեան մէջ էր Օսմանեան կայսրութեան անդամահատման մասին, եւ «ի վերայ պատմուճանին վիճակս արկանէին», վերջը խոստանալու համար հայերին եկեղեցական ինքնավարութիւն...

Պատմութիւնը կատարեալ չի լինի, եթէ, իբրեւ վերջաբան, չաւելացնենք եւ հետեւեալ պաւչատա-ողբերգական դէպքը:

Կաթողիկոսը արդէն մեկնել էր Էջմիածին, երբ փոխարքայ կոմս Վորոնցով-Դաշկովը, Առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսին յանձնում է կնքուած մի պահարան՝ կաթողիկոսին հասցնելու համար: Այդ պահարանի մէջ, իբր թէ, յատուկ դրութեամբ յայտնուած էր ցարի օղոստափառ կամքը հայկական բաղձանքների մասին:

Մեսրոպ եպս.ը ծրարը յանձնում է գիւղատնտես Գիւզալեանին Էջմիածին տանելու համար: Ալեքսանդրապոլի կայարանում ծրարը գողանում են Գիւզալեանից: Ամէն փնտռտուք անցնում է ապարդիւն: Ամէնքը համոզուած էին որ կնքուած ծրարը վերադարձել է աղնուափայլ կոմսի ձեռքը, եւ Թիֆլիսում սրախօսում էին.

— Հայաստանի ինքնավարութիւնը գողացել են...

ARAM webaram.com

ԷՆՎԷՐԻ ԱՐԿԱԾԱԽՆԴՐՈՒԹԻՒՆԸ

Դեկտեմբերի սկիզբները, երբ ցարը արդէն Կովկասից դուրս էր, Թիֆլիսում, մասնաւորապէս կառավարական շրջաններում, սկսեցին մտահոգիչ լուրեր պատել: Ականջէ ականջ չչնջում էին, որ Թուրք բանակը Էնվէր փաշայի հրամանով, յարձակման է անցել Օլթիի ուղղութեամբ: Շուտով այս լուրերը դարձան հասարակութեան սեփականութիւն, եւ ջղային հոգեվիճակ առաջ բերին Թիֆլիսում:

Թուրքերը, յանձին մահմեդական բնակչութեան, մօտից տեղեակ էին Կովկասի ներքին դրութեան եւ, բնականաբար, լաւ ծանօթ էին ռուս բանակի վիճակին: Գերմանական ճակատում կրած մեծ կորուստների հետեւանքով՝ Գերագոյն Հրամանատարութիւնը քաշել-տարել էր Կովկասի լաւագոյն զօրամասերը. Թուրքական ռազմածի վրայ մնացել էին երկրորդ կարգի ուժեր, որոնց դէմ Թուրքերը ունէին մի քանի մարզուած զօրաբաժիններ (կորպուս) եւ համիդիէ գունդեր ու քրտական հրոսախումբեր:

Էնվէր փաշայի հաշիւը պարզ էր. օգտուելով կովկասեան ռուս բանակի տկարացումից՝ արագ եւ վճռական հարուածով՝ գրաւել Օլթին, Սարըղամիշն ու Կարսը եւ ուղղակի արշաւել Թիֆլիսի վրայ: Յաջողութեան դէպքում Կովկասի ամբողջ մահմեդականութիւնը պիտի միանար Թուրքերին. վրացիները առնուազն կը մնային չէզոք, Բաքուն իր նաւթային հարստութեամբ կ'անցնէր Թուրքերի ձեռքը, եւ Կովկասի ճակատագիրը կ'որոշուէր ի նպաստ Օսմանեան կայսրութեան: Կովկասից անդին, Կասպից ծովի միւս կողմում, մահմեդական ազգաբնակութիւնը նոյնպէս բաց սրտով պիտի ողջունէր կրօնակից Թուրքերի յաղթանակը...

Անակնկալ եւ արագ հարուածով Թուրքերը խորտակեցին ռու-

ARAM webaram.com

սական առաջաւոր ուժերը Բասենի գծի վրայ, դրաւեցին Օլթին իր շրջանով եւ սրարշաւ յառաջացան դէպի Սարըղամիշ՝ կտրելով Սարըղամիշ–Կարս երկաթուղու գիծը եւ նոյնիսկ մի պահ դրաւելով Սարըղամիշի երկաթուղային կայարանը:

Ռուսական ջախջախուած զօրամասերի մէջ էր եւ հայկական կամաւորական չորրորդ խումբը Քեռիի հրամանատարութեան տակ, որ մեծ կորուստներ տուեց:

Թուրքերը պաշարման տակ առին ռուսական դվխաւոր ուժերը Զօր. Բերխմանի հրամանատարութեան ներքեւ եւ մի պահ կտրեցին Թիկունքից: Ռուս բանակի համար ստեղծուեց ճգնաժամային մի դրութիւն: Մինչ տաք կռիւներ էին տեղի ունենում կարսի ուղղութեամբ, ռուս բանակը սկսեց նահանջել ընդհանուր ճակատի Ալաշկերտ–Բայազէտ–Սալմաստ գծի վրայ՝ անտանելի դրութեան մէջ դնելով այդ շրջանների հայութիւնը եւ հայ կամաւորական խումբերը:

Եղաւ մի վայրկեան, երբ Կովկասի վերին հրամանատարութիւնը, կարծես, անխուսափելի էր համարում Անդրկովկասի դրաւումը Թուրքերից: Կառավարութիւնը արագ կերպով դրամ եւ փոխադրութեան միջոցներ տրամադրեց ռուս պաշտօնեաների եւ զինուորականների ընտանիքներին, որպէսզի անմիջապէս մեկնեն Ռուսաստան: Պետական հիմնարկութիւնները պատրաստւում էին փոխադրուելու Հիւսիսային Կովկաս:

Հիւսիսային Կովկաս փոխադրուելու պատրաստութիւններ էր տեսնում եւ Կովկասեան Սպայակոյտը, որի հետ մենք ամենօրեայ յարաբերութեան մէջ էինք եւ որից տեղեկութիւններ էինք ստանում նաեւ մեր կամաւորական խումբերի գործունէութեան մասին: Շտաբում, ընդհանուր առմամբ, բարձր կարծիք կար կամաւորների քաջագործութեան եւ անձնուիրութեան մասին, բայց ռազմաղաշտից, որոշ հրամանատարների կողմից, աննպաստ լուրեր էին հասնում: Առանձնապէս վատ վերաբերում ունէին դէպի մեր խումբերն օսետին հրամանատար Աբացիեւը եւ մի քանի ուրիշ պինուորականներ:

Դեկտեմբերի կէսերին դրութիւնը ճակատում չատ ծանրացաւ: Թուրքերը սպառնում էին դրաւել Սարըղամիշը եւ պաշարել Կարսը: Շտաբում խօսւում էր այն մասին, թէ Թիֆլիսն էլ վտանգի տակ է: Իմ բարեկամ չտաբական զօրավարներից մէկը, իրրեւ իրազեկ, հաւատացնում էր, որ մէկ–երկու չաբաթից Թուրքերը կը լինեն Թիֆլիսում: Ռուսաբանական պարէդի մօտ, բարձունքների վրայ, սկսեցին փորել դիրքեր, ինչ որ աւելի եւս սաստկացրեց խուճապը բնակչութեան մէջ: Մասնաւորապէս յուզուած էին հայերը:

ARAM webaram.com

Ազգային Բիւրոյի կարեւոր անդամներից մէկը՝ Բարեգործականի նախագահ Սամսոն Ցարուքիւնեանը, հեռախօսով լուր տալով Առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսին, թէ գործով մեկնում է Բաղու, հեռացել էր Թիֆլիսից ի վրդովումն հայ բնակչութեան: Նրան հետեւել էր Ազգային Բիւրոյի դանճապահ մեծահարուստ Մկրտիչ Քալանթարեանը: Դրանից առաջ, Թիֆլիսից անհետացել էր Ազգ. Բիւրոյի քարտուղար Ցակ. Քոչարեանը, որի ճայնը, մի քանի օր վերջը, հասաւ Ռոստովից: Վրացիները ծաղրում էին մեզ. ձեր վրիժները փախել են... Փախչողները վարիչ չէին, ի հարկէ, բայց եւ այնպէս ամօթ բան էր:

Առաջնորդարանում այդ առթիւ, Առաջնորդ Մեսրոպ եպս.ի նախագահութեան տակ հասարակական ներկայացուցիչների բազմամարդ եւ յուզումնալից ժողով տեղի ունեցաւ: Բուռն ճառեր խօսուեցան դասալքութեան դէմ: Որոշուեց պայքարել դասալքութեան դէմ, բայց իմ տպաւորութիւնս այն էր, որ չառերի դրպանում պատրաստ կար երկաթուղային տոմսակ...

Յուզումնալից ժողովներ էին դումարում եւ վրացիները, որոնք, ընդհանրապէս, չասեմ բարեացակամութեամբ, բայց պաղարիւնութեամբ էին նայում Թուրքերի յառաջացման վրայ: Ցիշում եմ Նոյ Ռամիշվիլիի ճառը միջկուսակցական մի ժողովում. պարոններ, ասաց նա, իրեն յատուկ չնականութեամբ, Թուրքերն էլ մեզ պէս մարդիկ են: Ինչէր փաշան Եւրոպա տեսած զինուորական է...

Վրացիները հակառակ էին Թիֆլիսի պաշտպանութեան: Նրանք պնդում էին, որ Թուրքերին պէտք է ընդունել առանց կռուի, ազ ու հացով: Վրաց աղնուականների ժողովը այդ իմաստով բանաձեւ էր հանել. եւ աղնուականութեան նախագահ իշխան Աբխազին դիմել էր փոխարքային՝ խնդրելով, որ, ի հարկին, Թիֆլիսը առանց կռուի յանձնուի Թշնամուն:

Նոյն իմաստով բանաձեւ հանեց եւ Թիֆլիսի լրագրողների ժողովը, վրացիների ճնշման տակ: Այդ հարցում մահմեդականներն էլ, բնականաբար, վրացիների հետ էին: Այդ օրերին առանձնապէս սուր կերպով զգացուեց, որ հայերը մենակ են, երբ հարցը դալիս է Թուրքերին: Անխօս եւ անխոստովանելի, բայց որոշ կերպով երեւում էր, որ հայերը կովկասեան ժողովուրդների մէութիւնից դուրս են: Մի փաստ, որ երթալով աւելի չեչտուեց:

Այդ փաստը, մասնաւորապէս ակնբախ ձեւով երեւան եկաւ կուսակցութիւնների ներկայացուցիչների ժողովներում, որոնք տեղի

ARAM webaram.com

ունեցան թուրքական յարաձգման կապակցութեամբ: Միջկուսակցական այդ ժողովներին մասնակցում էին սոցիալ-դեմոկրատները, մեծ մասամբ վրացիներ, սոցիալիստ-յեղափոխականները, Հ. Յ. Դաշնակցութիւնը, վրացի ֆէդէրալիստները, նացիոնալ-դեմոկրատները, հայ հնչակեանները, ինչ որ լեռնականներ եւ ապրբէջանցիներ, որոնք դեռ այդ անունը չէին առել:

Դաշնակցութեան կողմից այդ ժողովներին մասնակցում էին Խաչ. Կարճիկեանը, Արշ. Ջամալեանը, Աւ. Շահխաթունեանը, Յովսէփ Արղութեանը եւ ես:

Վրացիների կողմից յիշում եմ Նոյ Ժորդանեային, Նոյ Ռամիշվիլիին, Ե. Գեգեչկորիին եւ կատաղի ազգայնական Գվազաւային:

Ափսոս, որ այդ ժողովների արձանագրութիւնները չեն մնացել: Կովկասեան յեղափոխական կենտրոնի եւ Սէյմի նախապատկերն էին նրանք:

Մահմեդականներից աչքի ընկնող մարդ չկար, մի քանի երիտասարդներ միայն, որոնց կողմից խօսք էր առնում ախալցխացի Պեպինովը:

Օրակարգի միակ հարցն էր՝ «մեր դիրքը դէպի թուրքերը», որի չուրջ բուռն վէճեր տեղի ունեցան:

Ի հարկէ, խօսքով տարբերութիւն չկար դէպի թուրքերի յարձակումը: Ամէնքը դատապարտում էին թուրքերին եւ հայրենասիրական ոգեմաչունչ ճառեր էին արտասանում յանուն Ռուսաստանի դեմոկրատիայի, բայց երբ հարցը գալիս էր գործնականի, կարծիքները կտրուկ կերպով բաժանւում էին հայերի եւ միւսների միջեւ:

Մենք պահանջում էինք, որ կովկասեան բոլոր ժողովուրդները միանան պաշտպանելու համար կովկասեան դեմոկրատիայի կեանքն ու ստացուածքը, զէնքով պաշտպանել նաեւ Թիֆլիսը, իբրեւ կովկասեան դեմոկրատիայի մայրաքաղաք: Միւսները, բայց, մանաւանդ վրացիները, լսել անգամ չէին ուզում Թիֆլիսը կռուով պաշտպանելու մասին. սոցիալ-դեմոկրատ, նացիոնալ-դեմոկրատ համամիտ ու համերաշխ էին այս հարցում: Նոյ Ռամիշվիլին, սոցիալ-դեմոկրատ կուսակցութեան կողմից, առաջարկում էր միջկուսակցական համերաշխութեամբ կազմել միլիցիա որ իր վրայ առնէ քաղաքի անդորրութեան պահպանութիւնը ռուս իշխանութեան հեռանալու դէպքում, եւ քաղաքային վարչութիւնը ազ ու հացով ընդունէ թուրքերին:

Ռամիշվիլիի ճառի այս կէտում մի բուռն միջադէպ առաջ եկաւ. Աւետիք Շահխաթունեանը, որ երեւութապէս հանդարտ ծխում

ARAM webaram.com

էր մօտս, յանկարծ, ցատկեց տեղից եւ, իր փոքր բռունցքը ճօճելով ճառախօսի ուղղութեամբ, ճչաց.

— Պրովոկատոր...

Ժողովը իրար խառնուեց: Ամէնքը ոտքի ելան յուզուած: Ոտմիշվիլին, բերանը բաց, կանգնած էր տեղը, չէր հասկանում ինչ է կատարւում: Մեծ դժուարութեամբ կարելի եղաւ կարգի բերել եւ շարունակել ժողովը: Շահխաթունեանը ամբողջ մարմնով դողում էր...

Բարեբախտաբար, ոչ մի լիճչախա կազմելու պէտք եղաւ, ոչ էլ աղ ու հացի: Դէպքերը ռազմաճակատում ուրիշ ընթացք ընդունեցին եւ այլեւս միջկուսակցական ժողովի կարիք չտեսնուեց: Մնացին միայն հայ-վրացական բախումների դառն յիշողութիւնները:



ՎԱՐԴԱՆ, ՔԵՌԻ, ՀԱՄԱԶԱՍՊ

Ազգային Բիւրօն, մասնաւանդ կամաւորական ջոկերի կարգադրիչ Մարմինը այդ օրերին տենդոտ գործունէութիւն ցոյց տըւին: Վանդի սուր վայրկեանին Կովկասեան Շտաբը դիմեց մեզ նոր կամաւորներ տրամադրելու, առանձարկելով նիւթական միջոց, զէնք ու ռազմամթերք: Կարգադրիչ Մարմինը Ազգային Բիւրոյի հետ միասին քննեցին առաջարկը՝ ընդառաջ գնաց: Տեսակցութիւնները փոխադրքային պինուորական օղնական Զօր. Միշլաեւսկիի հետ եղաւ, ինչպէս ասում են, սիրալիր եւ արդիւնաւոր: Կարգադրիչ Մարմինը եռանդով անցաւ նոր գործունէութեան:

Կազմուեց եւ Ալեքսանդրապոլ փոխադրուեց մի նոր կամաւորական խումբ Յանանսորի վարդանի գլխաւորութեամբ: Հիմը դրուեց

ARAM webaram.com

պահեստի գունդին, սպայական դասընթացքի։ Կառավարութիւնը տրամադրից հրացան ու փամփուշտ սահմանամերձ շրջանների հայ բնակչութիւնը զինելու համար։

Կառավարութիւնը, չէթէ զինուորական իշխանութիւնը, այլեւս բացարձակ վստահութիւն էր ցոյց տալիս հայերի վերաբերմամբ, դնահատում էր նաեւ հայ կամաւորական խումբերի մատուցած ծառայութիւնը։

Ինվէրը յարձակման ձեռնարկելով՝ հաշուի չէր առել Հայաստանի ձմեռը. Թուրք բանակը պատրաստ չէր կռուելու հայկական լեռների բուք ու սառնամանիքի դէմ։ Օլթի–Սարըղամիշի ռազմադաշտում ցուրտը 35–40 աստիճանի էր հասնում զերոյից վար։

Ճանապարհները ծածկուած էին անանցանելի ձիւնով։ Թուրք բանակը յանդուգն եւ արագ շարժումով յետ մղելով ռուսական յառաջապահ զօրամասերը եւ մտնելով ռուսական հողը՝ անհնարին դժուարութեան հանդիպեց ցրտի եւ ձեան պատճառով։ Սարըղամիշի շրջանում բազմաթիւ ասկեարներ սառել էին կանգնած, հրացանը ձեռներին։ Սառածներին եւ զերի ընկածներին անհնար էր փոխարինել նոր ուժերով։ Եւ Թուրքերի յաղթական արշաւը վերածուեց փլուզումի՝ Ինվէրի համար։ Ռուսները, կարճատեւ խուճապից ու շփոթից սթափուած, ուշքի եկան եւ ամբողջ ռազմաճակատի վրայ, Օլթիից մինչեւ Պարսկաստան, յետ մղեցին Թուրքերին։

Կովկասը ազատուած էր մահացու վտանգից, բայց ի՞նչ գընով։ Մասնաւորապէս սահմանամերձ հայկական շրջանները ծանր կորուստ ունեցան։ Բասենի, Ալաշկերտի, Բայազէդի եւ Խոյի, Սալմաստի շրջանների հայութիւնը՝ լքելով տուն ու տեղացուածք, գաղթեց ապահով վայրեր։ Նահանջող ռուս բանակի հետ յետ քաշուեցին եւ կամաւորական խումբերը կիսակազմալոյծ։ Կովկասի հայութեան ուսերին ընկաւ մի նոր պարտականութիւն. պատերազմից վնասուածներին եւ գաղթականներին օգնութեան գործը, որ երթալով սեւելի լայն ծաւալ պիտի ստանար յարաճուն կարիքների առջեւ։

1914 Թուականը վատ վերջացաւ հայերի համար։ Որոշ զարձաւ, որ պատերազմը այնքան էլ կարճ ու յաղթական չի լինելու, եւ ռուսական յաղթանակի հետ կապուած յոյսերը սկսեցին նեմանալ։ Ոգեւորութիւնը կամաւորական չարժման շուրջ զգալի չափով թուլացում էր. տեղը բռնում էր մտահոգութիւնը պատերազմի ազետեալների համար։ Սահմանի մեւս կողմի հայութեան վիճակը անյայտ էր. ի՞նչ էր կատարում Բարձր Հայքում, Տարօնում, Վասպուրականում եւ սեւելի հեռուները — ոչ մէկ լուր։ Բալկանների վրայով միայն հատ

ARAM webaram.com

ու կարօր տեղեկութիւններ էին ստացւում Պոլսից, որոնց մէջ մխիթարական ոչինչ չկար:

Եւ, ըստ աւանդական սովորութեան, չարժուեցին դժգոհները «Մշակ» թերթի խմբագիր Համբարձում Առաքելեանի դլխաւորութեամբ, որ կառավարական պայքար էր մղում Ազգային Բիւրոյի դէմ՝ ձեռք-ձեռքի հնչակեանների եւ սոցիալ դեմոկրատների հետ: Ո՞վ էր պատասխանատու բոլոր անյաջողութիւնների համար. ի հարկէ, Հ. Յ. Դաշնակցութիւնը եւ Ազգային Բիւրօն: Փորձ եղաւ նոյնիսկ փախըստական Սամսոն Յարութիւնեանի տեղը Ազգ. Բիւրոյի նախագահ դնել Պետական Դումայի անդամ Մ. Պապաջանեանին, որ, սակայն, վախենալով պատասխանատուութիւնից՝ խուսափեց այդ պատուից: Յարութիւնեան եւ Մ. Պապաջանեան միեւնոյն գաղափարի տէր մարդիկ էին: Յարութիւնեանը փլիբտ էր անում դաշնակցականների հետ, ցարական վարչաձեւի անկումից յետոյ նոյնիսկ փորձ արաւ մտնելու Դաշնակցութեան շարքերը, բայց հանդիպելով մերժման՝ ձեռնարկեց ժողովրդական կուսակցութեան կազմութեան:

Հակառակ մոլեգին յարձակումների իր վրայ՝ Ազգ. Բիւրօն պահեց իր տոկունութիւնը: Դեկտեմբերի վերջը Թիֆլիսի Առաջնորդարանում գումարուեց Ազգ. Բիւրոյի մասնաճիւղերի ներկայացուցիչների ժողով: Եկել էին ներկայացուցիչներ Երեւանից, Ալեքսանդրապոլից, Կարսից, Գանձակից, Ղարաբաղից, Բագուից, Բաթումից եւ ուրիշ տեղերից:

Օրակարգի հարցերի մէջ կային Ազգ. Բիւրոյի զեկուցումը, կամաւորական խումբերի Կարգադրիչ Մարմնի զեկուցումը, կամաւորական խումբերի վերակազմութիւնը, պատերազմի աղետեալներին օգնութեան գործը եւայլն:

Ես դրիպով հիւանդ էի եւ ժողովի առաջին օրերի նիստերին ներկայ չեղայ: Կարգադրիչ Մարմնի կողմից ինձ փոխարինեց Աբր. Գիւլխանդանեանը: Կամաւորական խումբերի գործունէութեան մասին ես առաջուց պատրաստել էի զրաւոր զեկուցում: Ներկայ գտնուեցայ միայն քաղաքական յանձնախումբի գաղտնի խորհրդակցութեան եւ ընդհանուր ժողովի վերջին նիստում: Ժողովներին նախագահում էր Առաջնորդ Մեսրոպ եպս.ը. Ազգ. Բիւրոյի կողմից զեկուցաբեր եւ ներկայացուցիչ էին Ալ. Խատիսեանը եւ փոխ-նախագահ՝ Յովսէփ Խունունցը:

Պատմական տեսակէտից չատ հետաքրքրական կը լինէր ունենալ այդ ժողովի նիստերի արձանագրութիւնները, որոնք, դըժ-

ARAM webaram.com

բախտաբար, կորել են, ինչպէս եւ Ազգ. Բիւրոյի բոլոր արձանագրութիւնները ու դիւանական թղթերը: Ցիշողութեանս մէջ մնացել են ընդհանուր տեղեկութիւններ:

Ժողովը ուշադրութեամբ լսեց Ազգ. Բիւրոյի եւ կարգադրիչ Մարմնի զրաւոր զեկուցումները, եւ, առանց խիստ քննադատութեան, հաւանութիւն տուեց կատարուած գործունէութեան: Որոշեց պահել ու բարեկարգել կամաւորական խումբերը՝ աւելի որոշ հիմքերի վրայ դնելով խումբերի նիւթական եւ ռազմական գործը: Աւելի որոշ ու յստակ երաշխիքներ ստանալ Հայկական Հարցի լուծման համար, որի բանաձեւը — ինքնավարութիւն մինչեւ Կիլիկիա Թուրքական հովանաւորութեան ներքեւ — համարուեց բաւարար. կառավարութիւնից պահանջել նիւթական միջոցներ պատերազմից վնասուածներին եւ գաղթականներին օգնելու համար. կենտրոնացնել եւ աւելի բարեկարգ հիմերի վրայ դնել գաղթականների օգնութեան գործը: Կամաւորական եւ քաղաքական հարցերը վերապահուում էին Ազգ. Բիւրոյին, գաղթականական եւ խնամատարական գործերը ցանկալի էր համարում կենտրոնացնել հասարակական եւ բարեգործական կազմակերպութիւնների ձեռքին:

Ժողովը ցրուեց առանց վերցնելու մարդկանց սրտերից պատահած դժբախտութիւնների թողած տպաւորութիւնը, բայց, մանաւանդ, առանց փարատելու վախը ապագայի համար:

*
**

Փակելու համար 1914 թուականի էջը, ուզում եմ արձանագրել մի քանի հանդիպումներ էլ, որոնք իմ վրայ որոշ տպաւորութիւն են գործել:

Կամաւորական խումբերի կազմակերպման չրջանում էր, Սեպտեմբերի վերջերը, Պոլսից Թիֆլիս հասաւ Արմէն Գարօն: Պոլսից մեկնել էր Բիւրոյի որոշումով բռնելու համար Թոստոմի տեղը Կարինում, բայց փոխանակ Տրապիզոնում իջնելու, եկել էր Թիֆլիս Սարըղամիշի վրայով Կարին անցնելու նպատակով: Թիֆլիսում, սակայն, պարզուեց, որ Սարըղամիշ—Կարին ճանապարհը փակ էր, եւ, առհասարակ, յարաբերութիւնները Թուրքիայի հետ համարեա խզուած էին: Կովկասում տիրող եռուզեռը եւ կամաւորական չարժման աւելի ստեղծուած խանդավառութիւնը դրաւեցին եւ Գարոյին, եւ նա թողեց Կարին երթալու միտքը: Աւելին, նա որոշեց դառնալ կամաւոր եւ մեկնել ռազմաճակատ՝ այն համոզումով, որ երեք-չորս

ARAM webaram.com

ամսից յաղթական կը մտնէ Կարին, ուր նրան սպասում էին մայրը եւ շատ հարազատներ:

Կամաւորական խումբերի հրամանատարները ունէին օգնականներ «չտաբի պետ» տիտղոսով: Դրօն իմ յետեւից էր, աշխատում էր համոզել, որ թողնեմ Թիկունքի «մունդատ» աշխատանքը եւ իրեն հետ երթամ ռազմաճակատ: Ես չէի համոզւում. զինուորական կոչում չէի զգում մէջս: Բիւրոյի ընկերներն էլ թոյլ չէին տալիս, որ թողնեմ գործս կարգադրիչ Մարմնի եւ Ազգ. Բիւրոյի մէջ: Արմէն Գաբոյի գալուց յետոյ, Դրօն ձգեց իմ օձիքը եւ ընկաւ նրա յետեւից: Գաբօն հոգեպէս պատրաստ էր արդէն կամաւորական շարժման մասնակցելու եւ առանց երկար-բարակ մտածելու համաձայնուեց դառնալու Դրոյի չտաբի պետ:

Այդ պարագան դժգոհութիւն առաջ բերեց մի շարք պատասխանատու ընկերների մէջ, որոնք տրամաբանում էին թէ Օսմանեան խորհրդարանի նախկին երեսփոխանի երեւումը թուրքերի դէմ իբրեւ ռուսական բանակի կամաւորական խումբի պետ, վատ հետեւանք կ'ունենայ Թուրքիայի սահմաններում ապրող հայերի համար: Մանաւանդ մեր ուսանող երիտասարդութիւնը, որ սիրում էր Գաբոյին, խիստ դժգոհ էր նրա այդ քայլից:

Անձնապէս ես եւս համամիտ չէի եւ աշխատում էի ուղղակի կամ Դրոյի միջոցով յետ կեցնել Գաբոյին իր մտադրութիւնից. նոյնպէս էին մտածում եւ Պաչ. Կարճիկեանը, Ա.. Շահխաթունեանը եւ ուրիշ ընկերներ: Նա ծիծաղում էր եւ ասում. «Զոճուխ էք, չէք հասկանում, մի քանի ամսում ես կը լինեմ Կարինում...»:

Մի անգամ էլ հաւաքական փորձ արինք համոզելու Գաբոյին, որ չմտնի կամաւորական խումբի մէջ: Հինգ-վեց ընկերներով տարինք նրան հիւրասիրելու Սաքայեանի յայտնի սրճարանը, Սոլոլակի փողոցում, «Հորիզոն»ի խմբագրութիւնից ոչ-հեռու:

Որքան յիշում եմ, ներկայ էին Պաչ. Կարճիկեանը, Ա.եւոիք Շահխաթունեանը եւ ուրիշ ընկերներ: Յատկապէս, Կարճիկեանն ու Շահխաթունեանը մեծ ճիգ թափեցին համոզելու համար Գաբոյին, որ հրաժարուի կամաւոր երթալու մտքից: Մանաւանդ, Շահխաթունեանը աշխատում էր ցոյց տալ, որ, անյաջողութեան դէպքում, աղետաւոր հետեւանքներ կարող է ունենալ Գաբոյի կամաւորութիւնը: Իբրեւ Օսմանեան խորհրդարանի նախկին երեսփոխան, որպէս պետական կարկառուն դէմք եւ Դաշնակցութեան առաջնորդներից մէկը, նրա քայլը կը նկատուի պետական դաւաճանութիւն եւ իրաւունք

ARAM webaram.com

կու տայ թուրքերին արդարանալու հայերի հանդէպ վարած իրենց խիստ քաղաքականութեան մէջ:

Գարօն լսում էր հանդարտ, հեգնական ժպիտը շրթունքներին. ի՞նչ են ասում այս լակոտները: կարծես վարանում էր՝ լո՞ւրջ ընդունել ասուածները, թէ կատակի վերածել: Վերջինը աւելի տեղին էր: Պատասխանը եղաւ կարճ ու վճռական.

— Երեք ամսից մենք կարինում ենք. կը տեսակցինք կարինում...

Մի ուրիշ յիշատակելի դէպք՝ Դրոյի վիրաւորուելը: Հոկտեմբերի վերջին օրերն էին, Թիֆլիսում բերնէ բերան տարածուեց



Ս. ՎՐԱՑԵԱՆ ԵՒ ԴՐՕ

մի ցնցող լուր. Դրօն սպանուել է կուռում. դիակը բերում են Թիֆլիս: Մարդ չէր ուզում հաւատալ: Եթէ սպանուել էր, դիակը ինչո՞ւ Թիֆլիս բերէին, վոխանակ թաղելու ծննդավայր Իգդիրում: Եթէ Թիֆլիս էին բերում, արդեօք մեռած չէ՞, այլ վիրաւոր եւ բերում էին բժշկելու...:

Վերջին ենթադրութիւնը ճիշդ դուրս եկաւ: Կիսամեռ վիճակում Դրոյին հասցրին Թիֆլիս եւ տեղաւորեցին Արամեան հիւանդանոցի սպայական բաժնում: Գնդակը ծակել էր կուրծքը եւ մնացել թոքում: Ախտին արիւն էր կորցրել: Դրոյի երկաթէ մարմինը ու

ARAM webaram.com

բժշկական արտակարգ խնամքը փրկեցին նրան մահից:

Իմ առաջին այցելութիւնը հիւանդանոց, սարսափելի տպաւորութիւն գործեց վրաս: Միայն մի քանի վայրկեանով թոյլ տուին տեսնելու: Դրօն գտանցում էր եւ չճանաչեց ինձ: Գիշերանոց քոյրերը պլուխ էին չարժում՝ անյոյս համարելով հիւանդի վիճակը: Ճնշուած սրտով հեռացայ հիւանդանոցից եւ այնուհետեւ սարսափով սպասում էի ճակատագրական լուրին:

Բայց Դրօն, ինչպէս չատերին, ինձ էլ խաբեց. չմեռաւ եւ սկսեց արագ ապաքինուել: Նրա սենեակը հիւանդանոցում դարձաւ ուխտատեղի. ամէն հայ ուզում էր տեսնել մահուան ճիրաններից փրկուած հերոսին:

Նոյեմբերի վերջերը Աբամեան հիւանդանոցը այցելեց Նիկոլայ ցարը: Ցարը ցանկութիւն էր յայտնել տեսնելու եւ հայ կամաւորների խմբապետին: Ցաջորդ երեկոյ, Ապդալին Բիւրոյի նիստում, ցարին ուղեկցող քաղաքապլուխ Ֆատխեանը պատմեց.

— Երբ ցարը մտաւ Դրօյի սենեակը, հիւանդի աչքերը փայլեցին ուրախ: Դրօն փորձեց բարձրանալ սպիտակ վերմակի տակից, բայց ցարը թոյլ չտուեց. ոչ, ոչ, հանդիստ պառկեցէք:

Ցարը մի քանի հարցումներ է ուղղում կռուի եւ վիրաւորուելու պարագաների մասին, Դրօն համարձակ պատասխան է տալիս: Ի վերջոյ, Ցարը հարցնում է.

— Ո՞ւր էք սովորել զինուորական արուեստը:

Դրօն պատասխանում է.

— Ցեղափոխութեան մէջ, Ձերդ Մեծութիւն:

Ցարը յանկարծակիի եկած՝ չփոթուած չի իմանում, ինչ պատասխանել:

Ֆատխեանը օգնութեան է հասնում.

— Ցեղափոխութեան մէջ Թուրքիայում:

Ցարը պարզեւատրում է Դրօյին սպայական Գէորգեան խաչով եւ ձեռքը սեղմելով հեռանում է:

Վերջը մենք ծիծաղում էինք Դրօյի սիրարանութեան վրայ ցարի հետ:

— Ցարին ինչո՞ւ չպատմեցիր Նակաշիձէի եւ Զօր. Ալիխանովի տեսորի մասին, հարցնում էր Լիդիա Արիստաֆորովնա Իստամանովան՝ բժ. Ց. Զաւրեանի քոյրը, որի բնակարանը փոխադրուեց Դրօն հիւանդանոցից դուրս գալուց յետոյ:

Այնուհետեւ Դրօյի առողջութիւնը արագ վերականգնեց, եւ նա ակնկալուածից առաջ կանգնեց երկրորդ կամաւորական խումբի գլուխը:

ARAM webaram.com

Մի ուրիշ հանդիպում մէջս մնացել է անմոռանալի:

Ռուս բանակի ընդհանուր նահանջի հետեւանքով տեղահան էր եղել եւ պարսկական ճակատի հայութիւնը Խոյից, Սալմաստից, Ուրմիայից: Օգնութեան սուր կարիք կար: Ատրպատականի թեմակալ առաջնորդ Ներսէս եպս. Մելիք-Թանգեանը փութացել էր ազէտի շրջանը, օգնելու համար ապետեալներին: Ապա, մի քանի օրով, եկել էր Թիֆլիս կառավարութիւնից նպաստ խնդրելու համար: Ինչ վերջը Սալմաստ պիտի փութար Սիրական Տիգրանեանի խնամատարական խումբը: Ներսէս Սրբազանին ես ծանօթացել էի էջմիածնում, 14 տարի առաջ, երբ նա եկել էր կուսակրօն ձեռնադրուելու: Երեք տարի վերջը, Համազասպ Բաղէշցեանի եւ ուրիշ երկու ճեմարանականների հետ մի ամառ էի անցկացրել նրա վանահայրութեան օրով Տաթեւում: Սեւ մազերով, թուխ դէմքով, բարձր հասակ, հիւրասէր, համակրելի մարդ էր: Ընթրիքից յետոյ, Տաթեւի պայծառ աստղերի տակ միասին իրաչէն էինք կարդում եւ փիլիսոփայում էինք աշխարհի բաների մասին: Այսինքն՝ Ներսէս հայր սուրբը խոսում էր, եւ մենք լսում էինք: Նա այն օրերին, չատերի նման, տարուած էր Իրաէնի Դոկտոր Շտոկմանով, որի մենախօսութիւնները գրեթէ գոց գիտէր: Իր մէջ էլ որոշ ման կար Շտոկմանի խմորից:



ՆԵՐՍԷՍ ԱՐՔ. ՄԵԼԻՔ-ԹԱՆԳԵԱՆ

Այնուհետեւ ես հետեւում էի Ներսէս հայր սուրբի գործունէութեան: Հայ-Թաթարական բախումների օրերին նրան աքսորեցին Խրիմի Սուրբ Խաչ վանքը, ուր նա որոշ ժամանակ վանահայր եղաւ: Ապա ընտրուեց Ատրպատականի առաջնորդ, արդէն եպիսկոպոսի աստիճանով: Նա եղաւ արժանաւոր յաջորդը դիտնական կարապետ եպ.

ARAM webaram.com

Տէր Մկրտիչեանի, որ վաղաժամ վախճանուեց Բազումի, կոյր աղիքի գործողութեան հետեւանքով: Երբ ես խմբագիր էի Բոստոնի «Հայրենիք»ի, 1912–14 թուականներին, նա երբեմն գրում էր ինձ Աւրպատականի թեմին վերաբերուող զանազան խնդիրների մասին՝ գլխաւորապէս կրթական–դպրոցական:

Թիֆլիս հասնելու յաջորդ օրը ես չտապեցի նրան այցելել առաջնորդարանում: Բոլորովին փոխուել էր, այնքան, որ եթէ դուրսը հանդիպէի, դուցէ եւ չճանաչէի: Փառաւոր սպիտակ մօրուքը զարդարում էր նրա դէմքն ու կուրծքը: Կարծես մեծացել էր: Ձայնը աւելի խրոխտ էր դարձել:

Բարեւ–աստծուբարիից եւ մի քանի յուշերի փոխանակութիւնից յետոյ, Ներսէս Սրբազանը հարցրեց սպառնական ձայնով.

— Այս ի՞նչ արիք դուք:

Ես չհասկնալ ձեւացրի հարցը:

— Ի՞նչ արիք դուք, ասում եմ, ինչո՞ւ այսպէս արիք... Ժողովուրդը քարուքանդ եղաւ...

Կարծես ես էի ժողովրդի քարուքանդ լինելու պատճառը...

Յուզուած էր չափազանց, եւ պատասխանատուներ էր փընտռում:

Ազգային աղէտների չրջանին պատասխանատու փնտռողներ շատ են լինում: Եւ ամբոխը, յաճախ, խաբւում էր. Ներսէս Սրբազանը դրանցից չէր: Այդ վայրկեանին նրա մէջ խօսում էր դառնութիւնը: Այդ. Բիւրոյի նիստում, ուր նա զեկուցում տուեց իր չրջանի դէպքերի եւ գործերի մասին, բոլորովին տարբեր կեցուածքով երեւան եկաւ իրրեւ սրտցաւ հայրենասէր եւ գործի մարդ: Պարսկահայութիւնը եւ վախճանականները Թուրքիայից շատ բանով պարտական էին Աւրպատականի կորուի Առաջնորդին:

Ներսէս Սրբազանը խնդրեց, որ հեռագրեմ Նիւ Եորք Պարսկաստանի Հայրենակցական Միութեան, որպէսզի նիւթական օգնութիւն հասցնեն հայրենակիցներին իր միջոցով: Ամերիկա եղած միջոցիս ես փորձել էի հայրենակցական միութիւն կազմել Նիւ Եորքում գտնուող մի քանի պարսկահայերից: Զեմ յիշում՝ գոյութիւնը պահե՞ց մեր կազմած բջիջը, բայց ունեւոր մարդիկ շատ չկային եւ մեծ օգնութիւն չէին կարող հասցնել: Այնուամենայնիւ, ես հեռագրեցի մեր ընկեր Ց. Պարոյրեանի հասցէով:

ARAM webaram.com

1915 ՍԵՒ ԹՈՒԱԿԱՆԸ

1915 Թ. Յունուար 1ին, Հ. Յ. Դ. Ամերիկայի կենտ. կոմիտէին ուղղուած մէկ նամակում, Թիֆլիսից, ես, ի միջի այլոց, գրում էի.

«Անպիտան տարի եղաւ 1914 Թուականը մեզ համար: Յոյսերու եւ յոյզերու տարի: Ռուս բանակի ընդհանուր նահանջը մեծ յուսախաբութիւն պատճառեց: Փոխանակ էրզրումը գրաւելու քիչ մնաց Կովկասէն ալ մաս մը վրայ տայինք: Հասարակութեան մէջ տիրող կարծիքը այն է, որ նահանջը արհեստական էր Հայաստանը հայերէ ամայացնելու ծրագրով:

«Ձեմ կարծեր, Թէ հիմնաւոր է այդ միտքը, որովհետեւ իսկապէս որ ռուս բանակը կովկասեան ճակատի վրայ Թոյլ է. լաւագոյն զօրամասերը փոխադրուեցին գերմանական ռազմաճակատ. Թուրքերու դէմ մնացեր են երկրորդական զօրամասեր եւ խեղճ հրամանատարութիւն:

«Այս է պատճառը, որ էնվէր փաշայի յարձակումը քիչ մըննաց յաջողութեամբ պսակուէր: Ռուս բանակը չէր, որ յաղթեց Էնվէրին, այլ Հայաստանի ձմեռուան արտակարգ առնամանիքը: Եթէ Թուրք բանակը տաք հագուստ եւ լաւ պարենաւորուած լինէր, անհաւանական չէր, որ յառաջանար մինչեւ Թիֆլիս, մանաւանդ որ Կովկասի մահմետականները ցնծութեամբ կ'ընդունէին: Իսկ վրացիներն ալ պատրաստ էին Թիֆլիսը յանձնելու Էնվէրին առանց կռուի»(*):

Եթէ 1914 Թուականը անպիտան տարի էր, ապա յաւէտ վատ

(*) «Հին Թղթեր Նոր Պատմութեան Համար», էջ 128:


ARAM webaram.com

յիշատակելի պիտի մնայ Հայ ժողովրդի մտքի մէջ յաջորդ 1915 թուականը:

Այս դեռ սկիզբն էր երկանց...:

Տարին սկսուեց ռազմաճակատի ընդհանուր նահանջի տպաւորութեան տակ: Թուրքիայի սահմանամերձ շրջանները քարուքանդ եղան, եւ բնակչութիւնը գրեթէ մերկ՝ ապաստանեց Կովկաս: Հայութեան առջեւ դրուեց մի նոր, շատ սուր հարց· գաղթականութեան տեղաւորման եւ հոգատարութեան գործը:

Նահանջի հետեւանքով մասամբ կազմալոյծ էին եղել կամաւորական խումբերը, որոնք չտապով կեանքի կոչուած, առանց մարզուելու կուռ մէջ մտած՝ կազմակերպական եւ մարտական շատ թերութիւններ երեւան բերին, թէեւ քաջութեամբ արժանացան վերին հրամանատարների գնահատութեան: Անհրաժեշտ էր կամաւորական խումբերը վերակազմել եւ լրացնել: Կամաւորական խումբերի վերակազմութիւնը առանձնապէս հրատապ եւ անյետաձգելի հարց էր: Գարունը բացուելուն պէս պիտի սկսուէին պատերազմական նոր գործողութիւններ եւ մեր խումբերը պէտք է լինէին առաջին չարքերում, չուռով, թրքահայ եղբայրներին օգնութեան հասնելու համար:



ԿՈՄՍ

Ռուսահայութեան յուզում էր թրքահայերի ճակատագիրը: Վասպուրականից, Արամի միջոցով, լուրեր էին գալիս, որ կացութիւնը երթալով աւելի եւ աւելի սպառնական է դառնում:

Տարօնից շատ աղօտ լուրեր էին հասնում: Լսւում էր, որ Կոմսը (Վահան Փափազեան) հասել է Մուշ եւ Ռուբէն Տէր Մինասեանի հետ միասին գլխաւորում էին տեղական ղեկավարութիւնը: Կոմսը Պոլսից անցել էր Թիֆլիսի վրայով, չփուել էր այնտեղի պատասխանատու շրջանակների հետ, խորհրդակցութիւն էր ունեցել կուսակցութեան վերին մարմնի եւ պատասխանատու ընկերների հետ, ուրեմն, ծանօթ էր ընդհանուր կացութեան, տրամադրութեան եւ մը-

ARAM webaram.com

տայնութեան: Ի՞նչ էր կատարւում այժմ Տարօնում: Ռուսահայոց մտքում Տարօնը Հայաստանի սիրտն էր: Անյայտութիւնը մտահոգում էր ժողովրդին:

Բարձր Հայքից կովկասը աւելի էր կտրուած: Իրրեւ թուրք բանակավայր կարինը դարձել էր բոլորովին անմատչելի: Արմէն Գաբոյի յոյսը, մի քանի ամսից հասնել կարին, յօդս ցնդեց:

Կովկասը անթափանց վարագոյրով բաժանուած էր և՛ Տրապիզոնի շրջանից և՛ ծովեզերեայ միւս քաղաքներից: Աւելի հեռուներից՝ Խարբերդից, Սեբաստիայից, Կիլիկիայից, Ինջպէս եւ Բիթլիսից ու Տիգրանակերտից ոչ մէկ լուր չէր հասնում մեզ:

Միայն Բալկաններից՝ Սոֆիայից, մերթ ընդ մերթ քաղուածքներ էին ուղարկւում դաղտնի ճանապարհով Պոլսից առնուած տեղեկագրերից կամ ճամբորդների հաղորդած լուրերից: «Հորիզոն»ը հրատարակում էր այդ լուրերը, որից հայ հասարակութիւնը աւելի եւս յուզւում էր:

Պակաս մտահոգիչ չէր եւ Հայկական Հարցի վիճակը: Ռուսական թերթերում դրուատալից յօդուածներ էին գրւում հայերի եւ հայերի Ռուսաստանին մատուցած ծառայութիւնների մասին: Պետական Դումայի ամբիոնից հայերի ականջին հաճելի ճառեր էին արտասանւում: Ամենաազդեցիկ կուսակցութեան պարագլուխ՝ Միլիւկովի բանաձեւը՝ «Հայաստանի ինքնավարութիւն Ռուսաստանի հովանաւորութեան ներքեւ»՝ ընդհանուր համակրանք էր վայելում:

Նմանապէս եւ արտասահմանում, անգլիական եւ ֆրանսական մամուլը անվերապահ դովքն էր անում «Մեծ Դաշնակիցների Փոքր Դաշնակից Հայաստանի»: Խորհրդարանական ամբիոններից հայասիրական անդուսպ ճառեր էին հնչում ի լուր աշխարհի: Պետական մարդիկ, վարչապետներ ու նախարարներ հանդիսաւոր խոստումներ էին շռայլում հայերին...

Այդ բոլորը՝ դեղեցիկ: Բայց հայ մարդկանց սրտերը անհանգիստ էին. ինչո՞ւ խօսքին չի յաջորդում ոչ մէկ գրական գործ: Հետզհետէ դիւանագիտական թանձր վարագոյրների ճեղքուածքներից դուրս սկսի դալին լուրեր, որոնք սկսի պարզէին, որ մեծ պետութիւնները իրենց ի նպաստ էին լուծում Հայկական Հարցը՝ դաղտնի համաձայնութիւններով: Այո՛, «ի վերայ պատմուճանի, վիճակս արկանէին», եւ հայկական պատմուճանին տիրացող Ռուսաստանը պատրաստւում էր կազմակերպել Եփրատեան կազակութիւն, հայերին չնորհելով միայն «եկեղեցական ինքնավարութիւն»...

ARAM webaram.com

Թուրքերը աննախընթաց ոճրագործութեամբ դիւրացրին մեծ դաշնակիցների գործը: Մեծ Եղեռնը, որ սկսաւ Ապրիլ 11–24ին հայ մտաւորականութեան գլխատումով եւ, ի վերջոյ, ողջ Թրքահայութեան բնաջնջման վերածուեցաւ, Հայկական Հարցը արմատապէս լուծելու Թրքական այս դիւային ծրագիրը, վերջին հաշուով, ծառայեց դաշնակիցների թաքուն նպատակների իրագործման՝ Օսմանեան կայսրութեան անդամահատման:

Դիւանագիտական այս յաղթանակին համընթաց տեղի էր ունենում եւ ռուսական զէնքի յաղթանակը Թրքական ճակատի վրայ: 1915 Թուականի ընթացքին ռուս բանակը գրաւեց ամբողջ Թրքահայաստանը, Վասպուրականից սկսած մինչեւ Երզնկա ու Տրապիզոն:

Այլեւս կարելի էր մտածել եւ հայկական հողերի վրայ կազակութիւններ հաստատելու մասին: «Հայասէր» կոմս Վորոնցով-Դաշկովի փոխարքայութեան աթոռը գրաւեց Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայեւիչը, որ հայկական նախապաշարումներից ազատ էր: Նոր փոխարքան այլեւս աւելորդ էր համարում հայ կամաւորական խմբերի գոյութիւնը, որոնք պիտի վերածուէին հայկական հրացանակիր գումարտակների, իբրեւ ռուսական բանակի կանոնաւոր մասեր: Նուաճուած Թրքահայաստանը վեր էր ածւում առանձին վարչական միաւորի՝ Զօր. Պէչկովի ընդհանուր հսկողութեամբ: Հայերին բաժին էր հանւում «եկեղեցական ինքնավարութիւն», այսինքն հայկական ձեւով մկրտուելու, պսակուելու եւ թաղուելու իրաւունք...

Ո՞ւր էինք եւ ո՞ւր հասանք — վեց վիլայէթներ եւ կիլիկիայի ինքնավարութիւնից մինչեւ եկեղեցական ինքնավարութիւն...

Պէտք է ասել, որ 1915ին հայութիւնը դեռ Հայկական Հարցի այդքան մոայլ վիճակի գիտակցութիւնը չունէր: Շատ բան ծրագրւում էր գաղտնի, դիւանագիտական առանձնասենեակներում կամ գինուորական բարձր հրամանատարութեանց կողմից, որպէսզի հրապարակ հանուէր, երբ գործնական հնարաւորութիւն ստեղծուէր: Որոշ բաներ, որ յղացուեցին, իբրեւ ծրագիր, 1915ին գործադրութեան դրուեցին կամ լոյս աշխարհ հանուեցին ցարական գահի խորտակումից յետոյ:

Սեւ տարի եղաւ 1915 Թուականը Հայ ժողովրդի կեանքում: Ինչքա՜ն ազգային եռանդ, նիւթական ու բարոյական ուժեր վատնուեցին, ինչքա՜ն յոյսեր ի դերեւ ելան...

Մե՞նք էինք յանցաւորը, որ չհասկացանք աշխարհի բաները եւ աններելի սխալներ գործեցինք: Մեր տեղը եթէ ուրիշները լինէին,

ARAM webaram.com

նոյն բանները չպիտի՞ անէին: Եւ ի՞նչն է կեանքում ճիշդը եւ սխալը: Ո՞վ է արդարը եւ ո՞վ է ոճրագործը: Եթէ Մուսթաֆա Քեմալը ապանուէր իր յանդուգն գործի սկիզբը, ինչ որ բնաւ անկարելիութիւն չէր, Թուրքերի հայր եւ աշխարհից ճանչցուած հերո՞ս պիտի դառնար, թէ պիտի մնար արկածախնդիր մի աւազակ:

Այն բոլոր հայրենասէր հայ համայնավարները, որոնք համայնավարութեան յաղթանակի հետ էին կապել Հայ ժողովրդի ազատութեան յոյսը, Վահան Տէրեաններըը, Սահակ Տէր Գաբրիէլեաններըը, Սարգիս Սրապիոնեան–Լուկաչիններըը, Ազասի Խանջեաններըը, եղիշէ Չարենցներն ու Ակսել Բակունցներըը, որոնք այրուեցին համաշխարհային յեղափոխութեան հրդեհում, առարկայօրէն դառնալով, դաւաճան ու ոճրագործնե՞ր էին Հայ ժողովրդի եւ հայ հայրենիքի հանդէպ: Ո՞րն է ճիշդը, ո՞րն է սխալը...

Բայց եւ այնպէս դառն է վերյիշումը լուսաւոր կարծուած, բայց մոայլ դուրս եկած դէպքերի: Անհունօրէն դառն է, մանաւանդ, նրանց համար, որոնք անձամբ դերակատար են եղած այդ դէպքերում՝ խանդավառ եռանդով եւ անձնուիրութեամբ...

*
**

Իմ կեանքում 1915 թուականը առանձնապէս յիշատակելի է մի դէպքով, որ իր պարզութեան մէջ ցնցող տպաւորութիւն գործեց իմ վրայ եւ մնում է անջնջելի յիշողութեանս մէջ:

1915ի ամառը յոյսի եւ լոյսի ժամանակ ապրեցանք Երեւանում, ուր մեզ հետ էր եւ Արմէն Գարօն, որ այլեւս կամաւորական խմբում չէր եւ անհանդարտ՝ հրաչքի էր սպասում իր սիրելի Կարինից, իր պաշտելի մայրիկից եւ բոլոր հարազատներից:

Տարօնը փրկելու բոլոր ճիգերը անցել էին անյաջող: Դրօն, որ ձգտում էր իր խմբով անցնել Տարօն, յոյսը կտրած, մաքրագործում էր Զիլանի ձորը: Տարօնն էլ բնաջնջուած էր, եւ մերթ ընդ մերթ Կովկաս էին հասնում հրաչքով ազատուած բեկորները՝ ողորմելի վիճակում:


Մի օր էլ, Սեպտեմբերի 20ին, Երեւանում լուր տարածուեց, թէ գալիս են Սասունից ազատուած Կոմսն ու Ռուբէնը մի խումբ ընկերների հետ եւ որ Արմէն Գարօն գնացել է Իգդիր նրանց դիմաւորելու: Եւ, յիրաւի, քիչ վերջը լուրը ճշդուեց. Կոմսին հիւանդ վիճակում տարել էին Մալխասի մօտ, իսկ Ռուբէնը եւ Արմէն Գարօն եկան իմ մօտ՝ «Օրիանու» հիւրանոցը:

ARAM webaram.com

«Օրիանա» հիւրանոցի առջեւ, քաղաքային պարտէզի դիմացը, մեզ հանդիպեց Ռոստոմը սեւ ամպի պէս մռայլ եւ դաժան դէմքով։ Ռուբէնը, որ խղճալի երեւոյթ ունէր, աւելի եւս խեղճացաւ։ Ցայտնապէս հոգեկան տագնապի մէջ էր. բարեւե՞լ առաջուայ նման, համբուրե՞լ։ Փորձեց ժպտալ, բայց ժպիտ դուրս չեկաւ։ Մի վայրկեան կանգնած մնացինք։ Ռոստոմը անողոք հայեացքով նայում էր Ռուբէնին։ Եւ չոր ու խիստ՝ ասաց, վերջապէս.

— Ինչո՞ւ եկար, ի՞նչ գործ ունես դու այստեղ...

Ու չսպասով հեռացաւ։ Ռուբէնը մեռելի տեսք ունէր։ Հակառակ իմ ամբողջ սէրին, ես մոքսում ըմբռնացայ Ռոստոմի դաժանութեան դէմ։



ՌՈՒԲԷՆ

Իմ սենեակը որ մըտանք, Ռուբէնը ընկաւ մահճակալի վրայ եւ աչքերը ծածկեց երկու ձեռքով։ Սաստիկ ազդուած էր եւ Արմէն Գարօն, որ Ռոստոմի խմորից չէր...։

Ռուբէնի հետ ես ծանօթացել ու մտերմացել էի Կարինում, Հ. Յ. Դ. Յրդ Ընդհ. ժողովի ժամանակ։ Քաջառողջ, եռանդուն երիտասարդ էր՝ մի քիչ տարօրինակ բնաւորութեամբ։ Չէիր կարող վստահ լինել, թէ իր մտքինը համապատասխա՞ն էր խօսածին։ Մեր Սանասարեան «ակումբի» անդամներից էր՝ աչքը միշտ դիմացի չէնքի պատշգամին, ուր, յաճախ, երեւում էր Արմէն Գարոյի ազգական մի աղջիկ։ Վերջը իմացանք, որ անխօս սիրաբանութիւն էր սկսուած երկուսի միջեւ։

Այժմ իմ առջեւը կեցած էր բոլորովին տարբեր մի մարդ։ Նիհար, դէմքը սեւ մօրուքով ծածկուած, փոս ընկած աչքերը խամրած, անկրունկ կօշիկից կարճացած, անժպիտ, ընկճուած երեւոյթով մի

ARAM webaram.com

տարօրինակ էակ: Բերուած կերակուրին հպիւ ձեռք տուեց: Ոչինչ չխմեց: Չէր խօսում եւ ծխում էր անվերջ եւ անյապ: Նախկին Ռուբէնի սուսերն էր կարծես:

Քերում էր սաստիկ: Անչուշտ, կեղտոտ էր եւ վաղուց բաղնիքի երես չէր տեսել: Բնականաբար, եւ ոջիլներ կային վրան: Գարոյի հետ որոշեցինք անմիջապէս բաղնիք տանել: Բաղնիքում կարող էր տրմադրութիւնը փոխուել եւ լեզուն բացուել:

Բաղնիքում մեզ առանձին սենեակ յատկացրին՝ բոլոր յարմարութիւններով: Կառավարիչը, որ ինձ ծանօթ դաշնակցական էր, ասաց.

— Մնացէք, ինչքան կամենաք: Պահանջեցէք ինչ որ ուզում էք: Ձեր հանդիսաը խանգարող չի լինի:

Բաղնիքում Ռուբէնը անխօս յանձնուեց էիսաչիի ձեռքը: Այո՛, միայն ոսկոր եւ կաշի էր մնացել: Հպիւ չարժւում էր օճառողի ձեռքի տակ:

Ցիշեցի ընկերական մեր վերջին բաղնիքը Կարինում, Փաստըմաճոնց հռչակաւոր բաղնիքում: Ինչ ուրախութիւն ու չէնութիւն, ինչ եռանդ, կատակներ, ինչ օյիններ էինք բերում Ռուբէնի դէմին... Իսկ այժմ կարծես մեռելատուն լինէր բաղնիքի սենեակը:

Հետզհետէ Ռուբէնը բացուեց: Ջղերը հանգստացած՝ սկսեց հարցերին հասկնալի պատասխան տալ:

Բոլորովին մերկ, նստել էինք ջրի ծորակի շուրջ, լուացւում եւ զրուցում էինք:

Ռուբէնի պատմածներից անվիճելի կերպով հետեւում էր մի բան. Տարօնի ղեկավարութեան մէջ համաձայնութիւն չի եղել ինքնապաշտպանութեան ծրագրի շուրջ. ոմանք, Ռուբէնը ինքն էլ դրանց հետ, մտածել են կենտրոնանալ լեռնային շրջանում եւ պաշտպանուել մինչեւ Ռուսների հասնելը, ուրիշներ դաշտ եւ լեռ համարել են անբաժան, հետեւաբար, ինքնապաշտպանութիւնը սկսել դաշտից: Համաձայնութիւն չի գոյացել: Դաշտում մնացողները դաշտում են կոտորուել: Լեռներ քաշուողները չեն նախատեսել ուտելիքի դժուարութիւնները ինչպէս եւ Ռուսների ուշացումը եւ փչացել են սովից ու համաճարակ հիւանդութիւնից:

Ռուբէնը մեզ էր մեղադրում, որ ժամանակին կամաւորական խմբերը չհասցրինք Տարօն: Վերջը, երբ ծանօթացաւ Կովկասի իրականութեան՝ ամիսուած էր յետ առնել մեղադրանքը: Մենք էլ դիտել էինք տալիս, որ Տարօնի ղեկավարութիւնը իր կոչման բարձրութեան

ARAM webaram.com

վրայ չի դռնուել, ամէն մարդ մտածել է իր ազատութեան կամ իր ծրագրի մասին, այդ պատճառով հնարաւոր չի եղել մէկ ճակատ առաջ բերել եւ ինքնապաշտպանութիւնը աւելի լաւ կազմակերպել: Եթէ 10–15 օր էլ դիմանար Տարօնը, Ռուս բանակն ու կամաւորական խումբերը կը հասնէին, եւ ժողովրդի մեծ մասը կը փրկուէր. «Արդէն լսում էինք ռուսական թնդանօթների ձայները» — ասում էր Ռուբէնը...

Կսկծալի է Տարօնի դէպքերի վերյիշումը: Եւ անհնար է այդ դէպքերին տրամաբանական արդարացում դռնելը: Պատմութիւնը ինչ էլ ասելու լինի, մարդկային խիղճը չի կարող հաշտուել Մամիկոնեան յաջորդների այդպիսի տխուր վախճանի հետ: Չի մահ իմացեալ անմահութիւն է, մահ ոչ իմացեալ մահ է:

Իմ նպատակը, սակայն, Տարօնի դէպքերի դնահատութիւնը չէ: Այդ դէպքերը այլեւս պատկանում են պատմութեան եւ թողնենք, որ պատմութիւնը արձակէ իր անաչառ վճիռը, եթէ կարող է: Ես ուզում էի արձանագրել բաղնիքի մեր զրոյցի վերջին մասը, որ այսօր էլ, երբ յիշում եմ, խռովում է հոգիս:

Արդէն Տարօնին վերաբերող բոլոր նիւթերը սպառել էինք: Թէյն ու պտուղները էլ, որ ուղարկել էր բաղնիքի դաշնակցական կառավարիչը, վերջացել էին: Ռուբէնն ու Գարօն մտախոհ ու լուռ ծըխում էին իրար յետեւից:

Մէկ էլ Գարօն գլուխը բարձրացրեց: Հայեացքը ծանր էր եւ դէմքը մռայլ: Մի տեսակ աղաչական ձայնով խօսքը ուղղեց Ռուբէնին.

— Ի՞նչ ես կարծում, ի՞նչ վիճակի մէջ է այժմ Կարինի հայութիւնը:

— Ինչ վիճակի՞ մէջ, զարմացաւ Ռուբէնը, կոտորուած է, ի՞նչ պիտի լինէր...

— Մայրս է՞լ...

— Անշուշտ, մայրդ էլ... քո մայրը ուրիշ մայրերից տարբե՞ր է, — անզուսպ ու դաժան չեչտով ասաց Ռուբէնը, եւ աչքերում երեւացին կատաղութեան ցոլքեր: — Բոլորի մայրերը կոտորուած են, հասկանո՞ւմ էք: Էլ հայ մայր չկայ... Հայութիւն էլ չկայ, հասկանո՞ւմ էք... Երբ կամաւոր էիր դառնում, հայ մայրերի մասին չէի՞ր մտածում...

— Լռիր, անպիտան, ես քեզ թոյլ չեմ տայ, որ այդպէս խօսես՝ բռունցքը ճօճելով պոռաց Գարօն Ռուբէնի երեսին: Հայ մայ-

ARAM webaram.com

բերը կան: Իմ մայրն էլ ողջ է քո մօրդ պէս: Դու, երբ Սասուն էիր բարձրանում, չէի՞ր մտածում հայ մայրերի մասին...

Ռուբէնը ամբեց: Զէր լսանում, ինչ ասի Գարոյի աննկարագրելի ցասումի առջեւ: Ոչ առաջ, ոչ վերջը եա Գարոյին երբեք չէի տեսել այդպէս զայրացած, ինքը իրանից ելած էր:

Տիրեց երկար եւ անտանելի լռութիւն: Երկուսը մոայլ, ղէմ դիմաց մերկ նստած՝ ծխում էին անյագ:

— Բաւ է, երեանք, խզեց լռութիւնը Գարօն: Ուրիշ անգամ այդպէս չխօսես, լակոտ, ժպտաց նա Ռուբէնին, որի նիհար ղէմքին նոյնպէս երեւաց ժպիտի նման մի բան...

Արդէն ուշ գիշեր էր: Դուրս ելանք բաղնիքից: Մօտակայ բաց պատուհանից հնչեց կանացի հաճելի մի ձայն.

Մի գեղեցիկ, պարզ գիշեր էր,
Երկինքը լի աստղերով...

Եւ, իսկապէս, երկինքը լի էր աստղերով — Արարատեան դաշտի աքանչելի աստղերով: Աստղերի տակ, դաժան ուրուականի պէս, երեւում էր ռուսական եկեղեցու սեւ պատկերը...

Ի վերջոյ Ռուբէնը գնաց Թիֆլիս, մօրը մօտ, իսկ Արմէն Գարօն առանձնացաւ իր անբերքատիպ կալուածքում Գանձակ, մոայլ յուսահատութեան մէջ: Իր զգայուն հոգին չդիմացաւ ճակատագրի հարուածներին եւ քիչ էր մնում խելագարուէր, եթէ իր աղջիկը չբացուէին դորթի նոր հեռանկարներ Ամերիկայում:

Կոմսը մնաց Մալթասի մօտ տիֆով բռնուած, բժիշկների խնամքի տակ: Երբ ոտքի ելաւ, նա էլ գնաց Թիֆլիս, ապա, կարծեմ, Բաքու, քրոջ մօտ:

Որոշ ժամանակ Ռուբէնն ու Կոմսը հեռու մնացին ազգային եւ կուսակցական գործերից: Իսկ ազգային գործերը գնում էին վատից դէպի վատագոյնը:

Ահաւոր փլուզում կար հայկական կեանքում:

Փլուզում ոչ միայն մարմնի ու նիւթի, այլեւ մարդկային հոգիների:

ARAM webaram.com

ԱՐԱՐԱՏԵԱՆ ՋՈԿԱՏ


Դեկտեմբերի վերջերը ես կամաւորներին էի ճանապարհ դնում Նաւթլուղ կայարանից: Անձրեւոտ պաղ օր էր: Գնացքը պիտի մեկնէր կէսօրին, հապա կարողացանք ճամբայ հանել կէս գիշերին: Կամաւորները զժգոհ էին, ես ջղայնացած էի. վրացի կայարանապետի հետ կռուեցանք. յայտնապէս դժուարութիւններ էր հանում անպիտանը:

Վերադարձիս սաստիկ մրսեցի եւ անկողին ընկայ թոքաբորվ: Ահագին դորձ կար անելիք: Տաբեվերջի հաշիւներ, ընթացիկ կարդադրութիւններ, նահանջի հետեւանքով ծագած խնդիրներ: Դեկտեմբերի վերջին շաբթուան համար հրաւիրուած էր Ազգային Բիւրոյի տեղական մարմինների ներկայացուցիչների ժողով. անհրաժեշտ էր պատրաստել զեկուցում Կարդադրիչ Մարմնի կողմից կամաւորական խումբերի մասին: Բժիշկները յայտարարեցին, որ թոքերի բորբոքումս կարող է ծանրանալ եւ պէտք է մնամ անկողնում: Հակառակ բժշկական արդելքի կարողացայ Ազգային Բիւրոյի հրաւիրած ժողովի մի քանի նիստերին ներկայ գտնուել:

Ազգային ժողովը քննեց օրուան հրատապ հարցերը, որոշումների մէջ շեշտը դրեց կամաւորական խումբերի վերակազմութեան անհրաժեշտութեան վրայ: Եւ հապա հիւանդութիւնից ոտքի ելած՝ ես մեկնեցի Ալեքսանդրապոլ՝ Ազգային Բիւրոյի որոշումով: Իմ մեկնելուց առաջ Ազգային Բիւրոյի նիստում քննուեց Գրդ կորպուսի հրամանատար զօրավար Օգանովսկիի առաջարկը, որ բերել էին զօրավարի համհարզներ Օզոլ եւ Ա. Շահխաթունի սպաները: Օզոլը բանիմաց եւ լուրջ լսուիչ սպայ էր, Շահխաթունին մեզ ծանօթ դեբասանն էր, որ կարծում էր, թէ պատերազմը թատերաբեմ է:

ARAM webaram.com

Զօր. Օգոնովսկին իր համակրանքն էր յայտնում հայ կամաւորներին, առաջարկում էր խմբերի թիւը աւելացնել, հաստատել պահեստի խումբ եւ հրամանատարներ պատրաստելու դասընթացք: Իր կողմից խոստանում էր տրամադրել զօրանոցներ Քանաքեռում, դասախօս սպաներ եւ ամէն աջակցութիւն:



ԱՆԴՐԱՆԻԿ

Ազգային Բիւրօն ընկերակցային հաւանութիւն տուեց առաջարկին: Եւ որոշեց Ալեքսանդրապոլ ուղարկուած կամաւորներին, վարդանի դվխաւորութեամբ փոխադրել Երեւան, ուր տեղափոխել եւ կազդարիչ Մարմինը, որ պէտի ընթացք տար Զօր. Օգոնովսկիի առաջարկից բխող զործնական հարցերին:

Իմ հիւանդութեան միջոցին տեղի էր ունեցել կազդարիչ Մարմնի եւ կամաւորական խումբերի հրամանատարական կազմի ժողովը, ուր որոշուել էր փութացնել խումբերի վերակազմութիւնը, խումբերի թիւը հասցնել հինգի՝ կազմակերպելով մէկ խումբ եւս Ղանասարի վարդանի կամ Իշխանի հրամանատարութեամբ, կենտրոնացնել խումբերը Գրդ կորպուսի սահմաններում վառպուրականի եւ Տարօնի ուղղութեամբ, եւ մի շարք նիւթական եւ կազմակերպական այլ հարցեր:

Այս հարցերը քննութեան եւ Հ. Յ. Դաշնակցութեան Բիւրոյի կողմից: Աչքի առաջ ունենալով երկրից հասնող հատ ու կտոր տեղեկութիւնները եւ Կովկասի հայութեան ընդհանուր տրամադրութիւնը՝

ARAM webaram.com

Բիւրօն եւս անհրաժեշտ էր համարում արագացնել վերակազմութիւնը կամաւորական խումբերի, միացնել խումբերը մէկ հրամանատարութեան ներքեւ Արարատեան Զոհատ անունով, դիմել Կովկասեան բարձր հրամանատարութեան, որ փութացուի նոր յարձակումը Թուրքերի դէմ վասպուրականի եւ Տարօնի ուղղութեամբ՝ յառաջապահ ունենալով հայ կամաւորներին եւ նկատողութեան առնել Արարատեան Զոհատի հրամանատարութեան հարցը: Տրամաբանօրէն Անդրանիկը արժանի էր այդ պաշտօնին կոչուելու, բայց նա նահանջի ժամանակ այնպիսի ջղայնութիւն էր ցոյց տուել, այնպիսի անհաւասարակշիռ բաներ արել, որ դրեթէ ամէնքը դէմ էին՝ թէ՛ հրամանա-



ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ

տարները, թէ՛ Ռոստոմը, որ տեսել էր առաջին խումբի վիճակը նահանջի օրերին: Միւս խմբապետներից ոչ մէկը յարմար չէր այդ դերին՝ տուեալ պայմաններում: Կրկնուեց Յանասորի արշաւանքի պատմութիւնը. Վարդանը ի նկատի առնուեց իբրեւ Թեկնածու Արարատեան Զոհատի հրամանատարի: Եւ մինչ Յանասորի արշաւանքի հրամանատարութեան ամենէն արժանաւոր Թեկնածուն՝ Նիկոլ Դումանը անտրտունջ ենթարկուեց որոշման եւ արշաւանքին մասնակցեց իբրեւ յիսնապետ, Անդրանիկը խռովեց եւ մերժեց մտնել Արարատեան Զոհատի կազմի մէջ: Պէտք է ասել, որ Վարդանի Զոհատի հրամա-

ARAM webaram.com

նատար նշանակուելուց զոհ չէին եւ միւս հրամանատարները, մասնաւորապէս Դրօն, որ առողջացած, թէեւ զնդակը թոքերի մէջ, ստանձնել էր երկրորդ խումբի հրամանատարութիւնը:

Երբ ես հասայ Ալեքսանդրապոլ, արդէն Վարդանը իր կամաւորներով փոխադրուել էր Երեւան: Ալեքսանդրապոլում ինձ համար անելիք չէր մնացել, ես էլ անցայ Երեւան, ուր արդէն գտնւում էր կարգադրիչ Մարմնի անդամ Աբր. Գիւլխանդանեանը: Քիչ վերջը եկաւ եւ Նիկոլ Ադրալեանը, եւ կամաւորական խումբերի գործը կենտրոնացաւ Երեւանում:

Երեւանում մենք ունէինք շտաբ 10–12 հոգի պաշտօնեաներով.



ԵՐԵՒԱՆԻ ԿԱՄԱՒՈՐԱԿԱՆ ՇՏԱԲԸ

զրադիր, անտես, հաշուապահ, սուրհանդակ եւայլն: Նիկոլի ձեռքը ամփոփուած էր բոլոր խումբերի ընդհանուր հաշուապահութիւնն ու հաշուեքննութիւնը: Գիւլխանդանեանը վարում էր յարաբերութիւնները եւ արտաքին գործերը: Ես ընդհանուր քարտուղար-գործավար էի, իսկ Գիւլխանդանեանի չուտով հեռանալուց յետոյ նրա գործն էլ անցաւ ինձ: Ես չարունակում էի նաեւ կապը Ազգային Բիւրոյի եւ կարգադրիչ Մարմնի մէջեւ: Պարբերաբար տեղի էին ունենում լիազումար ժողովներ եւ կարգադրիչ Մարմնի միւս անդամների հետ:

Երբ Արարատեան Զոկատը Վարդանի ընդհանուր հրամանատարութեան տակ մեկնեց ռազմաճակատ, պահեստի խումբի հրամա-

ARAM webaram.com

նատարութիւնն էլ անցաւ չտաբին. Ադրալեանը դարձաւ պահեստի խումբի հրամանատար, ես նրա օգնականը:

Պահեստի խումբը տեղաւորուած էր ընդարձակ զօրանոցում, Ղանթարի հրապարակից ոչ հեռու: Զանազան կողմերից եկող կամաւորներ այստեղ մարզւում էին կառավարութեան նշանակած հայ սպաների ղեկավարութեան տակ: Այստեղ էին հաւաքւում եւ ճակատից հիւանդութեան պատճառով կամ արձակուրդով եկող կամաւորները:

Վերջը Քանաքեռում էլ տրամադրուեցին զօրանոցներ, ուր մարզուեց հինգերորդ խումբը Իշխան Արղութեանի հրամանատարութեան ներքեւ: Քանաքեռում տեղաւորուեց եւ սպայական դպրոցը, ուր պատրաստւում էին ենթասպաներ կամաւորական խումբերի համար:

Երեւանում հայ բնակչութեան վերաբերումը դէպի կամաւորները հիանալի էր. ամէն ոք աշխատում էր որեւէ բանով օգտակար եւ հաճելի լինել մեզ: Տեղական թուրքերը խորթ աչքով էին նայում կամաւորներին: Կառավարական հիմնարկութիւնների ու ոստիկանութիւնը ընդհանրապէս բարեացակամ էին: Երեւանի զինուորական պետը, լեհական ծագումով բարի ծերունի զօրավար Կրիժեւիչ — մի պապա մարդ — հօր պէս սիրում էր մեզ եւ ամէն կերպ աջակցում մեր գործին: Ճաճախ Նիկոլին եւ ինձ հրաւիրում էր իր մօտ թէյի եւ արցունքը աչքերին խօսում էր հայերի կրած չարչարանքների մասին. նա որոշ չափով ծանօթ էր լեհահայերի ճակատագրին: Իմ ճեմարանի աւարտական շարադրութեան մի մասը նուիրուած էր Լեհաստան զաղթած իմ հայրենակիցների պատմութեան, եւ նա հետաքրքրութեամբ ականջ էր դնում իմ տուած պատմական տեղեկութիւններին. բայց աւելի էր լսում Նիկոլի սրամիտ քննական նկատողութիւնները լեհ հայրենասէր մեծ բանաստեղծ Ադամ Միցկեւիչի մասին:

Նոյնիսկ նահանգապետ Տիզենհաուզենի վերաբերումը դէպի հայերը քաղցրացել էր: Ցարի հաւատարիմ այս դերմանացին պատճառ չունէր սիրելու մեզ: Երեւանի նահանգապետարանի դռները աւելի բաց էին մահմեդականների առջեւ: Բայց որովհետեւ հովը այժմ ուրիշ կողմից էր փչում, Տիզենհաուզենը դարձել էր «հայերի բարեկամ»: Հետզհետէ բանտից արձակուեցին զանազան առիթներով ձերբակալուած հայերը, եւ նոր խստութիւններ տեղի չէին ունենում հայերի վերաբերմամբ:

Ի նշան երախտագիտութեան, Երեւանի հայութիւնը Առաջնորդարանում մեծ ճաշկերոյթ տուեց ի պատիւ նահանգապետի: Ներ-

ARAM webaram.com

կայ էր մեծ բազմութիւն, Երեւանի ազգային եւ քաղաքային ողջ ընտրանին, կամաւորական խմբերի պետերը, մեր իսկական բարեկամ Զօր. Կրիժեւիչը, հանրային կազմակերպութիւնների վարիչ անդամները Առաջնորդ Տօրէն Սրբազան Մուրադբէգեանի նախագահութեամբ:

Շրջապատուած նահանգապետութեան բարձրաստիճան դրօծակիցներով, պաշտօնական համազգեստ հագին, կուրծքը զարդարուած ամէն կարգի շքանշաններով՝ Տիզենհաուզեն մուտք գործեց, կարծես ռազմադաշտից վերադարձող յաղթական զօրավար լինէր: Ամէնքը ոտքի վրայ՝ ողջունեցին բուռն ծափահարութիւններով եւ ուռաններով: Այս այն մարդն էր, որ դեռ երէկ անխնայ հալածում էր «հայ ուազակներին», որոնցից չատերը այժմ ներկայ էին սրահում:



ՎԱՐԴԱՆ

Գլխաւոր սեղանը պատրաստուած էր Առաջնորդարանի հռչակաւոր պատըշգամբում, որ կախուած էր Զանգուի վրայ, որտեղից բացւում էր զմայլելի տեսարան դէպի Մասիսը: Սեղանների վրայ առատապեղական առատութեամբ, չարուած էին ամէն տեսակ ուտելիքներ ու խմիչքներ: Երեւանցիք դիտէին ուտել եւ կերցնել...

Եւրոպայում առանձ մարդիկ խմում են, յետոյ ուտում, վերջը, անուշի եւ սուրճի վրայ, բացւում են լեզուները: Հայաստանում միաժամանակ եւ ուտում են, եւ խմում եւ ճառում: Հազիւ չէրբմայլ պնակները հաւաքել էին, Տօրէն Սրբազանը իր պատկառելի հասակով ոտքի ելաւ, բաժակ վերցրեց Նորին Կայսերական Մեծութեան արեւշատութեան կենացը, եւ պատշգամբը թնդաց ուռաններից:

ARAM webaram.com

Այնուհետեւ երբ յաջորդեցին իշխան ճուկ, հաւ ու փլաւ, պառան խորոված՝ յարակից խմիչքներով եւ յարակից ճառերով:

Երբ բերին պտուղը՝ Երեւանի հռչակաւոր տեսակ-տեսակ խաղողները, Երեւանի նշանաւոր դեղձը, ամէնքը արդէն լրիւկ էին դարձել: Տիզենհաուզենը երեսալով ոտքի ելաւ, ուզում էր ճառ խօսել, բայց հազիւ կարողացաւ բացագանչել.

— Սպասիբո... Սպասիբո... Դազդրաստույետ եգօ իմպեբատորսկոյէ վելիչեստւօ.

— Շնորհակալ եմ, շնորհակալ, կեցցէ Նորին կայսերական Մեծութիւնը:



ԴՐՕ

Երեւանի տներում, Ամառնային Ակումբում, մի քանի օր ամէնքը խօսում էին այդ նշանաւոր ճաշկերոյթի մասին: Այո՛, երեւանցիք պիտէին ուտել եւ կերցնել...

Նոյն երեւանցիք հասարակական ճաշ տուին իրենց պատիւ կամաւորների՝ Աբրաւեան Զոկատի մեկնումի առթիւ: Բազմաթիւ սփռոցներ էին փռած չարքով դեռնի վրայ Քանաքեռի դաշտում, բաց երկնքի տակ: Սփռոցների վրայ՝ առատ լաւաշ, պանիր, խորոված, կանաչեղէն, գինի, պտուղ: Հազարաւոր բազմութիւն էր հաւաքուած. հրաւիրեալները ծալապատիկ նստած էին սփռոցների չուրջը, մխսները դիտում էին ուտողներին եւ մասնակցում ծափահարութեան:

Օրուան հերոսը Դրօն էր: Երեւանի օրիորդները այդ օրը դրօչակ պիտի նուիրէին երկրորդ խումբին:

Ճաշից յետոյ երկրորդ խումբը վաշտ-վաշտ չարուեց դաշ-

ARAM webaram.com

տում, վաշտապետների պվհաւորութեամբ: Դրօն իր նժոյգի վրայ՝ խմբի առջեւը: Օրիորդաց Մխիթեան կողմից յուզուած ճառ խօսեց Գիմնազիայի տեսչուհի Օր. Եւգենիա Նիկիտինա Տէր Սարգսեանը եւ խումբին ընծայեց ասեղնագործուած դրօշակ: Հազարաւոր բերաններ երգեցին.

Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ մեռնի,
Բայց երանի, որ իւր ազգի
Ազատութեան կը զոհուի:
Գնա՛, եղբայր, Աստուած ճեզ հետ,
Ազգի յոյսը հաջալեր.
Գնա, թէեւ չեմ կարող գալ,
Բայց իմ հոգին ճեզ ընկեր:

Դրօն դարձրեց անհանգիստ նժոյգի գլուխը դէպի կամաւորները եւ մի կարճ, բայց կրակոտ ճառ արտասանեց, որ վերջացրեց Դրոյական խօսքերով.

— Տղերք ջան, ձեր դ..... ուտեմ, մեր եղբայրները մեզ են սպասում, յառա՛ջ.

Եւ խումբը, յամր քայլերով յառաջացաւ բազմահազար բազմութեան որոտընդոստ ծափահարութեան, կեցցէների եւ օրհնութեան մէջ: Շատերը լալիս էին ուրախութիւնից:

Եւ սկսուեց Արարատեան Ջոկատի պատմական արշաւը դէպի Վասպուրական:

Ես Դրոյին ընկերացայ մինչեւ Իգդիր: Նա մի անգամ էլ փորձեց հրապուրել ինձ, որ միանամ իր խումբին, բայց այդ անհնար էր. ոչ միայն այն պատճառով, որ ես չէի կարող ձգել պարտականութիւնները կարդադրիչ Մարմնի մէջ, այլեւ — զգում էի — որովհետեւ վախենում էի փորձութեան ենթարկել մեր ընկերութիւնը. Դրոյի զորձակիցները անանձնական, բացարձակ կերպով պէտք է ենթարկուէին նրա կամքին: Եւ, ճիշդն ասած, ես այնտեղ անելիք էլ չունէի. խումբը այնքան լաւ կազմակերպուած, այնքան նուիրուած հրամանատարական կազմ ունէր, որ նոր մարդու կարիք չկար:

Իգդիր եկաւ եւ Նիկոլ Աղբալեանը, եթէ չեմ սխալւում, Քեռու խումբի հետ:

Համազասպի խումբը էջմիածնում ներկայացել եւ ստացել էր Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ Ե-ի օրհնութիւնը: Բեմադրական տեսակէտից Համազասպի խումբը անմրցելի էր:

ARAM webaram.com

Իզմիրում, խմբապետները եւ կարգապրիչ Մարմնի ներկայացուցիչներս մի վերջին անգամ քննեցինք դէպի Վասպուրական արշաւանքի ծրագիրը: Ցայտնի էր արդէն, որ Վանը եւ պատառները ապրատամբ վիճակի մէջ՝ օրհասական կռիւ էին մղում Ջեւդէթի հրոդանների դէմ:

Ռազմական գադաչան (խնդիր) այսպէս էր ծրագրուած.

Ռուս բանակը պիտի չարժուէր դէպի Վան երկու ուղղութեամբ՝ Զինգիլ–Աբաղա–Բերկրի ճանապարհով եւ Պարսկաստանից Սալմաստ–Վան գծով:



ԳԷՈՐԳ Ե. ԵԻ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԻԱԲԱՆՆԵՐԸ

Ինչպէս յիշեցի, մեր սկզբնական ծրագիրն էր միացնել կամաւորական բոլոր խումբերը մէկ ջոկատի մէջ, իբրեւ ռուս բանակի յառաջապահ մի բռունցք, բայց Անդրանիկը չհամաձայնուեց մտնել Աբարատեան Ջոկատի կազմի մէջ եւ նախընտրեց մնալ առանձին, Սալմաստի ճակատի վրայ:

Աբարատեան Ջոկատը հետեւեալ ձեւով կազմակերպուեց.


Երկրորդ խումբ, Դրոյի հրամանատարութեան տակ, չուրջ 400 հոգուց բաղկացած: Դրօն օգնական չունէր, բայց ունէր հմուտ

ARAM webaram.com

եւ փոքաւոր հրամանատարական կազմ նախկին հայդուկներից եւ խմբապետներից:

Երրորդ խումբը, նոյնպէս չուրջ 400 հոգի, Համազասպի հրամանատարութեան տակ, չտարբ պետ կամ օգնական Վ. Վալադեան, իր կազմի մէջ ունէր քաջ մարտիկներ:

Չորրորդ խումբը, դարձեալ չուրջ 400 հոգի, հրամանատար՝ հին եւ փորձուած յեղափոխական մարտիկ Քեռին, չտարբ պետ՝ Միշա Արզումանեան:



ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԽԷՋ

Բոլոր խումբերի ձիաւոր մասերից կազմուած էր հեծելազօրի մի ջոկատ, Դաշնակցական Խէջոյի հրամանատարութեան ներքեւ:

Բոլոր այս զօրամասերը, միացած Արարատեան Ջոկատի մէջ, դրուած էին Վարդանի ընդհանուր հրամանատարութեան տակ՝ կազմելով ռուսական Վաճառկի Օտրեատի յառաջապահ մասը:

Առաջին խումբը, չուրջ 1100 հոգի, Անդրանիկի հրամանատարու թ ե ա մ բ, պարսկական ճակատում, անկախ էր Արարատեան Ջոկատից, իր մէջ ունէր ղինուորական եւ յեղափոխական հմուտ մարտիկներ, ինչպէս Սեպուհը, սպայ Գրիգոր Ամիրեանը, եւայլն: Անդրանիկը յոյս ունէր առաջինը, իբրեւ յաղթական, մտնել Վան: Այդ յոյսը հետագային չիրականացաւ եւ մեզ պատնութիւն պատճառեց նրան:

Ճաւալի է արձանագրել, բայց պէտք է ասել, որ այսուհետեւ Անդրանիկը միշտ իրեն զգում էր վերապահ եւ նոյնիսկ ընդդիմադիր դիրքի մէջ կամաւորական չարժման ղեկավար, ինչպէս ինքն էր յոր-

ARAM webaram.com

ջորջում, «վարժապետների» դէմ: Նա միշտ իր սրտում պահեց Արտաշեան Ջոկատի կազմութեան ժամանակ անտեսուած լինելու դառնութիւնը:

Ռուս բանակի յառաջխաղացումը սկսուեց Ապրիլի երկրորդ կէսին: Ամբողջ հայութիւնը, լարուած ուշադրութեամբ, սրտատրոփ հետեւում էր դէպքերին: Մենք օրը օրին հաղորդագրութիւններ էինք ստանում կամաւորական խումբերի գործողութիւնների մասին թէ՛ մեր թղթակիցներից եւ թէ՛ Գլխաւոր Շտաբից, որոնք չատ նպաստաւոր էին. մեր կամաւորները իսկապէս օրինակելի քաջութիւն էին ցոյց տալիս:

Մայիս 5ին մեր ձիաւորները Դաշնակցական Ռէչոյի գլխաւորութեամբ հասան Վան եւ ցնծութեամբ ընդունուեցին մէկ ամիս շարունակ Ջեւդէթի դէմ հերոսական դիմադրութիւն ցոյց տուող հայ բնակչութեան կողմից: Վասպուրականի հայութիւնը փրկուած էր:

Վանի դրաման լուրը կայծակի արագութեամբ տարածուեց եւ աննկարագրելի խանդավառութիւն առաջ բերեց հայութեան բոլոր խաւերում, ամէն տեղ:

Վասպուրականի ազատագրութիւնը որքան տեղական հայ ժողովրդի հերոսական դիմադրութեան արդիւնք էր, նոյնքան եւ ռուս բանակի, յատկապէս հայ կամաւորական խումբերի արարչաւ յառաջխաղացման հետեւանք:

*
**

Այստեղ մի քանի խօսք էլ կարելի է ասել ամերիկահայ կամաւորական շարժման մասին, որի պատմութիւնը պէտք է գրուի առանձին, իբրեւ բնորոշ մի դրուագ մեր ազատագրական շարժման պատմութեան:

Կամաւորական խումբերի կազմութեան լուրը Ամերիկա հասնելուց յետոյ, Ազգային Բիւրօն բազմաթիւ հեռագիրներ ստացաւ Ամերիկայից, որոնք ստիպողաբար պահանջում էին Ամերիկահայերից էլ կամաւորներ առնել: Զարմանալի չէր: Բնական էր, որ ամերիկահայ պանդուխտ երիտասարդութիւնը ոգեւորուէր հայրենիքի ազատագրութեան մասնակցելու գաղափարով: Բայց միայն այդ չէր պատճառը. հազարաւորներ կային, որոնք վաղուց երազում էին վերադառնալ հայրենիք, բայց նիւթական միջոցներ չկային. կամաւորութիւնը պիտի տար նրանց այդ միջոցը:

Ազգային Բիւրոյում մի քանի անգամ ղրուեց ամերիկահայ

ARAM webaram.com

համաւորների հարցը, եւ, իրրեւ Ամերիկայի պայմաններին լաւ ծանօթ, ես միշտ հակառակում էի. խումբերը լցնելու համար մենք մարդու պէտք չունէինք. համաւորների հոսանքը շատ մեծ էր առաջին շրջանում: Ամերիկայում, պատերազմի հետեւանքով, գործերը շատ էին եւ վարձատրութիւնը բարձր. թող ամերիկահայերը մնային իրենց տեղում եւ գրամ վաստակէին, ապագայում Հայաստանի շինարարութեան մասնակցելու համար: Այս իմաստով ես նամակներ գրեցի Ամերիկա, Ազդային Բիւրոյի եւ անձնապէս իմ կողմից: Գրեցի նաեւ յօդուածներ «Հայրենիք»ում:



ՅՈՎԱԿԻՄ ԴԱՐԲԻՆԵԱՆ

Հ. Ց. Դ. Ամերիկայի կենտ. կոմիտէի քարտուղար Յովակիմ Դարբինեանից եւ ուրիշներից ստացուած նամակներից երեւում էր, որ համաւորութեան առաջ բերած ոգեւորութիւնը այնքան բարձր էր Ամերիկայում, որ անկարելի էր ընթացք չտալ հաղարաւոր դիմումներին: Ուստի, կենտ. կոմիտէն ձեռնարկում է համաւորներ արձանագրելու եւ ուղարկելու գործակալութեան միջոցով, ուղարկւում են երկու մեծ խումբեր Ախանգելսկի վրայով: Այո՛, արժէր, որ Ամերիկահայ համաւորական շարժման լրիւ պատմութիւնը գրուէր առանձին:

Ամերիկահայ համաւորները Կովկաս հասան, երբ փլուզումը սկսուած էր արդէն: Կարգադրիչ Մարմինը երեւանում էր, եւ ամերիկահայերը, որոնք վաղ յոյսերով ճանապարհ էին ընկել — գուր երազներ, գուր յոյսեր — Թիֆլիսում չէին գտել ակնկալուած ընդունելութիւն: Ես էլ Թիֆլիսում չէի, մինչդեռ նրանք սպասում էին որ ես, իրրեւ Ամերիկայի ներկայացուցիչ, պիտի դիմաւորեմ նրանց:

ARAM webaram.com

Հիասթափուած ու դժգոհ՝ ամերիկահայ կամաւորներից շատերը բարոյալքուեցին եւ ուծացան, ինչպէս Վահան Թոթովենցը, որ սայթաքումից-սայթաքում, հասաւ մինչեւ բոլշեւիզմ, որը կերաւ իր դլուխը:

Իրենց ուխտին հաւատարիմ մնացողները մոտն առաւելապէս Անդրանիկի ու Քեռիի խումբերը եւ օրինակելի անձնուիրութեամբ ու քաջութեամբ կատարեցին իրենց պարտականութիւնը՝ ոմանք վճարելով նաեւ իրենց կեանքը:

ARAM webaram.com

ՎԱՆՈՒՄ

Վանի պրաւումով նոր շրջան բացուեց Կովկասի հայոց կեանքում: Լաւատեսութեան հովեր սկսեցին փչել: Մեր կամաւորական խումբերի քաջագործութեան մասին հրաշքներ էին պատմում ժողովրդի մէջ: Ասւում էր, որ եթէ հայ կամաւորները չլինէին, Վանի հայութիւնը չէր աղատուի, ինչ որ հեռու չէր ճշմարտութիւնից:

Ռուս թերթերի թղթակիցները, մանաւորապէս «Ռուսկոյէ Սլովո» մեծ օրաթերթը, մանրամասն տեղեկութիւններ էին հաղորդում Վանի պրաւման եւ յաջորդող դէպքերի մասին: Հայերի վարկը բարձրանում էր ամէն կողմ:

Վան էին չտապում հասնել հանրային կազմակերպութիւնները եւ առանձին անհատներ օժանդակութեան, ուսումնասիրութեան կամ պարզ հետաքրքրութեան համար: Սոյիւզ Գորոդովը, Մոսկուայի Կոմիտէն, Հայոց Գիւղատնտեսական Ընկերութիւնը (Ա. Սահակեանի գլխաւորութեամբ) խնամատարական եւ առողջապահական խումբեր ուղարկեցին Վասպուրական: Ազգագրական Ընկերութիւնը Երուանդ Լալայեանի գեկավարութեամբ գիտական արշաւ կազմակերպեց, գըրչադիրներ եւ դանազան հնութիւններ հաւաքելու համար: Վան գնացին Յովհաննէս Թումանեանը, Ռոստոմը, Արմէն Գարօն, Համօ Օհանջանեանը (որպէս Քաղաքների Միութեան խումբի վարիչ), Նիկոլ Աղբալեանը կամաւորական Ֆումբերի Կարգադրիչ Մարմնի կողմից, Ա—Դօ–ն վիճակագրական հետազօտութիւնների համար ու բազմաթիւ ուրիշներ: Վանը դարձել էր ուխտավայր հայերի համար:

Վանում կազմուել էր, զօրահրամանատարութեան որոշումով, նահանգային իշխանութիւն Արամի նահանգապետութեամբ: Հայերը համարում էին այդ հայկական ինքնավարութեան կորիզ: Մի տեսակ

ARAM webaram.com

կրկնութիւնը 1828 թ. Արմեաճսկայեա Օրլաստի՝ հայկական ինքնավար մարզի Ներսէս Աշտարակեցիի մասնակցութեամբ. նահանգային եւ քաղաքային վարչութիւն, ոստիկանութիւն՝ ամէնքը հայկական էին:

Թիկունքում ինձ համար անելիք շատ բան չկար. ընթացիկ գործերը տանում էր կարպադրիչ Մարմնի լաւ կազմակերպուած շտաբը: Կամաւորական խումբերի անմիջական պահանջներին բաւարարութիւն էր տալիս Իգդիրի մեր շտաբը Սահակ Մաւինեանի վարչութեամբ: Իմ ժամանակաւոր բացակայութիւնը չէր վնասի գործերին: Որոշեցի ես էլ երթալ Վան, մանաւանդ որ խորհրդակցութեան կարիք էր զգացւում խումբերի հրամանատարների հետ, եւ Նիկոլը արդէն այնտեղ էր:



ՎԱՐՈՍ ԲԱԲԱՅԵԱՆ

Թիֆլիսից Երեւան էր եկել մեր ուսանող գործօն ընկերներից Վարոս Բաբայեանը, Վան երթալու ցանկութեամբ: Նրա հետ այցելեցինք էջմիածին եւ ներկայացանք կաթողիկոսին: Վեհափառի տրամադրութիւնը բարձր էր, ինչ որ լաւ լուրեր էր ստացել: Մեզ հիւրասիրեց թէյով. իր ձեռքով պահարանից լիմոն հանեց եւ երկու բարակ շերտ կտրելով՝ դրեց մեր բաժակների մէջ: «Նըզովեալները զողանում են», բացատրեց նա լիմոնները զոյ պահարանում պահելը:

Իմանալով, որ մենք չուտով Վան ենք դնալու, Վեհափառը զոհունակութեամբ մօրուքը շփելով՝ ասաց.

— Վանի գրաւումը մեծ նշանակութիւն պիտի ունենայ մեր հաթցի համար: Ուրախ եմ, որ մեր կամաւորներն էլ մասնակից էին այդ պատմական գործին:

Ամերիկահայ թերթերում ստացող լուրեր էին հրատարակւում, որ, իբր թէ, կաթողիկոսը հակառակ էր կամաւորական շարժման, որ, իբր թէ, նա զէմ էր Ազգային Բիւրոյին եւայլն: Ես, առիթից օգտուելով, ասացի.

ARAM webaram.com

— Վեհափառ, ամերիկահայ թերթերում գրում են, որ դուք հակառակ էք Ազգային Բիւրոյին եւ նրա կազմած կամաւորական խումբերին...

— Գլուխները քարով են տալիս, կտրեց խօսքս Կաթողիկոսը: Դեռ մի քանի օր առաջ էր, որ ես օրհնեցի ճակատ մեկնող կամաւորներին: Այդ նշանակում է հակառակութի՞ւն...

Կաթողիկոսի այս վճռական յայտարարութիւնը ներդաշնակ չէր Կաթողիկոսական Դիւանի վարած քաղաքականութեան. դիւանապետ Տիրայր Վրդ. Տէր Յովհաննիսեանը (Ամերիկայի թեմի ապագայ առաջնորդը), յայտնապէս չէր համակրում Դաշնակցութեան: Բանը հասաւ այնտեղ, որ Ազգային Բիւրոն, յատուկ որոշումով, վստահեցրեց Ս. Գապուճեանին եւ ինձ ուղարկեց Էջմիածին, Կաթողիկոսի մօտ, պարզելու համար մի շարք թիւրիմացութիւններ, որոնց մի մասը վերաբերում էր Ամերիկայից ուղարկուած դրամարների. դիւանապետը դժուարութիւններ էր հանում Ազգային Բիւրոյին փոխանցելի դրամերը յանձնելու:

Էջմիածնից վարոսի հետ անցանք Իգդիր, ուր մեզ միացաւ Բագուից եկած նկարչութեան ուսուցիչ Սարգիս Յովհաննիսեանը, եւ վանեցիի մի կառքով, երեքս միասին մեկնեցինք դէպի Վան:

Իգդիր–Բարթողեան լեռնաշղթայ–Արագայի դաշտ–Երկրի–թիմար–Վան՝ աշխարհի ստեղծումից ի վեր այդ ճանապարհով միլիոնաւոր մարդիկ են անցել, մանաւանդ դրոց–բրոց վանեցիներ, որոնք այլեւայլ ձեւերով նկարագրել են Արարատեան դաշտի աքանչելի համայնապատկերը Զինդիլի բարձունքից, Մասիսի լերկ կողքերը Թիկունքից, Արագայի լաւային fուրանները, Թանտուրեքը մենակեաց, կատաղի Բանդու Մահին մարդակեր, Վանի լճի գեղեցկութիւնը Թիմարից, բայց չեմ կարծում — ես դոնէ չեմ տեսել — որ մէկը նկարագրած լինէր Բայազէտ Աղայի մոծակներին, հանքային ջրից դոյացած ճախճախուտների մօտ, ուր գտնւում էին գինուորական կայանի վրանները: Անկարելի է որ նման քանակով ու որակով եւ նման մարդասէր զգացումներով օժտուած մոծակներ գոյութիւն ունեցած լինէին որեւէ տեղ: Նկարչութեան ուսուցիչ Յովհաննիսեանը, որ պինուած էր բազմապիսի դեղերով, կարծում էր, թէ իր հեղուկներով օծուած մարմինը անմատչելի էր Բայազէդ Աղայի մոծակներին, բայց ամէնից շատ նրան խայթեցին Արագայի համակրելի միջատները, որոնք աթարի ծուխից էլ չէին ազդւում...

Իգդիր–Վան ճանապարհի վրայ մի դէպք էլ ամուր մնացել է

ARAM webaram.com

յիշողութեանս մէջ, որ արժանի է յիշատակութեան: Ալիւր պիտիից ճանապարհուել էինք դրեթէ դատարկ փորով. մի գաւաթ թան էինք խմել միայն: Վանին մօտեցանք քաղցած: Քաղաքից բաւական հեռու, ճանապարհի եզերքին, ծառի տակ նստած էր 10–11 տարեկան մի տղայ, առջեւը տոպրակով ծածկուած ինչ որ բան, վաճառականի ե-բեւոյթով:

— Տղայ, ի՞նչ ես ծախում, պոռաց Վարոսը:

— Հաց, մածուն, անտարբեր ձայնով պատասխանեց վաճառականը:

— Մածո՞ւն, ուրախացաւ նկարչութեան ուսուցիչը, կեցիր:

Կառապանը քաշեց երեսանակը, եւ յոգնած ձիերը սիրով կեցան:

Վաճառականը անտարբեր նստած էր ծառի տակ:

— Ապա, մի տեսնենք, ի՞նչ ունես, հետաքրքրուեց Վարոսը:

Տղան ծոյլ-ծոյլ, իբր թէ դժկամակութեամբ, ելաւ տեղից եւ ցոյց տուեց իր ապրանքը մի կաւէ ամանով մածուն, մի քանի բոմբի հաց:

— Արժէքը ի՞նչ է, հարցրի ես:

— Արժէ՞քը, ասիկա ռուս պինուորների համար է, եղաւ պատասխանը:

— Ինձ հարցնում եմ՝ արժէքը ի՞նչ է. ռուս թէ հայ միեւնոյնը չէ՞...

— Մէկ ոսկի, նեղացաւ տղան:

— Ո՞նց թէ մէկ ոսկի, ա՛ դեադա, կատա՞կ ես անում:

— Ի՞նչ կատակ, չես ուզեր, բարի ճանապարհ, ասիկա ռուս պինուորների համար է, ու սկսեց հաւաքել իր ապրանքը:

Բայց մեր վիճակը վիճակ չէր. անօթի էինք: Վճարեցի տղային տասը ռուբլիանոց մի թղթադրամ, եւ նա, այս անգամ աշխուժով, յանձնեց մեզ իր ապրանքը:

Երբ վերջը Արամին պատմեցի այս միջադէպը, նա գոհունակութեամբ խնդաց.

— Մէկ աման մածուն եւ չորս բոմբի հաց՝ տասը ռուբլի՛...

— Կեցցէ՛ տղան: Ապագային մեծ վաճառական կը լինի...


Բայց այն էլ ասեմ, որ ոչ մի տեղ, ոչ մի ճաշարանում այդպէս ախորժակով հաց չէինք կերել, որքան այն օրը, վանի մուտքի առջեւ:

ARAM webaram.com

*
**

Լոյսը կուգայ մութի հետ, երբ մեր կառքը կեցաւ անորոշ ձեւի մի չէնքի առջեւ: «Արամ փաշայի տունն է», ասաց կառապանը:

Վիեննայի Ընդհանուր ժողովից ի վեր առաջին անգամը պիտի հանդիպէի Արամին, թէեւ նամակներով յարաբերութեան մէջ էինք իրարու հետ: Խակի դոյնի ֆրէնչ հագին, աչքին սեւ ակնոց՝ նոյն Արամն էր: Կարծես մի քիչ կորացած ու մտախոհ, թէեւ անխառն ուրախութեամբ դիմաւորեց մեզ:



ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Վերը, Արամի ընդարձակ սենեակում, կային ընկերներ, որոնք սիրով ընդունեցին մեզ: Ոչ ոքի հետ ծանօթ չէի: Մի երիտասարդ, դրեթէ պատանի, Արամին քարտուղարութիւն էր անում, վերջը իմացայ՝ Օննիկ Մխիթարեանն էր: Անծանօթ մարդիկ մտնում էին, դուրս գալիս: Փիչ վերջը եկաւ Պարոյր Լեւոնեանը, Աչուղ Ջիւանիկ տըղան, որ ինչ որ պաշտօն ունէր Վանի քաղաքապետութեան մէջ: Արամի բնակավայրը հանրային հաստատութիւն լինէր կարծես, որի դուռը բաց էր ամէնքի առջեւ:

Պարզուեց, որ մենք դիչերը պիտի մնայինք այս սենեակում հիւր Արամի մօտ: Տանտիկինը չուտով սեղան պատրաստեց. մի մեծ սփռոցի վրայ չարուեցին ուտելիքները, եւ ով կար սենեակում, ամէնքը ծալապատիկ նստեցին սփռոցի չուրջը: Չեմ յիշում, թէ ինչ էր ուտելիքը, բայց կերանք ախորժակով եւ զուարթ: Արամը անվերջ կատակներ էր անում: Պատմում էր ծիծաղելի դէպքեր ինքնապաշտպանութեան օրերից:

Ընթրիքից յետոյ նոյն սենեակում չարքով փուռեցին անկո-

ARAM webaram.com

ղիներ եւ ով որ քուն ունէր պառկեց: Մենք Արամի հետ մնացինք առանձին եւ կէս գիշերը անցել էր, երբ վերջացրինք մեր խօսակցութիւնը: Ես հաղորդեցի Արամին վերջին տեղեկութիւնները Կովկասից ու Թուրքիայից եւ Արամը մանրամասնօրէն պատմեց Վանի դէպքերը Սեփէր բէյլիկից սկսած: Արամի պատմածը վերջը լոյս տեսաւ «Հորիզոն»ում եւ Մոսկուայի «Ռուսկոյէ Սլովո» թերթում:

— Ի՞նչ է օրուան կացութիւնը:

— Ինչքա՜ն բան չի կորում, ասաց Արամը: Լուրջ բան չեմ տեսնում ոչ ռուս հրամանատարութեան եւ ոչ էլ ազգային մարմինների արածների մէջ: Այս ձեւով ո՞ւր կը հասնենք, չգիտեմ:

Վանի ազատագրութիւնից անմիջապէս վերջը ռուս բանակի հրամանատարութիւնը Արամին նշանակել էր նահանգապետ: Իրրեւ նահանգապետ Արամը կազմակերպել էր Վանի քաղաքային եւ գաւառական իշխանութիւնները հայ պաշտօնատարներով: Վանի քաղաքապետ էլ նշանակել ռամկավար Թերլիպաշեանին, ինչ որ խիստ դժգոհութիւն էր առաջ բերել դաշնակցական երիտասարդութեան մէջ: Առհասարակ, երիտասարդութիւնը օպոզիցիայի մէջ էր: Վանի «Աշխատանք»ում լոյս էին տեսնում, յաճախ, քննադատութիւններ նահանգային վարչութեան դէմ, որոնք սաստիկ վշտացնում էին Արամին: «Իր ճէտերը իր դէմ էին ելել»:

Բանակի հրամանատարութիւնը դժուարութիւններ չէր հանում, բայց եւ շատ չէր օժանդակում Վանի հայկական իշխանութեան: Իսկ ազգային մարմինները եւ կազմակերպութիւնները կովկասում մեծ մասամբ բաւականանում էին միայն գեղեցիկ խօսքերով եւ խոստումներով: Վասպուրականը կարիք ունէր հիմնական կազմակերպութեան, նիւթական լուրջ օգնութեան եւ ձեռնհաս պաշտօնէութեան: Ամէն ինչ անձեւ վիճակում էր, անհրաժեշտ էր ձեւ եւ բովանդակութիւն տալ:

Եւ, յիրաւի, չուտով ես համոզուեցի Արամի խօսքերի դառն ճշմարտութեան:

Յաջորդ առաւօտ Արամի հետ ոտքով դնացինք նահանգապետարան: Բաւական ժամանակ չրջեցինք փողոցներում: Տեսանք այրած թրքական թաղը, կիսաւեր եւ թալանուած թրքական տները, որոնք, պէտք է խոստովանուել, լաւ էին մաքրապործուած վանեցիների կողմից:

Փողոցներում ամէն հանդիպող յարգանքով բարեւում էր Արամին: Երեւում էր, եր ժողովուրդը յարգում եւ սիրում էր նրան:

ARAM webarasn.com

Մտանք եւ ֆալազնունիի յատակագծով կառուցուող ժողովըրդական Տունը: Հիմնականում չէնքը արդէն պատրաստ էր, պակասում էր միայն ներքին յարդարումը: Ընդարձակ կառուցուածք էր բազմաթիւ սենեակներով ու սրահով, պարտէզի մէջ: Եթէ չլինէին պատերազմի դէպքերը, ժողովրդական Տունը արդէն լրացած ու բացուած կը լինէր, իբրեւ մշտադուարթ ակութ Վանի երիտասարդութեան համար:

Վռամեանը Կովկասում հանդիպակել էր բաւականաչափ դրամ այս փառաւոր չէնքը կառուցանելու համար: Աւա՛ղ, չէնքը մնացել էր անաւարտ, իսկ ի՞նչ էր եղել Վռամեանի ճակատագիրը, դեռ յայտնի չէր ատոյգ:

Նահանգապետարանում շատ ապատողներ կային Արամին, որ հերթով, ոտքի վրայ, ընդունում էր նրանց, հայեացքը դեռնին՝ ուշադրութեամբ լսում եւ տեղն ու տեղը լուծում նրանց ներկայացրած խնդիրները: Կազմակերպուած պաշտօնատան տպաւորութիւն չթողեց իմ վրայ նահանգապետարանը: Նոյն տպաւորութիւնը, յաջորդ օր, ատեացայ եւ քաղաքապետարանից. նկատելի էր հմուտ պաշտօնէութեան բացակայութիւնը:

Կէսօրից յետոյ մեր ժամանակը անցաւ երիտասարդութեան հետ: Մի այդիում հաւաքոյթ էին կազմակերպել: Արամը չեկաւ մեզ հետ: Ասաց՝ «գործ ունեմ», բայց ինձ թուաց գործ ունենալը չէր նրա չգալու պատճառը:

Երիտասարդները նոյն այդ այդիում ընդունել էին եւ Ցովհաննէս Թումանեանին: Այժմ հաւաքուել էին մօտ 40–50 հոգի, ինչպէս ասացին, յատուկ հրաւէրով: Գրեթէ բոլորին առաջին անգամ էի հանդիպում, թէեւ ոմանց հետ նամակների փոխանակութիւն ունեցել էի Ամերիկայից: Ամէնքը վառվռուն, դաղափարական տղաներ էին: Ցիշում եմ, որ ներկայ էին Հմայեակ Մանուկեանը, Դաւիթ Փափազեանը, Օննիկ Մխիթարեանը, Հրանդ Կարինեանը, Զաւէն Կորկոտեանը, Արշաւիր Գազանճեանը, Վեսպերը, Ծերոն Թորգոմեանը:

Ի՞նչ էր մեր հանդիպման նիւթը, մոռացել եմ, բայց մի քանի բան մնացել է մտքումս:

Ինճանից խնդրեցին զեկուցում ընդհանուր կուսակցական կեանքի եւ Կովկասի դրական երեւոյթների մասին: Տուի մանրամասն տեղեկութիւններ: Ապա տեղի ունեցաւ հարց ու պատասխան: Ունկընդիրներին մասնաւորապէս հետաքրքրում էին երիտասարդական շարժումները: Եւ որովհետեւ այն ժամանակ ես էլ դեռ երիտասարդ էի, պատասխանիս մէջ մի անզգոյշ, կարելի է ասել՝ անխոհեմ վար-

ARAM webaram.com

մունք ունեցայ. դատապարտեցի Վանի մեր երիտասարդ ընկերների քոնած դիրքը նահանգապետութեան եւ ի մասնաւորի, Արամի հանդէպ: Այո՛, չափազանց անզգոյշ եւ անխոհեմ մի արարք էր իմ կողմից:

Համայեակ Մանուկեանը, իրաւացի կերպով, դիտել տուեց, թէ այսքան կարճ ժամանակում ես չէի կարող ծանօթանալ ճշմարիտ իրականութեան: Թէ իմ իրազեկութիւնը միակողմանի է եւ եզրակացութիւնը՝ անարդար: Եւ ապա մի քանի կծու խօսքեր ասաց Վանի նահանգապետութեան եւ քաղաքապետութեան պաշտօնէութեան մասին:

Քննադատական արտայայտութիւններ եղան եւ ուրիշների կողմից: Թիրախը Արամն էր: Եւ, զարմանալի է, Արամը անսահման հոգածութիւն ու զուրգուրանք էր ցոյց տալիս դէպի երիտասարդութիւնը:

Ցաւալի է, երբ երէց եւ կրտսեր սերունդների միջեւ փոխադարձ հասկացողութիւնը կամ յարգանքը թուլանում են: Հետեւանքը միշտ վատ է լինում երկու կողմերի համար էլ: Բարեբախտաբար, Վանի մեր երիտասարդ ընկերները չուտով զգացին, ըմբռնեցին իրենց սխալը եւ փոխեցին վերաբերումը: Արամը, դիտեմ, չափազանց ազդուած էր, թէեւ արտաքնապէս ոչնչով ցոյց չէր տալիս իր դժգոհութիւնը: Ընդհակառակը, ես դիտեմ, չատերին օգնում էր, երբ խմանում էր, որ նեղութեան մէջ են:

Վանում ես երկար չմնացի, թէեւ ժամանակ գտայ այցելելու Վարագի վանքը եւ ուրիշ տեսարժան վայրերը: Վարագը հարուստ էր պատմական յիշատակներով: Այստեղ էր բոյն դրել Վասպուրականի Արծիւը եւ հայութեան պարզեւել արծուիկների անմոռանալի սերունդը: Այստեղ էր լոյս տեսել հայերէն առաջին պարբերականը Հայաստանի հողի վրայ: «Արծուի Վասպուրականի» մամուլը դեռ պահւում էր Վարագում, իբրեւ թանգարանի առարկայ: Մինչ Դորպատի սերունդը Մոսկուայում եւ Սահմանադրութեան սերունդը Պոլսում վառում էին վերածնութեան ջահը, Խրիմեան Հայրիկը իր հանճարով լուսաւորում էր Հայաստանի երկնակամարը:

Անմոռանալի են եւ Վանի սեպաձեւ արձանագրութիւններն ու Շամիրամի առուն — երկուսն էլ հին–հին դարուց յիշատակ, պանծալի ժառանգութիւն մեր ուրարտական նախնիքներից:

Հապա արտագրաւ հմայիչ տեսարանը Վարագի բարձունքից դէպի՝ Ծովակը — ո՞ւր կարելի է գտնել բնութեան նման գեղեցկութիւն...

ARAM webaram.com

ԿԱՄԱՒՈՐՆԵՐԻ ՀԵՏ

Մի վաղ առաւօտ, արեւը հազիւ ծագած, հինգ–վեց հոգինոց ձիաւոր խումբով դուրս եկանք Վանից: Ձեմ կարող յիշել բոլոր ուղեկիցներիս. Վարոսը եւ նկարիչ ուռուցիչը մնացին Վանում: Աբամը իր ամեհի նժոյգը հեծած՝ մեզ ճանապարհ դրեց բաւական տեղ:

Ոստանում տեսնուեցանք գաւառապետ Լեւոն Շալոյեանի հետ, որ այն ժամանակ դեռ փաշա չէր, բայց փաշայի պէս լուրջ էր, սակաւախօս եւ անժպիտ: Ես դոնէ ժպիտ չտեսայ Լեւոնի դէմքին:

Ձիերին մի փոքր կեր ու հանդիստ տալուց եւ Ոստանի պարտէզների կեռասը համտեսելուց յետոյ, շարունակեցինք մեր ճանապարհը դէպի Աղթամար, ուր հաւաքուած պիտի լինէին մեր կամաւորական խումբերը:

Բայց, կարճ հանգստանալուց յետոյ, բանակը վերակսել էր յառաջխաղացումը Ուրֆայի ուղղութեամբ. չարժման մէջ էին եւ մեր խումբերը: Աղթամարում գտանք միայն Վարդանի չտարը, պարենակիր եւ պահեստի մասերը: Այստեղ էին եւ Նիկոլ Աղբալեանը, Ա–Դօն եւ մի քանի ուրիշ մտաւորականներ:

Նաւակ չկար եւ կղզին այցելելու միջոց չունէինք: Հեռուից միայն դիտեցինք այդ պատմական արբանեակը: Դանիէլ Վարդապետը, որ մեզ հետ էր եկել, ցոյց էր տալիս այն բարձր ժայռը, որտեղից Բաֆֆին երազում էր. — Արդեօք գալո՞ւ է մի օր–ժամանակ, որ ամէն կողմից Հայկայ հէգ որդիք, դիմեն դէպ իւրեանց սիրուն հայրենիք...:


Ահա այնտեղ, հնաւուրց տաճարի կողքին, պատսպարուած էր Սասունից նահանջող Անդրանիկի խումբը, որ հրաշքով ազատուեց Թուրք ասկեարների պաշարումից: Վասպուրականի ընկերների կող–

ARAM webaram.com

մից Աղթամար էր եկել Սասունի հերոսներին ալեկոծելու համար Բըժիշկը (Վահան Փափազեան) եւ քիչ անդին, մի ժայռի վրայ, լուսանկարել էր յուսահատ Սասուն վերապարձող Գէորգ Զաւուշին — մեկ նկարը, որ մնացել է Տարօնի առիւծից:

Ահա դէպի ձախ, Աղթամարից ոչ հեռու, մի փոքրիկ կղզի, Առաէրը՝ թռչունների հաւաքավայր: Նարեկի սուրբը իր խուցի լուսամուտից երեւակայում էր Առաուաճածնի հրաշքը եւ գմայլանքով աղօթում ու հիանում էր այդ փոքրիկ կղզեակի դեղեցկութեամբ:

Հիանալի է Վանի լիճը իր բոլոր մասերով, բայց Աղթամարը առանձնապէս հարազատ է հայի սրտին:



ԼԵՒՈՆ ՇԱՂՈՑԵԱՆ

— Զա՛յն տուր, ո՛վ ծովակ, ինչո՞ւ լռում ես, դիլ հնչում է Դանիէլ վարդապետի առնական ձայնը, բայց ծովակը չարունակում էր լռել, միայն մանր ալիքները լիզում էին ափի քարերը անյոյզ անտարբերութեամբ:

Քննեցինք յամաքի շէնքերից մէկում: Այստեղ մի ժամանակ եռուն կեանք կար. Աղթամարում ոչ միայն աղօթում էին, այլեւ աշխատում: Դպրոց կար այստեղ եւ աշակերտութիւն: Ձեմարանական իմ դասընկեր Եփրեմ Սարգսեանը տնօրէն եւ դաստատու էր եղել այս դըպրոցում: Շարականների հետ երգւում էին եւ ազգային–յեղափոխական երգեր. «Իշխանցն եկաւ կոդմին մավիզէր»... Իշխանի ոգին դեռ սաւառնում էր Աղթամարի օդում:

Հրամայուած էր, որ առաւօտեան Աղթամարում մնացած բոլոր ուժերը չարժուէին առաջ միանալու իրենց մասերին Խնճորկին դիւղում, լճափին:

Յաջորդ առաւօտ՝ խրտանոցում. ամէնքը պատրաստ են չարժուելու, բայց Աղբալեանը չկայ. ձին կապուած է իր տեղը, բայց տէրը չի երեւում: Ո՞ւր կարող է լինել:

ARAM webaram.com

Երեկոյեան, երբ անկողին էինք մտնում, Նիկոլը տրտնջում էր, որ առանց Նարեկացիի գերեզմանին այցելութիւն տալու պիտի հեռանար: Մտածեցի՝ արդեօք Նարե՞կ էր գնացել, Աղթամարից ոչ–հեռու, բարձունքի վրայ: Եւ Նարեկ գիւղի ծայրին վանքը, ուր հանդչում էր սուրբը: Ձին քշեցի Նարեկի ուղղութեամբ:



ՆԱՐԵԿ ԳԻՒՂԸ ԵՒ ՎԱՆՔԸ

Վանքի դուռը բաց էր. ներսը կիսախաւար: Խորանի ձախ կողմը աղօտ լոյս էր պլպլում: Անաղմուկ մօտեցայ խորանի դրան. ներսը, գերեզմանաքարի կողքին, մոմի առջեւ, գիրքը ձեռքին, չոքած՝ Աղբալեանը մեզմ ձայնով Նարեկ էր քաղում՝ հոգեմայլ վերացման մէջ: Կանգնած ապասեցի լուռ: Ոչ մի կողմ չէր նայում — վերացած՝ երգում էր կարծես՝ հատ–հատ արտասանելով Նարեկացու երկնասլաց խօսքերը...

Հապացի, չնկատեց:

— Նիկոլ, խզեցի լռութիւնը:

Գլուխը դարձրեց իմ կողմը: Կարծես հաչիչ առած լինէր:

— Նիկոլ, բաւական է, մեզ սպասում են:

— Հա՛, արտասանեց նա՝ դանդաղ ոտքի կենելով: Կարծես հարբած լինէր:

ARAM webaram.com

Անխօս՝ դէրքը դրեց փրէնչի լայն դրպանը, մոմը մարեց եւ հետեւեց ինձ: Մինչեւ Աղթամար քայլեցինք կողք-կողքի լուռ: Նէ-կոլը մաքով ուրիշ տեղ էր:

Աղթամարից ճանապարհը հետեւում էր ծովակին՝ լճափին. երբեմն հեռանալով, երբեմն մօտենալով ջրին, աջ ու ձախ պարզելով սրատարած տեսարաններ: Սորփի վերելքը բաւական յոգնեցուցիչ էր: Այս տեղերը նոր էին դրաւել մերոնք եւ դեռ նկատւում էին կռիւների հետքերը:

Բարձունքի վրայ թուրքերը թողել էին մի լեռնային թնդանօթ:

Երբ մօտեցանք, թնդանօթի վրայ նստած տեսանք մեր ուսանող կամաւորներից մէկին: Պարզ դասալիք էր, որ, սակայն, վարձատրուել քաջութեան պատուանշանով ի վրդովումն Աղբալեանի:

Այս ողբերգա-դաւեշտական դէպքը ես նկարագրել եմ մի ուրիշ տեղ(*):

Մի ուրիշ տեղ ես պատմել եւ Խնճորկին դիւղում մեր անցկացրած ժամանակի մասին(*): Չկրկնեմ: Բայց մի քանի բաներ պէտք է արձանագրել:

Խնճորկինում մեր խորհրդակցութիւնը կամաւորական խումբերի հրամանատարական կազմի հետ, դէմաւորապէս, նպատակ ունէր փութացնելու յառաջխաղացումը օր առաջ հասնելու համար Տարօնի օդնութեան:

Հրամանատարների մէջ հիմնական տարակարծութիւն կամ վարանում չկային այս մասին. Ամէնքն էլ դիտակցում էին վայրկեանի լրջութիւնը եւ ուզում էին ժամ առաջ հասնել Տարօն, բայց նկատւում էր որոշ տակտիկական տարբերութիւն: Այսպէս, Դրօն պնդում էր, որ եթէ ռուս բանակը որեւէ պատճառով դանդաղեցնէ յառաջացումը, հայ կամաւորները պէտք է առանձին չարժուեն առաջ: Նա համոզուած էր, որ ջոկատի հրամանատար զօր. Տրուխինը, որ հայերից սիրուած մի ծերունի էր, կը տրամադրէր կամաւորներին թընդանօթներ ու կողակային մասեր: Դրօն ինքը նոյնիսկ խօսել եւ առաջել էր կողակների համաձայնութիւնը:

Անդրանիկը սխալ եւ անիրագործելի էր համարում Դրօյի ծրագիրը. կամաւորական խումբերը առանձին, ասում էր նա, չեն կարող Տարօն հասնել եւ պէտք է իրենց չարժումները յարմարեցնեն

(*) «Կեանքի Ուղիներով», Բ. հատ., «Հերոսութեան մասին»:

(*) Ներկայ հատորում՝ «Խէչօն եւ Հեղինէն»:

ARAM webaram.com

ռուս բանակի տակտիկային: Անդրանիկը իւրացրել էր ռուս բանակի լեզուն եւ, յաճախ, գործածում էր «պրաւի ֆլանգ», «լեւի ֆլանգ», «զադաչա», «տակտիկա» եւայլն:

Այս հարցը մնաց անլոյծ, բայց միաճայն որոշուեց ամէն գնով արագացնել Տարօնի գրաւումը:

Երբ յաջորդ առաւօտ, Վարդանի հետ, այցելութեան գնացինք զօր. Տրուխինին եւ վախ յայտնեցինք Տարօնի հայութեան ճակատագրի մասին, զօրավարը հասկացրեց մեզ, որ ինքը ուրախ կը լինէր, եթէ կամաւորական խումբերը, իբրեւ ընդհանուր ջոկատի յառաջապահներ, չտապեն հասնել Մուշի շրջանի ժողովրդի օգնութեան: Պատերազմների պատմութիւնը, ասաց նա, այդպիսի օրինակներ շատ ունի:

Երբ Անդրանիկը լսեց Տրուխինի կարծիքը, հեգնանքով ժպտաց եւ ոչինչ չասաց. նրա կարծիքը Տրուխինի մասին յայտնի էր. ծերունին ցնդած է...

Նոյն օրը ես բախտը ունեցայ ներկայ գտնուելու Անդրանիկի վարած ճակատամարտին:

Թուրքերը գրաւել էին Ուրֆայի յետեւի բարձր լեռնաշղթան եւ այնտեղից ռմբակոծում էին մեր առաջաւոր դիրքերը: Հեռադիտակով պարզ տեսնում էինք թուրք սակեարների շարժումները: Մեր հետախոյզ ձիաւորները հասել էին մինչեւ թուխ գետը եւ լուր էին բերել, թէ ինչ որ կասկածելի շարժումներ են նկատում թշնամու կողմից: Բերել էին մի «լեզու»՝ մի գերի սակեր որ հարցաքննւում էր:

Մեր կամաւորները ռուս զօրամասերի հետ գրաւել էին Խընձորկինի բարձունքները եւ դանդաղ յառաջանում էին: Անդրանիկը կենտրոնում էր: Հեռադիտակը ձեռքին, կանգնած, պոռալով կամ հայհոյելով, հրահանգներ էր տալիս աջ ու ձախ, եւ չուտով դեկավարութիւնը անցաւ իրեն:

Ռուս թնդանօթաձիգը չէր յաջողում նշան առնել. ռումբերը կամ շատ հեռու թիկունքում էին ընկնում, կամ չէին հասնում թշնամուն. Անդրանիկը ջղայնանում, պահանջում էր ճիշդ նշան առնել:

Վերջապէս, պոռաց համհարցին. — «Գնա այդ անասունին ասէ, որ փրիցելը չակէ, այս ինչ թիւր վրայ դնէ»: Թնդանօթաձիգը անտրտունջ ենթարկուեց, եւ մի քանի հարուածից յետոյ, մեր ռումբը խփեց նշանին, եւ թուրքերի թնդանօթը լռեց:

Տրուած հրամանի վրայ սկսուեց ընդհանուր յարձակումը: «Ուռա՛» պոռալով մեր շարքերը առաջ նետուեցին:

Թշնամու դնդակները արդէն հասնում էին մերոնց: Ամէն ոք

ARAM webaram.com

դիրք էր վնտռում քարերի եռեւ: Անդրանիկը ոտքի վրայ՝ անվախ հետեւում էր կռուին: Գնդակները ընկնում էին կողքին, ալ ու ձախ, բայց նրան չէին դարնում: «Գնդակը Անդրանիկին չի դարնի», ասում էին զինուորները:

Մինչեւ թուխ գետը մերոնք հետապնդեցին թուրքերին: Հապիւ գետին մօտեցել էինք, մէկ էլ դիմացի բարձունքներից որոտացին թշնամու համազարկները: Գնդակների սուլոցն օդում սարսափ էր ազդում: Ինչ մնաց մենք էլ դերի ընկնէինք: Երեկոյեան դէմ երկուսեք կռիւը ընդհատուեց. Թուխը մնաց մեր եւ թշնամու միջեւ:

Յաջորդ առաւօտ, Արամի հեռադրի վրայ, ես մեկնեցի Վան, ուր պարզուեց, որ անմիջապէս պէտք է մեկնէի Կովկաս:

Վանում հեռադիրը ստացուեց, որ Ռահւայ դաշտում, սպանուել է Խէչօն եւ դիակը բերում էին Վան: Խէչոյի յուղարկաւորութիւնից յետոյ, կառքով, ճանապարհ ընկայ դէպի Կովկաս: Անհասկընալի էր, ինչո՞ւ էին կանչում չուտով վերադառնալ, երբ առանձին բան չէր պատահել: Արամն էլ որեւէ բացատրութիւն չունէր. ռազմաճակատի գործերը, ընդհանուր առմամբ, դոհացուցիչ էին, թիկունքում էլ մտահոգիչ բան չէր երեւում:

Դեռ քաղաքից շատ չէի հեռացել, ճանապարհիս հանդիպեցի Արմէն Գարոյին, որ Վան էր գնում: Նա էլ զարմացաւ, որ ինձ հեռագրով կանչել են. Թիֆլիսում ու Երեւանում բան չէր պատահել. գործերը լաւ էին գնում, մտահոգիչ բան չկար:

Բայց երբ հասայ Բերկրի, անակնկալ տեսարան բացուեց. Արճէշի կողմից սկսել էր ժողովրդի փախուստ. հարիւրաւոր հայեր, մեծ մասը կանայք, խուճապով խոնուել էին փողոցներում եւ չէին իմանում, ի՞նչ անել եւ ո՞ւր գնալ: Ասում էին թուրքերը յարձակման են անցել, եւ ռուս բանակը նահանջում է: Վանից հրահանգի եւ օգնութեան էին սպասում:

Բայազէտ Աղայում հանդիպեցի Մոսկուայի կոմիտէի խնամատարական խումբին Լազարեան ճեմարանի ուսուցիչ Յովսէփ Թադէոսեանի դլխաւորութեամբ: Ֆուրգոններով գնում էին Վան: Ինձանից նահանջի լուրը առնելով՝ չտապեցին Բերկրի՝ աննպատակ պուճկտ հաստատելով՝ Աբաղայում:

Զարապուշակ լուրեր էին տարածւում. իբր թէ թուրքերը մեծ ուժերով յարձակման են անցել ամբողջ ճակատի վրայ. իբր թէ ռուս բանակը, կամաւորական խումբերն էլ հետը, նահանջել է լճի հիւսիսից ու հարաւից. իբր թէ Վանին էլ վտանգ է սպասում, իբր թէ...

Ես առանց ճանապարհին կենալու, չտապով հասայ Իգդիր:

ARAM webaram.com

Իգդիրի մեր կայանի վարիչ Սահակ Մատինեանը արդէն ստացել էր հեռագիր Վանի տեղահանութեան եւ գաղթականութեան թըշուառ վիճակի մասին։

Թէ ճանապարհին եւ թէ ամէն տեղ, ուր առիթ էի ունենում չփուել ռուս պինուորականների հետ, բոլորից լսում էի միեւնոյն դանդաղը.

— Հրամանատարութիւնը ապիկար է ... Վերին իշխանութիւնը ապիկար է... Այս ձեւով պատերազմ կարելի չէ վարել...

ARAM webaram.com

ՓԼՈՒԶՈՒՄ

Իզմիրում պարզուեց, որ, իսկապէս, Թուրք բանակը, անըպատեհ կերպով, յարձակման էր ձեռնարկել Գրդ կորպուսի ամբողջ ճակատի վրայ՝ յանկարծակիի բերելով ռուս հրամանատարութիւնը:

Վանի շրջանում ռուս բանակը նահանջել էր. հետը նահանջել էին եւ կամաւորական խումբերը: Վասպուրականի ողջ հայ բնակչութիւնը, Վան քաղաքն էլ մէջը, Թողնելով տուն ու տեղ, փախել էր Կովկասի եւ Պարսկաստանի ուղղութեամբ: Փախել էր խուճապահար եւ Գրդ կորպուսի շտաբը, որի ուր լինելը յայտնի չէր: Բազմահազար փախստականութեան պաշտպանութեան եւ անունդի համար անհրաժեշտ էր շտապով միջոցներ ձեռք առնել, ճանապարհներին աննպաստու եւ առոյգապահական կայաններ հաստատել եւ պաշտպանութեան միջոցներ ապահովել, Կովկասում փախստականներին ընդունելու եւ պատսպարելու պատրաստութիւններ տեսնել: Եւ, առաջին հերթին, ի հարկէ, պէտք էր Գրդ կորպուսի հրամանատարի արտօնութիւնը եւ օժանդակութիւնը ապահովել, բայց ո՞ւր էր Գրդ կորպուսի շտաբը եւ ինք զօր. Օգանովսկին, յայտնի չէր:

Թիֆլիսից, Ազգային Բիւրոյից հեռագիր եկաւ Սահակ Մատինեանի անունով. Թող մէկը անմիջապէս անձամբ դիմէ Գրդ կորպուսի հրամանատար զօր. Օգանովսկիին, ապահովելու համար փախստականների պաշտպանութիւնն ու հոգատարութիւնը: Իզմիրում մարդ չէր մնացել յարմար նման մի գործի համար: Իբրեւ Վանից նոր վերադարձած եւ այնտեղի կացութեան ծանօթ՝ ես փութացի զօր. Օգանովսկիի մօտ: Ասում էին՝ Գրդ կորպուսի շտաբը փոխադրուել էր Կաղզուան: Ես անմիջապէս ճանապարհ ընկայ դէպի Կաղզուան:

Առաջին անգամն էի լինում Կաղզուանում, որ բարձունքի

ARAM webaram.com

վրայ, այդիներով շրջապատուած սիրուն քաղաք էր։ Ալ ու ձախ հարցրի, թէ ո՞ւր է Գրդ կորպուսի շտաբը. ոչ ոք չգիտէր։ Մէկը ա-սաց թէ սպաների հիւանդանոցը վիրաւորներ էին բերել ճակատից, նրանցից կարող էի իմանալ կորպուսի տեղը։

Սպաների հիւանդանոց ասուածը մի մեծ տուն էր՝ բռնագը-բաւուած զինուորական իշխանութեան կողմից։ Երբ բաց դռնից ներս մտայ, նախասենեակում մարդ չկար եւ կողքի սենեակից բարձր խո-սակցութեան ղուարթ ձայներ էին լսւում։ Իմ բարեկամ գերասան Ա. Շահխաթունին, որ զօր. Օգանովսկիի համհարզն էր, մի ծիծաղելի պատմութիւն էր անում ուսերէն։

Երբ երեւաց զինուորեան քոյրը, յայտնեցի, թէ եկել եմ յա-տուկ յանձնարարութեամբ Իգդիրից սպայ Շահխաթունին տեսնելու։ Զինուորեան քոյրը ներս մտաւ, ձայ-նները կտրուեցին, եւ քիչ վերջը ե-կաւ հրաւիրելու ինձ ներս Շահխա-թունի մօտ։



ՇԱՀԽԱԹՈՒՆԻ

Ընդարձակ, լուսաւոր սենեա-կում չորս թէ հինգ մաքուր մահ-ճակալներ էին դրուած։ Մէկի վրայ պառկած էր «ծանր վիրաւոր» Շահ-խաթունին։ Գլուխը փաթաթուած սպիտակ վիրակապով՝ եւ հաղիւ շնչում էր։ Կցկտուր խօսքերով, դժուարութեամբ շնչելով, պատմեց իր վիրաւորուելու պարագաները (վերջը իմացայ, որ փախել էր կռուի դաշտից)։ Յայտնեց, որ զօր. Օգանովսկին իր շտաբով գտնը-ւում էր Նովօ-Նիկոլայեւկա գիւղում դէպի Ալաշկերտ տանող լեռ-նանցքի վրայ, կաղզուանից 10–15 կիլոմետր հեռու։ Պէտք է խոստո-վանուել, որ գերասան Շահխաթունին հիանալի կերպով խաղաց վի-րաւորեալի դերը։

Զորբորդ կորպուսի շտաբում ինձ դիմաւորեց սպայ Տիգրան Դէօյեանցը, որ հետախուզական պաշտօն ունէր կորպուսում։ Այդ պահուն իր մօտ էին Թուրքիայից եկած աղերդցի երկու եղբայրները՝ Տիգրանն ու Ռէչօն, որոնք ծածկագիրը նամակ էին բերել, եթէ լաւ եմ յիշում, Տարօնից։

Դէօյեանցը մեր Երեւանի ընկերներից էր։ Իրրեւ տարագիր, ապրել էր Թուրքիայում, ուր լայն ծանօթութիւններ ունէր։ Այժմ

ARAM webaram.com

սպայ էր, 4րդ կորպուսի հետախուզական մասի վարիչ: Ճարպիկ եւ բանիգէտ երիտասարդ էր: Արագ լուրեր էր հայթայթում թշնամու ուժերի, ծրագիրների եւ գործողութիւնների մասին, որոնց շուրջ երբեմն կասկածներ ու վէճեր էին ծագում: Հակառակ որ ինքը վըճռական հերքումներ է հրատարակել, մինչեւ այժմ էլ նրան մեղադրում են, որ անճիշդ տեղեկութիւններով թրքական ուժերի եւ գործողութիւնների մասին՝ պատճառ է եղել Տարօնի չրջանի հայութեան բնաջնջման: Ես անձնապէս փաստ չունեմ նրան մեղադրելու այդ ուղղութեամբ:



ՏԻԳՐԱՆ ԴԷՈՑԵԱՆՑ

Տիգրանը ուրախութեամբ դիմաւորեց ինձ: Գիշեր էր արդէն: Միայն առաւօտեան կարելի պիտի լինէր տեսնուել զօր. Օգանովսկիի հետ: Գիշերը, Տիգրանի վրանում, լսեցի նրա տեղեկութիւնները պատերազմի վերջին օրերի ընթացքի մասին, այլեւ Թուրքիայի ներսից ստացած լուրերը: Տիգրանը մանրամասն զեկուցում էր պատրաստում ուղարկելու Բոստոնին, այլեւ պրաղուած էր Տիգրանին եւ Ռէչոյին, որ յանձնարարութեամբ, Թուրքիա վերադարձնելու գործով:

Յաջորդ առաւօտ ներկայացայ զօր. Օգանովսկիին, որին արդէն ծանօթ էի: Նրա լրագրող որդին ինձ բարեկամ էր. նրա հետ միասին տեսնուել էի հօրը հետ: Թէ՛ հայրը եւ թէ՛ որդին հայասէր մարդիկ էին եւ ժամանակին շատ օգտակար եղան մեզ: Որդին մի շարք հետաքրքրական յօդուածներ եւ թղթակցութիւններ հրատարակեց հայերի եւ Հայկական Հարցի մասին:

ARAM webaram.com

Զօր. Օգանովսկին ես պարզեցի իմ այցելութեան նպատակը. հայոց Ազգային Բիւրոյի կողմից եկել էի խնդրելու, որ արագ օգնութեան հասնի 4րդ կորպուսի շրջանում գտնուող Թրքահայերին, որոնք, նահանջի հետեւանքով, տուն ու տեղ թողած, չարժուում էին դէպի Կովկաս ամենաթշուառ պայմաններում: Խօսք արի նաեւ Տաբոնի հայութեան սպառնացող վտանգի մասին: Իբրեւ գործնական միջոց, զօրավարից խնդրեցի 1) հրամայել զօրամասերին, որ օժանդակեն դաղթող հայերին եւ պաշտպանեն քրդական յարձակումների դէմ. 2) Դիւրութիւն տալ վիճակողներին անունդէ, փոխադրական եւ առողջապահական միջոցների տեսակէտից. 3) Հայ կամաւորական խումբերը կենտրոնացնել Մուշի ուղղութեամբ եւ փութացնել Մուշի գրաւումը: Ես ծանօթ չէի դեռ ռազմաճակատի խղճալի վիճակին, իբրեւ հետեւանք թրքական յարձակման:

Զօր. Օգանովսկին լսում էր արցունքը աչքերին: Խոստանում էր ամէն աջակցութիւն ցոյց տալ: Ցաւտնում էր, թէ ինքը արդէն որոշ կարգադրութիւններ արել է: Անհրաժեշտ էր համարում, որ հայկական կազմակերպութիւնները եւս արագ չարժուեն: Առհասարակ, շատ ջերմ վերաբերում ցոյց տուեց, կարծես հարցը վերաբերուէր իր ազգակիցներին: Խօսում էր առանց պաշտօնական ձեւակերպութիւնների, բաւեկամաբար, յաճախ Դէոյեանի վկայութիւնը կանչելով իր ասածների մասին:

Մեր խօսակցութեան միջոցին ներս մտաւ 4րդ կորպուսի շտաբի պետ զօր. Մղիվանին՝ բարձրահասակ, ներկայանալի դէմքով մի պինուորական: Թէեւ ազգայնամոլի համբաւ չունէր Մղիվանին, բայց, վերջապէս, վրացի էր: Օգանովսկին, կարծես, փոխուեց եւ սկսեց խօսել պաշտօնական լեզուով: Մղիվանին պաղ հաւանութիւն էր տալիս իր մեծաւորի ասածներին, բայց պարզ զգացում էր, որ մեծաւորը, գործնականում, ւեզի ինքն էր: Գիտի իրագործուէ՞ին զօր. Օգանովսկիի խոստումները, այնքան էլ վստահ չէի: Մղիվանին, փափուկ կերպով, ցոյց տուեց մի քանի գործնական դժուարութիւններ իրագործելու համար իր պետի տուած խոստումները:

Ցամենայնդէպս, ես չտապեցի վերադառնալ Իզմիր՝ թէեւ խոստացել էի Շահխաթունեին մի անգամ էլ տեսնել նրան կաղզուռնում: Ինձ զբաղեցնող հարցի համար այդ տեսակցութիւնն օգուտ չպիտի ներկայացնէր:

Իզմիրում ահաւոր տեսարան պարզուեց: Փողոցներում, այգիներում, բայց գաշտում թափուած էին գաղթականները, որոնց մէջ

ARAM webaram.com

երեւում էին կամաւորական հագուստով վախճտականներ: Պէտք է ասեմ որ Արարատեան Զոհատի Վան հասնելուց յետոյ, Վանեցի կամաւորների մեծ մասը թողել էր խումբերը եւ մնացել քաղաքում՝ իր դինուորական պարտականութիւնը կատարածի գիտակցութեամբ:

Արամը եւ իր գործակիցները դեռ չէին հասել Իգդիր, ոչ էլ կամաւորական խումբերի հրամանատարները: Մեր պունկտի վարիչը եւ գործակիցները ընկճուել էին անզօր սարսափելի աղէտի առջեւ: Հազիւ հատ ու կէնտ խնամատարական խումբեր էին հասել Իգդիր ու չնչին քանակութեամբ պարէնով: Հազիւ կարելի էր եղել հացի եւ կերակուրի գործը կազմակերպել Իգդիրի հասարակութեան ուժերով: Տեղական բնակչութիւնը ճիզ ու միջոց չէր խնայում թշուառութեան ենթարկուած ազգակիցներին օգնելու համար, բայց կարիքը այնքան մեծ էր եւ անմիջական, որ անհնար էր բոլոր պահանջներին բաւարարել: Իրար յետեւից հասնող գաղթականները տրտնջում էին, բողոքում, թէ ռուսահայերը անտարբեր էին դէպի իրենց ցաւերը: Անտարբերութեան խօսք, ի հարկէ, չէր կարող լինել, բայց անզօրութիւնը եւ միջոցների սակաւութիւնը ակներեւ էր:

Մեր կամաւորական պունկտը կամ շտաբը դարձել էր գաղթականայան: Ամբողջ պաշտօնէութիւնը նուիրուած էր նորեկների խնամատարութեան: Կամաւորական պահեստների ամբողջ պարէնը եւ նիւթական միջոցները յատկացրել էինք գաղթականներին, որոնք, սուր կարիքի մէջ, դիմում էին օգնութեան: Սրանց մէջ կային եւ նոր ծանօթներ Վանից, եւ այն երիտասարդ ընկերներից, որոնք դեռ մի քանի օր առաջ ընդունելութիւն էին կազմակերպել ինձ համար: Մէկի կինն էր մեռել, թաղելու միջոց չունէր, պէտք էր օգնել: Միւսի ընտանիքը մնացել էր անօթեւան — պէտք էր օգնել: Երրորդը խնդրում էր միջոց տալ Թիֆլիս անցնելու: Զորրորդը մի ուրիշ կարիք ունէր — պէտք էր օգնել: Վէճ կամ կռիւ էր ծագել գաղթականների եւ տեղացիների կամ իրենց գաղթականների միջեւ — պէտք էր միջամտել:

Իգդիր հասնելուս երկրորդ օրը, երբ, Իգդիրից դուրս, մօտենում էի խնամատարական պունկտին, որի շուրջ խռնուած էր ամբոխը, յանկարծ, լսեցի գազազած աղաղակներ ընդհանուր իրարանցումի մէջ եւ օգնութեան ճիչեր: Գիւղի հասարակութեան հաստատուած աննդատու կայանն էր, ուր հաց եւ կերակուր էր բաժանւում կարօտ գաղթականներին: Շտապեցի մօտենալ:

Բազմութիւնը ճանապարհ տուեց, եւ աչքերիս առջեւ բացուեց սոսկալի մի տեսարան. մէջտեղը, կրակի վրայ, մատաղի մեծ կաթ-

ARAM webaram.com

սայի մէջ եռում էր դաղթականական ապուրը: Շուրջը աղմկում էին հարիւրից աւելի դաղթականներ, սպառնում էին բռունցքները ճօճելով: Մի քանի հոգի քաշքշում էին օդնութիւն աղերսող խոհարարին եւ ուզում էին նրան եռացող կաթսայի մէջ նետել: Իգդիր-Մաւա գիւղի երէց Տէր Մեսրոպը եւ մի քանի իգդիրցիներ աշխատում էին դաղաղած ամբոխի ձեռքից ազատել թշուառական խոհարարին: Եթէ մի քիչ էլ ուշանայի, խոհարարը խաշլամա պիտի դառնար...

Ինձ մեծ դժուարութեամբ յաջողուեց հանդարտեցնել գրգռուած մարդկանց, որոնք ուզում էին պատժել խոհարարին, որ, իբր թէ, հաց ու միս էր դողանում խնամատարական կայանից: Անշուշտ, բոլոր խնամատարները սուրբեր չէին, եւ դաղթականների համար ապուր եփող խոհարարների մէջ էլ քիչ չէին մսի ու հացի սիրահարները, բայց ընդունեցէք, որ եռացող կաթսայի մէջ խաչելն էլ մի քիչ խիստ պատիժ էր...

Հետզհետէ թիկունքի դանազան կողմերից Իգդիր եւ Էջմիածին հասան նոր խնամատարական խումբեր, պարէն ու նիւթական միջոցներ, եւ քիչ-չատ կանոնաւորուեց դաղթականների հոգատարութեան գործը:

Հասան նաեւ Արամն ու իր գործակիցները: Հասան Անդրանիկը եւ ապա Դրօն իրենց կամաւորներով: Քեռիի եւ Համազասպի խումբերը նահանջել էին Պարսկաստանի ուղղութեամբ:

Ընդհանուր կացութիւնը այլեւս պարզ էր՝ կատարեալ փլուզում. Թուրքահայաստանի միակ անեղծ մնացած նահանգը՝ Վասպուրականն էլ քարուքանդ էր եղել. Տարօնը բնաջնջման վտանգի առջեւ էր գտնւում: Ինչ էր Բարձր Հայքի եւ միւս գաւառների իրական վիճակը — ոչինչ յայտնի չէր:

Արամը ընկճուած էր երեւում: Ոմանք մեղադրում էին նրան, որ չի դիմադրել արտագաղթի տրամադրութեան: Եթէ ուզէր, ասում էին, կարող էր կեցնել խուճապը: Եթէ ժողովուրդը մնար իր տեղը, պնդում էին, թշնամին չէր համարձակուի վանը գրաւելու: Արամը սիրտ չունէր պատասխանելու այդպիսի մեղադրանքներին: Եւ ի՞նչ կարելի էր ասել նման ենթադրութիւններին: Եթէ վանեցին չգաղթէր, թշնամին քաղաքը չէ՞ր գրաւի, բնակիչներին չէ՞ր կոտորի, աւելի սարսափելի բաներ չէ՞ին տեղի ունենայ: Եւ այն ժամանակ էլ Արամին չէի՞ն դատապարտի, որ արդելք էր եղել արտագաղթի: Հեշտ է կատարուած փաստից յետոյ մարդկանց դատելը: Դէպքեր չե՞ն եղել, որ ամբոխային տրամաբանութեամբ մարդկանց խարոյկի

ARAM webaram.com

վրայ այրել կամ գնդակահարել են, վերջն էլ սրբացրել, նրանց է պատիւ արձաններ են կանգնեցրել: Նոյն այդ ամբոխը չէ՞ր, որ լալով՝ մայրն էր փետում Աբամի մահուան առթիւ...

Էջմիածնից հասած լուրերի համաձայն, գաղթականները բողոքում էին վանքի վարիչների դէմ, իսկ միաբանները գանգատւում էին գաղթականներից: Աբամի հետ ելանք-գնացինք ծանօթանալու կացութեան: Երկու կողմն էլ՝ գաղթական թէ միաբան, հիմք ունէին գանգատուելու: Ներսխեան անտառը, լճի շուրջը, վանքից ներս թէ դուրսը, ամէն տեղ թափուած էին գաղթականները, բաց երկնքի տակ, թշուառ վիճակում: Ինամատարական կազմակերպութիւնները բաւարար մարդ եւ միջոց չունէին հոգալու բոլորի կարիքները, եւ գաղթականները, դազգազած, թշնամաբար էին վարւում վանքի ստացուածքի հետ. կոտրում եւ վառում էին անտառի ծառերը: Անխնայ փչացնում էին վանքի դոյքերը: Շուտով Ներսխեան դեղեցիկ անտառից ծառ չմնաց:

Ձեմարանի արեւելեան մուտքի սենեակը վերածուած էր մանկանոցի: Քարէ պատ յատակի վրայ թափուած էին մի քանի տասնեակ երեխաներ, մինչեւ մէկ տարեկան, բոլորովին մերկ, չաւերը նոյնիսկ անզօր լալու, նիհար, մեծ գլխով ու փոս ընկած խոշոր աչքերով, որոնք սարսուռ էին ազդում նայողի վրայ:

Գթութեան քոյրը, արցունքը աչքերին, ասաց, թէ դժբախտ մայրերը բերում-ձգում են երեխաներին: Ասում են «չենք կարող պահել, դուք պահեցէք, Աստուած էլ ձեզ պահէ»: Բայց տեսէք, ինչպէ՞ս պահենք, ինչո՞վ պահենք. բոլորը պիտի մեռնեն: Խելագարուելիք բան է...

Եւ, իսկապէս, խելագարուելիք բան էր: Հարցրի՝ «Լաւ, վանքի միաբանները չե՞ն հետաքրքրւում, ձեզ չե՞ն օգնում:

— Միաբաննե՞րը, կծու հեգնանքով պատասխանեց աղջիկը, միաբանները աւելի մեզանով են հետաքրքրւում:

Էջմիածնում, Հայրիկի աթոռի վրայ բազմած էր անզօր մի անճնաւորութիւն, որի դիւանապետն էր վեղարաւոր անսիրտ մի չինովնիկ...

Կաթողիկոսը մեզ ընդունեց սիրալիր, բայց չուտով բացեց դանգատի տոպրակը. ինչո՞ւ էինք բերել այս անասուած խուժանը Էջմիածին: Թող մնային Իգդիրում կամ ուղարկէինք ուրիշ տեղ: Անխնայ փչացնում են, ոչինչ չթողին վանքում: Շուտով մենք էլ անօթի պիտի մնանք: Տարէք, տեղաւորէք ուրիշ տեղ...

ARAM webaram.com

Սարսափելին ձեմարանի մանկանոցը չէր, սարսափելին Ամենայն Հայոց Կաթողիկոսի այս խօսքերն էին:

— Վեհափառ, ասաց Արամը, խիստ լեզուով, այս ժողովուրդը ձեր զաւակներն են: Սրանք բոլորը երէկ տուն ու տեղ, աղ ու հաց ունեցող մարդիկ էին: Էջմիածինը եւ հայոց վանքերն ու եկեղեցիները պահողը սրանք էին: Ձեր աթոռն էլ հաստատուած է սրանց վրայ: Ձեր զաւակները թշուառութեան են մատնուած, պէտք է գթալ եւ օգնել նրանց:

— Դէ, ես էլ էդ եմ ասում, պարոն Արամ, նահանջեց Կաթողիկոսը եւ ոտքի ելաւ, որ մեզ հիւրասիրէ: Բայց Արամը սաստիկ նեղուած էր, չուզեց մնալ: Հեռացանք:

Քիչ վերջը պիտի հասնէր Բաղաքների Միութեան մեծ խումբը բժ. Հ. Օհանջանեանի գլխաւորութեամբ: Էջմիածին պիտի գար Յովհաննէս Թումանեանը՝ Ամենայն Հայոց Բանաստեղծը՝ կատարելու Ամենայն Հայոց Կաթողիկոսի դերը զաղթական ժողովրդի վերաբերմամբ, եւ գործերը Էջմիածնում հեղհեղուկ բարելաւուեցին:

Իգդիրում զաղթականական հարցի չափ եւ աւելի մեղ յուզում էին համաւորական գործերը, մանաւանդ Տարօնին օգնութեան հասնելու միտքը: Առաջին խոչ ժողովում տեղի ունեցաւ սուր բախում Անդրանիկի եւ «վարժապետների» միջեւ: Դրօն առաջարկ էր բերել եւ պահանջում էր անմիջապէս քննութեան դնել: Նա առաջարկում էր համաւորական խումբերից կազմել մի բռունցք եւ չտապով օգնութեան դնալ Տարօնին: Կամ, եթէ այդ առաջարկը չընդունուի, երկրորդ խումբին միացնել որոշ մասեր Իշխանի նորակազմ հինգերորդ խմբից, որպէսզի ինքը անմիջապէս շարժուի դէպի Տարօն:

Դրօյի առաջարկը խօսում էր ամէնքիս սրտին: Իրար յետեւից խօսք առին Ռոստոմը, Արմէն Գարօն, Նիկոլ Աղբալեանը եւ ուրիշներ, որոնք բոլորը ջերմ բառերով պաշտպանում էին Դրօյի առաջարկը: Յանկարծ, առանց խօսք խնդրելու, ջղային շարժումով, ոտքի ելաւ Անդրանիկը, որ անզուսպ զայրոյթով մի ճառ խօսեց առանց խնայելու բառերը:

Ճառը ուղղուած էր «հոտած գլխով վարժապետների» դէմ, որոնք խելքը չհասած բաների մասին էին խօսում: «Պրաւի փլանգ», «լեւի փլանգ» եւ նման դիւանագործական ռուսերէն խօսքեր գործածելով՝ նա աշխատում էր ցոյց տալ, որ առանց ռուսական բանակի մասնակցութեան անմտութիւն է միայն համաւորների ուժերով Տարօնը զրա-

ARAM webaram.com

ւելու մասին մտածելը. կամաւորները կը կոտորուէն առանց տեղ հասնելու:

Ներկաները յուզումով ու վրդովուած լսում էին Անդրանիկի տարօրինակ, անարդար խօսքերը, ոմանք բացագանչութիւններով արտայայտում էին իրենց վրդովումը: Այդ աւելի եւս գրգռում էր ճառախօսին: Մէկը ընդմիջեց.

— Սասունում առանց ռուսների չվախեցա՞ք կռուելու...

Կարծես ռումբ պայթեց Անդրանիկի դլխին: Նա կատաղութեամբ նայեց այդ խօսքի հեղինակին եւ բռունցքները ճօճելով ու հայհոյելով թողեց ու հեռացաւ: Բոլորի ջղերը խանգարուած էին օրուայ տարատեսիլ դէպքերի ազդեցութեան տակ: Ժողովը ընդհատուեց:

Մի քանի ժամ վերջը Անդրանիկը հեռացաւ Իզմիրից՝ յայտնելով, թէ ինքը հրաժարւում է կամաւորական խումբի հրամանատարութիւնից եւ, առհասարակ, չի ուզում որեւէ մասնակցութիւն ունենալ կամաւորական շարժման մէջ:

Որքան եւ անակնկալ ու ցաւալի լինէր Անդրանիկի վարմունքը, Դրօյի առաջարկը, այնուամենայնիւ, գործադրութեան դրուեց: Առանց հանգստանալու, երկրորդ խումբը Դրօյի հրամանատարութեամբ, շարժուեց Տարօնի ուղղութեամբ, բայց արդէն ճանապարհին փախստականները լուր հասցրին, որ Տարօնի հայութիւնը կոտորուած է: Շուտով Սասունից ազատուած Ռուբէնն ու Կոման էլ հաստատեցին լուրը: Դրօյի խումբը հրաման առացաւ մաքրագործելու Զիլանի ձորը քրտական հրոսակներից:

Անդրանիկի մեկնումով առաջին խումբը մնաց անղլուխ: Վաշտապետներն էլ՝ Սեպուհը եւ ուրիշներ, դժգոհ՝ թողել էին Անդրանիկին: Անհրաժեշտ էր մի տեղ կենտրոնացնել յոգնած կամաւորներին, լրացնել ու վերակազմել խումբը, մարզել մինչեւ աշուն, երբ պիտի վերսկսէին պատերազմական գործողութիւնները: Ցոյս ունէինք, որ մինչեւ այդ հանգստացած՝ Անդրանիկը կը վերադառնար իր գործին: Առաջին անգամը չէր, որ նա ցոյց էր տալիս նման ջղայնութիւն:

Որոշուեց, որ Անդրանիկի բացակայութեան, առաջին խումբի վերակազմութիւնը ես ստանձնեմ: 1100 կամաւորներից հազիւ կէսն էր մնացել:

Ես խումբը փոխադրեցի Կոտայքի Աւան գիւղը: Երեւանից վեր, Նորքի մօտ, ընկած հաճելի մի ձորում, առողջ կլիմայով: Քիչ անդին, Քանաքեռում, մարզւում էր նորակազմ հինգերորդ խումբը

ARAM webaram.com

Իշխանի հրամանատարութեան տակ. Իշխանի օգնականը Գերասիմ Բալայեանն էր: Ասանը հետու չէր Երեւանի մեր չտարբից, այնպէս որ ես միաժամանակ կատարում էի Կարապետիչ Մարմնի իմ պարտականութիւնները եւ առաջին խումբի հրամանատարի պաշտօնը:

Երեւանում վերակազմւում կամ հանգստանում էին եւ միւս խումբերը: Երկրորդ խումբը միայն պրպտուած էր Զիլանի Էկսպեդիցիայով:



ԳԵՐԱՍԻՄ ԲԱԼԱՑԵԱՆ

Մտքիս մէջ մնացել է մի ճաշկերոյթ, որ քիչ մըննաց նոր փոթորիկ առաջ բերէր: Չեմ յիշում, Անդրանիկը դեռ չէ՞ր հեռացել Թիֆլիս, թէ գնացել եւ վերադարձել էր: Ցամենայն դէպս, նա էլ ներկայ էր: Լաւ յիշում եմ, որ ներկայ էր եւ Քեռին: 15–20 հոգի էին ճաշողները մէկ սեղանի շուրջ, «Օրիանո» հիւրանոցում: Թամադայի պաշտօնն էր վարում Արմէն Գարօն, որ աչքաւոտում էր զուարթ պահել սեղանը:

Արմէն Գարօն սկսեց կենացներ առաջարկել ըստ սերունդի, «թապաղաների» բաժանելով սեղանակիցներին: Նախ խմեց առաջին «թապաղա»յի՝ հին սերունդի կենացը, որի մէջ մըտնում էր եւ Քեռին: Ցետոյ, յաջորդաբար առաջարկեց միւս «թապաղա»ների կենացը: Անդրանիկը ընկաւ, որքան յիշում եմ, երրորդ «թապաղա»յի մէջ: Նա չկարողացաւ տանել այս նուաստացումը: Արդէն կոնեակից բաւական աղդուած՝ նա ընդոստ ոտքի ելաւ եւ դայլայլած սկսեց խօսել ճիշդ այն ձեւով, ինչպէս Իպիերի ժողովում՝ բուռն թօսքերով հարուածելով «վարժապետներ»ին:

Միակ մարդը աչքաբհում, Թոստամից յետոյ, որի առջեւ

ARAM webaram.com

Անդրանիկը կատու էք դառնում, Քեռին, որ, առհասարակ չէր խօսում, զայրացած տեղից ելաւ եւ պոռաց Անդրանիկի երեսին.

— Լռէ, ա՛լ բաւ է: Նստէ տեղդ:

Անդրանիկը չուարած, մի պահ լռեց եւ փոխանակ նստելու՝ ձգեց սեղանը եւ ամմուկով դուրս ելաւ:

Ճաշը, որ հաճելի քէֆի էր վերածւում, հարամ եղաւ:

Անդրանիկը, որ ամառը անցկացրեց Թիֆլիսում եւ, կարծեմ, Հիւս. Կովկասի հանքային ջրերում, Երեւան վերադարձաւ Սեպտեմբերին: Ամբից հեռացել էին նաեւ Սեպուհն ու Ամբատը եւ միւս վաչտապետները: Ես լուրջ դժուարութեան մատնուեցայ լրացնելու եւ վերակազմելու համար առաջին խումբը: Կամաւորներից ոմանք ուզում էին փոխադրուել ուրիշ խումբ. ուրիշ խմբերից փախչում գալիս էին մտնելու Փաշայի հրամանատարութեան տակ: Առանձնապէս դժուար էր ամերիկահայ կամաւորներին բաւարարութիւն տալը: Նրանցից չատերը պայման էին դնում, որ անպատճառ առնուին Անդրանիկի խումբի մէջ: Ես համոզուած էի, որ նրանց մեծ մասը չէր դիմանալ Անդրանիկի ռեժիմին եւ խայտառակութիւն կը լինէր, աշխատում էի աւելի Դրօշի եւ Քեռի խմբերում տեղաւորել, ուր ռեժիմը հաճելի էր: Այս դէպքի վրայ թիւրիմացութիւններ եւ դժգոհութիւններ էին տեղի ունենում:



ԻՇԽԱՆ Յ. ԱՐՂՈՒԹԵԱՆ

Այդ օրերին էր, որ ես երկար տեսակցութիւններ ու խօսակցութիւններ ունեցայ Վահան Թոթովենցի հետ: Վահանը արձանագրուած էր հինգերորդ խումբի մէջ, բայց խումբի աշխատանքներին չէր մասնակցում. Իշխանը նրան ազատել էր բոլոր պարտականութիւններից:

ARAM webaram.com

Թոքմովենցն էլ ամերիկահայ հիասթափուած կամաւորներից էր: Նա կռւկաս էր եկել ո՞վ գիտէ ինչ երազներով եւ, յանկարծ, դէմ հանդիման գտնուեց 1915 թուականի պաղ իրականութեան: Միւս կողմից Թիֆլիսի կեանքը այնքան հրապուրիչ երեւաց, որ ռազմաճակատում հերոսանալու միտքը արագ յօդս ցնդեց եւ երեւանում պատըրուակներ էր փնտռում ճակատ չերթալու: Եւ, ինչպէս միշտ եւ ամէն տեղ «մեղաւոր էր Դաշնակցութիւնը»: Փոխանակ կռուի գաշտ մեկնելու, որի համար եկել էր Ամերիկայից, գնաց Թիֆլիս, վերջը աշխատակցելու Անդրանիկի «Հայաստան» թերթում:

Հակառակ յեղյեղուկ բնաւորութեան՝ վահան Թոքմովենց գըրական շնորհքով օժտուած երիտասարդ էր: Ի վերջոյ, նա գարձաւ բոլշեւիկ, Հ. Յ. Դաշնակցութեան շարքերում սկսած գրական գործունէութիւնը գարգացրեց խորհրդային վարչաձեւի ներքեւ, իրրեւ համայնավար եւ, իրրեւ գաշնակամիտ համայնավար՝ գոհ գնաց Ստալինեան մղոքին(*):

Սեպտեմբերին առաջին խումբի վերակազմութիւնը լրացած էր: Խումբը պատրաստ էր շարժուելու: Մգրաւոր վերագարձել էր եւ իրեն գրում էր Անդրանիկի փոխանորդի դերում: Ինձ այլեւս անելիք չէր մնացել եւ անհամբեր սպասում էի Անդրանիկի գալուն, որպէսզի խումբը եւ գործերը յանձնեմ իրեն:

Անդրանիկը վերագարձաւ: Թուում էր, թէ ջղերը հանգարտած էին: Անմիջապէս ստանձնեց խումբի գործերը, առանց ինձ հետ տեսնուելու: Ես էլ «վարժապետներ»ից էի նրա աչքում, թէեւ միշտ էլ սիրալիր էր, առնուազն քաղաքավարի դէպի ինձ, դէթ արտաքնապէս: Ես էլ այն սակաւաթիւներից մէկն էի, որին երբեք ոչ միայն չի ծեծել կամ չի հայհոյել, այլեւ վատ խօսք չի ասել: Իսկ ո՞վ էր այն բախտաւորը, որ Անդրանիկի բռունցքի կամ լեզուի համը չէր ճաշակել: Անդրանիկը ծեծել էր Գասպար Իփէկեանին, Աշխարհբէկ Քալանթարեանին, Անաստաս Միկոյեանին, Նոյնիսկ Ռոստոմի, բժ. Զաւրեանի եւ Ռուբէն Տէր Մինասեանի վրայ փորձել էր ձեռք բարձրացնել:

Ինձ խոր ցաւ պատճառեց Անդրանիկի այդ վերաբերումը: Ձեմ ասում երախտապիտութիւն, տարրական մարդավարութիւնը պահանջում էր դէթ լսել իմ դեկուցումը ամբողջ ամառ կատարուած գործի մասին. առաջին խումբը քայքայուած ու բարոյալքուած, մարտիկների կէսը կորցրած հասել էր Աւան գիւղը եւ այժմ ճակատ էր գնում լրիւ կազմով, առողջ, լաւ պարենաւորուած:

(*) Տե՛ս «Հայրենիք» Տարեգիրք, 1945:

ARAM webaram.com

Այն էլ պէտք է ասեմ, որ հետագային Անդրանիկի հետ յաճախ հանդիպել ենք, եւ նա, առաջուան պէս, քաղաքավարի եւ սիրալիր էր: Այս անգամ, ճակատում նա երկար չմնաց. վերադարձաւ Կովկաս, իր տեղը նշանակելով Սմբատին: Ամէն տեսակէտից, եթէ Անդրանիկը պիտի հեռանար, Սեպուհը պէտք է լինէր առաջին խումբի հրամանատարը, սակայն, Անդրանիկի եւ Սեպուհի ջուրը, վերջին ժամանակները, միեւնոյն առուով չէր հոսում: Հետագային Սեպուհը, իր յուշերում, անողոք խօսքերով քննադատեց Անդրանիկին: Մեծ մասամբ դառն ճշմարտութիւններ էին գրածները, բայց ոչին լաւ չէր: Անդրանիկը, այո՛, քննադատելի արարքներ, դժբախտաբար, շատ ունեցաւ, որ պատմութեան համար, այո՛, անհրաժեշտ է մատնանշել, բայց եւ պէտք չէ մոռանալ, որ նա հայրենասէր ու քաջ մարդ էր: Անտեղի չէր, որ հասարակ ժողովուրդը պաշտում էր նրան, իբրեւ հերոս: Մինչեւ այսօր էլ Անդրանիկի անունը հայութեան սրտերում «սաւառնում է լեռ ու ձոր»:



ՍՄԲԱՏ

ARAM webaram.com

1916 ԹՈՒԱԿԱՆԸ

Դեկտեմբերի վերջերը, նոր տարուայ առթիւ, ինձ անծանօթ աղբակրութեամբ չնորհաւորական պատկերաւոր մի բացիկ ստացայ. ուր նշանաւոր նկարիչ Վերեշչագինի հանրածանօթ գանգերի բուրգը նկարուած եւ տակը գրուած Գամառ Քաթիպայի խօսքերը.

Երբար ու յետ չգար
Այս տարուայ տարին...

Խօսքը 1915 սեւ Թուականի մասին էր — երբար ու յետ չըգար...

Բայց 1915 Թուականը գնաց, եկաւ 1916ը, այլապէս անգութ եւ անողորմ, հայութեան համար:

Կովկասի վրայ սաւառնում էր նոր փոխարքայ մեծ իշխան Նիկոլայ Նիկոլայեւիչի չար ոգին: Թրքահայութիւնը տեղահանուած՝ մասամբ բնաջնջուած էր, մասամբ բնաջնջման ճանապարհին: Մտաւորականութիւնը՝ Մեծ Եղեռնի զոհ: Թրքահայաստանը՝ աւերակ: Եւ «մարդասէր Եւրոպան», դաղտնի, «վիճակս արկանէր ի վերայ պատմուճանի հայութեան»:

Կովկասի հայութիւնը ապաւոր էր: Սեւ լուրեր էին հասնում սահմանի միւս կողմից: Վասպուրականի, Ալաշկերտի եւ այլ շրջաններից բազմահազար գաղթական հայ բնակչութիւնը դժգոհ՝ դժուարութեամբ էր համակերպում ռուսական իշխանութեան: Ճիշդ է, ռուս բանակը վերապրաւեց Վասպուրականը, հետզհետէ գրաւեց Բնաւեր Տարօնը, անհայ կարինը մինչեւ ամայացած Բդի եւ Երզնկա, Տրապիզոնի շրջանը, բայց մեզ համար ոչ մի մխիթարական բան չկար այնտեղ: Ռուսաոմբը, որ ռուս բանակի յետեւից անմիջապէս մը-

ARAM webaram.com

տել էր կարին, սրտի մորմոքով հաղորդում էր, որ հայկական կարինից ոչինչ չէր մնացել: Պարապ, կիսաւեր տներ եւ հայոց մեծ եկեղեցին՝ մէջը լեցուն հայերի թողած դոյքերով:

Ամայի էին Ե՛ւ Տարօնը, Ե՛ւ Բղին, ու Երզնկան, Ե՛ւ Բաբերդը Ե՛ւ Տրապիզոնը ծովահայեաց: Հայութիւն չէր մնացել Հայաստանում: «Հայաստանը առանց հայի», ուռս չովէն նախաարարի երազը իրականացած էր:

Այժմ անհայ Հայաստանի համար ծրագրում էր Եփրատեան եւ Տիգրիսեան կողակութիւն, Ռիզէի ու Տրապիզոնի ծովեզերքը բաժանում էր մասերի ռուս ազնուականութեան ամառանոցների համար. հաստատւում էր զօր. Պէչկովի ընդհանուր նահանգապետութիւն եւ Հայաստանի Աւտոնոմիայի ջատագով Սազանովը սորտագրում էր Հայաստանի բաժանման համաձայնութիւնը դաշնակից Անգլիայի եւ Ֆրանսայի հետ՝ հայերին ողորմածաբար չնորհելով եկեղեցական ինքնավարութիւն:

Տարին սկսուեց դաղթականական մահոդութիւններով: Վասպուրականի եւ Ալաշկերտի հայութիւնը, վերադարձի յոյսը կտրած, տեղաւորուել էր Կովկասում: Ճարպիկները ու բախտաւորները տեղ էին դտել Երեւանում, Թիֆլիսում, Հիւսիսային Կովկասի չահաբեր կենտրոններում՝ Հանքային Ջրերում, Եկատերինոդարում, Ռոստով-Նախիջեւանում: Պակաս ճարպիկները ցրուել էին ով ուր տեղ էր դբտել: Պէտք է ասել, որ ռուս կառավարութիւնը ժլատ չէր դաղթականներին օդնելու համար, Հայ ժողովուրդն էլ ոչինչ չէր խնայում իր ազդակիցներին, բայց խնամատարական մարմինների դործելակերպի մէջ ներդաշնակութիւն չկար, եւ դաղթականութիւնը դանդաղում էր:

Մոսկուայի հայկական կոմիտէն նախաձեռնեց եւ կենտրոնական կառավարութիւնից արտօնութիւն առացաւ դումարելու հայկական մի համադումար՝ դաղթականական դործին նուիրուած: Համադումարը տեղի ունեցաւ 1916 թ. Մայիսին:

Համադումարը իր կազմով բազմամարդ էր եւ բազմազան: Հայկական բոլոր հոսանքներն ու դրեթէ բոլոր կազմակերպութիւնները ներկայացուած էին: Թրքահայ դաղթականութեան ներկայացուցիչներն էին Աւրամը, Վահան Փափազեանը (Կոմս), Աւ. Թերզիպաշեանը եւ ուրիշներ:

Մոսկուայի եւ Պետրոդրադի հայկական կոմիտէները մասնակցում էին իրենց բոլոր անդամներով՝ Ստ. Մամիկոնեան, Ա. Աս-

ARAM webaram.com

բիբէդեան, փրոֆ. Ն. Ադոնց, փրոֆ. Վարդանեան, փրոֆ. Ձիվի-
լեգեան եւայլն: Պետական Դումայի երեսփոխաններ Մ. Ա.էմեան եւ
Մ. Պապաջանեան (Թուս սահմանադիր-ռամկավարական-կադէտ կու-
սակցութեան անդամներ): Սոցիալ-դեմոկրատներ Վահան Տէրեանը,
Սարգիս Սրապիոնեանը (Լուկաշին), Աբտ. Կարինեանը, Սոցիալիստ-
յեղափոխական Ա.ր. Տէր Գրիգորեան: Դաշնակցականներից՝ Ռոստո-
մը, բժ. Զաւրեանը, Հայր Աբրահամը եւ ուրիշներ: Ամերիկայի կող-
մից՝ եւս:

Մի խօսքով, ժամանակը եւ պայմանները իւ նկատի ունենա-
լով, համագումարը կազմով բաւական պատկառելի էր, բայց գործ-
նական արդիւնքով լեռը ծնեց մուկ:

Օրակարգի վրայ դրուած էին զուտ դաղթականական հարցեր՝
ըստ կառավարական պայմանի: Հարցերի քննութիւնը տեղի էր ու-
նենում ոստիկանապետի ներկայութեամբ: Բնական է, որ ամէն ինչ
անցնում էր հարթ, օրինական սահմաններում: Անպատշաճ խօսքեր
ու վէճեր քիչ էին լինում: Աղմկաբար ընդդիմադիր դերը էին բռնել
միայն սոցիալ-դեմոկրատները: Սրապիոնեանը եւ Կարինեանը փոր-
ձում էին խուժանավարական ճառեր արտասանել, բայց նախագահ
Ստ. Մամիկոնեանը կտրուկ կերպով սանձահարում էր: Բանաձեւերը
անցնում էին առանց դժուարութեան՝ ձախակողմի հակառակութեամբ
կամ ձեռնպահութեամբ:

Համագումարը որոշեց կարգադրել դաղթականների խնամա-
տարութեան գործը, ներգաշնակել խնամատարական կազմակերպու-
թիւնների գործունէութիւնը, ապահովել կառավարութեան յարաւեւ
օժանդակութիւնը, ընտրել կենտրոնական ղեկավար մի մարմին եւ
օրակարգը չսպառած, ժամանակից առաջ, փակուեց կառավարու-
թեան «խորհրդով»: Շատ ազմուկ էր ստեղծուել հայկական համա-
դումարի շուրջ մամուլում եւ հասարակութեան մէջ, որ հաճելի չէր
կառավարութեան:

Պաշտօնական ժողովներից աւելի հետաքրքրական էին մաս-
նաւոր, երբեմն գաղտնի, հաւաքոյթները՝ ոստիկանական աչքից հե-
ռու, ուր քննւում էին եւ քաղաքական հարցեր: Նման հաւաքոյթներ
տեղի էին ունենում զանազան ձեւերով, երբեւ հիւրասիրական կամ
ընտանեկան հրաւէր կամ ճաշկերոյթ Հայկական Ակումբում: Ամէն
մարդ չէր հրաւիրւում այդ հաւաքոյթներին, այլ միայն խիստ վըս-
տահելի եւ անհրաժեշտ անհատներ: Սակայն, այդ արդելք չէր լի-
նում, որ յաջորդ օր ամէնքը իմանային հաւաքոյթի եւ քննուած հար-

ARAM webaram.com

ցերի մասին: Սովորաբար, ձախակողմեաններըը հետու էին պահում այդ ժողովներից:

Նման հաւաքոյթներից մէկում, Մ. Պապաջանեանի հրաւէրով, ճոխ ճաշից, խաւիարից եւ կախեթի գինիից յետոյ, քննութեան առարկայ եղաւ Հայկական Հարցը: Պետական Դումայի անդամ Մովսէս Ազէմեանը մի թունդ ճառ խօսեց՝ պաշտպանելով այն մտքերը, որ ջատագովում էր կադէտ պարագլուխ Պ. Միլիւկովը — Հայաստանի ինքնավարութիւն ռուսական հովանաւորութեան ներքեւ, մի բանաձեւ, որ այն օրերին հայութեան մեծամասնութեան պահանջն էր: Առանց օրակարգի պաշտօնական հարց դարձնելու այս բանաձեւը իւրացուեց եւ համագումարի կողմից:



Մ. ՊԱՊԱՋԱՆԵԱՆ

Մովսէս Ազէմեանը իմ հայրենակիցն էր: Նրա հետ ես մի բանավէճ էի ունեցել Պետական Դումայի նախընտրական ժողովում Նոր Նախիջեւանի քաղաքապետարանի սրահում: Նա խօսում էր կադէտական կուսակցութեան թեկնածուի համագումարով, ես Դաշնակցութեան կողմից, առանց որեւէ համագումարի: Ազէմեանը հիանալի հռետոր էր եւ, ի հարկէ, ջարդ ու փշուր արաւ ինձ: Այդ համագումարը աւելի եւս բարեկամ դարձրեց մեզ: Վերջը, Փարիզում, տարաձրութեան մէջ էլ չարունակուեց մեր բարեկամութիւնը: Ազէմեանը Փարիզում Գալուստ Կիւլպէնկեանի փաստաբանն էր եւ մինչեորդի դեր էր կատարում բազմամիլիոնատէրի եւ Հ. Յ. Դաշնակցութեան միջեւ:

Ժողովներից մէկից յետոյ, Ազէմեանը թեւս բռնեց, թէ՝ «կեցի՛ր, քեզ հետ խօսելիք ունեմ»: Կեցայ: Հայկական Ակումբում էինք: Առանձնացանք մի անկիւն:

ARAM webaram.com

— Ուրիշին չեմ կարող ասել, բայց քեզ պիտի ասեմ, ասաց, օգտագործիր ուր եւ ինչպէս կարող ես: Ինձ ստոյգ աղբիւրից յայտնի է, որ ռուս կառավարութիւնը գաղտնի բանակցութիւններ է վարում դաշնակիցների հետ Օսմանեան կայսրութեան բաժանման համար: Իմ ճառերին մի՛ նայիր, այդպէս պէտք է խօսեմ, բայց իմացէք, որ Հայկական Հարցը վտանգի տակ է: Այս լուրը ես քեզ եմ յայտնում: Գաղտնիք է: Պապաջանեանն էլ չի իմանում դեռ: Հետեւաբար, ես քեզ չեմ ասել, դու ինձանից չես լսել, բայց իմացիր, իմացէք, որ, հաւանաբար, շուտով ստորագրուի Ֆրանսայի, Անգլիայի եւ Ռուսաստանի միջեւ համաձայնութիւն Օսմանեան կայսրութեան բաժանման մասին, որով հայերին տրուած խոստումները չեն յարգուի: Կամ, թերեւս, արդէն ստորագրուած է...

Լուրը շշմեցուցիչ էր: Դժուար էր հաւատալ: Եթէ խօսողը Աճէմեանը չլինէր, չէի հաւատայ, բայց Աճէմեանը պարապ տեղը նման բաներ չէր խօսի:

Փորձեցի հարցումներ տալ, բայց նա կտրեց ինձ.

— Աւելի ոչինչ չգիտեմ եւ ոչինչ չեմ կարող ասել:

Տարիներ վերջը, Փարիզում, երբ ես նրան յիշեցրի իր ասածները Պետրոգրադի Հայկական Ակումբում, նա յայտնեց, որ ինքը լուրը իմացել էր արտաքին գործոց նախարարութեան մի բարեկամ պաշտօնեայից, որին պատուոյ խօսք էր տուել ոչ ոքին չխօսել այդ մասին: Մինչեւ այժմ էլ, ասաց, ամօթ եմ զգում, երբ յիշում եմ, որ դրժել եմ տուած պատուոյ խօսքս, բայց ուրիշ կերպ չէի կարող վարուել. անձնական պատուից էլ բարձր մի բան կայ աշխարհում:

Պէտք է ասեմ, որ հակառակ ռուսական կուսակցութեան անդամ եւ ռուս պետական գործիչ լինելուն, Մովսէս Աճէմեանը նախ եւ առաջ հայ էր եւ վարպետ կերպով կարողանում էր հաշտեցնել հայութիւնը իր ռուս քաղաքական գործունէութեան եւ անձնական շահերի հետ:

Փարիզում Աճէմեանը երբեմն այցելում էր Հ. Հ. Պատուիրակութեան շէնքը, Աւընիւ Բլէյէլի վրայ: Սիրում էր զրուցել «ազդի գործերի» մասին: Առանձնապէս հաճոյք էր զգում Ահարոնեանի սրամիտ պատմութիւններից:

Պատուիրակութեան հիւրասրահում, շըմինէէի վրայ, դրուած էր Քրիստափոր Միքայէլեանի դահէ կիսանդրին՝ գործ քանդակագործ Մարուքեանի:

Մի օր երկար դիտելուց յետոյ կիսանդրին, ասաց ռուսերէն՝ խօսքը ուղղելով արձանին.

ARAM webaram.com

— Դու տանուլ տուիր, բարեկա՛մ, գործդ անհետ կորաւ...:

Ես վրդովուեցի.

— Ո՞նց թէ կորաւ: Դուք եւ ես կը կորչենք, բայց Քրիստափորի գործը կը մնայ անմահ:

Իմ զայրոյթը տեսնելով՝ Աճէմեանը նահանջեց.

— Կեցի՛ր, ասաց մեր բարբառով, ես շախա (կատակ) արի:

Բայց, ի հարկէ, արածը «շախա» չէր: Շատերի պէս, նա էլ համոզուած էր, որ Հայաստանի Հանրապետութեան անկումով Հայկական Հարցը կորել է անյոյս:

Ո՞վ է իմանում, եթէ ապրէր մինչեւ մեր օրերը, Աճէմեանն էլ, երեւի, նոր լոյս ու յոյս տեսնէր Քրեմլի պարիսպներից ներս: Բոլշեւիկները պիտի չկարողանային սիրտը չհանել գործի մարդկանց, իսկ Մովսէս Աճէմեանը, հայրենասէրը, այո՛, բայց նախ եւ առաջ գործի մարդ էր:



ՔՐԻՍՏԱՓՈՐԻ ԿԻՍԱՆԴՐԻՆ

Երբ ես վերջը Աճէմեանի յայտնած տեղեկութիւնը, առանց Աճէմեանի անունը տալու, յայտնեցի բժ. Յ. Զաւրեանին, պատասխանը եղաւ՝ չեփուխա (պարապ բան):

Բայց, դժբախտաբար, պարապ բան չէր: Ցարական դահի տապալումից յետոյ յայտնի եղաւ, որ Ռուսաստանի եւ դաշնակիցների միջեւ կար, այսպէս կոչուած, Սայքս–Փիքօ համաձայնութիւնը Օսմանեան կայսրութեան անդամահատութեան մասին, մի համաձայնութիւն, որից հայերին բաժին էին հասնում կոտոշներ եւ տոտիկներ — դպրոցական եւ եկեղեցական ինքնավարութիւն՝ ըստ Ռուսաստանի արտաքին գործոց նախարարի չնական արտայայտութեան:

Եւ գործնական իրականութիւնն էլ այդ էր ցոյց տալիս:

ARAM webaram.com

Գետրոզբադից վերադառնալիս, ես մօտ մի շաբաթ մնացի Նոր Նախիջեւանում: Այստեղ առացուեց Գեորի սպանութեան լուրը Ռեւանդուզի կռւում, որից «համարեա թէ ամբողջ կովկասը ցնցուեց»: Ռոստովի «Դոնսկայա Ռէչ» թերթի թղթակիցը եկաւ մօտս տեղեկութիւններ առանալու եւ թերթում լոյս տեսաւ մի մեծ յօդուած Գեորի եւ, այդ կապակցութեամբ, հայ կամաւորական խումբերի եւ Հայկական Հարցի մասին:

Առիթից օգտուելով՝ մեր ընկերները հրապարակային մի մեծ ժողով կազմակերպեցին Նոր Նախիջեւանի քաղաքային խորհուրդի սրահում, ուր ես զեկուցում տուի հայ կամաւորական շարժման, հայկական գործերի եւ Հայկական Հարցի մասին: Մեր գիւղից շատերը քաղաք էին եկել «մեր Սիմաւոնին» լսելու համար: Մայրս էլ ներկայ էր իմ զեկուցման: Վերջը ասել էր, չգիտեմ, հպա՞րտ թէ տխրութեամբ. «Ճաաու Բարունը — եոխ ըլլար պէքիմ—չիտակ ասաց լեզուն չորնար պէքիմ»...:



ՓԵՈՒԻ


Իմ այդ զեկուցման ներկայ էր եւ փաստաբան Գրիգոր Զալխուշեանը, որ, մինչեւ Հ. Յ. Դաշնակցութեան երեւալը Ռոստով Նախիջեւանի հոգիզոնի վրայ, տիրական դէմք էր ազգային կեանքում: Աչխատակից էր «Մշակ»ին, հետաքրքրւում էր գրականութեամբ, հրատարակել էր Գամառ Քաթիպայի երկերի երկու հատորները, եռանդուն հասարակական գործիչ էր՝ ազատամիտ գունաւորումով, որ, յաճախ, իր ելոյթներով յուզում էր խաղաղասէր եւ պահպանողական Նոր Նախիջեւանցիներին: Դաշնակցութեան վերելքով Զալխուշեանի աստղը սկսեց թեքուել:

Երբ սրահից դուրս էինք գալիս, Զալխուշեանը ցանկութիւն

ARAM webaram.com

յայտնեց տեսնուել ինձ հետ: Յաջորդ օրն իսկ ես այցելեցի նրան իր սենեական տան մէջ, Ռոստովի Սադովայեա մեծ պողոտայի վրայ:

Զալխուշեանին շատ հետաքրքրում էր Կովկասի հայութեան կեանքը, յատկապէս, կամաւորական գործը, որին նպաստում էր ինքը իբրեւ Ռոստովի հայկական կոմիտէի նախագահ: Ցայտնեց, որ ինքը դաշնակցական չէր, անկուսակցական էր, բայց համակիր էր Դաշնակցութեան եւ ուզում էր սերտ գործակցել տեղական մեր ընկերների հետ, որոնք, իր ասելով, երբեմն սխալ բաներ էին անում:



ՌՈՒԲԷՆ ԲԵՐԲԵՐԵԱՆ

Վերջը իմացայ, որ «սխալ բան»ը այն էր, որ մերոնք համակրանք էին ցոյց տալիս Ռուբէն Բերբերեանին որ հետզհետէ սկսում էր տեղ դրաւել Ռոստով-Նախիջեւանի ազգային կեանքում: Զալխուշեանը յայտնապէս չէր սիրում ոչ Ռուբէն, ոչ էլ Մինաս Բերբերեան եղբայրներին:

Ռոստով-Նախիջեւանի հայկական կեանքը զարգանում էր Հ. Ց. Դաշնակցութեան, առհասարակ, երիտասարդութեան ղեկավարութեան տակ: Երիտասարդ փաստաբան Համբարձում Տէրտէրեան, որ յետոյ դարձաւ Հայաստանի Հանրապետութեան նախարար, Գրիգոր Զուբար, վերջը Երեւանի համալսարանի փրոֆէսոր, Գրիգոր Լոդոչնիկեան, Ա. Փորքչէեան, Մ. Զօհրապեան եւ ուրիշ երիտասարդ ուժեր գրաւել էին հանրային հրապարակը՝ նոր դաղափարներով ու գործելակերպով: Գրիգոր Զալխուշեանը իրեն զգում էր անտեսուած, իբրեւ հին սերունդի մարդ, եւ դոհ չէր: Մանաւանդ, որ երիտասարդութիւնը գերադասում էր Ռուբէն Բերբերեանին...

Երբ Ռոստովը դրաւուեց բոլշեւիկներից, Զալխուշեանը հայկական Ազգային կոմիտէ ցուցանակը դարձրեց հակառակ կողմը եւ

ARAM webaram.com

վրան դրել տուեց. Հայկական Յեղափոխական Կոմիտէ: Եւ այնուհետեւ, քաղաքացիական կռիւների ընթացքում, երբ Ռոստովը դրաւում էր բոլշեւիկներից՝ Հայկական Ազգային Կոմիտէն դառնում էր Հայկական Յեղափոխական Կոմիտէ. երբ յաղթում էր հակաբոլշեւիկ կամաւորական բանակը, Զալխուշեանը դարձնել էր տալիս ցուցանակի մէւս երեսը՝ Հայկական Ազգային Կոմիտէ:

1919–20ին Զալխուշեանը Երեւանում էր, որպէս Անկուսակցականների Միութեան նախագահ եւ որպէս նորակազմ պետական կարմիր խաչի վարչութեան անդամ: Երեւանում սրախօսում էին Զալխուշեանի մասին. «Անկուսակցական կուսակցութեան նախագահ»:

Հայաստանի խորհրդայնացումից յետոյ, նա անցաւ Եւրոպա, ապա դրեց մեղայական մի դրքոյկ եւ վերադարձաւ Ռոստով, իր ընտանիքի մօտ՝ արժանանալով մօտաւորապէս ֆաշզնունիի ճակատագրին:

Այցելեցի եւ մեր դիւղը՝ Մեծ Սալա: Իմ Միքիչքա քեռին դեռ ողջ էր եւ իր պաշտօնի վրայ, բայց դիւղի իշխանութիւնը հետզհետէ պրաւում էին երիտասարդները, որոնց մէջ եւ իմ մանկութեան ընկերները:

Հոլիչ մօրքուրս իմ սիրած կերակուրները եփեց՝ մածունով ապուր, խաշըխ բերեֆ, սամսա խաթլամա, խորիզով գաթա — կեբայ, բայց առաջուան համը չկար: Ընկերները դաւուլ-զուռնայով քէֆ սարքեցին Սերովբ Տիրացուեանի տանը, կերանք, խմեցինք, ուրախացանք, բայց առաջուան ուրախութիւնը չկար: Թւում էր, թէ ամէն բան փոխուել էր մեր դիւղում: Իրապէս, ես էի փոխուել. 16 տարի էր անցել, որ ես հեռացել էի Մեծ Սալայից:

Ռոստով–Նախիջեւանից ես մեկնեցի Սեւ ծովի եզերքը, Սոչի, մի քիչ հանգստանալու: Հետագային ծովեզերեայ այս քաղաքը դարձաւ բոլշեւիկների, մասնաւորապէս Ստալինի նախամեծար ճմեռանոցը:

Բնութեան ամէն բարիքով օժտուած մի սքանչելի անկիւն էր Սոչին, իսկ «Սվետլանա» պանսիոնը, որի տիրուհին նախկին քաղաքական աքսորական էր, յոգնած ջղերը բուժելու համար եզակի մի տեղ էր: Արեւ, ջերմութիւն, ճոխ բուսականութիւն եւ ջինջ ծով — թէեւ բժիշկը պատուիրել էր երեք շաբաթ, բայց 15 օրը բաւական եղաւ, որպէսզի նախկին վիճակս վերստանամ:

Շէն ու կենսուրախ Թիֆլիսը այս անգամ ինձ թուաց պարապ ու տխուր: Ազգային Բիւրոյում կենդանութիւն չէր զգացւում: կա-

ARAM webaram.com

մասնակցության խումբերի օրերը համարում էին հաշուած: Պէտք է վերածուէին հրացանակիր դումարտակների, իրրեւ կանոնաւոր զօրամասեր: Փոխարքայի հրամանը հրաման էր, կարելի չեղաւ փոխել այլ:

Պետրոգրադի համագումարը ոչ մի հետեւանք չէր ունեցել գաղթականական գործի կարգաւորման տեսակէտից. նախկին «անարխիա»ն շարունակւում էր:

«Հորիզոն»ը նորից առնուել էր դաժան դրաքննութեան տակ. այլեւս կարելի չէր դրել ոչ կամաւորական խումբերի մասին, ոչ Հայկական Հարցի, ոչ էլ համառուսական խնդիրների մասին ազատ կարծիք յայտնել:

Գրական-հասարակական կեանք էլ գրեթէ չկար. ոչ ազգային դասախօսութիւններ Հայ Գրողների Միութեան, ոչ վէճեր՝ Տիգրան Նազարեանի «Գրական Սալոն»ում, ոչ երիտասարդական աշխուժութիւն:

Մի խօսքով՝ հայկական Թիֆլիսը առաջուան Թիֆլիսը չէր. ոչ յոյզ, ոչ յոյս, ոչ ուրախութիւն...

Տրամադրութիւնը Երեւանում էլ աւելի բարձր չէր: Իրականի մէջ Արարատեան մայրաքաղաքի անուան առաջին վանկը կարելի էր ընկել՝ Երեւանը դարձել էր Վան: Ճարպիկ վանեցին կեանքի բոլոր ասպարէզներում սկսել էր բռնել մեզի Երեւանցու տեղը: Ամէն քայլափոխում վանեցիի խանութ, վանեցիի արհեստանոց: Քաղաքային Այգիում հնչում էր վանեցի գաւրոշների պիլ ձայնը.

— Հէ՛յ, սառը ջուր խմողի...

Ծառերի չուքի տակ հանգստացող քաղքենիները բարկանում էին.

— Էս լակոտներին նայեցէք, մեր ջուրը մեզ են ծախում...

Բայց եւ այնպէս, խմում էին պաղ ջուրը, եւ վանեցի «լակոտների» ափը դնում պղնձէ դրամներ: Մի քանի տարի վերջը այս «լակոտները» պիտի դառնային Հայաստանի տիրական ոյժը:

Մեր չտաբը իր տեղն էր: Կամաւորական խումբերը դեռ գործի վրայ էին, ռազմադաշտում:

Բայց այլեւս ոչ խմբերում ոգեւորութիւն կար, ոչ թիկունքում:

Անդրանիկը ընդմիշտ հեռացել էր խմբից ջղայնացած: Քեռին չկար:

Շուտով հայ կամաւորական խումբերը պիտի վերածուէին

ARAM webaram.com

ռուս հրացանակիր գումարտակների: Թուրքահայաստանը ամայի էր: Ով ողջ էր մնացել, դարձել էր գաղթական Կովկասում: Էլ ի՞նչ ոգևորութիւն, ի՞նչ կեանք:

Պարզուեց, որ հայ կամաւորներից ոչ ոք չի ուզում մնալ հրացանակիր գումարտակներում: «Մենք ռուսի սալդատ չենք դառնայ»: Այս էր ընդհանուր տրամադրութիւնը, «ոչ ռուսի փողը կ'ուզենք, ոչ ռուսի հողը»: Եւ սկսուեց կամաւորական խումբերի «լիկուիդացիան»:

Այլևս ինձ համար անտանելի էր շտաբը: Աղբալեանը մենակ էլ կարող էր կատարել Երևանի գործերի հաշուեյարդարը: Հոգնեկան ծանր տագնապի մէջ վերադարձայ Թիֆլիս: Ի՞նչ էինք երազում եւ ի՞նչ դուրս եկաւ: Հայաստան էինք ուզում ծովից ծով, եւ Հայաստանի լեռներն էլ մեր ձեռքից դնացին: Առում էինք մեզ խաբեցին, բայց դուրս եկաւ, որ մենք մեզ խաբեցինք: Ես զզում էի ինձ յանցաւոր չստացուածի համար. խիղճս հանգիստ չէր: Սարսափելի է, երբ մարդու խիղճը հանգիստ չէ:

Թիֆլիսում դեռ չէի որոշել անելիքս, երբ ձեռքս ընկաւ մի ցնցող վաւերագիր: Բարեկամս, դնդ. Դանիլովը յայտնեց ինձ, որ Ռիզէի շրջանում հող են բաժնում ռուս բանակի զինուորականներին, բարձրաստիճան պաշտօնեաներին եւ պատերազմի ընթացքին Ռուսաստանին դնահատելի ծառայութիւն մատուցած անձերին: «Ուզո՞ւմ էք, ձեր անունն էլ մտցնենք ցանկի մէջ»:

Ռիզէի շրջանում, ուր նարինջ էր հասնում, կալուածատէր լինելու հեռատեսիլը հաճելի էր, անկասկած, բայց ես վրդովուած պատասխանեցի բարեկամիս, թէ ինքը սխալւում է. նման բան չի կարող պատահել:

— Ինչո՞ւ չի կարող, գարմացաւ Դանիլովը: Մենք զէնքի ուժով գրաւել ենք այդ շրջանը, որ պատերազմի իրաւունքով այսուհետեւ մեզ է պատկանում:

— Բայց այդ շրջանը տէր ունի, աւելի եւս վրդովուած առարկեցի ես:

— Ի՞նչ տէր. ո՞վ է տէրը:

— Մենք, հայերս: Տրապիզոնի նահանգը Հայաստանին է պատկանում:

— Ա՛խ, ասաց հեգնական ժպիտով Դանիլովը, աւելի լաւ: Ուրեմն, աւելի եւս պատճառ ունէք, որ մտնէք մեր ցանկի մէջ. ձեր Հայաստանում հող կ'ունենաք:

ARAM webaram.com

Դանիլովը ինձ խոստացաւ եւ յաջորդ օր ցոյց տուեց փաստ, որին ես չէի կարող առարկել:

Այդ փաստը Գերագոյն Հրամանատարի 1916 թ. Յունիս 6 «խիստ գաղտնի» հրամանն էր Թուրքիայից նուաճուած հողերի վարչական կազմակերպութեան մասին՝ տպուած կովկասեան զինուոր շտաբի կողմից, առանձին գրքոյկի ձեւով: Դանիլովը բարի եղաւ մի քանի օրով ինձ տրամադրելու իրեն համար այդ անմեղ, բայց մեզ համար սարսափելի վաւերագիրը: Հետագային ես այդ գրքոյկը, ամօթ է ասել, Թոցրի կովկասեան զինուորական շրջանի իրաւաբէտ զօրավարի դրասենեակից եւ, եթէ կամաւորական խումբերի կարգադրիչ Մարմնի թղթերը պահպանուել են, այժմ այդ թղթածրարների մէջ պիտի լինի:

Գերագոյն Հրամանատարը այդ ժամանակ ցարն էր: Հրամանի տակ, որքան յիշում եմ, առորագրուած էր Նիկոլայ: Ուրեմն, այդ նոյն անձն էր, որ երկու տարի առաջ Ամենայն Հայոց Կաթողիկոսին խոստացել էր Հայաստանի ինքնավարութիւն: Ժամանակները փոխուել էին. մարդիկ պէտք չունէին փոխուելու. առաջ էլ նոյն խաբեբաներն էին:

Գերագոյն Հրամանատարի հրամանագրով Թուրքիայից գըրաւուած Հայաստանի նահանգները վեր էին ածւում վարչական մէկ միաւորի՝ Ռուսաստանի կենտրոնական կառավարութիւնից նշանակուած ընդհանուր նահանգապետի իշխանութեան ներքեւ: Ամբողջ իշխանութիւնը, նահանգային թէ զաւառական, վերից վար, նշանակւում էր, ենթակայ ու պատասխանատու էր ընդհանուր նահանգապետին: Հայերի մասին առանձին խօսք չկար. տեղական բնակչութեան մասին էր միայն յիշատակւում: Նուաճուած հողերի միջազգային դրութեան մասին էլ ոչինչ չէր ասւում. որոշ էր, որ այդ հողերը համարւում էին ընդմիշտ կցուած Ռուսաստանին, իբրեւ զէնքի ուժով գրաւուած:

Թէ՛ Մ. Աճէմեանից եւ թէ՛ այլ աղբիւրներից հասած տեղեկութիւնները արդէն ասում էին, որ Հայկական Հարցը վտանգի մէջ է, բայց դեռ յոյս կար, որ տարածուած լուրերը անհիմն էին: Այս փաստը չմեղմող հարուած էր մեր առանց այն էլ չչմած գլխին: Ազգ. Բիւրոյում մի քանի խորհրդակցական ժողովներ տեղի ունեցան: Կաթողիկոսի մօտ, Էջմիածին, յատուկ պատուիրակութիւն ուղարկուեց: Մտածւում էր պատուիրակութիւն ուղարկել նաեւ Պետրոգրատ: Ջեմ յիշում մարդ գնաց թէ ոչ, բայց որոշ աշխատանքներ այնտեղ էլ տեղի

ARAM webaram.com

էին ունենում Հայկական կոմիտէի կողմից: Անկասկած, Փարիզում եւս ձեռքերը ծալած նստած չէին. Պօղոս Նուպարի պատուիրակութիւնը նոյնպէս որոշ աշխատանք էր կատարում դաշնակիցների մօտ: Ռուսաստանի դաւաճանութեան հետեւանքով էր, որ որոշուեց Ամէնն Գարոյին, կաթողիկոսի յանձնարարութեամբ, ուղարկել Ամերիկա, այնտեղ եւս որոշ աշխատանք կատարելու:

Կացութիւնը, սակայն, մի քիչ կռիլովի խոհարարի եւ կատուի առակն էր յիշեցնում. կատուն խոհանոցից հաւ էր գողացել եւ մի անկիւն քաշուած՝ հանգիստ լափում էր: Վրայ էր հասնում խոհարարը եւ սկսում էր գող կատուի գլխին բարոյական քարոզ կարդալ.

— Ա՛յ կատու, գողութիւնը մեղք է, քեզ պատիւ չի բերի գողութիւնը, ուրիշ անգամ գողութիւն չանես, ամօթ քեզ...

Իսկ կատուն լսում է եւ չարունակում է ուտել, մինչեւ որ հաւից բան չի մնում...

Մինչ հայերը ուրիշ բան էին անում, ռուս կառավարութիւնը անարգել ուտում էր հաւը: Շուտով յայտնի դարձաւ, որ գօր. Պեշկովը նշանակուած է նուաճուած վայրերի ընդհանուր նահանգապետ, եւ ձեռնարկել է վարչական կազմակերպութեան: Յայտնի եղաւ, որ ծրագրում են երկու կոզակային չրջաններ Եփրատի եւ Տիգրիսի հովիտներում: Ռուսաստանից՝ Կուբանի, Դոնի եւ Ուրալի նահանգներից պիտի փոխադրուէին սակաւահող ռուսները եւ բնակեցուէին հայկական հողերի վրայ...

Փոփոխելով Գամառ Քաթիպայի խօսքերը՝ կարելի էր ասել.

Փառք ու պատիւ հեզ, վեհափառ Ցար,
Որ բար ու բանդ արիր Հայաստան.


Եւ ինչո՞ւ միայն վեհափառ ցար, հայի արիւնով ներկուած էին եւ վեհափառ դաշնակիցների ձեռքերը:

Կարելի է ասել, որ կարինից Թիֆլիս հասնելու օրից սկսած Հ. Յ. Դաշնակցութեան Բիւրոյի, ապա Հայ Կամաւորական Խումբերի կարգադրիչ Մարմնի նամակագրութիւնը արտասահմանի մարմինների հետ կատարւում էր իմ միջոցով: Նամակային յարաբերութեան մէջ էի եւ Ամերիկայի մի շարք ընկերների հետ, ինչպէս Յ.Յ. Կոբոյեանի, կենսր. Կոմիտէի քարտուղար Յովակիմ Դարբինեանի, Յակ. Պարոյրեանի, դոկտ. Ն. Տ. Ս. Թաչճեանի, Գասպար Թասիկեանի, Արսէն Միքայէլեանի եւ ուրիշների հետ: Բացի այդ, կանո-

ARAM webaram.com

նաւոր կերպով յօդուածներ եւ թղթակցութիւններ էի հասցնում «Հայրենիք»ին:

Ամերիկայի ընկերները երկար ժամանակ պահանջում էին, որ վերադառնամ Բոստոն, վերստանձնելու համար «Հայրենիք»ի խմբագրի եւ գործիչի պարտականութիւնը: Բիւրօն խոստանում էր ինձ ազատել վրաս դրուած պարտականութիւններից, բայց պայմանները թոյլ չէին տալիս: Իմ «դասալքութեանս» մեղքը, ինչպէս դրում էին, ընկերներից ոմանք, եւ աշխատում էի մեղմացնել զօր տալով նամակներին եւ թղթակցութիւններին:



Յ. Յ. ԿՈՒՅՄՅԵԱՆ

Արտասահման գնացող նամակներն ու յօդուածները ենթարկւում էին Պետրոգրադի գրաքննական վարչութեան: Ինձ յաջողուել էր յարաբերութիւն ստեղծել թիւ 23 գրաքննիչի հետ, որ Գանձակից, փաստաբան-ապայ Խորէն Համասփիւռի Միշա եղբայրն էր: Միշան ճարպիկ, ծակամուտ երիտասարդ էր եւ ամբողջ հոգիով նուիրուած էր մեր գործին: Նա յանձն առաւ իմ նամակներն ու թղթակցութիւնները առանց գրաքննելու ուղարկել ըստ հասցէի: Ես պէտք է նամակի ծրարի մի անկիւնը գրէի 23: Այդ ծրարը պիտի հասնէր Միշային, որ ձեւական բոլոր գործողութիւնները կատարելուց յետոյ՝ ծրարը կ'ուղարկէր ըստ պատկանելւոյն:

Երկու երեք տարի 1914–16 թուականներին իմ միջոցով արտասահման ուղարկուած բոլոր գրութիւնները տեղ էին հասնում առանց վախի: Եթէ կարելի լինէր «Հայրենիք»ում, այդ տարիներին, լոյս տեսած իմ թղթակցութիւններն ու գրած նամակները ամփոփել ա-

ARAM webaram.com

ռանձին հատորների մէջ, հայ նորագոյն պատմութիւնը անդնահատելի առաջձ կ'ունենար(*):

Իրրեւ պինուոր էլ ես չարունակեցի նամակներ գրել եւ թըղթակցութիւններ ուղարկել Ամերիկա: Դառնացած ցարական իշխանութեան հակահայ քաղաքականութիւնից՝ ես բառեր չէի խնայում անարդանքի սիւնին գամելու այդ քաղաքականութեան հեղինակներին՝ թիւ 23 յենդորի հովանաւորութեան ներքեւ:

Ես, ի հարկէ, այնքան անխելք չէի, որ չիմանայի, թէ պինուորի համար, այն էլ պատերազմի ժամանակ, ինչպիսի ծանր յանցանք էր իմ արարքը, բայց հիասթափութիւնս եւ վրդովումս ուսս կառավարութիւնից այնքան մեծ էին, որ ոչինչ չէր վախեցնում ինձ: Սիբի՞ր կ'ուղարկէին, տաժանակիր աշխատա՞նք, բայց մեր կեանքը տաժանակիր աշխատանք չէ՞ր: Թիֆլիս ու Սիբիր, այդ օրերին, ինձ համար միեւնոյնն էր: Եւ մի՞ն ինձ համար. ողջ հայութիւնը, հոգեպէս ընկճուած, նզովք էր կարդում աշխարհի հզօրներին:

(*) Արդէն իսկ դրանց մի մասը լոյս եմ տեսել իմ «Հին Թղթեր Նոր Պատմութեան Համար» հատորի մէջ:

ARAM webaram.com

118-ՐԴ ՊԱՀԵՍՏԻ ԳՈՒՄԱՐՏԱԿՈՒՄ ՋԻՆՈՒՈՐ

Ես զինուորական տարիքի մէջ էի, բայց ազատ էի զօրակոչից, իբրեւ Հայ Կամաւորական Խումբերի կարգադրիչ Մարմնի անդամ:

Կամաւորական խումբերի հաշուեյարդարից յետոյ, իմ առջեւը կար երկու ճանապարհ. կամ մտնել զինուորական դպրոց եւ պրապորշչիկի աստիճանով, իբրեւ սպայ, երթալ ռազմաճակատ, ըստ վահան Տէրեանի, «էշ նահատակ լինելու համար», կամ դառնալ հասարակ զինուոր, ռուս բանակի հինգ միլիոներորդ մասը, մի իվան:

Իմ հիասթափութիւնն ու վրդովումը Ռուս կառավարութեան հայկական քաղաքականութիւնից անսահման էր. ես չէի կարող — չէի ուզում — որեւէ ձեւով ծառայել այդ խարդախ, անբարոյական կառավարութեան: Ուստի նախընտրեցի վերջինը. արձանագրուեցի 118րդ պահեստի դումարտակի հասարակ զինուոր:

118րդ պահեստի դումարտակի զօրանոցը գտնւում էր Թիֆլիսում, երկաթուղագծի միւս կողմը, բարձունքի վրայ: Աղիւսէ չինուած ընդարձակ, անլոյս եւ ապուռ հանրակացարաններ: Գումարտակի հրամանատար գնդապետը, — ինձ ծանօթ — երբ ինձ տեսաւ, բարեմիտ զարմանքով հարցրեց.

— Բարեկամ, դո՞ւք այստեղ ինչ գործ ունէք:

— Եկել եմ հայրենասիրական պարտականութիւնս կատարելու, պատասխանեցի ես:

— Օ, խնդաց գնդապետը, ձեզ պէս հայրենասէրներ չատ կան մեզ մօտ:

Եւ կանչելով համհարզին՝ պատուիրեց ընդունելութեան դրծողութիւնները կատարել: Եւ ինչ որ բաներ ասաց նրա ականջին:

ARAM webaram.com

Համհարցը — դուգապիպուքեան նայեցէք — մեր Համլիկն էր, Յովհաննէս Թումանեանի տղան, որ նոր էր դուրս եկել սպայական դպրոցից եւ այժմ իմ գլխին իշխանաւոր էր: Նա խնդալով՝ արձանագրեց ինչ որ պէտք էր եւ ասաց.

— Գնդապետը հրամայեց ձեզ վրանում տեղաւորուել. զօրանոցի հանրակացարանները չատ աղտոտ են:

Եւ առաջնորդեց ինձ մի մեծ վրան, որից դուրս թռաւ ոսապորիկ աշխոյժ մի տղայ ու բարեւի կեցաւ.

— Ամօթ է, ենթասպայ Շէյուրով, մի վրաղ նայիր, նկատեց Համլիկը:

— Հանդիսաւոր ժամ է, պարոն Պրապորշչիկ, զուարթ պատասխանեց ենթասպան:

— Քանի՞ հոգի էք այս վրանում:

— Տասներհինգ դասալիքներ, խնդալով սրախօսեց Շէյուրովը:

— Այս էլ ահա ձեզ տասնըվեցերորդը. ընդունեցէք եւ լաւ պահեցէք. գնդապետի հրամանն է:

— Աչքիս վրայ, բարի գալուստ, զարճաւ ինձ ենթասպան: Մեր պալատում ոսկի մահճակալ է պատրաստուած ձեզ համար:

Եւ այսպէս, ես զարճայ Նորին Կայսերական Մեծութեան Գերբենաի գնդի 118րդ դումարտակի 16րդ վաշտի չորրորդ օղակի հեռաւոր պինուոր:

Վրանում ինձ ընդունեցին ցնծութեամբ: Բոլորն էլ Շէյուրովի նման տաքդլուխ ու զուարթ երիտասարդներ էին: Ինձ անմիջապէս մկրտեցին Քեռի անունով եւ տեղ տուին «ոսկի մահճակալի» վրայ, այսինքն վրանի մի անկիւնը, դեռեւ վրայ, Շէյուրովի կողքին:

Ռուս բանակի դումարտակը զօրագունդի չորրորդ մասն էր: Գունդը բաղկացած էր 4000 պինուորից, ուրեմն, դումարտակի կազմը պէտք է լինէր 1000 հոգի: Իր հերթին, դումարտակն էլ կազմուած էր 4 վաշտից՝ իւրաքանչիւր վաշտը 250 պինուոր:

118րդ պահեստի դումարտակի կազմը փոփոխական էր, երբեմն հասնում էր մինչեւ 20·000 պինուոր: Իմ ժամանակ դումարտակում կար 18·000 հայ ուսող:

Դումարտակի պաշտօնն էր թիկունքից ընդունել նորակոչ պինուորագուներ, մարզել եւ, ըստ պահանջի, ուղարկել ռազմաճակատ:

Դումարտակի պինուորների մեծ մասը հասակաւոր մարդիկ էին, մինչեւ 50 տարեկան մօրուքաւորներ: Շէյուրովի վզվոդի տղաների պէս երիտասարդներ քիչ կային, իսկական պինուորներ, որ դու-

ARAM webaram.com

մարտակի հրամանատարութիւնը ճակատ չէր ուղարկում եւ պահում էր մօտը ի պէտս զարգացելոց, գումարտակի ներքին կազապահութեան եւ մարզանքի համար:

118րդ գումարտակում հայեր գրեթէ չկային. «Հայերը գնում են կամաւորական գծով», բացատրեց Շէուրովը: Մեծ մասը ռուս մուժիկները էին՝ հողագործներ, արհեստաւորներ, մանր առեւտրականներ, ընդհանրապէս, բոլորը անուս եւ հայրենասիրական զգացումից զուրկ: Կային եւ վրացի գիւղացիներ, որոնք ռուսերէն չգիտէին եւ ռուսների ծաղրանքի առարկայ էին:

Գումարտակի պարապմունքները սկսւում էին վաղ առաւօտեանից. արեւը դեռ չծագած՝ ամէնքս ոտքի վրայ էինք: Քնաթաթախ շարւում էինք կարգով եւ երգում առաւօտեայ աղօթքը. «Որքան փառաւոր ես, ով Տէր, Սիոնում»: Երբեմն էլ՝ «Բոժէ, ցարիա խրանի», — «Տէր, ցարին պահպանիր»: Ռուսերէն խրանի նշանակում է պահպանիր, խարանի՝ թաղիր: Գրեթէ ամէնքը երգում էին. «Բոժէ, ցարիա խարանի» — «Տէր, ցարին թաղիր»: Սպաները լսում էին, բայց ձայն չէին հանում. ինչո՞ւ ի զուր տեղը չներին գրգռել...

Աղօթքից յետոյ՝ մարզանք, որ աւելի ծէս էր. հինգ վայրկեան վազվզուք, տասը վայրկեան հանգիստ: Ենթասպաները չէին համարձակւում նեղել մարզկանց. յանկարծ, դրանից մի բան դուրս չգայ...

Ապա՝ բանաւոր ուսմունք: Ամէն վզվոզդ իր ենթասպայի դասաւանդութեամբ զարգանում էր մտաւորապէս.

Հարց. ո՞վ է պինուորը:

Պատասխան. Զինուորը ծառայ է ցարի եւ հայրենիքի:

Առաջ ցարի, վերջը՝ հայրենիքի:

Առաւօտեան տալիս էին մէկ կտոր հաց եւ մէկ բաժակ թէյի նման հեղուկ:

Կէսօրին մեր վրանի հերթապահը բերում էր մեծ չինկօ ամանով ապուր եւ սեւ հաց: Ապուրը, սովորաբար, բորշչ էր լինում, որի մէջ տիրող տարրը կաղամբն էր, գետնախնձորի եւ տաւարի մսի կտորների ընկերակցութեամբ: Ամէնքս, փայտէ գդալներով զինուած, յարձակւում էինք ամանի վրայ. ով չուշտ, նա կուշտ: Արագաշարժները ու ճարպիկները յաղթական էին դուրս գալիս. անճարակները մնում էին անօթի:

Ապա նոյն այդ չինկօ ամանում զինուորները լուանում էին իրենց կեղտոտ գուլպաներն ու ապիտակեղէնը, աւելի ճիշդ՝ սեւեղէնը:

Երեկոյեան, արեւմուտին, նոյն ամանից ընթրիք էինք ու-

ARAM webaram.com

տում, որ ընդհանրապէս, կրկնութիւնն էր ցերեկուան ճաշացանկի։ Զինուորները դժգոհ՝ հայհոյում էին դող խոհարարին եւ դող սպաներին, բայց հայհոյանքի ամենամեծ բաժինը հասնում էր «նորին մեծութիւն ցար»ին եւ, մանաւանդ, զաւաճան թագուհուն, որ ծախում էր Ռուսաստանը իր ազգակից Վիլհելմին։

Մեր վրանի կողքին, քիչ անդին, մի մեծ վրանում, ապրում էին «ծերունիները», Հիւսիսային Կովկասից, մօտ 20 հոգի 40–50 տարեկան մանրավաճառներ, արհեստաւորներ, անորոշ զբաղումի տէր, «քեռիներ»։ Սրանց էլ մարզում էր մեր Շչուրովը, որ ծերուներ էր՛ մկրտել նրանց։

— Հանդարտ, պոռում էր Շչուրովը հայհոյանքով, երբ ծերունիները փորերը տնկած, հրամանի էին սպասում չարքում։ Հանդարտ, ձեր... ծերունիները աչխատում էին չոկուել եւ մարդկային տեսք ընդունել։

— Հանգա՛րտ, ա՛յ ոտքդ՝ ձախ, ձախ ոտքդ՝ ա՛յ, յառա՛յ, հրամայում էր Շչուրովը։

Ծերունիները չփոթուած՝ իրար էին նայում, առանց տեղից չարժուելու։

— Կեցցէ՛ք, հայրենիքի փրկիչ պանծալի հերոսներ, ո՞վ է չան գաւակ էնվէրը փաչան, որ ձեզ յաղթէ։ Հանգի՛ստ... Մա՛ուշ, գնացէք, վրանում մի քիչ հանգստացէք։

Շչուրովը գիտէր թէ վրանում օղի կար եւ դարեջուր։ Ինքն էլ պիտի չբթունքէր վոդկայի չիշից։

Ես պատահմամբ այցելում էի «հայրենիքի փրկիչ պանծալի հերոսներին», որոնք համարեա մէշտ համած էին լինում։ Պատերազմի մասին քիչ էին խօսում։ Նրանց առօրեան անփոփոխ նոյնն էր. ի՞նչ էր կատարւում այժմ իրենց տանը, Հիւսիսային Կովկասում. մէկը իր խանութի մասին էր մտածում. կինը կարողանո՞ւմ էր վարել այնպէս փայլուն սարքուած գործը։ Միւսը գաւակների կարօտից էր տառապում. առանց հօր հսկողութեան ի՞նչ պիտի լինէին։ Երրորդը երիտասարդ կնոջ նկարն էր հանում ծոցից, համբուրում. «քանը այժմ ո՞վ գիտէ որի՞ ծոցումն է պառկում...»։ Ամէն մէկը իր ցաւն ունէր. իր կարօտը, անձնական իր ապրումները եւ վիշտը աչխատում էր մարել օղիով ու հայհոյանքներով։ Ո՞վ կարող էր մրցել ռուս մարդու եօթը յարկանի հայհոյանքների հետ։ Թերեւս, միայն մեր աչտարակցիները, հայհոյանքի այդ հանճարեղ բանաստեղծները։

Ժողովրդութեան առարկայ էին եւ վրացի գեղեցկուհիները մո-

ARAM webaram.com

տակայ թաղի հաստատութիւնների մէջ։ Ամէն գիշեր «պանծալի հերոսները» գաղտնի ճանապարհով փախչում գնում էին Թամարների մօտ — բոլոր վրացուհիները նրանց համար Թամարա էին — մինչեւ լոյս քէֆ էին անում նրանց հետ, ապա նոյն ճանապարհով վերադառնում եւ ամբողջ օր հեքեաթային պատմութիւններ անում իրենց դիշերային արկածների մասին։ Շէուրովը աչք էր դոցում, նոյնիսկ հովանաւորում էր նրանց։

Կին եւ դինի — ահա ողջ դումարտակի հետաքրքրութեան գլխաւոր առարկան։ Մէկ էլ՝ ինչ անեն, որ դինուորութիւնից ազատուեն կամ ռազմաճակատ չուղարկուեն։

Զինուորութիւնից ազատուելու բոլոր յայտնի միջոցները փորձել էին, բայց ապարդիւն։ Առաջ կարելի էր աչ ձեռքի ցուցամատը կտրել եւ զինուորութիւնից ազատուել։ Հիմա ցուցամատ չունեցողներին ուղարկում էին պարենակիր խումբերի մէջ։ Առաջ ծակում էին ականջի թմբկաթաղանթը կամ արհեստական վէրք էին բաց անում ոտքի վրայ եւ ազատուում, հիմա, չան որդիք, այդպիսիներին, փոխանակ տուն վերադարձնելու, հիւանդանոց կամ բանտ էին դնում կամ ուղարկում էին խոհանոց սոխ ու գետնախնձոր մաքրելու։ Ռազմական դիտութեան նոր պայմաններում զինուորութիւնից ազատուելու հին միջոցները այլեւս անպէտք էին, իսկ նոր միջոցներ դեռ չէին գտնուած։ Այդ պատճառով ծերունիները եւ ամբողջ պահեստի դումարտակը սրտատրոփ սպասում էր ռազմաճակատ ուղարկուելու իրենց հերթին։

Ճակատ ուղարկուելիքների ցանկերը նախօրօք պատրաստուում էին դումարտակի սպայակոյտում, խիստ գաղտնի, բայց լուսնի տակ գաղտնիք չկայ, շուտով ամբողջ դումարտակը իմանում էր, թէ ումն է մեկնելու հերթը։

Նշանակուած օրը, հերթական զոհերը, իրենց տոպրակներով, շարուում էին շտաբի առջեւ՝ Շէուրովի կտրիճների հսկողութեան ներքեւ։ Միւս զինուորները տարուում էին մարզանքի, զօրանոցից հեռու։ Համհարզը կարդում էր ուղարկուելիքների անունները։ Հրամանատարը բարի ճանապարհ էր մաղթում։ Հռետոր չէր մեր գնդապետը, եւ նրա ճառը ոչ մի տպաւորութիւն չէր գործում։ Հռետորութիւնը վերապահուած էր դումարտակի երկար, խնամքով սանտրուած մազերով ու այծի մօրուքով քահանային։ Սա Աստուածաշունչից յատուկ պատշաճի մի վկայութիւն էր առաջ բերում եւ ապա, յայտնապէս չինծու ոգեւորութեամբ, հայրենասիրական մի ճառ էր արտասանում,

ARAM webaram.com

որից հետեւում էր, թէ երջանկութիւն է մահը ցարի եւ հայրենիքի համար: Միշտ՝ առաջ ցարը, յետոյ հայրենիքը:

Երբեմն ճակատ մեկնողների թիւը հազարի էր հասնում: Այդ դէպքում բերում էր եւ դումարտակի նուագախումբը, որ նուագում էր «Աստուած, պահիր Ցարին» եւ ուրիշ հայրենասիրական եղանակներ:

Գումարտակի հրամանատարի հրամանի վրայ, «հայրենիքի փրկիչները» շալակում էին իրենց տոպրակները եւ առաջ շարժւում դէպի երկաթուղու կայարանը, որտեղից երկաթուղին, բեռնակիր վագոններով, որոնց վրայ գրուած էր «8 ձի կամ 36 զինուոր», պիտի տանէր նրանց Սարըղամիշի կամ Ջուղայի ուղղութեամբ: Մեկնողների տեղ հասնում էին նորերը:

Հայրենասիրական ոգին բացակայում էր թէ՛ գնացողների, թէ՛ եկողների մէջ: Մարդկանց տրամադրութիւնը ընկած էր այն աստիճան, որ աւելի ցած անկում կարելի չէր երեւակայել:

— Հայրենի՞ք — ի՞նչ հայրենիք, ասում էին ամէնքը: Թող հայրենիքը պաշտպանեն կալուածատէրերն ու գործարանատէրերը: Թող հայրենիքի համար մեռնեն ցարի պնակալէզները կամ ինքը ցարը: Մե՞նք ինչու պիտի մեռնենք հայրենիքի համար, որից ոչ մի բարիք չենք տեսել...

Եւ, յիրաւի, ի՞նչ բարիք էր տեսել հայրենիքից այս տղէտ, խաւարամիտ, ողորմելի բազմութիւնը, որ ոգեւորուէր հայրենիքի գաղափարով, պատրաստ լինէր անձնազոհութեան հայրենիքի համար:

Երբեմն կենտրոնից բարձրաստիճան մարդիկ էին այցելում դումարտակի զինուորներին՝ նրանց բարոյական կորովը բարձրացնելու նպատակով: Խրթին, անհասկնալի բառերով ճառեր էին խօսում ցարի եւ հայրենիքի մասին: Ծրատում ու յորդորում էին քաջ լինել, չվախենալ մահից, ցարի եւ հայրենիքի համար մեռնելը երջանկութիւն է: Զինուորները լսում էին լուռ եւ մոքով դժոխք էին ուղարկում ճառախօսին:

— Շան որդի, ասում էին մեր ծերունիները, կուրծքը զարդարել է ղըռթ ու պիրիլ մեդալներով, փորը կուշտ, փայլուն սուտաթով՝ տես, ինչեր է ասում: Քաջ եղէք, մեռէք, — ի՞նքը ինչու չի մեռնում...

Առանձնապէս յուզումնալից եղաւ մի այցելութիւն: Ցայտաբարուեց, որ կէսօրից առաջ պիտի գայ Թագաւորի երէցը: Ջօրանոցի եւ վրանների շուրջ մաքուր աւլեցին: Զինուորների հագուստ – կապուստը կարգի բերին: Ապահովութեան բացառիկ միջոցներ ձեռք առին:

ARAM webaram.com

Նշանակուած ժամին ամբողջ դումարտակը հաւաքուած էր զօրանոցի մեծ հրապարակին վրայ:

Զինուորական ճշդապահութեամբ, ճիշդ որոշուած ժամին մեր զօրանոցի առջեւ կանգ առաւ չքեղ ինքնաշարժ եւ միջից դուրս եկաւ պատկառելի տեսքով մի քահանայ զինուորական ու քաղաքացիական ուղեկիցների հետ: Ըստ հրամանի բազմահազար բերաններից հնչեց «ուռա՛»:

Գումարտակի հրամանատարը ի դիմաց սպաների ու զինուորների, ողջունեց Թանկագին հիւրին, որ պատիւ էր արել այցելելու մեզ: Թանկագին հիւրը առաջ անցաւ, ձեռքով չոկեց քաջութեան Գէորգեան մետալը կրծքին, հազաց եւ սկսեց բամբ ձայնով.

— Կովկասեան հպարտ լեռների արծիւներ...

Այդ մենք էինք արծիւները, մեր հարեւան վրանի ծերուններն էին, այս անօթի ու զազազած բազմութիւնը որին կատաղեցնում էր ռէբտէրի մետաքսէ հագուստը, ինչպէս ցուլին՝ կարմիր լաթը:

Ցանկարծ, բազմութեան խորքից փրթաւ ծիծաղ եւ մէկը բացագանչեց՝ «արծիւնե՞ր — ագռաւնե՛ր...»:

Թանկագին հիւրը կեցաւ սառած: Մի պահ բազմութիւնը աւելկոծուեց: Գնդապետը առաջ անցաւ եւ պոռաց.

— Սմիռնօ — հանդա՛րտ:

Առաջին շարքերից լսուեց եւ ապա հազարաւոր բերաններից թնդաց.

— Բոժէ, ցարեա խրանի — Աստուած, պահիր Ցարին...

Միջադէպը հարթուեց առանց հետեւանքի, եւ թագաւորի երգչախումբը խօսեց իր հայրենասիրական ճառը, այս անգամ, առանց հպարտ լեռների արծիւների, առանց ոգեւորուելու եւ առանց ոգեւորելու: Եւ ինչպէս եկաւ, այնպէս էլ գնաց, աներեւութացաւ, նոյնիսկ ծափահարութեան չարժանանալով:

Կովկասեան հպարտ լեռների արծիւներս մնացինք մենք մեզի, մեր անզօր եւ անհամ առօրեայով:

Շնորհիւ զինուորական բարձր շրջաններում ունեցած ծանօթութիւնների, ես ինձ առանձնաշնորհեալ դիրքի մէջ էի զգում 118րդ պահեստի դումարտակում: Որոշ պարտականութիւններից ազատ էի: Ուզածս ժամանակ արտօնուած էի քաղաք իջնելու, նոյնիսկ գիշերները չվերադառնալու վրան: Իմ անմիջական իշխանաւորը՝ ենթապետ Շէյրովը յարդանքով էր վերաբերում ինձ: Բայց եւ այն-

ARAM webaram.com

պէս, դումարտակի մթնոլորտը անտանելի էր: Եթէ այսպէս էր ամբողջ ռուս բանակը, վայ մեզ:

Կոխեցի անհրաժեշտ կոճակները, եւ մի օր կանչեցին ինձ շտաբ: Գնդապետը, շատ սիրալիր, յայտարարեց.

— Կովկասեան շտաբից հրաման եկաւ. դուք նշանակուած էք կովկասեան զինուորական շրջանի իրաւական խորհրդական գօրավարի դրասենեակի քարտուղար: Ստացէք ձեր թուղթերը եւ բարի ճանապարհ:

Իմ ծերունիները եւ վրանի ընկերները նախանձով եւ սիրով ճանապարհ դրին ինձ:

Պահեստի դումարտակը ինձ համար եղաւ դառն փորձառութեան մի դպրոց, որ բժշկեց շատ նախապաշարումներից: Դուրսն էլ աւելի լաւ չէր, ձեւերը միայն տարբեր էին: Ժողովուրդը յոգնած էր պատերազմից: Թիֆլիսում ամէնքը խօսում էին հայրենասիրութեան եւ պատերազմի մասին, բայց սրտի խորքում երազում էին խաղաղութիւն:

Պատերազմից հարստացողները առատ դրամ ունէին: Սրճարանները եւ հաճոյքի վայրերը լեցուն էին զուարճասէր բազմութեամբ:

Կարծես նոր էին բացւում աչքերս տեսնելու համար, թէ ինչ է կատարւում չուրջս: Գաղափարը, հայրենասիրութիւնն ու անձնազոհութիւնը մնացել էին ինձ նման միամիտներին. ամէն ոք մտահոգուած էր իր անձնական բարօրութեամբ ու շահով: Զաշկա Զայու համբաւաւոր սրճարանը, ուր սպասարկում էին հայ տիկիններն ու օրիորդները, վխտում էր թիկունքային հերոսներով, բանակի հայթայթիչ դիշատիչներով, դասալիքներով: Ի՞նչ տարբերութիւն պահեստի դումարտակի Թամարաների հետ դիշերները անցկացնող «արծիւների» եւ կուրծքերը Գէորգեան խաչերով ու մեդալներով զարդարուն այս թշուառականների միջեւ:

Իսկ փոխարքայի շրջապատի սալոններում խօսում էին ռուսական Ռիվիէրա ստեղծելու մասին Ռիզէի եղերքներում եւ ցուցակներ էին կազմում «արժանաւոր» անձնաւորութիւններին հողերով վարձատրելու: «Լովի մոմենտ» — վայրկեանից օգտուիր» — այս էր օրուայ կարգախօսը:

Անհունօրէն դառն էր ու վհատեցուցիչ թիկունքային կեանքը Թիֆլիսում:

Իրաւական խորհրդական գօրավարի դրասենեակում ես դրեթէ

ARAM webaram.com

աշխատանք չունէի. օրական հազիւ երկու երեք ժամ: Մնացած ժամանակս անցընում էի դուրսը՝ «Հորիզոն»ի խմբագրութեան մէջ կամ կուսակցական գործերով:

Ժամանակիս մի մասն էլ անցնում էր թղթակցութիւններով եւ նամակագրութեամբ արտասահմանի, գլխաւորապէս Ամերիկայի հետ, Հ. Ց. Դաշնակցութեան եւ Ազգային Բիւրոյի կողմից: Օրըօրին տեղեկութիւններ էի հաղորդում կովկասեան դէպքերի եւ ռազմաճակատի չարժումների մասին: Եւ, ի հարկէ, ոչ ի նպաստ կենտրոնական եւ կովկասեան ռուս կառավարութեան, որի արարքները անխընայ քննադատութեան էին ենթարկւում՝ միշտ թիւ 23 գրաքննիչի պաշտպանութեան ներքեւ:

Եւ մի օր էլ հրահանգ ստացայ անյապաղ ներկայանալու Թիֆլիսի ժանդարմական վարչութեան պետին:

Ի՞նչ գործ կարող էր ունենալ ժանդարմական վարչութիւնը ինձ հետ: Ես զինուոր էի եւ, հետեւաբար, ենթակայ զինուորական իշխանութեանց. ժանդարմների պետը ինձ ինչո՞ւ էր կանչում իր մօտ: Անշուշտ, ո՛չ մի բաժակ թէյի համար: Ամբողջ ճանապարհին չարչարում էի ուղեղս, թէ ինչո՞ւ է կանչել ինձ գաղտնի ոստիկանութեան պետը, եւ խելքի մօտիկ բացատրութիւն չէի կարողանում գտնել:

Ժանդարմական վարչութեան կամ տխրահամբաւ Օխրանայի չէնքը ինձ ծանօթ էր, «Հորիզոն»ի խմբագրատնից ոչ հեռու, Սոլոլակի թաղում: Մարդիկ վախով էին անցնում նրա մօտից, թէեւ բոլշեւիկեան Զեկայի հետ համեմատած՝ ցարերի ժանդարմական վարչութիւնը ժողովարանի նման անմեղ հիմնարկութիւն էր...

Ժանդարմական վարչութեան վարի յարկում նայեցին թղթիս եւ ինձ ուղարկեցին վեր, երկրորդ յարկը: Իր գրասենեակի փայլուն սեղանի առջեւ, ցարի պատկերի ներքեւ, նստած էր մի չին տարիքի, լայն ու կուչտ դէմքով, զնդապետի ուսադիրներով ժանդարմների պետը, որ իմ զինուորական բարեւից յետոյ ոտքի ելաւ եւ թեթեւ ժպիտով հրաւիրեց նստելու: Միշտ ժպիտը դէմքին՝ առաջարկեց ծխախոտ: Չէի ծխում: Շարժումները դանդաղ էին, անվճռական եւ անորոշ: Անորոշ էր եւ իմ միտքը: Ի՞նչ էր ուզում այս մարդը ինձանից...

Բլոկ–նոտը քաշեց առջեւը: Վրան ինչ որ նշանակեց մատիտով եւ սկսեց, միշտ սիրալիր ու ժպտուն, թէեւ երբեմն հեգնանքի չեշտ էր երեւում խօսքերում:

ARAM webaram.com

— Ձեր անուն–ազգանո՞ւնը, ծննդեան թուակա՞նը:

Պատասխանեցի:

— Կրթութի՞ւնը:

Պատասխանեցի:

— Համալսարանական եւ հասարակ պինդուր պահեստի դումարտակո՞մ...

Չպատասխանեցի:

— Գիտէ՞ք ինչի համար եմ հրաւիրել ձեզ:

Չգիտէի:

— Դուք ժուռնալի՞ստ էք, հարցրեց այս անգամ լուրջ եւ անժպիտ:

— Երբեմն գրում էի...

— Ուրեմն, իսկ այժմ չէ՞ք գրում:

— Այժմ ես պինդուր եմ, խուսափեցի ուղիղ պատասխանելուց:

— Ո՞չ մի բան չէք գրել վերջերս:

— Ոչ:

Քաշեց սեղանի դզրոցը եւ սկսեց ինչ որ բան փնտռել:

— Այս ձեզ ծանո՞թ է, առջեւս դրեց մի ծրար:

Իմ վերջին թղթակցութիւնն էր «Հայրենիք»ին, ծրարի անկիւնում՝ իմ նշանակած 23 թիւը:

— Այս ձեզ ծանո՞թ է, կրկնեց խիստ չեչոով:

Ես լսում էի՝ գլուխս կախ:

— Երիտասարդ պարոն, երրորդ անգամ եմ հարցնում, այս ձեզ ծանո՞թ է:

— Այո՛, ծանօթ է, պատասխանեցի ես հազիւ լսելի ձայնով: Ինձ տանջում էր սարսափելի մի միտք. մի՞թէ Միշան, գրաքննիչը... բայց ո՛չ, անկարելի էր...(*):

— Գիտէ՞ք, թէ ինչ էք գրել, չարունակեց դնդապետը, այս անգամ արդէն սպառնական:

— Չեմ յիշում:

— Չէք յիշո՞ւմ: Զարմանալի է: Հիմա կը յիշեցնեմ. լսեցէ՛ք:

Ու ծրարից հանելով իմ թղթակցութիւնն ու առանձին թղթի վրայ ուսերէն թարգմանութիւնը՝ սկսեց կարդալ:

(*) Վերջը յայտնի եղաւ, որ Միշան կասկածով հեռացուել էր պաշտօնից եւ հնարաւորութիւն չէր ունեցել ինձ նախազգուշացնելու:

ARAM webaram.com

Ես գրում էի, որ ցարական բռնակալութիւնը ծրագրում է Թուրքիայից գրաւուած հողերը միացնել ռուս պետութեան: Այս առթիւ խորհրդածութիւններ էի անում խիստ խօսքերով ռուս կառավարութեան հասցէին՝ խարդախ, նենգ, բռնակալ...

— Հիմա յիշեցի՞ք, թէ ինչ գոհարներ էք թափել, կծու չեչառով հարցրեց գնդապետը:

Ես լուռ էի՝ գլուխս կախ:

— Դուք գինուոր էք, դիտակցո՞ւմ էք, թէ ինչ է սպառնում ձեզ:

Ես լուռ էի:

— Ինչո՞ւ էք լռել, ինչո՞ւ չէք պատասխանում:

Վերջապէս, ես հաւաքեցի ուժերս եւ ասացի.

— Ի՞նչ պատասխանեմ: Ի՞նչ էք ուզում ինձանից: Իբրեւ գինուոր, ես իրաւունք չունէի նման բաներ գրելու, բայց ես էլ մարդ եմ եւ հայ մարդ. մի՞թէ անճիշդ է գրածս...

Մարդը զարմացած նայեց երեսիս:

— Լսեցէք, բարեկամ. ճիշդն ու անճիշդը որոշելը ձեր գործը չէ: Ոչ միայն իբրեւ գինուոր, այլեւ ընդհանրապէս դուք իրաւունք չունիք նման մտքեր յայտնելու:

Ու ոտքի ելաւ: Այլեւս ժպիտ չկար դէմքին:

— Իսկապէս ես պէտք է ձերբակալեմ ձեզ եւ օրէնքի յանձնեմ, ասաց գնդապետը, բայց ես շատ եմ յարգում ձեր բարեկամ զօրավարին եւ չեմ ուզում մերժել նրա խնդրանքը: Դուք ինձ ոչնիւ խօսք կը տա՞ք, որ այսուհետեւ այլեւս նման բաներ չէք անի:

— Կը տամ, պատասխանեցի ես:

— Դէհ, ուրեմն գնացէք, ազատ էք, բայց մէկ էլ ձեռքս չընկնէք, հա՛...

Եւ իսկապէս, ես մէկ էլ նրա ձեռքը չընկայ: Ճակատագրի խաղերը տարօրինակ են. ընդհակառակը, նա ընկաւ իմ ձեռքը:

1917 թ. Փետր. 28ին, տապալուեց ցարական վարչաձեւը, եւ յեղափոխութեան յարող առաջին զօրամասը Թիֆլիսում եղաւ 118րդ պահեստի գումարտակը: Յեղափոխութիւնը ազատագրեց եւ ինձ. ես նորից անցայ կուսակցական եւ հասարակական գործունէութեան՝ ի միջի այլոց նշանակուելով իրաւաբանական յանձնախումբի անդամ Յեղափոխական կենտրոնին կից, որի պաշտօնն էր քննել օրինական տեսակէտից յեղափոխական կարգի հետ կապուած հարցերը:

Մի օր, երբ նստած աշխատում էի «Հորիզոն»ի խմբագրատան

ARAM webarm.com

գրասենեակում, չնչասպառ ներս ընկան մի քանի ընկեր միլիցիոներները, թէ.

— Շտապով հասէք, վրացիները թալանում են ժանդարմական վարչութիւնը:

Ես լսել էի, որ մի քանի անուանի վրացի գործիչներ կապ են ունեցել ժանդարմական վարչութեան հետ: Զրոյց էր շրջում եւ վրացի ժողովրդական մի խմբապետի մասին, որ, իբր թէ, սերտային յարաբերութեան մէջ էր ժանդարմական գնդապետի կնոջ հետ եւ այդ պատճառով այցելում էր գնդապետի բնակարանը:

Միլիցիոներների բերած լուրի վրայ՝ չտապեցի հետեւել նրանց: Ժանդարմական վարչութեան շէնքի առջեւ հաւաքուած ամբոխը աղմկում էր զանազան լեզուներով, բայց ոխրական էր վրացերէնը: Շէնքի վարի յարկում, ուր տեղաւորուած էր արխիւը, ինչ որ կասկածելի տիպեր թղթածրարներ էին քրքրում: Պարզ էր, որ իրենց հետաքրքրող թղթեր էին փնտռում: Յեղափոխական օրէնքի անունով եւ միլիցիոներների օգնութեամբ ես նրանց դուրս արի եւ կնքել տուի արխիւի դուռը: Երեւում էր, որ այս առաջին արշաւը չէր ժանդարմական արխիւի վրայ, յատակին խառն ի խուռն թափուած էին թղթեր եւ լուսանկարներ: Փողոցի ամբոխը ցրուեց դժգոհ միլիցիոների սոխպումով: Ամբոխը ուզում էր հրդեհել ժանդարմական վարչութիւնը, անշուշտ, չհաշրդուած մարդկանց դրդումով, եւ ինքնապաշտպանի ենթարկել ժանդարմների պետին:

Վերը գնդապետի դուռը ամուր գոցուած էր: Մի քանի անդամ զանգահարելուց յետոյ, բացուեց մի նեղ ճեղք եւ լսուեց գնդապետի վախկոտ ձայնը.

— Ո՞վ է: Ի՞նչ էք ուզում:

— Յեղափոխութեան ժամանակի օրէնքով պահանջում եմ բանալ, ասացի ես:

Դուռը վախով բացուեց: Գնդապետը կանգնած էր քաղաքացիական հագուստով: Կինը դողում էր յետեւը:

— Բարեւ ձեզ, գնդապետ, բարեւեցի ես, ինձ ճանաչեցի՞ք... ես պահեցի իմ խոստումը եւ ձեր ձեռքը չընկայ, բայց հիմա...

— Ե՞ս ձեր ձեռքը ընկայ...

— Այո, դուք իմ ձեռքը ընկաք: Դուք բարի եղաք իմ հանդէպ, ասացէք՝ ինչո՞վ կարող եմ փոխարինել ձեր բարութիւնը:

— Ի սէր Աստծոյ, մէջ ընկաւ կինը, ազատեցէք ամուսնուս ամբոխի ձեռքից...

ARAM webaram.com

— Մէկ բան եմ խնդրում, աւելացրեց ամուսինը, օդնեցէք ինձ անարգել հեռանալու այս անիծեալ քաղաքից...

Անիծելու իրաւունք ունէր — իր տեսակէտից — որովհետեւ մի քանի անգամ նրան սպանելու փորձ էին կատարել:

Ես խոստացայ օգնել: Յաջորդ օր, Յեղափոխական կենտրոնի արտօնութեամբ՝ ես հասցրի գնդապետին եւ կնոջ երկաթուղու կայարան եւ ճանապարհ դրի դէպի Հիւսիսային Կովկաս:

Վերջը լուր հասաւ, որ Բեսլան կայարանում յեղափոխական ամբոխը յարձակուել էր գնացքի վրայ, եւ, չաուերի հետ, կողոպտել ու սպանել էր նաեւ Թիֆլիսի ժանդարմական գնդապետին եւ իր կնոջ: Ճակատագրի խորհուրդը անհասանելի է:

ARAM webaram.com

ԿՈՎԿԱՍԸ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

Համաշխարհային Պատերազմի հէնց առաջին օրերից իրազեկ մարդիկ պնդում էին, որ Ռուսաստանը պատրաստ չէր մեծ եւ տեւական պատերազմ վարելու: Ճիշդ է, Կովկասում տիրական էր այն համոզումը, թէ ռուս բանակը գերազանց է թուրքերի համեմատութեամբ, բայց, ընդհանրապէս, թէ՛ ռազմաւորման եւ թէ՛ պարենաւորման տեսակէտից Ռուսաստանը պէտք ունէր ուժերի արտակարգ լարման, որպէսզի կարողանար դիմադրել դերման հուժկու զօրութեան:

Բացառիկ միջոցների կարիքը զգաց նոյնիսկ ցարական բթամիտ կառավարութիւնը, այդ պատճառով պատերազմի գործի օժանդակութեան կոչուեցին դոյութիւն ունեցող հասարակական կազմակերպութիւնները կամ կեանքի կոչուեցին նորերը, որոնք չարժման մէջ դրին ընկերային զանազան խաւեր:

Առեւտրա–արդիւնաբերական դասերը եւ մեծ դրամապլխի ներկայացուցիչները համախմբուած էին ռազմա–արդիւնաբերական կոմիտէների մէջ, որոնց նպատակն էր զարկ տալ երկրի ռազմական ճարտարարուեստին: Կառավարութիւնը աշխատում էր այս կոմիտէների միջոցով պատերազմի գործին լծել եւ բանուորութիւնը, որի դասակարգային կազմակերպութիւնները զօրացնելուց վախենում էր: Ռուս բանուորութիւնը համակուած էր արմատական–ձախակողմեան գաղափարներով սոցիալ–դեմոկրատ եւ սոցիալ–յեղափոխական կուսակցութիւնների քարոզչութեան ազդեցութեան տակ:

Ռուսաստանի հասարակական ուժերի կազմակերպութիւնը կարելի էր նկատել, այսպէս կոչուած, զեմստուօն՝ զաւառական ինքնավարութիւնը, որը ներկայացնում էր կալուածատէր ազնուականու-

ARAM webaram.com

թիւնը եւ հողատէր դիւղացիութիւնը: Ջեմսկի Սոյիւզը՝ դաւառական ինքնավարութիւնների միութիւնը պատկառելի ոյժ էր երկրում՝ իր մեծամասնութեան մէջ ընդդիմադիր ցարական կառավարութեան, ընդհանրապէս ընկերային չափաւոր դաղափարներով:

Կովկասում զեմստւօ դոյութիւն չունէր: Ցարական կառավարութիւնը վախենում էր յեղափոխական կովկասցիներին տալ իրաւունքներ, եւ տասնեակ տարիներ Կովկասը պայքարում էր զեմստւօ ստանալու համար:

Ռուսաստանի քաղաքային բնակչութիւնը ներկայացուած էր բաղաքային ինքնավարութիւնների միջոցով՝ չափաւոր իրաւունքներով: Ձայնի իրաւունք ունէին, այսինքն քաղաքային իշխանութեան կարող էին մասնակցել միայն սեփականատէրերը եւ որոշ դրամագլուխ ունեցողները: Հայաստանի մաս համարուող չրջաններում քաղաքային ինքնավարութեամբ օժտուած էին Երեւան, Ալեքսանդրապոլ, Կարս, Սարըղամիշ, Օլթի, Արդահան, Կաղզուան, Ախալքալաք, Նոր Բայազէտ, Նախիջեւան, Օրդուբադ, Գորիս եւ Շուշի քաղաքները: Հայերը մեծամասնութիւն էին կազմում կամ կարեւոր տեղ էին դրաւում Թիֆլիսի, Գորիի, Գանձակի, Բաքուի, Շամախիի, Նուխիի քաղաքային ինքնավարութիւնների մէջ:

Ռուսաստանի քաղաքային ինքնավարութիւնները միացած էին Սոյիւզ Գորոդով՝ քաղաքների միութիւն կոչուած կազմակերպութեան մէջ: Կովկասի չրջանը կազմում էր առանձին միաւոր՝ կովկասեան բաղաքների միութիւն անունով, որի նախագահն էր Թիֆլիսի բազմաչնորհ քաղաքագլուխ Ալեքսանդր Իվանովիչ Խատիսովը կամ Խատիսեանը, տեղի եւ միջավայրի համաձայն:

Խատիսեանի չնորհիւ Սոյիւզ Գորոդովի խնամատարական խմբերում եւ կայաններում աչխատում էին չատ դաչնակցական դործիչներ, ինչպէս բժ. Համօ Օհանջանեան, բժ. Արտաչէս Բաբալեան, Սիրական Տիգրանեանը, Ալ. Շարաֆեանը, այլեւ անկուսակցական բայց սրտով հայ մտաւորականներ, որոնք ոչ միայն խնամում էին պատերազմի ազետեալներին, այլեւ դեկավարում էին ազգային-քաղաքական նկատումներով — պահել հայութեան համրանքը, ապահովել նոր սերունդին ազգային կրթութիւն ու դաստիարակութիւն, համախմբել հայ գաղթականներին հայկական չրջաններում եւայլն:

Բնականաբար, նման նպատակներով առաջնորդւում էին եւ մահմեդականները, որոնց եւ հայերի միջեւ պակաս չէին բախումները: Վրացիները, մեկուսացած իրենց բնաչխարհում, պատերազմի ազետեալների հարց դրեթէ չունէին, բայց սրանց եւ հայերի միջեւ

ARAM webaram.com

էլ բաժան խնդիրներ քիչ չէին: Վրացիները առանձնապէս զգայուն էին դէպի հայերի տեղաւորումը այն վայրերում, որ վրացիները համարում էին Վրաստանի սահմաններից ներս: Եւ եթէ մրցակցութիւնը հայերի եւ վրացիների միջեւ տեղի էր ունենում ընդհանրապէս, խաղաղ պայմաններում, հայ-մահմեդական յարաբերութիւնները կովկասում, յատկապէս ռազմաճակատի թիկունքում, չափազանց սուր ձեւերով էին արտայայտւում:

Այս երեք ժողովուրդները կովկասում — հայ, վրացի, մահմեդական կամ ազերի — թէ՛ իրենց աշխարհագրական դիրքով, թէ զարգացին նկարագրով եւ քաղաքական ձգտումներով եւ նոյնիսկ ընկերային կառոյցով բոլորովին տարբեր պատկեր էին ներկայացնում:

Հայերը բնական խելքով եւ սեփականատիրական ուժեղ բնազդով օժտուած, աշխատասէր ու խնայասէր ժողովուրդ էին: Ազնուական դասակարգից զուրկ, ազնուականութեան տեղը բռնում էին, մեծ մասամբ, դիւղից ելած մտաւորականութիւնը եւ քաղքենի հարուստ տարրը՝ բուրժուազիան: Որոշ չափով նաեւ հոգեւորականութիւնը:

Հայը հնարամիտ ու գործնական ժողովուրդ էր, աշխատող, զրամ չինող ու զրամ խնայող: Սիրում էր հողը եւ ստացուածքը: Ամուր կապուած չէր կովկասեան իր հայրենիքի հետ, ուր ապրում էր խառնուած մահմեդականութեան հետ եւ չէր զգում իրեն իր երկրի տէր, ինչպէս զգում էր, օրինակ, վրացին Քութայիսի նահանգում: Այդ պատճառով էլ քաղաքական հարց չունէր Ռուսաստանում: Կովկասի հայի գիտակցութեան մէջ իր բուն հայրենիքը գտնում էր սահմանի միւս կողմը, եւ իր քաղաքական բովանդակ մտասեւեռումը ուղղուած էր դէպի Թրքահայաստան:

— Դէպի երկիր:

Եւ երկիր ասելով՝ հասկացւում էր հայրենիք: Եւ հայրենիք նշանակում էր Թրքահայաստան:

Իր կովկասեան հայրենիքը — Երեւանի նահանգ, Գանձակի նահանգ, Կարսի շրջան — նեղ էր եւ անչահաւէտ հայի չինարար հանճարի համար: Ռուս կառավարութիւնը քաջալերում էր հայացումը, եւ հայը, համեմատաբար, դիւրութեամբ թողնում էր իր ծննդավայրը եւ փոխադրւում Կովկասի ու Ռուսաստանի չահաբեր վայրեր: Անդրկովկասի մայրաքաղաք Թիֆլիսը փաստօրէն դարձել էր հայկական քաղաք: Կովկասահայութեան ազգային-մշակութային կեանքը կենտրոնացած էր Թիֆլիսում: Նաեւթաշխարհի՝ Բաքուի արդիւնաբերող եւ բանուոր դասակարգի, աչքառու ոյժը հայերն էին: Բաթում, Քու-

ARAM webaram.com

Թայխս, Շամախի, Գորի, Զաքաթալա, Դերբենդ — ամէն տեղ հայը բերում էր չինարար միտք ու բազուկ եւ դրամագլուխ:

Նոյն հոգեբանութեամբ հայը անցնում էր եւ Կովկասեան Լեռնաշղթան. Հիւսիսային Կովկաս, Մրիմ, Ռոստով, Հաշտարխան, Մոսկուա, Պետերբուրգ — հայը գառնում էր աշխարհաքաղաքացի, եւ կապը մայր-հայրենիքի հետ երթալով տկարանում էր:

— Ուր լաւ է, այնտեղ է հայրենիքը, կամ հայերէն՝ ուր հաց, այնտեղ կաց — գաղթական հայը ամուր տեղաւորւում էր նոր վայրերում, իր բազուկով ու դրամով չէնացնում էր այդ վայրերը եւ մոռանում էր իր ծննդավայրը: Անհաշիւ միլիոններ թափեց հայը Թիֆլիսում եւ Բագւում, պալատներ եւ գործարաններ չինեց, դպրոցներ ու թատրոններ հիմնեց, իսկ Երեւանի, Գանձակի եւ Կարսի նահանգները մնացին դրեթէ ամայի...

Հայի հակապատկերն էր Վրացին՝ թէ՛ մարմնական կազմով եւ թէ՛ հոգեմտաւոր կառոյցով: Հայի աչքին վրացին բնաւորութեամբ «տուտուց» էր, որովհետեւ զուարճութիւնը գերազասում էր աշխատանքից, սիրում էր քէֆ եւ ուրախութիւն. քիչ էր շահում եւ շատ ծախսում: Մեծխօսիկ էր, ինքնահաւան, ցուցամոլ: Զեւով աւելի էր յափշտակւում, քան բովանդակութեամբ: Մի խօսքով գործնական մարդ չէր համարւում վրացին. թեթեւամիտ տուտուց էր:

Հայիւ մի դար էր անցել Վրաստանի անկախութեան կորուստից: Ռուս տէրութիւնը գրաւելով Վրաստանը՝ պահել էր վրաց ազնուականութիւնը իր իրաւունքներով: Վրացի իշխանները ընդունուած էին ռուսական արքունիքում եւ վայելում էին ցարերի հովանաւորութիւնը: Անկախ Վրաստանի աւանդութիւնները դեռ ապրում էին վրացի ազնուականութեան եւ ժողովրդի մէջ: Վրացին իրեն աւելի բարձր էր համարում հայից: Վրացի ազնուականը նոյնիսկ արհամարհում էր հային, որ, իր կարծիքով, չհասկացող տարր էր, որովհետեւ անաչխատ եւ չուայտ կեանքով ապրող ազնուականների կալուածները աստիճանաբար անցնում էին հայ գրամատէրերի ձեռքը: Վրացի ազնուականութիւնը աղքատանում էր, հայ գրամատէրը՝ հարստանում:

Վրացի դիւղացիութիւնը, ընդհանրապէս, հողագուրկ էր եւ կիսաճորտային յարաբերութիւնների մէջ ազնուականութեան հետ: Պարզ աշխատաւոր մարդիկ էին, ինչպէս եւ քաղաքի աշխատաւորները: Ժողովրդի կողմից հայ-վրացական յարաբերութիւնները բարեկամական էին: Այսպէս կոչուած, վերին խաւերը, մտաւորական դեկավարութիւնը, մանաւանդ կուսակցական պարագլուխները հաշտ

ARAM webaram.com

էին: Վրաց մէջ տիրապետող սոցիալ-դեմոկրատ կուսակցութեան մենշեւիկեան յարանուանութիւնը եւ հայ իրականութեան մէջ, Հ. Յ. Դաշնակցութիւնը, թէ՛ գաղափարական դեռնի վրայ, թէ՛ անմիջական գործնական առաջադրութիւններով հակամարտ կազմակերպութիւններ էին: Վրաց սոցիալ-դեմոկրատիան համառուսական կուսակցութեան մէկ մասն էր, միջազգային կազմ ունէր եւ համապետական ծրագրով էր առաջնորդւում. Հ. Յ. Դաշնակցութիւնը զուտ հայ ազգային կազմ եւ նպատակներ ունէր: Ըստ էութեան, երկուսն էլ, ինչպէս հետագայ երեւոյթները ցոյց տուին, ազգային ազգակներ էին, մէկը վրաց, միւսը հայ իրականութեան մէջ: Վրացի Մենշեւիկ եւ հայ Դաշնակցական հակամարտութիւնը մեծ նշանակութիւն ունեցաւ ղրկից երկու ժողովուրդների փոխ-յարաբերութեան ու ապագայ ճակատագրի համար:

Համարեա լրիւ կերպով ամփոփուած իրենց հողի վրայ, ազգային սահմաններում, մեծ ճանապարհի եւ պատերազմի անմիջական վտանգներից դուրս, օրթոտոքս եկեղեցիով կապուած ռուսութեան եւ Սեւ ծովով եւրոպական աշխարհի հետ, վրացիները հետապնդում էին ուրոյն ազգային քաղաքականութիւն, որի մէջ մտնում էր թուրքվրացական բարեկամութեան հաշիւը: Հայերը իրենց հակաթուրք ղեկավարներով եւ Հ. Յ. Դաշնակցութիւնը հակաթուրք գործունէութեամբ խանգարում էին վրաց ազգային-քաղաքական հաշիւները: Վրաց հողի վրայ, Վրաստանի մայրաքաղաքում հայերը հետեւում էին մի քաղաքականութեան, որ համաբուում էր հակավրացական եւ սուր քննադատութեան էր հանդիպում վրաց մամուլում, մանաւանդ ազգայնական թերթերի մէջ:

Վրաց ղեկավարութեան անհանդուրժողութիւն էր պատճառում եւ թրքահայ գաղթականութեան յարաճուն երեւումը Թիֆլիսում, որ վրդովում էր պատճառում եւ Կովկասի մահմեդականութեան: Պատերազմի ընթացքին, մանաւանդ վերջին տարիները, հայ-վրացական յարաբերութիւնները լարուած էին աւելի, քան երբեք: Եւ դրա համեմատ, զարգանում էր վրացի-մահմեդական բարեկամութիւնը: Վրացի ընկերվարականները իրենց աւելի մօտ էին զգում մահմեդական խաներին եւ կալուածատէրերին, քան ընկերվարական դաշնակցականներին:

Մահմեդականութիւնը երբորդ ոյժն էր Կովկասում՝ թուով աւելի քան հայ ու վրացի ժողովուրդները առանձին-առանձին, բայց որակով յետամնաց եւ թոյլ կազմակերպուած: Մինչդեռ հայերի եւ վրացիների միութեան շաղախը ազգային ղիտակցութիւնն էր, մահ-

ARAM webaram.com

մեսականները ազգային միասուր չէին, այլ կրօնական — իսլամութիւնը: Կորիզը Բագուն էր, ապագայ Ազրբէջանի մայրաքաղաքը, որի շուրջ համախմբուած էին Կովկասի մահմեսական ցեղերը՝ Թուրքերը, լեզգիները, չեչենները, չերքեզները, թաթարները, եւայլն:

Մահմեսական ցեղերը հողային եւ քաղաքական միասուր չէին, տեղ-տեղ ապրում էին խառն հայերի եւ վրացիների հետ: Մանաւանդ մեծ էր մահմեսականների թիւը հայկական նկատուած շրջաններում, Գանձակի, Երեւանի եւ Կարսի նահանգներում: Վրաստանը միապաղաղ վրաց ազգային հող էր. նման ձեւի հողային միասուր չէին ոչ Հայաստանը, ոչ Ազրբէջանը, ոչ էլ Կովկասեան լեռնցիները:

Արեւելեան Կովկասի մահմեսականները մի դար առաջ զբաղուում էին պարսկական իշխանութեան տակ, խանութիւնների ձեւով: Ռուսները դրաւելով Պարսկաստանի այդ մասերը՝ պահեցին խանների եւ աղալարների դասակարգային իրաւունքները գրեթէ նոյն ձեւով, ինչ որ ազնուականութիւնը Վրաստանում: Կենցաղական եւ բարքային տեսակէտից գրեթէ անեղծ մնացին եւ պարսկական կարգերը:

Մահմեսական դանդուածների աչքին, անվիճելի հեղինակութիւն էին Շերիաթն ու իսլամ հոգեւորականութիւնը, ինչպէս եւ խաների ու կալուածատէրերի սովորոյթի կարգ անցած իրաւունքները:

Մորքում Կովկասի մահմեսականութիւնը հաչտուած չէր ռուսական տիրապետութեան հետ: Օսմանեան փադիշահը, որպէս համայն իսլամութեան խալիֆա, ոչ միայն կրօնական, այլեւ քաղաքական ներշնչման աղբիւր էր Կովկասեան մահմեսականութեան համար: Վերջը երբ փադիշահի տեղը բռնեցին իթթիհատականները, Թուրքիան պիտի լինէր Կովկասի մահմեսականութեան ազատարարը:

Մինչ հայերը եւ վրացիները ներսաւորուած էին դասակարգային ու քաղաքական գծով, բաժանուած էին այլազան կուսակցութիւնների, մահմեսականները կազմում էին քաղաքական մէկ անբաժան միասուր: Կուսակցութիւնները նոր էին սկսում կազմուել հարեւան ժողովուրդների հետեւողութեամբ, զանազան անուններով ու ծրագիրներով, բայց իրապէս գործնական կեանքում, բոլորն էլ նոյնն էին, աւելի կամ նուազ չափով համիսլամական դունաւորումով:

Կատակի համար ասում էին, երբ տապալուեց ցարական վարչաձեւը, Բագուի իսլամ երեւելի ղեկավարներից Ալի Մարդան Բէգ Թոփչիբաշեւը ժողովի կանչեց իր մօտ մահմեսական գործիչներին եւ հրամայեց.

ARAM webaram.com

— Ռասուլ Զադէ, դու եղիր մուսաւաթ կուսակցութեան պետ, Շէյխ Իւլ Իսլամով, դու եղիր սոցիալ-դեմոկրատ, այսինչը՝ սոցիալիստ-յեղափոխական: Եւ այսպէս կազմուեցին Կովկասի մահմեդական կուսակցութիւնները...

Մխծաղելի է, բայց մօտաւորապէս նոյն բնոյթն ունէին Կովկասի մահմեդական կուսակցութիւնները. նրանք բոլորը ներշնչւում եւ ղեկավարւում էին միեւնոյն ազրիւրից եւ հետապնդում միեւնոյն նպատակը՝ ազատագրուել Ռուսաստանից թուրքիայի օժանդակութեամբ: Եւ հասկանալի է, որ մահմեդականները թշնամական աչքով էին նայում հայերի հակաթուրք դիրքի վրայ: Հասկանալի է նաեւ վրացիների մերձեցումը եւ գործակցութիւնը մահմեդականների հետ:

Հայերի համար եղերական հետեւանքներով յղի էր եւ այն իրողութիւնը, որ Կովկասի Հայաստան կոչուած երկրամասում, համարեա ամէն տեղ, հայ բնակչութիւնը ապրում էր խառն մահմեդականների հետ: Հայկական կոչուած 28 գաւառներից միայն չորսի մէջ հայերը կազմում էին մեծամասնութիւն: Ամէն տեղ հայերն ու մահմեդականները ապրում էին երեւութապէս խաղաղ եւ հաշտ, բայց իրապէս պատրաստ էին, եթէ առիթը ներկայանար, կոկորդ կոկորդի դալու: Շուտով պիտի դադարէին այս փաստի դառն հետեւանքները:

Կովկասեան լեռնաշղթան եւ Անդրկովկասը բնակեցուած էին մօտ 20 ցեղերով, որոնց մէջ մեծագոյն կշիռը ունէին հայերը, վրացիները եւ թուրք-թաթար կամ ազազայ ազերիները: Այս ցեղերը իրենց պատմական նախապայմաններով, կենցաղային ու բարքային յատկութիւններով, տնտեսական ու քաղաքական հակամարտութիւններով կազմում էին մի վառօդարան՝ պատրաստ պայթելու հասարակ մոմից, կայծից: Մոմը դռնում էր ապիկար, ազդահալած մի վատ իշխանութեան ձեռքին, որ իր զօրութիւնը հիմնել էր «բաժանեա, զի տիրեսցես» անբարոյական սկզբունքի վրայ, առանց հասկանալու, թէ ո՞վ է իր թշնամին եւ ո՞վ է բարեկամը:

Այս չեղումը սովորական մեր պատմութեան ընթացքից, անհրաժեշտ համարեցինք, ճիշդ ըմբռնելու համար հետագայ դէպքերի բնոյթը: Անցնենք, սակայն, մեր նիւթին:

1916 թուի վերջերը ծրագրուեց Համառուսական Քաղաքների Միութեան համագումար:

Կառավարութիւնը արտօնութիւն էր տուել՝ պայմանով, որ քաղաքական հարցեր չդրուէին օրակարգի վրայ:

Համագումարը թէ՛ օրակարգի ծանրակշիռ հարցերով եւ թէ՛ կազմով կոչուած էր շատ կարեւոր դեր կատարելու Ռուսաստանի

ARAM webaram.com

կեսքում: Մանաւանդ, հրատապ էին երկրի պաշտպանութեան, պատերազմի հետ կապուած հարցերը: Հակառակ կառավարական արգելքի՝ քաղաքականութիւնն էլ ի նկատի առնուեց անպաշտօն, գաղտնի խորհրդակցութիւնների մէջ: Ժողովին մասնակցում էին ժամանակի պետական ամենակարկառուն դէմքերը: Կովկասեան պատուիրակութեան պետը՝ Ալեքսանդր Խատիսեանը, համազումարից վերադարձաւ «համառուսական թամադա» եւ «Ոսկեբերան» տիտղոսներով՝ իր հռետորական պերճախօսութեան եւ տաղանդաւոր սեղանապետութեան համար: Համառուսական համազումարի փակման մեծ ճաշկերոյթին թամադա լինելով Խատիսեանը բոլորին համակել էր իր սրամիտ կենացներով:

Խատիսեանը Թիֆլիս վերադարձաւ բարձր տրամադրութեամբ եւ Ազգային Բիւրոյի գաղտնի նիստում, մանրամասն զեկուցում տուեց Քաղաքների Միութեան Համազումարի եւ մայրաքաղաքում ունեցած տեսակցութիւնների եւ ստացած տպաւորութիւնների մասին՝ վերին աստիճանի լաւատես տրամադրութեամբ: Մեզ համար, բնականաբար, պատերազմի եւ Ռուսաստանի ներքին կայունութեան հարցերը առանձին հետաքրքրութիւն էին ներկայացնում:

Պատերազմի մասին Խատիսեանը լաւատես էր, հակառակ, որ շատ փաստեր թուեց, որոնք լաւատեսութեան հիմք չէին կարող ծառայել: Բանակի ռազմաւորումն ու պարենաւորումը լաւ չէին. ռազմաճակատում զինուորները բաւարար չափով զէնք ու հագուստ չունէին. մարտիկները կռուի էին ուղարկւում առանց հրացանի. պիտի սպանուածների հրացանով կռուէին. հրամանատարական կազմի եւ զինուորների յարաբերութիւնները բնականոն չէին. բանակը խէթ աչքով էր նայում կառավարութեան վրայ, որի անդամները «քիւկունքի հերոսներ» էին: Մի խօսքով կացութիւնը այնքան փայլուն չէր, բայց Խատիսեանը փայլուն ձեւով էր ներկայացնում:

Գալով Ռուսաստանի ներքին կայունութեան, համազումարի յատուկ յանձնախումբը, որին անդամ էին Ռուսաստանի ամենայայտնի քաղաքական դէմքերը, Պետական Դումայի ականաւոր անդամներ եւ այլ նշանաւոր անձնաւորութիւններ, եւ որի անդամ էր եղել նաեւ Խատիսեանը, գաղտնի մի նիստում լսելով հեղինակաւոր զեկուցումներ եւ հանգամանօրէն քննելով՝ եկել էր այն ազրակացութեան, որ վարչաձեւը կայուն էր. Ռոմանովների արքայական հարստութիւնը վայելում էր երկրի վստահութիւնը, յեղափոխական կուսակցութիւնները անզօր էին, ցարին եւ վարչաձեւին որեւէ վտանգ չէր սպառում:

ARAM webaram.com

Խատիսեանի այս լաւատես տրամադրութիւնը վարակեց եւ Ազգ. Բիւրոյի անդամներին, որոնք վերջերս ընդհանրապէս յոռետես էին տրամադրուած:

Լաւ յիշում եմ, որ Խատիսեանի դեկուցումից յետոյ, առաջին խօսք առնողը եղաւ Յովհաննէս Թումանեանը, որ, ժպտուն դէմքով, շնորհակալութիւն յայտնեց իր խնամիին (Խատիսեանի եղբայրը՝ Գիդան ամուսնացած էր Թումանեանի աղջկան հետ), որ բարի լուր էր բերել հայերիս համար: Հզօր եւ անպարտելի Ռուսաստանից է կախուած հայերի պայծառ ապագան:

Թումանեանը անուղղելի ռուսասէր էր, Եփրատեան եւ Տիգրիսեան կազակութիւնից յետոյ էլ նա չարունակում էր հաւատալ ռուս «մեծազօր թագաւորի»ն:

Թումանեանին համամիտ էին եւ՛ Մեսրոպ Եպիսկոպոսը, եւ՛ Սամսոն Ցարուքիւնեանը եւ ուրիշներ. հայութեան ճակատագիրը սերտ կերպով կապուած էր Ռուսաստանի հետ:

Մի քանի անպաճոյճ խօսքերով իր միտքը արտայայտեց եւ Ռոստոմը: Նա ուրախ էր, որ Ռուսաստանը ներքնապէս ամուր էր եւ յեղափոխութեան հեռանկար չէր երեւում: Նշանակում է որ ռուս բանակը յաղթական վախճանին կը հասցնի պատերազմը դաշնակիցների հետ միասին: Դաշնակիցների յաղթանակից կախուած է եւ հայ ժողովրդի ապագան:

Նման լաւատես տեղեկութիւններ էին ստացել եւ վրացի մենշեւիկները Պետական Դումայի իրենց ներկայացուցիչներից: Ձխէիձէն էլ մանրամասն զեկուցումով հաղորդել էր Թիֆլիսի իր ընկերներին, որ յեղափոխութեան ոչ մի հաւանականութիւն չկար, ցարի գահը ամուր էր եւ անխախտ:

1917 թ. Յունուարին էր, որ Խատիսեանը եւ Ձխէիձէն, Համառուսական Քաղաքների Միութեան Համագումարի, որ սակայն ողջ Ռուսաստանի անունով հաստատում էին, թէ ցարական վարչաձեւն ու գահը ամուր էին եւ յեղափոխութեան հաւանականութիւն չէր երեւում: Ուրեմն, պատճառ չկար անհանգստանալու, որ ռազմաճակատին որեւէ վտանգ կը սպառնայ կամ Կովկասի ներքին հաւասարակշռութիւնը կը խանգարուի:

Ռուս բանակը զրաւուած պահում էր ամբողջ Թրքահայաստանը՝ Վասպուրական, Տարօն, Բարձր Հայք, Տրապիզոն: Երբ պատերազմը վերջանար Դաշնակիցների յաղթանակով, հայերի բաղձանքները առաւել կամ նուազ չափով պիտի իրականանային: Զօր. Պէչկովի

ARAM webaram.com

վարչաձեւը Թրքահայաստանում, Եփրատեան ու Տիգրիսեան կատակութիւն, Ռիզէի հողերի բաժանում, մեծ իշխան փոխարքայի հակահայ քաղաքականութիւն Կովկասում — այդ բոլորը կ'անհետանար դիւրային մղձաւանջի պէս, Դաշնակիցների յաղթանակով:

Այսպէս էր մտածում Կովկասահայ քաղքենին 1917 թ. Յունուարին: Եւ միա՞յն քաղքենին...

Անհրաժեշտ է, կարծում եմ, մի ակնարկ էլ նետել Հայ Յեղափոխական Դաշնակցութեան վրայ, որ այնուհետեւ պիտի լինէր հայ կեանքի կազմակերպիչ եւ ղեկավար գլխաւոր ոյժը նոր պայմաններում:

Ռուսաստանի 1905 թուականի յեղափոխութեան օրերին էլ Դաշնակցութիւնն էր վարիչ կուսակցութիւնը հայութեան ներքին եւ արտաքին ճակատների վրայ: 1907 թուին, Միջազգային Ընկերվարական Համագումարին, Շտուտգարտում, ներկայացրած տեղեկագրի մէջ Դաշնակցութիւնը ցոյց էր տուել 175·000 անդամ, եւ այդ չափազանցութիւն չէր: Հայ կեանքը իր բոլոր ճիւղերով զարգանում էր Դաշնակցութեան գաղափարական մթնոլորտում:

1905 թուականի յեղափոխութեան պարտութիւնից յետոյ, ցարական բռնակալութիւնը անողորմ հալածանք սկսեց նաեւ Հ. Յ. Դաշնակցութեան դէմ — Լիժինի գործը: Դաշնակցութեան ղեկավարութիւնը լեցրեց բանտերը: Ով կարողացաւ, անցաւ արտասահման: Դաշնակցական կազմակերպութիւնները քայքայուեցին: Դաշնակցութիւնը tabula rasa դարձաւ եւ ուրախանում էին հայ եւ ռուս սեւհարիւրակայինները:

1909ի ամառը, երբ ես, իրրեւ գործիչ, չրջում էի Թիֆլիսի եւ Երեւանի նահանգներում, Թիֆլիսում գտայ եւ իրար մօտ բերի 37 «ողջ մնացած» դաշնակցականների: Երեւանում մի քիչ աւելի էր իրենց դաշնակցական համարողների թիւը: 1914ին Կովկասի Դաշնակցութիւնը իր մէջքը այնքան չակեր էր, որ Սեպտեմբերին, Հ. Յ. Դ. Ռայոնական ժողովին մասնակցում էին 37·000 դաշնակցականների ներկայացուցիչները:

1917 թ. Փետրուարեան յեղափոխութիւնից յետոյ, կարելի է ասել, ողջ հայկական Թիֆլիսը, ամբողջ Երեւանը, Ալեքսանդրապոլն ու Կարսը, առանց չափազանցութեան, հայ աշխատաւորութեան ճնշիչ մեծամասնութիւնը դարձաւ դաշնակցական: Հետագայ բոլոր ընտրութիւններին — պետական, քաղաքային, ազգային, արհեստակցական — հայ ժողովուրդը անվերապահ իր քուէն վստահում էր Հ. Յ. Դաշ-

ARAM webarami.com

նակցութեան: Եւ եղաւ մի պահ, երբ ազգ ու Դաշնակցութիւն դրեթէ նոյնացան: Եթէ ազատ լինէր մուտքը, սակաւ բացառութեամբ, բոլոր հայերը կ'արձանագրուէին Դաշնակցութեան անդամ, ըստ ասութեան՝ «ես հայ եմ, հետեւաբար՝ դաշնակցական եմ»:

Դաշնակցութեան դռները, սակայն, բաց չէին ամէնքի առջեւ: Երիտասարդութիւնը, մանաւանդ, արթուն աչքով հսկում էր, որ օտարազգեան տարրեր չմտնեն կուսակցութեան մէջ: Դաւանանքի չափանիշը սոցիալիզմն էր (ընկերվարութիւն բառը դեռ քաղաքացիական վկայական չէր ստացել հայոց լեզուի մէջ): Ով իրեն սոցիալիստ չէր համարում, չէր կարող ոտք կոխել Դաշնակցութիւնից ներս: Այդ պատճառով՝ Կովկասեան Բարեգործական Ընկերութեան նախագահ, յայտնի հասարակական գործիչ Սամսոն Ցարուխիւնեանը, հակառակ իր դիմումի, չարժանացաւ դաշնակցական անդամատեսր ստանալու: Թիֆլիսի քաղաքագլուխ Ադելքանդր Խատիսեանը, 1917ի Յայտնական ժողովում, մեծ դժուարութեամբ, միայն Թոստոմի եւ Համօ Օհանջանեանի վճռական միջամտութեամբ ընդունուեց Դաշնակցութեան շարքերը:

Դաշնակցական լինելը պատիւ էր եւ ինչո՞ւ չէ, նաեւ չահի աղբիւր, շատերի համար:

Որպէս համրանք եւ կազմակերպութիւն, Հ. Յ. Դաշնակցութիւնը անմրցելի, տիրական ոյժ էր հայ իրականութեան մէջ՝ հիմնուած հայ աշխատաւորութեան անվերապահ համակրանքի եւ վստահութեան վրայ: Նա լրիւ կերպով արտայայտում էր, այսպէս ասենք, ազգի ապրումներն ու բաղձանքները: Իր աշխարհահայեացքով նա ազգային էր եւ աշխատաւորական:

Հ. Յ. Դաշնակցութիւնը իր մէջ առել էր հայ ազգի, կարելի է ասել, դրեթէ բոլոր կենսունակ ուժերը: Սա բանը եթէ մի կողմից մեծ առաւելութիւն էր, միւս կողմից եւ տկարութիւն էր ազգային տեսակէտից: Միւս կուսակցութիւնները, որպէս համրանք, աննշան ոյժ էին, թէեւ իրրեւ որակ իրենց մէջ ունէին արժէքաւոր անհատներ:

1917 Յուլիսեան յեղափոխութիւնից յետոյ, Դաշնակցութիւնից զատ, հայ իրականութեան մէջ գործում էին հետեւեալ կուսակցութիւնները:

Յեղափոխութիւնից անմիջապէս վերջ, կազմուեց Հայ Ժողովրդական կուսակցութիւնը՝ հայ բուրժուազիայի խառնածին կազմակերպութիւնը: Հայ քաղքենիութեան վերապահուած էր որոշ տեղ

ARAM webaram.com

հայ կեանքում: Իր ծրագրի հիմնական դաղափարները, համապետական դեռնի վրայ, Հայ ժողովրդական կուսակցութիւնը փոխ էր առել Ռուս Սահմանադիր-Ռամկավար (Կադէտ) կուսակցութիւնից: Հայ ազգային սկզբունքներով կաթնեղբայր էր Հայ Ռամկավար Կուսակցութեան, որ մինչեւ Հայաստանի անկախութեան հռչակումը կոչւում էր Հայ Սահմանադիր-Ռամկավար Կուսակցութիւն: Իրրեւ հայկական իրականութեան ընկերային՝ քաղքենի դասերի պահանջների դոհացում խոստացող մի կազմակերպութիւն՝ Հայ ժողովրդական Կուսակցութիւնը անպայման ապագայ ունեցող մի կազմակերպութիւն էր: Դժբախտաբար, նրա դեկավարները տհաս դտնուեցին ըմբռնելու համար իրենց վերապահուած պատմական դերը:

Հայ Սոցիալ-Դեմոկրատիա — մարքսիստական ընդհանուր դրօշի տակ բազմաճիւղ մի կազմակերպութիւն՝ մենշեւիկ, բոլշեւիկ, սպեցիֆիկ, որոնք երեքը միասին կատաղի պայքար էին մղում Դաշնակցութեան դէմ եւ երեքը առանձին-առանձին կուռւմ էին իրարու դէմ: Սոցիալ-Դեմոկրատները մաս էին եւ ենթակայ Համառուսական Սոցիալ-Դեմոկրատական կազմակերպութեան: Գոլկասում հայ մենշեւիկները հաւատարիմ հետեւողներ էին վրաց մենշեւիկների:

Հայ Սոցիալիստ-Յեղափոխական կազմակերպութիւնը՝ անբաժան մէկ հատուածը Ռուսաստանի Սոցիալիստ-Յեղափոխական Կուսակցութեան:

Սոցիալ-Դեմոկրատ Հնչակեան կուսակցութիւն՝ քանակով եւ որակով աննշան մի ոյժ հայկական նահանգներում:

Հնչակեանների մասին երգում էին արճաճաններում.

Կ'ուզես մենշեւիկ լինեմ,
Կ'ուզես բոլշեւիկ լինեմ,
Ինչ որ ուզես կը լինեմ,
Միայն դաշնակ չլինեմ:

Հայ անհատներ կային, բնականաբար, եւ Համառուսական Սոցիալ-Դեմոկրատ, Սոցիալիստ-Յեղափոխական (Կադէտ) կուսակցութիւնների մէջ:

Այս բոլոր կուսակցութիւնները, սակայն, իրենց անդամներով ի մի առած, փոքր թիւ էին կազմում Հ. Յ. Դաշնակցութեան հետ համեմատած: Ոչ մէկը, ի պահանջել հարկին, չէր կարող փոխարինել Դաշնակցութեան, որպէս դեկավար ոյժ: Եղան դէպքեր, երբ կենսական անհրաժեշտութիւն էր, փոխել ազգային դեկավարութիւ-

ARAM webaram.com

նը: Բայց չգտնուեց մի կուսակցութիւն, որ այժ եւ համարձակութիւն զգար իր մէջ, բռնելու Դաշնակցութեան տեղը:

Մի՛ւս կողմից, համաուսական յեղափոխական պայմաններում, որոչ չափով դժուարութիւն էր ներկայացնում Դաշնակցութեան ազգային բնոյթը եւ զուտ ազգային կազմակերպութիւնը:

Մանաւորապէս Կովկասում, հայ-վրացական եւ հայ-մահմեդական համակեցութեան չրջաններում, Դաշնակցութեան զուտ ազգային բնոյթն ու կազմակերպութիւնը, յաճախ, առիթ էին ծառայում հայերի մեկուսացման համակովկասեան ընդհանուր գործերի մէջ: Այդ մենք առանձնապէս սուր կերպով զգում էինք ընտրութիւնների ժամանակ կամ Կովկասեան յեղափոխական կենտրոններում եւ վերջը Սէյմում:

Այսպէս թէ այնպէս, ցարական գահի փլուզումով՝ հայոց կեանքի ազգային-քաղաքական դեկավարութիւնը, կարելի է ասել, բովանդակ ծաւալով, անցաւ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան: Այդ փաստով եւ այդ դիտակցութեամբ էլ նա անցաւ գործի: Ահաւոր պատասխանատուութիւն էր ընկնում մեր ուսերի վրայ:

Ամենայն Հայոց Թամադա բանաստեղծ Յովհաննէս Թումանեան, յեղափոխութեան առաջին օրերին, իր ճառերից մէկում ասել էր Դաշնակցութեան մասին՝ Ռոստոմին ուղղելով բաժակը.

— Դուք հո կուսակցութիւն չէք, ողջ հայոց ազգն էք դուք: Եթէ յաջողիք, ձեր կենացը: Եթէ չյաջողիք — Ալլահվերտի, քո կենացը Ստեփան ջան:

ARAM webaram.com

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Այն պիշեր, Փետր. 28ից լոյս Մարտ 1, ես գրեթէ չքնեցի: Կէս պիշեր դեռ չկար՝ հնչեց հեռախօսը: Իմ բարեկամ Դանիլովն էր գանգահարողը Գլխաւոր Շտաբից:

— Ի՞նչ գործի էք. լսե՞լ էք նորութիւնը:

Ես ոչ մի նորութիւն չէի լսել:

— Պետրոգրադում յեղափոխութիւն է, չէ՞ք լսել:

— Կատակ էք անում, չհաւատացի ես, ի՞նչ յեղափոխութիւն, ի՞նչ բան...

— Ձեզ խօսք եմ ասում. մայրաքաղաքում յեղափոխութիւն է, Ատուաձ պահէ մեզ:

Ու հեռախօսը դոցուեց: Շուարած՝ չէի իմանում, ի՞նչ ասել, ի՞նչ անել: Աոի հեռախօսի գործիքը:

Ազգային Բիւրոյում մարդ չկար: «Հորիզոն»ում մարդ չկար: Լուր չունէին: Կարճիկեանը տանը չէր: Ալատիսեանը կլուբ էր գնացել: Առաջնորդարանից չպատասխանեցին:

Յեղափոխութիւն մայրաքաղաքում, բայց չէ՞ որ Ալատիսեանը պնդում էր, որ յեղափոխութեան նշոյլն իսկ չէր երեւում Ռուսաստանում: Դանիլովը լուրջ մարդ էր, պարապ բաներ չէր խօսի, ուրեմն, ի՞նչ...

Պառկեցի, սակայն աչքերս չէին փակւում: Ուրեմն ի՞նչ. յեղափոխութի՞ւն, մեր ցնորքների իրականացո՞ւմ: Ինչքան վառ յոյսեր էին կապուած Ռուսաստանի յեղափոխութեան հետ...

Առաւօտեան կանուխ, երեւի Մորփէոսը այցելել էր ինձ: Մէկ էլ նորից՝ զընգ-զընգ-զընգ: Ընդոստ վազեցի հեռախօսի մօտ:

ARAM webaram.com

— Ո՞վ է:

— Ո՞վ է–ն ի՞նչ է: Շուտ հասիր: Աչքդ լոյս: Ձե՞ս իմացել, Նիկոլայի գահը խորտակուել է, յեղափոխութիւն է Պետրոգրադում, շուտ հասիր...

Արամն էր, ուրախ անսահման:

Վերայից Սոլոլակ բաւական տարածութիւն է, չզգացի, ինչպէս հասայ Երեւանեան հրապարակը: Քաղաքային Վարչութեան դիմաց, խայտաբղէտ բազմութեան առջեւ, մէկը ճառ էր խօսում ոգեւորուած: Միտինգ էր: Օդում ծածանում էր կարմիր դրօշակ: Ծափահարութիւն: Ուրախ բացագանչութիւններ զանազան լեզուներով:

— Ուռա՛, կեցցէ՛, եաշասը՛ն...

Ճառախօսները իրար էին յաջորդում՝ հայ, վրացի, ռուս... Մայթի վրայ դրել էին մի սեղան, որ ամբիոնի դեր էր կատարում:

Մէկ էլ սեղանի վրայ երեւաց ...Արամը եւ սկսեց ճառել կովկասեան թուրքերէնով: Բազմութիւնը ծափահարեց խելայեղօրէն: Լսուեցին բացագանչութիւններ.

— Եաշասըն հուրիէթ...

Ես այդ «եաշասըն հուրիէթ»ը լսել էի Թուրքիայում:

Շտապեցի, անցայ Գանովսկի փողոցը: Այնտեղից երկու քայլ էր դէպի Ազգային Բիւրօն՝ Լերմոնտովսկի փողոցի վրայ: Ազգային Բիւրոյի ներսից ձայն չէր լսւում, թէեւ դրսի դուռը բաց էր: Բացի մուտքի ձախ կողմի փոքր սենեակը, ուր սովորաբար հաւաքւում էին ընկերները: Կանաչ մահուդով ծածկուած երկար սեղանի վրայ պառկած էր մէկը, ոտքից մինչեւ գլուխ վերարկուի տակ: Ռոստոմն էր:

— Հը, ուրախանո՞ւմ էք, բարձրացրեց նա գլուխը: Դէմքը մոայլ էր արտակարգ, աչքերում անսահման վիշտ: — Ուրախանո՞ւմ էք, իսկ իմ սիրտը լալիս է... Չէք հասկանում՝ ի՞նչ է տեղի ունենում. պատերազմի ժամանակ յեղափոխութի՞ւն — այդ մահ է հայ ժողովրդի համար...

Անկեղծ ասեմ՝ ես չէի հասկանում Ռոստոմի վախը, ես էլ պատրաստ էի, Արամի պէս, մագլցել սեղանի վրայ եւ պոռալ.«կեցցէ՛ յեղափոխութիւնը»:

Քիչ վերջը եկան Արամը, Յակիմ Կարճիկեանը, Արշակ Զամալեանը, Նիկոլ Ազբալեանը, Ա.. Շահխաթունեանը, շատեր:

Ամէնքը ուրախ էին, հրճուանքի մէջ, երջանիկ: Ռոստոմը միայն տխուր էր, մոայլ ու յոռետես:

ARAM webaram.com

Ռոստոմի զարմանալի բնազդը... իր բոլոր սեւ նախատեսութիւնները իրականացան:

Շէնքը հետզհետէ լեցուեց: Եկան Ազգային Բիւրոյի անդամները: Եկան Հ. Յ. Դաշնակցութեան Բիւրոյի անդամները: Եկան Յովհաննէս Թումանեանը, Յովհ. Քաջազնունին եւ ուրիշներ: Մի պահ երեւաց Խատիսեանը, լուրեր բերեց փոխարքայի պալատից ու Գլխաւոր Շտաբից: Պետրոգրադում յեղափոխութիւնը կատարեալ յաջողութեամբ էր պսակուել: Ցարը հրաժարուել էր գահից: Կազմուել էր Պետական Դումայից մի մարմին: Որոշ չէր բանակի դիրքը: Սպանութիւններ չէին պատահել. անարիւն յեղափոխութիւն...

Ինչպէ՞ս չուրախանայինք: Ուրախ չէր միայն Ռոստոմը:

Մի քանի օր վերջը, Մարտ 5ին, տեղի ունեցաւ Հ.Յ.Դաշնակցութեան Բիւրոյի լիագումար նիստը: Ըստ սովորութեան, ներկայ էին եւ դրսից պատասխանատու ընկերներ յատուկ հրաւէրով: Օրակարգի նիւթ էին «մոմենտի հարցերը». վերաբերում դէպի յեղափոխութիւնը:



ՌՈՍՏՈՄ, ԿԻՆԸ ԵՒ ԱՂՋԻԿԸ

Ներկայացուած զեկուցումներից պարզուեց, որ հրճուանք էր տիրում եւ վրացական բոլոր հոսանքների մէջ, ինչպէս եւ ռուս ազատական շրջաններում: Մտադրութիւն կար կազմելու մի կուսակցական կենտրոնական յեղափոխական մարմին: Կատաւարական շրջանները չէին անակնկալ հարուածից: Փոխարքան, իբրեւ թէ, պատրաստւում էր, յատուկ գնացքով, հեռանալու Ռուսաստան: Բացի լուրեր հաղորդող հեռագիրներից դեռ որեւէ հրահանգ կամ կարգադրութիւն չէր ստացուել մայրաքաղաքից Կովկասի իշխանութեան մասին: Ռազմաճակատի զօրամասերից խանդավառ հեռագիր-

ARAM webaram.com

ներ էին պալիս, որոնք ոչնչանում էին բռնատիրական վարչակարգի անկումը եւ հաւատարմութիւն էին յայտնում Յեղափոխութեան:

Մանրամասնութիւնները մոքիցս ելել են, յիշում եմ, սակայն, որ ամէնքը մի ուրախ էին ցարական իշխանութեան տապալման համար: Նոյնիսկ Ռոստոմը, կարծես, առաջուայ չափ մռայլ չէր: Եղան մի չարք գործնական կարգադրութիւններ անմիջական որոշում պահանջող հարցերի մասին: Այսպէս՝ որոշուեց անվերապահ ողջունել հին վարչաձեւի անկումը եւ մասնակցել նորի կառուցման Ռուսաստանի դեմոկրատիայի հետ ձեռք-ձեռքի:

Առանց վերապահութեան աջակցել կազմուելիք ժամանակաւոր կառավարութեան եւ փութացնել Սահմանադիր ժողովի գումարումը, ընտրական քառանդամ դրութեամբ:

Պաշտպանել «Ֆէդէրատիւ դեմոկրատ Ռուսաստանի ազգերի ինքնավարութեան սկզբունք»ը:

Մասնակցել Թիֆլիսի յեղափոխական կենտրոնի կազմութեան աշխատանքներին: Հ. Ց. Դաշնակցութեան կողմից կենտրոնի անդամութեան թեկնածուներ նշանակուեցին Պաչ. Կարճիկեան, Աւ. Շահխաթունեան, Ա. Ջամալեան եւ Մ. Վրացեան:

Որոշուեց «Հորիզոն» թերթը դարձնել կուսակցութեան պաշտօնաթերթ. նշանակուեցին խմբագրութեան անդամներ՝ Ն. Աղբալեան, Աւ. Շահխաթունեան, Մ. Վրացեան:

Նոյնպէս որոշուեց կազմակերպել հրապարակային մեծ ժողով, Ռոստոմի նախագահութեամբ, Քաղաքային Խորհուրդի գահլճում, ներկայացնելու համար Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը՝ հասարակութեան:

Ի վերջոյ, կարդացուեց եւ վաւերացուեց իմ եւ Աւ. Շահխաթունեանի կազմած հետեւեալ չրջաբերականը, ուղղուած՝ կուսակցական մարմիններին.—

ԸՆԿԵՐՆԵՐ,

Կատարուեց աւսպասելին եւ աւերեւակայելին. Ռուս բռնապետութիւնը այլեւս չկայ: Կազմակերպուած է ժամանակաւոր կառավարութիւն՝ ժողովրդավարական հիմքերով, որ արդէն իսկ ձեռք է զարկել նոր իրաւակարգի հաստատման եւ խաղաղութեան ապահովութեան գործին:

Այստեղ պէտք չեմ զգում կատարուող դէպքերի պատկերը տալու, քանի որ ամէն ինչ արդէն ազատ կերպով գրւում է թերթե-

ARAM webaram.com

բում: Հարկաւոր ենք համարում սակայն ասել, թէ ի՞նչ պէտք է անի մեր Դաշնակցութիւնը — մի հարց, որ այս րոպէիս ամէնից աւելի մտահոգութիւն պէտք է պատճառէ մեզ:

Պարզ է որ այս մեծ յեղաշրջումը այնպիսի մի խոշոր ֆայլ է մեր պետական կեանքի ռամկավարացման տեսակէտով, այնպիսի մեծ պատեհութիւն իրագործելու բոլոր նշուած ազգերի հաւասարութիւնն ու ազատութիւնը, որ մենք բոլոր միւս աշխատաւորական կազմակերպութիւնների հետ, պէտք է ունենանք մէկ հոգս միայն — ամէն հնարաւոր միջոցներով պահել եւ ամրապնդել նոր կարգը եւ վերջնականապէս վերացնել հնի մնացորդները:

Նկատի ունենալով, որ ժամանակաւոր կառավարութեան յետնարանը կազմակերպուած աշխատաւորութիւնն է եւ բանակը, ֆաշտական դէպքերի վրայ մեր ուժերի ամբողջութեամբ ազդելու միակ միջոցը մեր կազմակերպուած լինելն է:

Այս նպատակով մենք հարկաւոր ենք համարում անյապաղ գործադրել հետեւեալ կէտերը·

1·— Առանց յետաձգելու ամբողջ եռանդով սկսել դաշնակցական մարմինների վերակազմութեան, ուժեղացման եւ հայ, դեռ չկազմակերպուած աշխատաւորութեան կազմակերպման:

2·— Փութով առաջ բերել ամենուրեք գիւղացիական, արհեստակցական եւ բանուորական միութիւններ:

3·— Ուժ տալ ֆաշտներում բանուորական եւ զինուորական խորհուրդների, կարգադրիչ կոմիտէների եւ պարեկաւորման մարմինների հաստատման:

4·— Ամէն տեղ մասնակցել ժամանակաւոր կառավարութիւնների եւ ֆաշտային ինքնավարութիւնների կից առաջ եկող մարմիններին:

5·— Օրը օրին իրազեկ պահել մեզ տեղական դէպքերի եւ պէտքերի մասին, իսկ առանձնապէս կարեւոր կարիքների մասին հեռագրել նաեւ կենտրոնական կառավարութեան:

Ընկերնե՛ր: Հաղորդելով ձեզ այս ամէնը Հ· Յ· Դաշնակցութեան Արեւելեան Բիւրօն դիմում է ձեզ սրտագին հրաւէրով՝ ցոյց տալ առանձին եռանդ եւ անձնազոհութիւն պատմական այս բացառիկ մոմէնտում: Մենք վստահ ենք, որ դուք բոլորդ հաւատարիմ հայ աշխատաւոր ժողովրդի շահերին՝ կը կատարէք ձեր կուսակցական պարտքը րոպէին վայել լրջութեամբ:

ARAM webaram.com

Պէտք է արագացնել կազմակերպութեան գործը եւ նրա համար, որ մօտիկ ապագայում պէտք է հրաւիրուի կուսակցութեան ռայոնական ժողովը, որի առթիւ դեռ կը գրեմ ձեզ:

Բարեւներով՝

1917 թ. Մարտ 5 — Հ. Յ. Դ. ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՕ

Հրապարակային ժողովը ունեցաւ մեծ յաջողութիւն: Հակառակ քաղաքային Յորհրդի սրահը լեցուն էր բերնէ-բերան խանգավառ բազմութեամբ: Ժողովի նախագահը եւ գլխաւոր բանախօսը Ռոստոմն էր: Պէտք է ասել, որ բաւական ճիգ թափեցինք համոզելու համար Ռոստոմին, որ ընդունէ ժողովի գեկավարութիւնը. նա ուզում էր մնալ ստուերում, իսկ մենք աշխատում էինք արտաքին աշխարհին ներկայացնել նրան իբրեւ կուսակցութեան լիդէր: Նա էլ այն դաշնակցականներից էր, ինչպէս Զաւարեանը, Վռամեանը եւ շատ ուրիշներ, որոնք Դաշնակցութեան համար մերժում էին լիդէրի դերը: Դաշնակցութիւնը պարապուրկ չէ ունեցած, չունի եւ պէտք չէ որ ունենայ, իբրեւ հայկական ազգային նկարագրին անհարազատ մի երեւոյթ:

Հրապարակային ժողովը ունեցաւ մեծ յաջողութիւն: Հակառակ մեր վախերի, Ռոստոմը հմտութեամբ վարեց նախագահութիւնը եւ պարզ ու անսեթեւեթ լեզուով ներկայացրեց Հ. Յ. Դաշնակցութիւնը իր հիմնական գաղափարներով ու գործունէութեամբ: Միւս խօսողներն էլ բուռն կերպով ծափահարուեցին: Եւ արդէն ծափահարուելու համար մեծ պերճախօսութեան պէտք չկար. բաւական էր դոչել «կեցցէ՛ ազատութիւնը»...:

Այս միտինգով սկսուեց մեր հրապարակային գործունէութիւնը: Ռուսաստանի 1905 թ. յեղափոխութիւնը սկսուեց պետիցիաներով ու գործադուլներով: 1917ի յեղափոխութիւնը պահանջների եւ գործադուլների պէտք չունէր. յեղափոխութիւնը իրականութիւն էր արդէն. անհրաժեշտ էր զարգացնել ու խորացնել միտինգներում ճառելով: Ճառելով էր, որ ռուսական դեմոկրատիան կորցրեց իր անաբիւն յեղափոխութիւնը՝ պարտուելով արիւնոտ բռնատիրութիւնից:

Ուրեմն, պարզւում էր եւ իմ անելիքը, երկու ուղղութեամբ. «Հօրիզոն»ի խմբագրութիւն եւ աշխատանք յեղափոխական մարմիններում:

***

Այժմ, երբ ես յետադարձ հայեացքով դիտում եմ Առաջին Համաշխարհային Պատերազմի նախօրեակին եւ պատերազմի ընթաց-

ARAM webaram.com

քին պատահած դէպքերը ազգային ներքին եւ արտաքին ճակատների վրայ, սիրտս ճմլւում է անասելի ցաւից: Հազար անգամ իրաւունք ունէր Ռոստոմը. պատերազմի միջոցին պատահող յեղափոխութիւնը տնաքանդութիւն է: Բայց ուրիշ ի՞նչ ելք էր մնացել մեզ համար:

Այժմ դժուար չէ դուշակել, թէ առանց յեղափոխութեան էլ ինչ կը լինէր պատերազմի հետեւանքը հայութեան համար: Թուրքերը, բնաջնջելով հայութիւնը Թրքահայաստանում, դիւրացուցին ցարական քաղաքականութեան գործը: Ամայի Թրքահայաստանը պիտի դառնար «մեծ եւ անբաժան Ռուսաստանի» մի մաս. հայկական հողերի վրայ պիտի բնակեցուէին ռուս գաղթականները, կոզակութիւն կամ այլ անուններով: Ռուսահայաստանը պիտի առնուէր ռուս եւ մահմեդական տարրերի օղակի մէջ: Ի՞նչ պիտի մնար Հայկական Հարցից: Ըստ Իվանի եւ Կարապետի ծանօթ պատմութեան — փշիհ:

Այս հնարաւորութիւնը ա՛յն օրերին բնազդական զգացում էր հայութեան մէջ: Ցարական միահեծանութեան խորտակումը յեղափոխական բոլոր խաւերի կողմից, որոշ յոյս էր անլոյս խաւարում: «Ռուս դեմոկրատիա»ի յաղթանակով նոր հորիզոններ պիտի բացուէին եւ հայ ժողովրդի եւ Հայկական Հարցի առջեւ:

Վարանումի տեղ չէր մնում. հայութիւնը իր բոլոր հոսանքներով եւ ամբողջ սրտով, Ռուսական Յեղափոխութեան հետ էր:

Իմ բարեկամ Դանիլովը զարմանում էր.

— Տարօրինակ ժողովուրդ էք դուք հայերդ. երէկ ազգովին «երկրպագում էիք դերագոյն տիրոջ» — ցարին, այսօր, դարձեալ ազգովին, ցնծութեան մէջ էք, որ ցարը տապալուել է: Լաւ չէ: Հապա եթէ վաղը ցարը վերադառնայ իշխանութեան, կամ նոր ցար ունենանք:

Ես ժպտում էի.

— Քափո՛ւթ: Էլ ցար–մար չկայ: Ամբողջ իշխանութիւնը «դեմոկրատիա»ին է պատկանում:

«Դեմոկրատիա»ի իշխանութեան առաջին հետեւանքը ես ըզգացի իմ կաշու վրայ:

Մի վրացի սպասուհի ունէի — Մաշօ: 15 ռուբլի ամսական էի վճարում, առանձին սենեակ ունէր, ուր ապրում էր 10 տարեկան աղջկայ հետ: Երկուսը ուտում–խմում էին, հագուստ եւ այլ նուէրներ էին առանում: Ամէնքը նախանձում էին Մաշոյին:

Յեղափոխութիւնից մի քանի օր անցած՝ Մաշոն եկաւ մոայլ երեսցթով, թէ՝

ARAM webaram.com

— Ես էլ չեմ ծառայելու ձեզ մօտ: Բաւական է, ինչքան խըմեցիք մեր արիւնը...

Եւ իրերը հաւաքելով՝ աղջկայ հետ հեռացան:

Զարմացայ: Սովորական երեւոյթ էր:

Միւիննդներում կրակոտ ճառեր էին խօսում.

— Այսուհետեւ տէր եւ ծառայ չի լինելու: Բաւական է որքան հարուստները խմեցին աշխատաւորների արիւնը: Այսուհետեւ ամէն խոհարարուհի մաս պէտք է կազմի իշխանութեան եւ հարուստների պէս պէտք է ապրի...

Մաշոն էլ յաճախում էր ժողովրդական միւիննդները: Մաշոն էլ խոհարարուհի էր: Ժուժանավար հռետորների ճառերը հրապուրել էին նրան:

Մի քանի շաբաթ անցած, աղջկայ ձեռքը բռնած, Մաշոն դըժկամ վերադարձաւ.

— Ներողութիւն, աղա՛, ինձ խաբեցին: Ազատում եմ, թոյլ տուր նորից վերադառնամ գործիս:

Այն օրերին Ռուսաստանում Մաշոներ շատ էին — ռազմաճակատներում թէ թիկունքում — որոնք մոլորուելով խուժանավարների շռայլած խոստումներից, ցարական Ռուսաստանը վերածեցին գժոխքի: Ռուսաստանի ժողովուրդները, յոգնած ու զազրած ցարական բռնակալութիւնից, եւ իրենց համար անհասկանալի նպատակներ հետապնդող պատերազմներից, հեշտութեամբ ենթարկուեցին բոլշեւիկեան մարտակոչերին. «վե՛րջ պատերազմին», «հաշտութիւն ամանց հողագրաւումների եւ ռազմատուգանքի», «պատերազմ կալուածատէրերին, խաղաղութիւն խրճիթներին», «խաղաղութիւն ռազմաճակատում, պէնքերը դարձուցէք կալուածատէրերի դէմ» եւ այլ այսպիսի ռուս մուժիկի սրտին հրապուրիչ խօսքեր:

Խօսքերին յաջորդեցին գործեր. եղբայրացում եւ զինադադարութիւն ռազմաճակատներում եւ ապստամբութեան փորձեր դրաւելու համար իշխանութիւնը ժամանակաւոր կառավարութիւնից:

Ժամանակաւոր կառավարութիւնը, ինքը իր մէջ անզօր, փաստօրէն խաղալիք էր ծայրայեղ դաղափարներով տոգորուած բանուորական եւ զինուորական խորհուրդների ձեռքին: Ջուր էին հնչում օդին մէջ ժամանակաւոր կառավարութեան պետ Քերենսքիի յորդորները ու ապառնալիքները — զանգուածների ականջները աւելի ուղղուած էին դէպի Լենինի բանաձեւած կոչերը. «Պատերազմ պալատներին, խաղաղութիւն խրճիթներին»:

Հոկտեմբերի վերջերը, երբ երկիրը սրատարափ ապատում էր

ARAM webaram.com

Սահմանադիր ժողովի դումարման, բոլշեւիկները տապալեցին ժամանակաւոր կառավարութիւնը, եւ հաստատեցին, այսպէս կոչուած, բանուորա-գիւղացիական վարչաձեւ — ժողովրդական կոմիսարների Խորհուրդը, Լենինի գլխաւորութեամբ:

Ինչ յաջորդեց բոլշեւիկեան յեղաշրջման, յայտնի է ամէնքին. աննկարագրելի քաոս եւ արիւնայեղութիւն ներքին եւ արտաքին ճակատների վրայ: Ռուսաստանի յեղափոխութիւնը վերածուեց «փշիֆ»ի: Այդ օրերին Ռուսաստանի զանազան կողմերում չրջան էր անում «հայկական անէքդոտ»ը՝ Իվանի եւ Կարապետի մասին:

Կարապետը ռուսական մի գիւղում իրեն յայտարարում է վարպետ երկաթագործ: Ռուս Իվանը բերում է նրան մի կոտր երկաթ եւ խնդրում է գերանդի շինել իրեն համար:

Մի չաբաթից վերջ երեւում է Իվանը:

— Ի՞նչ եղաւ գերանդին:

— Չեղաւ, երկաթը քիչ է, կարելի է մանգաղ շինել, յայտնում է Կարապետը:

— Դէ՛, մանգաղ չինիր, ասում է Իվանը:

Յաջորդ անգամ Կարապետը յայտարարում է.

— Մարդ Աստուծոյ, մանգաղ էլ չեղաւ: Երկաթը քիչ է: Ուզո՞ւմ ես փշիֆ շինեմ:

— Դէ՛, շինում ես՝ շինիր, յուսահատ համաձայնւում է Իվանը: Թէկուզ փշիֆ, միայն թէ շինիր:

Կարապետը ծիծաղելով՝ շիկացնում է երկաթի մի կտոր եւ նետում է սմանով ջրի մէջ:

— Փշի՛ֆ ,լսւում է չոգիացող երկաթի ձայնը, — փշիֆ:

Այսպէս, Փետրուարեան Յեղափոխութիւնը Ռուսաստանում, Հոկտեմբերին վերածուեց բոլշեւիկեան փշիֆի:

Մենք ի սարսափ բոլոր բուրժոյների
Համաշխարհային հրդեհ կը վառենք:

երգում էին Մաշոներին հրապուրող խուժանավարները:

Ահը եւ յոյսը սրտերում՝ հայ ժողովուրդը ազգովին նետուեց Ռուսաստանի յեղափոխութեան մրրիկների գիրկը: Ես մի աննշան տաշեղ էի մրրկահար, կովկասի ալեկոծ ծովում — «Հորիզոն» օրաթերթի խմբագիր եւ համակովկասեան յեղափոխական մարմինների անդամ, նշանակուած՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան կողմից:

ARAM webaram.com

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

ԽՈՐՀՐԴԱԻՈՐ ՊԱՐՏԻԶՊԱՆԸ

Այս պատմուքիւնը կարող է հէքեաթ թուալ շատերին, ուստի ես վարանում էի մինչեւ այժմ գրի առնել, բայց իրապէս պատահած դէպք է:

Կեանքը ի՞նչ է որ արդէն. այնպիսի բաներ են պատահում մարդուս հետ, որ հէքեաթից աւելի հէքեաթային կարող են երեւալ:

Եւ ի՞նչն է իրականը, ի՞նչն է հէքեաթ: Տիեզերքի ամբողջ պատմուքիւնը կարող է համարուել մէկի համար իրականուքիւն, միւսի համար հէքեաթ: Մեր կեանքը՝ իրականուքի՞ւն է, թէ հէքեաթ:

Cogito, ergo sum, ասել է մի խելացի Դաւիթ — մտածում եմ, ուրեմն կամ, իրականուքիւն եմ, բայց յաճախ, չմտածուած բաներն էլ դառնում են իրականուքիւն: Նայեցէք ձեր շուրջը:

Մի խօսքով, իրականուքիւն է, թէ հէքեաթ, ես պիտի պատմեմ ինձ հետ պատահած դէպքը Ղրիմում:

Մոսկուայից եւ Ռոստովից Լիժինի որսկան շներից փախչելով, 1910 թ. ամառը, ես ինձ գտայ Ղրիմի Սիմֆերոպոլ քաղաքում:

Զալքըը դիւղի Տէր-Բաղդասարեան քահանայի տղան՝ Զաքարը ուսուցիչ էր Սիմֆերոպոլում եւ նշանուած էր մի հարուստ որբեւայրիի աղջկան հետ: Զաքարին ես լաւ էի ճանաչում եւ, բնականաբար, իմ դեկը դարձրի ուղիղ նրա կողմը:

Եւ չէի սխալուել: Զաքարը դրեթէ տան փեսայ էր: Թէեւ քաղաքում առանձին սենեակ ունէր, բայց համարեայ ապրում էր իր նշանածի մօտ, Տիկին Ռիմայի տանը: Հետեւաբար, ինձ էլ տեղաւորեց իր ապագայ զոքանչի բնակարանում:

Իր թաղում անուանի, չէն կին էր տիկին Ռիման, քառասունի

ARAM webaram.com

չուրջ, կարելի էր ասել՝ դեղեցիկ: Սեւ, համարձակ աչքեր ունէր, փարթամ կուրծք, վարակիչ ծիծաղ:

Մի քանի տարի էր որ այրիացել էր: Ամուսինը, կերպասեղէնի վաճառական, ժառանգութիւն էր թողել մի գունդ ու կլոր աղջիկ — Զաքարի նշանածը — պտղատու ծառերով չրջապատուած մեծ տուն դեղեցիկ պատչգամբով եւ դրամատան մէջ կոկիկ դումար:

Այնպէս որ տիկին Ռիման ոչ միայն վայելուչ — առաջին կարգի — յուղարկաւորութիւն էր սարքել իր թանկագին ամուսնուն, այլեւ, իրրեւ սուգի նշան, փակուել էր մեծ տան մէջ, իր հօրաքրոջ տնմնայ աղջկան՝ Սոնիայի հետ եւ դրսի աշխարհի հետ յարաբերութիւն չէր պահում:

Աւելնք՝ փակուելը խօսք էր միայն:

Շուտով յայտնի էր դարձել, որ նրան այցելում էր ոստիկանապետ՝ Պլատոն Ֆոմիչը, որ Տիկ. Ռիմայի յարկի տակ ծանօթ էր աւելի Պլատոչա անունով:

Պլատոչայի այցելութիւնները, իրր թէ, գաղտնիք էին, բայց երբ եւ Ֆրիմ հասայ, արդէն ամբողջ Սիմֆերոպոլը գիտէր, որ ոստիկանապետը տիկին Ռիմայի սրտի ընկերն էր: Պէտք է ասել, որ տիկին Ռիման մեծ սիրտ ունէր, եւ ոստիկանապետից զատ ուրիշ այցելուներ էլ տեղ էին գտնում մէջը: Պլատոչան դիտէր այդ եւ չէր բարկանում: Եւ ինչո՞ւ բարկանար. Սիմֆերոպոլում չատ մեծ սրտեր կային, ուր ինքը ցանկալի այցելու էր:

Ես հիւրընկալուեցի Զաքարի գոքանչի տունը, իրրեւ մօտիկ ազգական. Տիկին Ռիմայի մօրաքրոջ ուսանող որդին՝ մայրաքաղաքից եկել էր ամառուան արձակուրդը Ֆրիմում անցնելու: Այդ անմեղ կեղծիքը անհրաժեշտ էր ապահովութեան համար. ոստիկանապետը, բնականաբար չէր մտածել որ իր սիրուհու ազգականը կարող է կասկածելի մարդ լինել:

Իմ այցելութեամբ Տիկին Ռիմայի տունը կենդանացաւ. երեւացին հայ այցելուներ: Կէսօրից յետոյ, գալիս էին մի բաժակ թէյ առնելու երեսունդ քահանայ Նալբանդեանը — Սիմֆերոպոլի հայոց հովիւ — իմ մօտ բարեկամ բանաստեղծ Ոնուփրիոս Անուփեանը, ուսուցիչներ, գործակատարներ — դաշնակցական ընկերներ: Տիկին Ռիման ուրախ էր, որ իր ազգականը այսքան բարեկամներ ունի եւ առաւօրէն հիւրասիրում էր թէյով, վիշնայի կիսլեճկիով, խանութփերով, չէշիտ-չէշիտ խմորեղէններով:

Շաբաթ օրերը ոստիկանապետն էլ խառնւում էր իմ այցելուների ազմկոտ վէճերին քաղաքի կափէ շանտանի դերասանուհի Բալ-

ARAM webarami.com

դաշխի զգայացունց պարերի կամ հոպիտ Զուզուլի օյինբազութիւններուն մասին: Լաւ ուտող, լաւ բաժակ բռնող, չէն մարդ էր Պլատոն Ֆոմիչը, հոգի-մարդ, մանաւանդ եթէ մօտը բազմած լինէր Տիկին Ռիման իր հրեղէն մարմնով:

Երեք չաբաթ ես հիւր մնացի իմ «ազգական» Տիկին Ռիմայի տանը: Բայց իմ նպատակն է ոչ թէ Տիկին Ռիմայի մասին խօսիլը, ոչ էլ ոստիկանապետ Պլատոչային ծանօթացնել ձեզ, ոչ իմ այցելուներին ներկայացնելը եւ ոչ Տիկին Ռիմայի սեղանի ճոխ հիւրասիրութիւնները ցոյց տալը: Ո՛չ: Իմ միտքը զբաղուած էր ուրիշ հարցով. ես արտասահման պէտք է անցնէի եւ անցագիր չունէի: Ռուսաստանում, ինչպէս այժմ գրեթէ ամբողջ աշխարհում, անցագիր չունեցող մարդը մարդ չէր:

Սիմֆերոպոլի ընկերների բոլոր ճիգերը այդ ուղղութեամբ անցան ապարդիւն: Աւելնք՝ անցագիր ճարւում էր. Թուրքիայից նոր եկած հայեր կային, որոնք կարող էին կորցնել իրենց անցագիրը. եւ ես կարող էի նրանց անցագրով վերադառնալ Թուրքիա, բայց, դժբախտաբար, ոչ մէկը տարիքով կամ նշաններով ինձ յարմար չէր: Տիկին Ռիման էլ միացաւ ընկերների փնտռտուքին — անօգուտ: Թէև «ազգական»,ես շատ էլ չէի վստահում նրա զաղտնապահութեան. յանկարծ, Պլատոչային ասէր, թէ, իսկապէս, ո՞վ եմ ես, իմ բանս բուրդ կը դառնար:

Մի օր էլ Տիկին Ռիման շատ խորհրդաւոր կերպով ասաց. այս ինչ գիւղում, քաղաքից մի քանի ժամ հեռու, գտնւում է տրապիզոնցի մի հայ պարտիզպան, որ,իբր թէ, արտաքինով նման էր ինձ: Նրա անցագրով կարելի կը լինէր ապահով անցնել Թուրքիա: Իր ծանօթները հաստատել էին, թէ այդ պարտիզպանը ուղղակի իմ պատճէնն էր:

Ես յոգնել ու ջղայնացել էի չներից հալածուած որսի վիճակում: Ինչ գնով լինի ճարել անցագիր եւ հեռանալ Ռուսաստանից: Դրա համար պատրաստ էի ոչ միայն մօտակայ այս ինչ գիւղը գնալ, այլ աւելի հեռուներն էլ ճամբորդել:

Տիկին Ռիման իր բարեկամ կառապանին լծել տուեց դոյգ ձիանց տաչանկան, լեցուեցինք մէջը խումբով եւ մի քանի ժամ վերջը, ոտքից-գլուխ փոշոտուած, կանգ առինք իմ պատճէնը եղող տրապիզոնցի պարտիզպանի դրան առջեւ:

Իմ պատճէնը վաթսուննոց, ալեհեր, փառաւոր մօրուքով եւ բարի ու համակրելի դէմքով մի ծերունի էր, որ ոչ մի բանով նման

ARAM webaram.com

չէր ինձ: Աւելի. Թուրքիայից Ռրիմ էր եկել Հուրիէթից շատ առաջ, Սուլթան Համիդի օրով:

Տիկին Ռիման, ճարպիկ լարախաղացուքեամբ, մեր այցելութեան բնականոն բացատրութիւն տուեց.— Եկել էինք պտուղ գնելու: Քաղաքում դժուար էր թարմ պտուղներ ճարել. եկել էինք մեր ձեռքով քաղելու ծառերի վրայից:

Պարտիզպանը ձեռ ու ոտ ընկաւ:

— Բարի էք եկել, ամբողջ պարտէզը ձեր տրամադրութեան տակ: Բայց ամենէն առաջ, համեցէք տուն, մաքրեցէք փոշին, լըւացուեցէք, մի պատառ հաց կերէք, վերջը — ամբողջ պարտէզը ձեզ:

Պարտիզպանի հիւղակի ներսը գրաւեց իմ ուշադրութիւնը: Զորս պատերը ծածկուած էին նկարներով՝ չրջանակով կամ ուղղակի պատին կպցրած: Ռրիմեան Հայրիկ, Րաֆֆի, Աղբիւր Սերոբ, Ֆեդայիների խումբեր — այս մարդը վախ չունէ՞ր ոստիկանութիւնից:

Ամենէն ուշագրաւը, սակայն, մի մեծ, գունաւոր նկար փառաւոր չրջանակի մէջ. Մայր Հայաստանը սգաւոր, նստած աւերակների մէջ, որոնց վրայ գրուած էին հին քաղաքների անուններ՝ Անի, Դուին, Տիգրանակերտ...

Մայր Հայաստանի պատկերի տակը գրուած էր.

— Հայաստան, եթէ քեզ մոռանամ, չորանայ իմ աջ բազուկը:

Ով Հայաստան, եթէ ես քեզ ուրանամ, երկու աչքով կուրանամ:

Մայր Հաայաստանի սգաւոր պատկերի առջեւ կեցայ յանկարծակիի եկած:

Ի՞նչ գործ ունէր Մայր Հայաստանը Ռրիմի այս թաթար գիւղում:

Ո՞վ էր այս խորհրդաւոր պարտիզպանը, որ, երեւի, հեղինակն էր այնքան յուզիչ մակագրութեան:

— Հայաստան, եթէ ես քեզ ուրանամ...

Եւ ինչո՞ւ պիտի ուրանար: Եւ եթէ վախենում էր ուրանալուց, ինչո՞ւ էր քաշուել այս հեռաւոր վայրը փոխանակ ապրելու Հայաստանում:

Մինչ Տիկին Ռիման եւ միւսները երգ ու ծիծաղով պտուղներ էին քաղում ծառերի վրայից, ես խօսքի բռնուեցի տարօրինակ պարտիզպանի հետ. ո՞վ էր, ո՞րտեղից, ե՞րբ էր եկել եւ ի՞նչ էր

ARAM webarchive.com

անում այս պարտիզում. պարտիզպանի չէր նմանում. ուրիշ մարդ էր լինելու...

Նա պատասխանում էր սիրով, կարծես նոյնիսկ ուրախ էր, որ իրենով հետաքրքրւում էին, բայց ակներեւ էր, որ անկեղծ չէր. թաքցնում էր իր ինքնութիւնը:

Նա զարմանք յայտնեց, որ մարդկանց առաջին հարցումը անունն է լինում. ի՞նչ նշանակութիւն ունի անունը. կոչեցէք, ինչպէս կամենում էք. Մարկոս, Կիրակոս, Փիլիպպոս. nomina odiosa sunt!

Այս մարդը պարտիզպան չէ, մտածեցի ես, ինչ բառեր գիտէ...

— Այո՛, Nomina odiosa sunt! Շարունակեց նա: կարեւորը մարդն է, ոչ թէ անունը: Որտեղից լինելն էլ էական չէ. ի՞նչ նշանակութիւն ունի տեղը: Ինձ ասում են տրապիզոնցի, որովհետեւ տրապիզոնցիի անցագիր ունեմ. բայց իրապէս տրապիզոնցի՞ եմ: Ինչ ուսում ունենալս էլ կարեւոր չէ. ենթադրենք ասեմ, թէ տասը համալսարան եմ աւարտել, դրանից բան կը փոխուի՞: Քի՞չ կան համալսարանական մի քանի վկայականով պատկուած էշեր...

— Այնուամենայնիւ, ես կը կամենայի իմանալ, թէ ո՞ւմ հետ պատիւ ունեմ խօսելու, ասացի ես:

— Շատ բան կը կամենաք, երիտասարդ պարոն, ինչո՞ւ համար կը կամենաք: Դուք պատիւ ունիք խօսելու Մրիմի Թաթարական դիւղի մի պարտիզպանի հետ, այդքանը բաւական չէ՞: Կը կամենա՞ք ձեզ ասեմ, թէ քանի տեսակ ապուր կայ իմ պարտիզում, ինձորի կամ տանձի ո՞ր տեսակը լաւ է՝ աւտո՞նովկան, թէ ռենէտը: Լսո՞ւմ էք ծիծաղը ծառերի մէջ. չէ՞ք կարծում, որ տիկիններին հետ ժամանակ անցնելը աւելի հաճելի է, քան խոփած պարտիզպանի հետ ջուր ծեծելը:

Եւ ոտքի ելաւ:

— Այս պատկերները աղաչական ձայնով խնդրեցի ես, այս Մայր Հայաստանը, ասացէք խնդրում եմ, ի՞նչ են անում Թաթարական այս դիւղում:

— Մեզ մօտ ասում են. «Շատ բան կ'իմանաս, շուտ կը ծերանաս», պատասխանեց նա հեգնական ժպիտով:

— Բայց ես ուզում եմ իմանալ,— պնդեցի ես:

— Լսո՞ւմ էք, Տիկինը կանչում է, երթանք իմ խօսքը չլսել ձեւացրեց, երթանք:

Պտուղներով բեռնաւորուած՝ վերադարձանք քաղաք: Ոչ անցագիր, ոչ մանցագիր: Իմ միտքս դրաւեց Թաթար դիւղի խորհրդա-

ARAM webaram.com

ւոր պարտիզպանը: Հետաքրքրուեցի: Հարց ու փորձ արի: Որեւէ բան իմացող չկար պարտիզպանի մասին: Շատերը դիտէին, թէ նըման մարդ գոյութիւն ունէր, բայց թէ ո՞վ էր, ի՞նչ էր, չէին կարողանում ասել:

* * *

Վերջապէս ինձ յաջողուեց ճարել մի անցագիր՝ տրապիզոնցի գասապ Քէոռօղլու անունով: Ամէն առաւօտից յարմար անցագիր էր, բայց մէկ թերութիւն ունէր. նշաններից ոչ մէկը չէր համապատասխանում ինձ. ես բարձր էի, տրապիզոնցի մսագործը կարճահասակ էր. ես սեւ մազեր ունէի, նա՝ շէկ, իմ աչքերը խաժ էին, նրանը՝ կապոյտ: Մի խօսքով, ինչպէս վերջը ընկ. Գասպարը ասաց Բաթումում, այդ անցագրով կարող էի հեշտութեամբ Սիբիր ճամբորդել: Բայց ուրիշ ելք չունէի. պէտք է մեկնէի:

Տիկին Ռիման իր ձեռքով սամսաներ ու խուռաբիաներ պատրաստեց ճամբու համար, հաւ խաշեց եւ ամէն առաւօտ համով բաներ, կարծես Սուրբ Կարապետ ուխտի էի գնում: Ցտեսութիւն ասացի համակրելի ոստիկանապետին եւ մի արեւոտ առաւօտ, երկաթի կառքով, մեկնեցի Եւպատորիա Սեւ Ծովի ափին, որտեղից նաւ պիտի առնէի դէպի Բաթում:

Ճանապարհը անցնում էր Սաքի ցեխաբուժարանի մօտով:

Սաքիում իմ առջեւը ելան Պետերբուրգի մի քանի ուսանողուհիներ Մանիա Էնգէլհարդի պլխաւորութեամբ, որոնք նոյնպէս պէտք է երթային Եւպատորիա:

Մանեա ոսկրի հիւծախտ ունէր եւ եկել էր Սաքի ցեխի բաղնիք ընդունելու: Հակառակ իր տկարութեան զարմանալի կենսուրախ եւ չարժուն աղջիկ էր. Պետերբուրգի մեր ուսանողական խումբի հոգին: Մի ծիծաղ ունէր, որից քարերն անգամ լեզու կ'առնէին: Երբ Եալթայի քարափի վրայ պայթեց նրա ծիծաղը, բազմութեան մէջից մէկը պոռաց հայերէն.

— Ջան, ջան, հայ աղջիկ, ես քո հոգուն մատաղ:

Եւպատորիայից նաւ առնիք Խրիմի պեղեցիկ եզերքով անցնելու համար Եալթա, Սեւաստապոլ, Ֆէոդոսիա, Նովորոսիյսկ, որտեղից աղջիկները երկաթուղիով պիտի երթային Ռոստով, իսկ ես պիտի շարունակէի ճանապարհը դէպի Փոթի եւ Բաթում:

Սեւաստապոլում նաւը պիտի կեներ կէս օր, առաւօտից մինչեւ ժամը 12, բաւարար ժամանակ Ռուսաստանի Սեւ ծովի պատմական ռազմակայանը դիտելու համար: Բայց մենք ուզեցինք տեսնել եւ մօտակայ հին Խերսոնէս քաղաքի աւերակները: Նաւապետը

ARAM webarani.com

հաւատախոցրեց, թէ մենք կը հասնենք նաւի մեկնումին:

Ֆերոնէսի աւերակները, ի հարկէ, խիստ հետաքրքրական էին: Պեղումներից դուրս էին եկել հելլենական մշակոյթի առարկաներ. պէտք էր տեսնել: Գետնի տակից բացուել էին փողոցներ ու շէնքեր. այդ էլ պէտք էր տեսնել: Աւերակների պահապանը հետաքրքրական բաներ էր պատմում. այդ եւս պէտք էր լսել: Սակայն, ժամանակը չէր ապասում. երբ վերադարձանք նաւահանգիստ՝ անօթի եւ յոգնած, նաւը մեր քթի տակից՝ սուլելով, դուրս եկաւ կապուտակ ծովի բացերը՝ տանելով հետը նաեւ մեր ճամբորդական խրթերը:

Պէտք է դիշերէինք Սեւաստապոլում եւ յաջորդ կէս օրին մի ուրիշ, աւելի արագընթաց նաւ առնէինք Նովորոսիյսկում մեր նաւին հասնելու համար: Ահա քեզ հելլենական մշակոյթ...

Նաւահանգստի պաշտօնեայի օգնութեամբ տեղ գտանք մի համեստ պանսիոնում, ծովափին: Երկու յարկանի կոկիկ մի տուն սիրուն պարտէզով, համայիլ տեսարանով դէպի Սեւ ծովը, եւ տան տիրուհին, ո՛վ զարմանք, Տիկին Մարօ, ազգանունը մոռացել եմ, հաբիւր տոկոսով հայուհի:

Տիկին Մարօն հետաքրքրական կին էր, Բեսարաբիայից: Ուսումը ստացել էր Ժընեւում, ուր եւ յարել էր Հնչակեան կուսակցութեան: Ամուսնացել էր հնչակեան ուսանողի հետ: Իրրեւ յեղափոխականներ, երկուսն էլ աքսորուել էին Սիբիր, ուր ամուսինը մեռել էր, չդիմանալով դաժան կլիմային: Ինքը վերադարձել էր Բեսարաբիա, ապա Սեւաստապոլում, իր նոր ամուսնու հետ, հիմնել էր այս պանսիոնը: Նոր ամուսինն էլ մեռել էր, եւ տիկ. Մարօն այժմ մենակ վարում էր այս հաստատութիւնը:

Ինձ հետաքրքրեց տիկ. Մարոյի պատմութիւնը Հնչակեան կուսակցութեան մասին: Նա մօտ ծանօթ էր եղել Աւետիս եւ Մարօ Նազարբէգեաններին, ճանաչում էր Ռուբէն Ֆանազատին, Ռուբէն Բերբերեանին եւ շատերին հնչակեան պարագլուխներից: 1896ին, երբ Հնչակեան կուսակցութիւնը պառակտուեց, տիկ. Մարօն եւ ամուսինը մնացել էին սոցիալ-դեմոկրատ հնչակեաններ: Որպէս սոցիալ-դեմոկրատներ էլ բանտարկուել եւ աքսորուել էին:

— Երիտասարդ էինք, խե՛նթ էինք, ասում էր տիկ. Մարօն դառնութեամբ, ինչքան կեանքեր փչացան, մեր կեանքն էլ այսպէս եղաւ...

— Հիմա, հետաքրքրուեցի ես, այլեւս յեղափոխութեամբ չէ՞ք զբաղւում:

ARAM webaram.com

— Հիմա՞... յեղափոխութի՞ւն... ո՛չ, մեզ համար այդքանն էլ բաւ էր: Ներքուխինը անցաւ... մի խենթ էլ Սիմֆերեպոլում կայ, դուցէ իմացաք: Վաստակաւոր պարտիզպան, արտասանեց կծու ծիծաղով:

— Ի՞նչ, հարցրի ես յանկարծակիի եկած:

— Հա, պարտիզպան, ի՞նչ կայ որ. չծանօթացա՞ք. պարտիզպան է թաթարական գիւղում:

Ես պատմեցի մեր ա-ցելութեան մասին թաթարական գիւղի հայ պարտիզպանին:



— Հա, նա է, հաստատեց տիկ. Մարօն, խենթերից ամենաանմիտը...

Ինչ զարմանալի բան. պէտք էր որ ես նաւը փախցընէի, որպէսզի գոնէ փնտուածս: Աղաչեցի տիկ. Մարոյին, որպէսզի պատմէր ինձ այդ խորհրդաւոր պարտիզպանի մասին:

— Խորհրդաւո՞ր, ծիծաղեց տիկինը, չատ սովորական մի բան: Հիմա ժամանակ չունեմ: Համբերեցէք, վերջը...

*
**

Ընթրիքից յետոյ տեղաւորուել էինք պատըշգամբում ծովահայեաց: Մագնոլիա, միմոզա՝ պարտէզից բոյր էին տալիս: Լուսնի արծաթէ ճառագայթները խաղում էին ծովի մակերեսին:

— Այո՛, սկսեց Տիկին Մարօն, խելագարներից ամենախելացը: Մենք գոնէ գաղափարի համար էինք խենթացել. ազատ Հայաստան, սոցիալիզմ, հայրենասիրութիւն, դրա համար արժէր մի քիչ էլ երթալ: Այն ժամանակ գոնէ այդպէս էինք հաւատացած, իսկ այդ անխելք պարտիզպանը, հասկանո՞ւմ էք...

Ձախից աջ.— Ռ. ԽԱՆԱԶԱՏ, ԱՆԾԱՆՕԹՄԸ, ՆԱԶԱՐԲԷԳ, ՄԱՐՕ, ԿԱՖԵԱՆ:

ARAM webaram.com

Եւ նախադասութիւնը չլրացած՝ սկսեց քահ-քահ ծիծաղել Ղազին ծիծաղով:

— Բայց, յարգելի Տիկին, ո՞վ է այդ մարդը, ի՞նչ է անում թաթարական դիւղում, ի՛նչ է անունը: որտեղացի՞ է:

— Անո՞ւնը — Դոն Քիշոտ, կամ Քաւոր Պետրոս կամ Պօղոս առաքեալ են ասում: Ղրիամ: կարծեմ Պարսկաստանից էր թէ Աստրախանից: Գուցէ եւ Տրապիզոնցի: Ուսանող էր: Աւում էր՝ սոցիալական գիտութիւններ էր ուսանում: Արդէն ո՞վ էր ժրընեւում, որ սոցիալական գիտութիւններ չէր սովորում ...սրճարաններում:



Ա. ՆԱԶԱՐԲԷԳ ԻՐ ԶԱԻԿԻՆ ՀԵՏ

Տիկին Մարօն չարունակեց պատմել, իրը թէ անտարբեր, բայց բնաւ անտարբեր չէր երեւում: Ճաճախ խօսքը ընդհատում էր Ղազին ծիծաղով:

Ըստ տիկ. Մարոյի, թաթարական դիւղի պարտիզպանը լաւ ընկեր էր եւ գործունեայ հնչակեան:

Մանաւորապէս մօտիկ էր Վահան Տոտոմեանցի հետ, դրա համար տիկ. Մարօն նրան Աստրախանցի էր կարծում: Ուսանողական ժողովներում թունդ հայրենասիրական ճառեր էր խօսում: Վայելում էր իսկական սեռի համակրանքը: Տիկ. Մարօն էլ, ըստ երեւոյթին, անտարբեր չէր եղել նրա հանդէպ:

— Ես երեւելի աղջիկ էի, եւ նա թրեւ էր գալիս իմ չուրջը, փախցրեց բերանից տիկ. Մարօն: Նա ինձ օրիորդ Հայաստան էր կոչում ...

Տիկ. Մարոյի զուսպ պատմութիւնից կարելի էր հետեւցնել, որ, նրանք սիրել են իրար երիտասարդական սիրով :Ճետոյ մի բան պատահել էր — խզում:

ARAM webaram.com

Մաքսն Կովկասից բերել էր Մայր Հայաստանի նկարը եւ պեղեկ շրջանակի մէջ՝ նուիրել ապագայ պարտիզպանին, որ իր ձեռքով պրել էր.

— Հայաստան, եթէ ես քեզ ուրանամ...

Ուրիշները կարող էին մտածել, որ խօսքը Հայոց Աշխարհ Հայաստանի մասին էր, բայց պատկերը նուիրողն էլ, ստացողն էլ գիտէին, թէ ով էր Հայաստանը:

Անմահ սէր չկայ այս աշխարհում: Ժընեւի հորիզոնի վրայ երեւում է մի նոր աստղ՝ փարթամ մարմնով եւ չքեղ տեսքով: Թիֆլիսի մի հարուստ վաճառականի աղջիկը, որ եկել էր սոցիալական գիտութիւն ուսանելու, այսինքն տիտղոսաւոր ամուսին գտնելու: Նոր աստղի շողերը ընկել էին Հայաստանասէրի վրայ:

Ի՞նչ էր պատահել վերջը: Վերջը Քաւոր Պետրոսն ամուսնացել է Թիֆլիսից ծագած աստղի հետ եւ անհետացել Ժընեւի հորիզոնից: Տիկ. Մարօ իր սիրտը վառահել էր մի ուրիշ երիտասարդ սրտի եւ նոյնպէս հեռացել Ժընեւից: Աքսորուել է Սիբիր, ուր թաղել է ամուսնուն: Վերադարձել է աքսորից եւ նորից ամուսնացել եւ այս ամուսինն էլ թաղել է՝ ժառանգելով ներկայ պանսիոնը:

Տարիներ առաջ երբ Տիկին Մարօյին երկրորդ ամուսինն էլ մեկնել էր առյաւէտ, դալիս է մօտը իր առաջին մտերիմն եւ պատմում իր դժբախտ կեանքը: Ամուսնութիւնից մի քանի ամիս անցած կինը լքում է նրան եւ փախչում ուրիշի հետ: Ինքը յուսահատ՝ նետւում է յեղափոխական գործի մէջ: Գնում է Թուրքիա: Թափառում է լեռներում: Զբերակալւում եւ տաժանակիր աշխատանքի դատապարտւում: Ռուս կառավարութեան միջամտութեամբ ազատւում է: Գնում է Բագու, մտնում է նաւթային գործի մէջ, եւ այս անգամ բախտը ժպտում է նրան. մեծ գումար է շահում: Բայց այլեւս դրամը նրան գոհացում չի տալիս, ոչ էլ յեղափոխութիւնը: Իր մէջ զարթնում է բուռն զգացումը Օր. Հայաստանի հանդէպ: Նա գրտնում է նրա հետքը: Գալիս է Պրիմ, բայց չի համարձակում ներկայանալ նրան: Դառնում է պարտիզպան թաթարական գիւղում: Եւ ահա այժմ ծնկաչոք ներողութիւն էր խնդրում:

Տիկին Մարօն յուզումով լսում է պատմութիւնը: Կարծես նրա սրտի վրայի սառոյցը սկսում է հալել, բայց նրա հպարտութիւնը տկարութեան չի հանդուրժում: Նա պատասխանում է Պուշկինի Տատեանայի խօսքերով.

— Ես ուրիշին եմ տրուել եւ յաւիտեանս հաւատարիմ պիտի մնամ նրան...

ARAM webaram.com

Եւ երբ մարդը ստուերի պէս հետանում է, Տիկ. Մարօն ընկնում է մահճակալի վրայ եւ ջղաձգօրէն լալիս է, յորդ արցունք է թափում անյոյս...

— Տիկին Մարօ, ասաց Մանեան՝ նշաձեւ աչքերը թաց, բայց չէ՞ որ դուք սիրում էիք նրան, ինչո՞ւ հետացրիք նրան:

— Գիտեմ, ոչինչ չգիտեմ, պատասխանեց Տիկին Մարօն ձեռքի յուռահատ շարժումով եւ հետացաւ պատշգամբից:

— Կատարեալ վէպ է նկատեց Մանեայի ընկերուհին:

Վէպ էր, հապա ի՞նչ էր: Արդէն ամէն մարդու կեանք մի վէպ է, իսկ մանաւորապէս, հայի կեանքը՝ ողբերգութիւն:

Ճաշօրդ առաւօտ Տիկին Մարօն շատ խնդրեց, որ մի օր էլ հիւր մնանք իրեն, բայց նաւը մեկնում էր կէսօրին, եւ մենք չէինք կարող ուշանալ:

ARAM webaram.com

ՄՐՋԻՒՆՆ ՈՒ ՃՊՈՒՌԸ

Փոքր, աննշան մի դէպք մեխուել է յիշողութեանս մէջ եւ չեմ կարողանում մոռանալ:

Բաթումում, Սեւ ծովի եզերքը: Այնքան հաճելի էր Մայիսեան արեւը:

Ծովը նազանքով չոյում էր ափի աւազը: Հեռուում սպիտակին էր տալիս մենաւոր մի առագաստանաւ: Լեզուիս ծայրին էր Լերմոնտովի տողերի երաժշտութիւնը.

Սպիտակին է տալիս առագաստը մենաւոր
կապոյտ երկնքի մուք մառախուղում,
Ի՞նչ է որոնում նա երկրում հեռաւոր,
Ի՞նչ է թողել նա հարազատ աշխարհում:

Քաջազնունին փռել էր վերարկուն ծառի տակ, ծալապատիկ նստած՝ ծխում էր իր հաստ փաթթուած ծխախոտը եւ խոկում էր անտարբեր ու լուռ, կարծես վերացած: Ես դիտում էի ալիքների եւ արեւի լոյսի խաղերը ծովի երեսին:

Միտքս ուրիշ տեղ էր: Մի քանի օր էր թուրքերը մեզ ներկայացրել էին վերջնագիր. կամ կը ստորագրէք, կամ պատերազմ: Եւ փաստօրէն չարունակում էին պատերազմը: Անուղղակի աղբիւրներից լուրեր էինք առնում, որ կռիւներ էին տեղի ունենում հայկական ճակատի վրայ ոչ նպաստաւոր հետեւանքներով մեզ համար: Կարսը թուրքերի ձեռքն էր արդէն, Ալեքսանդրապոլը գրաւման վտանգի տակ, եւ մենք նստած էինք թուրքական բաթումում: Վերջնագիրը ստորագրել չէինք ուզում եւ պատերազմը անզօր էինք չարունակելու:

ARAM webaram.com

Սպիտակ առագաստանաւի կողքից արագ անցաւ մի յածանաւ թուրքական դրօշակով: Առագաստանաւը դէպի մեզ էր առաջանում, կարծես ճայ լինէր արեւոտ հորիզոնի վրայ:

Քաջազնունին փակել էր աչքերը եւ ծխում էր: Չէր ուզում տեսնել, «սրիկաների» նաւը:

«Սրիկաները» ձգել էին մեզ թակարդը եւ խաղում էին մեզ հետ, ինչպէս կատուն մկան հետ:

Եկաւ Դոկտոր Գամբաշիձէն: Մի բարի, մաքով՝ սրտով ազնուական վրացի: Մեր անկեղծ բարեկամը Անդրկովկասեան պատւիրակութեան մէջ: Տեղատուութեց մեր կողքին, արօտի վրայ՝ մտախոհ ու տխուր մեզ պէս: Սիրում էր խօսել, բայց վարանում էր:

— Այդ յածանաւը տեսա՞ք ,ասաց, երեւի մի նոր չանորդի է դալիս Պոլսից մեզ չարչարելու համար:

— Կամարջոբա, Բիջօ, հեգնեց Քաջազնունին, բարի եկար, էլ չարչարանք մնա՞ց, որ չչարչարուէինք. նոր ի՞նչ չարչարանք էք ապասում:

— Լաւ արամադրութեան մէջ չէք, Թուրէն Իվանովիչ, նկատեց Գամբաշիձէն: Ցոռեատես էք, իսկ յոռետեսութիւնը մայր է ամենայն չարեաց: Ձեր լեարդը լաւ չի դործում:

— Դուք որ լաւատես էք, հեգնեց Քաջազնունին, ասացէք, խնդրեմ, ի՞նչ լաւութիւն ձեր լաւատեսութիւնից:

Այս միջոցին իմ ուշադրութիւնը կենտրոնացած էր մի տեսարանի վրայ կանաչ արօտի մէջ:

Սրճագոյն մի մրջիւն, վիթխարի մի բեռ չալակած, հանդիպել էր արդելքի իր ճանապարհին, մի փայտի կտոր թոյլ չէր տալիս, որ անցնի: Մրջնանոցի համայնական օրէնքով նա պարտաւոր էր այդ բեռը տեղ հասցնել, եւ ահա մի թշուառական փայտի կտոր արդելք էր հանդիսանում:

Մրջիւնը փորձում էր բարձրանալ փայտի վրայ, բայց չալակի բեռը ընկնում էր ցած: Իջնում, նորից չալակում էր բեռը, նորից փորձում էր բարձրանալ փայտի վրայ եւ նորից բեռը ընկնում էր չալակից:

Ցուսահատական պայքար էր այդ փոքրիկ միջատի եւ բնութեան միջեւ: Խեղճ անասունը յոդնած՝ մի պահ չունչ առաւ՝ չալակի բեռը դետին ձգելով:

Գամբաշիձէն, որ նոյնպէս հետեւում էր դատեմարտին մրջիւնի եւ փայտի կտորի միջեւ, բացագանչեց.

— Տեսնո՞ւմ էք այս չանորդուն. բեռը դետին դցեց, որ հան-

ARAM webaram.com

դըստանայ ու նորից չարունակէ վերելքը: Ճամառ է հայի պէս: Եթէ պէտք լինի, մինչեւ երեկոյ էլ պիտի չարունակէ վերելքի փորձերը, եւ կարող էք վստահ լինել, որ պիտի յաղթէ իր առջեւը ելած դըժ-ուարութեան. չանորդին այդ բեռը պիտի հասցնէ մրջիւնանոց:

— Եթէ, նկատեցի ես, եթէ չընկնի մարդու կօշիկի տակ:

— Դուք յոռետես էք, երիտասարդ պարոն, պատասխանեց Դոկտորը: Եթէ այս մրջիւնը տրորուի մարդու ոտքի տակ, մի ուրիշ մրջիւն կը բռնէ նրա տեղը, եւ այդ բեռը, որ անհրաժեշտ է մրջիւ-նանոցին, կը հասնի իր նպատակին:

Մրջիւնը հաղստացաւ, նորից շալակեց ծանր բեռը ու փորձեց բարձրանալ: Չյաջողեց:

Մի պահ թողեց բեռը եւ արագ անցաւ մինչեւ փայտի ծայրը: Մի վայրկեան կեցաւ: Նայեց ալ ու ձախ, կարծես հետազօտում էր շուրջը: Ապա նոյն փութկոտութեամբ վերադարձաւ, շալակեց բեռը եւ հետեւեց նոյն ճամբուն: Հասաւ փայտի ծայրը՝ մի քանի անգամ ձգելով ու բարձրացնելով բեռը: Անցաւ միւս կողմը եւ չարունակեց առաջանալ:

— Այ՛, կարող էք համոզուած լինել, կրկնեց մեր վրացի բարեկամը, այս փոքրիկ հերոսը բեռը կը հասցնէ տեղ, յաղթելով ճանապարհի բոլոր արգելքներին:

— Այստեղից՝ խրատ, չարունակեց նա: Երբեք պէտք չէ յու-սահատուել:

— Եթէ չընկնես մի վիթխարի կօշիկի տակ: Օրինակ՝ Շիշման Ֆալիլ բէյի անհեթեթ կօշիկի, հեգնեց Քաջազնունին:

— Սիրելի Ռուբէն Իվանովիչ, պատասխանեց վրացին, դուք այսօր անյոյս յոռետես էք: Տեսա՞ք ինչ արաւ այդ չանորդի մրջի-ւնը: Երբ համոզուեց, որ փայտը անանցանելի է, նոր ճանապարհ գտաւ: Մենք մրջիւնի չափ է՞լ խելք չունենք:

— Ուզո՞ւմ էք ասեմ իմ կարծիքը, չարունակեց Գամբաշի-ձէն: Դուք՝ հայերդ, ձեր բնաւորութեամբ ու նկարագրով, այս մըր-ջիւնն էք: Այդ է ցոյց տալիս պատմութիւնը: Քանի փայտերի, ինչ վիթխարի գերաններ էք հանդիպել ձեր ճանապարհին եւ միշտ ա-նարգել առաջ էք քայլել: Շիշման Ֆալիլի անճոռնի կօշիկից էլ մի սարսափէք, ինչպէս չսարսափեց հերոս մրջիւնը: Յաւերժութիւն:

Երբ Գամբաշիձէն հեռացաւ, Քաջազնունին կարծես աչխու-ժացաւ:

— Այդ տուտուց վրացին թուում է թէ ճիշտ բաներ խօսեց,

ARAM webaram.com

ասաց նա: Դժբախտաբար, վրացիները ճիշդ բաներ են խօսում, բայց սխալ բաներ են գործում:

Բաթումում էլ վրացիները անուշ խօսքերով մեզ խաբեցին. մինչ մենք աշխատում էինք, ծանր բեռը չալակած, մեր ճանապարհին ընկած գերանի վրայից անցնել, նրանք դաւաճանեցին կովկասեան միութեան, Վրաստանի անկախութիւնը յայտարարեցին ապաւինելով գերմանացիներին եւ մեզ ձգեցին մենակ վեհիր փաշայի բանակի առջեւ...

Արեւը իջնում էր ծովի եռեւը: Սպիտակ առագաստանաւը անհետացել էր հորիզոնից: Ալիքների վրայ սպիտակ դառնուկներ էին վազվզում: Օդը սկսեց պաղել:

Երբ մենք վերադարձանք մեր պանդոկի սենեակը, Քաջազնունին ասաց, երեւի, պատասխանելով իր մտքերին.

— Այո՛, իրաւունք ունի Գամբաշիձէն՝ համեմատելով հային մրջիւնի հետ, պէտք է ասէր, թէ վրացին էլ ճպուռ է...

* * *

Տասը տարի վերջը ես Դոկտ. Գամբաշիձէին հանդիպեցի Փարիզում, տարագրութեան մէջ: Երբեմն տեսնում էինք բարեկամաբար: Ես յիշեցրի նրան Բաթումի ծովափի մրջիւնին: Նա ծիծաղեց եւ ասաց:

— Սիրելի բարեկամ, կատակ չէր, ես լուրջ էի խօսում: Դուք՝ հայերդ զարմանալի ժողովուրդ էք: Տեսնո՞ւք էք ինչ է կատարւում. մեր վրացիները արճաճաններում եւ պիչերային գուարճութեան վայրերում վատնում են ինչ որ բերել են իրենց հետ, իսկ հայերը, տեսէք, խանութ են բաց անում, արհեստանոց, ճաշարան. կանայք կար են անում, տղամարդիկ աշխատում են գործարաններում. վազուան մասին են մտածում: Ես ձեզ հաւատացնում եմ՝ քանի հինդ տարի վերջը Փարիզի վրայ գաղութը կ'այլասերուի, կը փոչիանայ, հողմացրիւ կը լինի, բայց հայերը արմատ կը ձգեն, կը մնան անսասան.:

— Զկարծէք, թէ ձեզ հաճելի երեւալու համար եմ խօսում այսպէս, շարունակեց Դոկտորը արցունքը աչքերին: Ուզո՞ւմ էք ձեզ յիշեցնեմ մի դրուագ հայերի եւ վրացիների պատմութիւնից: Անշուշտ, երեւի, դուք լաւ ծանօթ էք այդ տխուր պատմութեան:

Գրեթէ միաժամանակ Շահ Աբասը Հայաստանից եւ Վրաստանից տարաւ համարեայ միեւնոյն թուով հայեր ու վրացիներ եւ բնակեցրեց իր մայրաքաղաք Սպահանում եւ շրջակայ գիւղերում:

ARAM webaram.com

Շանորդի Շահ Աբասը ուզում էր մեր ժողովուրդների հանճարով իր կայսրութիւնը չէնցնել: Քանի՞ դար է անցել այդ օրից: Վրաստանից տարուած վրացիները այժմ մնացել է երկու թէ երեք վրացախօս գիւղ...

— Այն էլ մահմետական, ընդմիջեցի ես:

— Այո՛, այն էլ մահմետական, բայց վրացերէն լեզուն դեռ պահել են. մնացեալ բոլոր վրացիները դարձել են պարսիկ: Իսկ հայերից քանի՞ հոգի է իսլամացել, քանի՞սը պարսկացել: Աւում են՝ Շահ Աբասի հիմնած բոլոր հայկական վայրերը մնացել են անվրթար...

— Ինձ ծանօթ է այդ պատմութիւնը, սիրելի Դոկտոր, ապացի ես, իսկ դուք գիտէ՞ք ինչ եղան Լեհաստանի երեսուն հազար հայերը:

— Ծանօթ եմ, ծանօթ, ընդմիջեց վրացի բարեկամս, բայց այդ ուրիշ պատմութիւն է: Տխուր, բայց ուրիշ պատմութիւն է...

Մի ազգի դոյութեան գլխաւոր գործօնը հողն է. հողը որ ձեռքից գնաց, ազգութեան վրայ էլ խաչ քաշիր: Վրացիները այդ տեսակէտից հայերից աւելի բախտաւոր են. ամուր նստած են իրենց լեռներում: Ձեր՝ հայերիդ դժբախտութիւնը աշխարհագրական դիրքըն է. ընկել էք մեծ ճանապարհի վրայ, եւ ձեզ տրորում են:

— Լաւ յիշեցրիք, մրջիւնը: Դուք՝ հայերդ մրջիւն էք, մենք՝ վրացիներս՝ ճպուռ: Չէ՞ք մոռացել Կոլցովի «Ճպուռն ու Մրջիւնը»:

Ցատկտաւ ճպուռը
Ողջ ամառը երգ երգեց.

Երբ վրայ հասան ցրտերը, ձիւն ու փոթորիկ, գնաց մրջիւնի դուռը ծեծելու, պատսպարան խնդրելու:

— Ա՛ա, այդպէս, ասաց մրջիւնը. ողջ ամառը ե՞րգ երգեցիր, շատ լաւ, դէ՛, հիմա էլ պար պարիր: Ու փակեց ճպուռի երեսին դուռը:

Դոկտոր Գամբաշիձէն, հայրենասէր, բայց եւ լայնախոհ վրացի էր: Գիտակցում էր իր ազգի թերութիւնները եւ ցաւում: Ծանօթ էր եւ հարեւան հայ ազգի առաւելութիւններին եւ ուրախանում էր. «Մրջիւնն ու ճպուռը», ասում էր նա, պէտք է իրար հասկանան եւ համերաշխ ապրին»: Աւաղ, Գամբաշիձէները սակաւաթիւ են այս մոլորակի վրայ:

Մի օր, Փարիզում, նա նորից խօսք բացեց հայի եւ վրացու բնաւորութեան եւ ազգային յատկութիւնների մասին:

ARAM webaram.com

— Սիրելի Դոկտոր, ասացի ես նրան, լսեցէք այս պատմութիւնը, եւ պատմեցի հետեւեալ դէպքը.

— Վերայից իջնում էի քաղաքի կենտրոնը:

Վերայի եւ Գոլովինսկի պողոտայի անկիւնում, Մելիք Ադաբեանի հոյակապ շէնքի առջեւ, մայթի եւ փողոցի վրայ, աղմկարար բազմութիւն էր հաւաքուած:

Մօտեցայ: Ամէն հասակի մարդիկ ու կանայք չրջան էին կազմել, եւ չրջանի մէջտեղը գետին ընկած էր ածուխով բարձած մի էշ: Տէրը աշխատում էր նրան ոտքի հանել: Ծորդորում էր, ճակատը չոյում: Հայհոյում էր, ականջներից քաշում: Կենդանին անվրդով՝ չէր ուզում ոտքի ելնել:

Շրջապատուած բազմութեան մէջից խրատներ էին լսում.

— Թող խեղճ անասունը մի քիչ հանգստանայ...

— Տօ, պոչից քաշիր...

— Ականջներից բռնիր...

Շուարած դիւղացին չէր իմանում ինչ անել:

Սուրը կողքին կախած վրացի ոստիկանը կարգ էր պահպանում:

— Քաղաքացիներ, հեռու կեցէք. մի խանգարէք կարգը...

Մէկ էլ, բազմութիւնը ճեղքելով, էշի կողքին կանգնեց անգլիացի երիտասարդ մի սպայ: Արհամարհանքով նայեց ոստիկանին: Մօտեցաւ էշին: Շփեց էշի ճակատը: Ծոտեց վզի տակ: Քաշեց ականջներից: Եւ հո՛պ. էշը ոտքի ելաւ ի ցնծութիւն տիրոջ: Բազմութիւնը ծափահարեց:

Վրացի ոստիկանը, վիրաւորուած դէմքով դարձաւ անգլիացուն կոտրտուած ռուսերէնով.

— Քաղաքացի, այստեղ անկախ Վրաստանի հանրապետութեան հողն է: Կը խնդրեմ չմիջամտել դերիչխան Վրաստանի հանրապետութեան ներքին գործերին...

— Զուարճալի է, բայց ի՞նչ էք ուզում ասել այդ պատմութեամբ, հարցրեց Գամբաշիձէն:

— Վրաստանի անկախութեան հռչակումից հազիւ մի չաբաթ էր անցել, եւ վրացի ոստիկանը արդէն պետականութեան դասեր էր տալիս անգլիացի սպային: Ձեմ կածում, որ հայ ոստիկանը դերիշխանութեան մասին խօսէր անգլիացիին:

— Այո՛, բայց դուք, բարեկամս, չպէտք է մոռնաք, որ Վրաստանը մի դար առաջ, դեռ անկախ պետութիւն էր, ինչ որ թարմ

ARAM webaram.com

էր ամէն վրացու յիշողութեան մէջ, մինչ Հայաստանը — քանի՞ դար է որ կորցրել է իր անկախութիւնը:

Ցետոյ, մի պահ մտածելով՝ Գամբաշինձէն աւելացրեց.

— Ես կարծում եմ, որ եթէ Գոլովինսկիի վրայ վրացի ոստիկանի տեղ լինէր հայ ոստիկան, փոխանակ անպէտացիին պետական իրաւունքի մասին ճառ խօսելու, կ'օգնէր դիւղացուն ոտքի հանելու էշը: Ձէ՞ք կարծում:

ARAM webaram.com

ԵԶԻԴԻՆԵՐԻ ԵՒ ՊՈՉԻ ՄԱՍԻՆ

Դեռ Գէորգեան ձեմարանում ինձ հետաքրքրում էին եզիդները: Ինչ որ մի խորհրդաւորութիւն կար այդ անուան մէջ — եզիդ՛:

Իրրեւ ձեմարանի աշակերտ, ես առիթ եմ ունեցել ճանաչելու եզիդիներին: Մեղրով սեր եմ կերել եզիդիների չէյխի վրանում, Աբազածի լանջին:

Պարզ ու պարզամիտ մարդիկ երեւացին ինձ եզիդիները. չարքաշ, բարքերով նահապետական, քաջ:

Նրանց մասին ասում էին, թէ սատանային են պաշտում:

Եզիդիների ազգապետն ու կրօնապետը Իւսուֆ աղա Թեմիրովն էր, ուսումը առած Գէորգեան ձեմարանում, հայախօս, լրակեաց, այդ պատճառով էլ իմաստուն մարդու համբաւի տէր:

Ինչ որ կարդացել կամ ինչ որ լսել էի եզիդիների մասին՝ հասկնալի ոչինչ չէր ասել ինձ նրանց մասին: Ի՞նչ էին եզիդիները, առանձին ցե՞ղ, ուրոյն կրօնական համա՞յնք, մահմեդական յարանուանութի՞ւն: Որքա՞ն էր նրանց թիւը աշխարհիս երեսին: Ի՞նչ էր նրանց լեզուն, կրօնական փիլիսոփայութիւնը, բարոյական նկարագիրը, պատմական անցեալը, ոչինչ ստոյգ յայտնի չէր ինձ:

Իմ աղբիւրները վկայում էին, թէ շատ հին ցեղ կամ կրօնական աղանդ է եզիդի ժողովուրդը, որի կենտրոնը Թուրքիայում էր, Միջագետքի սահմանի վրայ: Բիւրդ ցեղի մի հատուածը՝ վաչկատուն–նահապետական կարգերով ու բարքերով ապրող: Հայերի հետ բարեկամ: Ասում էին, որ եզիդիները սատանային էին պաշտում, որովհետեւ Աստուած բարի է եւ մարդուս չարիք չի կարող գործել·

ARAM webaram.com

աստանյայ սիրտը պէտք է չահել, որպէսզի չարիք չհասցնէ մարդկանց: Տրամաբանօրէն աստանայապաշտութիւնը ճիշդ փիլիսոփայութիւն էր, ըստ իս: Ի՞նչ պէտք կար աղօթելու բարի Աստծուն, որը իր էութեամբ ընդունակ չէ չարիք գործելու. աստանան՝ տարբեր խնդիր...

Այո, ինձ միշտ հետաքրքրել է եզիդի ժողովուրդը:

Եզիդիների մասին ես շատ եմ խօսել Կոմսի, ինչպէս եւ Ռուբէնի հետ, որ իրեն համարում էր քրդական հարցի մասնագէտ, հեռատեսութեամբ եւ հեղինակութիւն: Թէեւ ես մասնագէտների վրայ բարձր համարում չունեմ, անցեալները նորից դիմեցի Կոմսին, թէ՝

— Բացատրիր, խնդրեմ, ի՞նչ բան են սա եզիդիները, ցե՞ղ են, աղա՞նդ են, ի՞նչ են:

Եւ Կոմսը բացատրեց: Զանազան վկայութիւններ բերեց պատմութիւնից, խօսեց Զրադաշտի մասին. ինչ որ կրօնափիլիսոփայական համեմատութիւններ արաւ: Կոմսի բացատրութիւնից պարզուեց, որ եզիդիները եզիդի են, ոչ քիւրդ են, ոչ հայ, ոչ թուրք, այլ եզիդի:

Ինչ որ բացարձակ ճշմարտութիւն է, որովհետեւ եզիդիների մասին դոյութիւն ունեցող բոլոր ուսումնասիրութիւնները անառարկելի կերպով նոյնն են հաստատում: Այսինքն, որ — եզիդիները եզիդի են:

Եւ եզիդիների մասին դոյութիւն ունեցող դրականութեան թերիները լրացնելու նպատակով, օգտակար եմ համարում առաջ բերել եւ իմ յիշողութիւններից մի հատուած:


Հայաստանի Հանրապետութեան ստեղծումից յետոյ, հայկական կառավարութիւնը առանձնապէս ուշադրութիւն էր դարձնում եզիդիների վրայ, որոնց ընդհանուր թիւը, Թուրքիայից գաղթածներին էլ մէջը հաշուելով՝ 10–15 հազարը չէր անցնում: Եզիդիները ապրում էին Սուրմալուի շրջանում, Արագածի ստորոտը, նահապետական կեանքով: Բոլոր տղամարդիկ զինուոր էին, տան աշխատանքը ծանրացած էր կանանց վրայ: Վաչկատուն ժողովուրդ, անուս եւ քաջ:

Հայաստանի եզիդիների պետը ուսած էր Գէորգեան Ճեմարանում եւ այժմ Հայաստանի անկախութեան հռչակումից յետոյ, Թեմիրովը դարձաւ Թեմիրեան: Հայաստանի Խորհրդի կազմութեամբ՝ նա դարձաւ եզիդիների ներկայացուցիչ օրէնսդիր ժողովում: Ապա ընտրուեց Հայաստանի Խորհրդարանի երեսփոխան Հ. Յ. Դաշնակցութեան ցանկով:

ARAM webaram.com

Հայերի չափ եւ, թերեւս հայերից էլ աւելի, եզիդիները նահանձախնդիր էին Հայաստանի անկախութեան ու ոչինչ չէին խնայում նրա պաշտպանութեան համար:

Իւսուֆ ազայից յետոյ ամենակարեւոր դէմքը եզիդիների մէջ Ջհանկիր աղան էր՝ պետը Թուրքիայից գաղթած եզիդիների: Քաջ եւ յանդուգն, իր հաչիւն ու շահը գիտցող տղամարդ էր, իսկական աշիրեթապետ:



Սինջարի եզիդիների ցեղապետ շէյխ Համոյէ Շիրօ, Ա. Աշխարհամարտի ընթացքին

Եզիդիները հաւատարմօրէն ծառայում էին Հայաստանին եւ, իր հերթին, Հայաստանի կառավարութիւնն էլ ոչինչ չէր խնայում նրանց հաւատարմութիւնը լաւ արժանւոյն գը-նահատելու համար: Այս անդրադէտ, նախնական ժողովրդի համար, բացուելին դպրոցներ, յատկացուելին հողեր, եղաւ նիւթական օժանդակութիւն: Ոչ միայն տարբերութիւն չէր դրւում Հայերի եւ եզիդիների միջեւ, այլեւ, յաճախ, եզիդիները կառավարութեան աւելի հոգածութեան էին արժանանում ներքին եւ, մանաւանդ արտաքին պատճառներով:

Եզիդիների ազգային-կրօնական կեդրոնը գտնուում էր Սինջարում, Միջադեաք(*)· անհրաժեշտ էր նկատում ուժեղացնել բարեկամական կապը Հայաստանի եւ Միջադեաքի միջեւ, ուր ապրում էին եւ Ասորիները, որոնք Հայերից ոչ պակաս հակաթուրք էին:

(*) Սինջարի շրջանը ներկայիս մաս կը կազմէ Սուրիոյ:

ARAM webaram.com

Չեմ յիշում ո՞ր ամսին, 1919ին, Հայաստան եկաւ Միջագետքի Եղիդիների կողմից մի պատուիրակութիւն՝ ողջունելու համար Հայաստանի կառավարութիւնը եւ Հայաստանի Եղիդիներին: Երեւանում ջերմ ընդունելութիւն ցոյց տրուեց նրան:

Կառավարութիւնը ինձ նշանակեց եղիդի պատուիրակութեան հանդիսաւոր ընդունելութեան կազմակերպիչ: Ես հանդէսի բեմադրութեան ամբողջ գործը յանձնեցի այդ տեսակ գործերի վարպետ՝ մայրաքաղաքի պարէտ Ա. Շահխաթունիին. Շահխաթունին հիանալի ճարտարութեամբ բեմադրեց հանդէսը...:

Ըստ ծրագրի, ընդունելութեան հանդէսը տեղի պիտի ունենար Հայաստանի Մորհրդի չէնքում՝ երեսփոխանների եւ եղիդի մեծաւորների ներկայութեամբ: Եղիդի պատգամաւորութիւնը Մորհուրդի նախագահին պիտի ներկայացնէր Սինջարից բերած կոնդակը, որ պիտի կարդացուէր բեմից: Նախագահ Ա.Ա. Սահակեանը յանուն Հայաստանի պետութեան, ողջոյնի ճառ պիտի խօսէր եւ եղիդի պատուիրակների կուրծքը պիտի զարդարէր պատուանշանով, որ պատրաստել էին վանեցի ոսկերիչները Շահխաթունիի նախագծի համաձայն: Ես պիտի ներկայացնէի կառավարութիւնը:

Որպէսզի անախորժ անակնկալի չհանդիպէինք, ես նախօրօք ծանօթացայ կոնդակի բովանդակութեան: Այդ մի երկար թուղթ էր, «Դանիէլի»ի ձեւով, գրուած հայերէն լեզուով, որ բացուեց երկիւղածութեամբ:

Թղթի վերեւը, անհմուտ ձեռքով գծուած էր սիրամարգի պատկերը, որ Եղիդիների կրօնական խորհրդանշանն էր: Ապա գալիս էր կոնդակի բովանդակութիւնը:

Զգիտեմ մնացե՞լ է արդեօք այդ պատմական վաւերագիրը Հայաստանի դիւաններում, թէ՞ ուրիշ շատ թղթերի հետ այդ մէկն էլ բոլշեւիկները ծախեցին Թաւրիզի պարսիկ նպարավաճառներին: Շատ հետաքրքրական կը լինի պատմական արժէք ներկայացնող այդ թղթի հրատարակութիւնը այսօր:

Կոնդակում, ի միջի այլոց, ռամկական հայերէնով, պատմըւած էին այն խժդժութիւնները, որ պատերազմի ընթացքին, թուրքերը գործեցին հայերի եւ եղիդիների վերաբերմամբ: Եւ թուրքերի հասցէին գործածուած էին անտպագրելի հայհոյանքներ: Մի տեղ բառացի գրուած էր. «Մենք ալ ք..... անոնց մարը»: Երեւակայեցէք, որ մեր կաթողիկոսները իրենց կոնդակներում գործածէին այդպիսի բառեր...

ARAM webaram.com

Կոնդակում քաղաքական փշոտ բաներ չկային, իսկ ականջին անախորժութիւն պատճառող բաները կարելի էր խորհրդարանի բեմից էլ կարդալ եղիդի եւ հայ բարձրաստիճան ներկայացուցիչների առջեւ:

Աբչօ Շահխաթունին ճիգ չէր խնայել ընդունելութիւնը հանդիսաւոր դարձնելու համար: Պատգամաւորները եւ եղիդի մեծաւորները խորհրդարան մտան եղիդի եւ հայ երեւելիների եւ երեւփոխան ազգապետ Իւսուֆ աղայի ուղեկցութեամբ, դինուորական պատիւներով:

Շահխաթունիի առաջնորդութեամբ պատուիրակութիւնը բարձրացաւ սրահը, ուր ընդունուեց յոտնկայս ծափահարութեամբ:

Նախագահ Ա. Սահակեանը բարի գալուստի խօսք ուղղեց բեմից, որից յետոյ Իւսուֆ աղան առաւ պատուիրակի ձեռքից կոնդակի փաթեթը եւ համբուրելով յանձնեց նախագահին, որը, իր հերթին, համբուրեց:

Չեմ կարող յիշել, թէ ո՞վ էր որ կարդաց կոնդակը դանդաղ ու հանդիսաւոր ձայնով: Եղիդիները հետեւում էին ընթերցանութեան մասնաւոր ջերմեռանդութեամբ. իրենց հոգեւոր պետի սրբատառ կոնդակն էր:

Կոնդակի ընթերցումից յետոյ, նախագահը շնորհակալութեան խօսք ասաց եւ, բեմ հրաւիրելով, դլխաւոր պատուիրակի վզին անցկացրեց լայն ժապաւէնով փառաւոր մի չքանշան: Պատուիրակը յուզուած, խօսք չէր գտնում շնորհակալութիւն յայտնելու:

Շահխաթունին, դերասանի ճարտարութեամբ, հիանալի կերպով կատարում էր արարողապետի դերը: Նոյն հանդիսաւորութեամբ պատուիրակութիւնն ու հիւրերը հեռացան սրահից:

Կառավարութիւնը պատուիրակութեան անդամներին նուիրել էր մի մի մատուէր ատրճանակ եւ ուրիշ ընծաներ:

Որքան յիշում եմ, եղիդիներն էլ ներզաղթի հարց ունէին, միայն չեմ կարող ասել՝ ներզաղթ դէպի Միջագե՞տք, թէ դէպի Հայաստան: Նաեւ չդիտեմ ինչո՞վ վերջացաւ պատուիրակութեան առաքելութիւնը: Յամենայն դէպս, Հայաստանի եղիդիների ճակատագիրը անխզելի կապերով մնաց կապուած Հայութեան ճակատագրի հետ: Նրանք էլ չէն սրտով ապրեցան Հանրապետութեան լաւ օրերը: Հայ ժողովրդի հետ միասին ցմրուր քամեցին դառնութիւնները բոլշեւիկեան մուրճի եւ թրքական սալի միջեւ: Տեսան եւ ճաշակեցին Ցեղկոմի դառնութիւնները: Մասնակցեցան Փետր. 18ի համաժողո-

ARAM webaram.com

վըրդական ապստամբութեան եւ յաջորդող կռիւներին Ցեղկոմի իշխանութեան դէմ՝ Ջիհանկիր աղայի հրամանատարութեամբ: Եւ Իւսուֆ աղան մեզ հետ միասին, Լեռնահայաստանի վրայով, տարաձրուեց Պարսկաստան:

Թաւրիզում, յաճախ, իմ մօտ հաւաքւում էին Հայաստանի Հանրապետութեան վարիչ դէմքերը՝ յիշելու համար անցեալը եւ խօսելու ապագայի մասին: Քննութեան էին առնւում օրուան հարցերը եւ հետագայ անելիքները: Իւսուֆ աղան միշտ ներկայ էր այդ հաւաքոյթներին: Նստում էր մի կողմ լուռ, ուշադրութեամբ ականջ էր դնում բոլորի ասածներին, բայց ինքը խօսք չէր առնում: Լուռ հետեւում էր խօսակցութեան եւ, ինչպէս բոլոր լռակեաց մարդիկ, խելացի մարդու համբաւ էր վայելում:



Եզիդիների ցեղապետը, շրջապատուած՝ եզիդի երեւելիներով:

Մի օր էլ, երբ խօսակցութեան նիւթը միջազգային քաղաքականութիւնն էր, Իւսուֆ աղան, յանկարծ, ոտքի ելաւ եւ խօսք ուզեց:

— Պարոն Վրացեան, կարո՞ղ եմ ես էլ մի խօսք ասել:

— Համեցէք, Իւսուֆ աղա, խօսքը ձերն է, չտապեցէք պատասխանել ես: Ամէնքը հետաքրքրութեամբ սպասում էին, թէ ինչ պիտի ասի այդ խմաստուն մարդը:

— Դուք, Հայերդ, ասաց Իւսուֆ աղան, բախտաւոր ազգ էք: Ձեզ ամէնքը պիտեն, դուք բոլորին սիրելի էք: Անգլիա, Ֆրանսա,

ARAM webaram.com

ամէնքը ձեր դառն են պաշտպանում: Դուք, հայերդ, բռնել էք Ամերիկայի պոչը եւ առաջ էք գնում: Մենք, եգիպտներս էլ բռնեցինք հայերի պոչը, ք··· դուրս եկաւ:

Եւ անժպիտ՝ նստեց տեղը:

Յանկարծակիի եկած՝ ներկաները ծափահարեցին ու քահ-քահ խնդացին, բայց, իսկապէս, խնդալիք բան չկար: Դառն խմաստութիւնն էր խօսում լռակեաց եգիպտի բերանով: Միայն թէ նա պէտք է ասէր, թէ հայերի բռնած պոչն էլ, աւա՛ղ, աւելի մաքուր չէր:

Ինչո՞ւ յիշեցի այս ամէնը:

Ասում են Հայաստանի եգիպտները այսօր էլ ամուր բռնել են հայերի պոչը: Եւ հայերն էլ, իրենց հերթին, այժմ բռնել են ռուսների պոչը: Զգիտեմ՝ Իսուֆ աղան կամ իր յաջորդները հիմա ո՞հ են հայերի պոչից, բայց գիտեմ ամբողջ աշխարհին էլ յայտնի է ռուսական պոչի արժէքը: Փորձից գիտեմ, սակայն, որ բոլոր օտար պոչերը նոյնարժէք են: կարո՞ղ ես սեփական պոչ ունենալ եւ սեփական պոչից բռնած առաջ գնալ···

Խելապարուած ամբոխների երդիչ հռչակաւոր մի հայ բանաստեղծ, օտար պոչից հիասթափուած, ասաց մի օր, երբ դինով չէր օղիով ու բոլշեւիկուքեամբ.

— Հայ ժողովուրդ, քո փրկութիւնը քո հաւաքական ուժի մէջն է:

Ուզում էր ասել. մէկ կողմ նետիր օտար պոչերը. քո սեփական պոչին ապաւինիր: Հիմա մտածում եմ՝ ի՞նչ ուզում էր ասել խմաստուն Իսուֆ աղան հայերի պոչի մասին խօսելիս:

Յաւն այն է, որ առանց պոչի դժուար է ապրել ներկայ աշխարհում:

Խրիմեան Հայրիկը Բեռլին գնաց հայերի համար պոչ բերելու: Պօղոս Նուպարը Լոնդոնում յուսաց պոչ գտնել: Բժիշկ Զաւրբեան ռուսական պոչին վրայ սիրահարուած էր: Արմէն Գարօն հայի համար պոչ փնտռեց Փոթոմաքի եղերքին: Այժմ Երեւանի «ընկերները» կարմիր Մէքայում են պոչ գտել··· Սիրելի եղբայրներ եւ քոյրեր, բոլոր օտար պոչերը իրար արժեն:

ARAM webaram.com

ԽԷՋՈՑԻ ԳԵՐԵԶՄԱՆԸ ԻՇԽԱՆԻ ԿՈՂՔԻՆ

Կա՞յ մէկը ձեր մէջ, որ դիտած լինի Վանի լիճը ամառուայ երեկոյին, Ննճարկին դիւղի եղերքից: Որ տեսած լինի Գրգուռն ու Սիփանը վերջալոյսի ճառագայթների հրաշագեղ ծաղկոցում: Ես տեսել եմ:

Ցունիս ամիսն էր, 1915–ին: Մեր կամաւորական գունդերը, դրաւելով Ոստանն ու Աղթամարը, շարժւում էին լճի հարաւային ափերով, Ախլաթի ուղղութեամբ: Առջեւը Թուխ գետն էր, որի միւս կողմից՝ Ուրթափի բարձունքներից թշնամին անխնայ կրակ էր մաղում մեր առաջապահների եւ հետախոյզ ձիաւորների վրայ:

Մի պահ, կարծես երկու կողմից պայմանաւորուած դինադադարի վրայ, Հայկական Զօկատի ընդհանուր հրամանատար Խանասորի Վարդանի վրանի առջեւ հաւաքուեցին գնդերի հրամանատարներն ու վաշտապետները խորհրդակցութեան: Այստեղ էին վարպետիկ Անդրանիկը՝ սուր ու դոռոզ աչքերով: Եւ խոհուն Քեռին իր անբաժան մտրակով: Եւ «Աչխարհի տէր Համազասպը պանծալի»: Ու նաեւ բոլորի սիրելի Դրօն՝ անդիկի պէս յարաշարժ ու մշտազուարթ: Եւ Աւօն մռայլ: Եւ Խէչօն, գաշնակցական հայդուկը՝ բարդի հասակով: Եւ բազում ուրիշ քաջամարտիկ հերոսներ Հայկազեան գնդից...

Ներկայ էինք եւ մենք, կարգադրիչ Մարմնի անդամներ Նիկոլ Աղբալեանը եւ ձեր խոնարհ ծառան, այսպէս ասած՝ թիկունքային հերոսներս:

Խորհրդակցութեան նիւթը մեր կամաւորական գնդերին վերապահուած դերն էր գալիք յառաջխաղացման ընթացքին դէպի Տաթոն:

ARAM webaram.com

Վանը պրաւելուց յետոյ, ռուսական բանակը, զօր. Տրուխինի հրամանատարութեան տակ, շարժւում էր արեւմուտքի ուղղութեամբ, Վանի լճի հարաւային եզերքներով՝ առաջապահ ունենալով մեր կամաւորական գնդերը: Հիւսիսից, Սիփանի հարաւային փէշերով դէպի Ախլաթ էր շարժւում զօր. Շարիսանթիէի այրուձին: Ռազմական խնդիրն էր՝ օղակել լիճը վերից ու վարից եւ չեչտակի հարուածով եւս չպրտել թշնամու ուժերը:

Հայ կամաւորները ունէին եւ յատուկ նպատակ — օր առաջ օգնութեան փութալ Տարօնի հայութեան: Լուրեր էին հասնում, թէ Տարօնի հայ ժողովուրդը դեռ ողջ էր: Կովկասի հայութիւնը արտատրոփ հետեւում էր ռազմաճակատի եւ լեւէնների եւ վաստրապականի ազատագրութիւնից յետոյ անհամբեր սպասում էր նաեւ Տարօնի հայութեան փրկութեան: Կամաւորական գնդերի հրամանատարական կազմի խորհրդակցութիւնը նուիրուած էր այս հարցին. ինչ գնով եւ լինի՝ փրկել Տարօնը:



ՀԵՂԻՆԷ ՄԵՍՊԱՑԵԱՆ

Ժողովականները բոլորը տոգորուած էին միեւնոյն զգացումներով ու միեւնոյն ոգով. ամէնքը հաւատում էին, թէ Տարօնի աքանչելի հայութեան փրկութեան ժամը մօտալուտ է: Ամէնքը պատրաստակամ էին անվերապահ կերպով կրակի մէջ նետուելու, մանաւանդ որ իրենց հետ ունէին զօրավար Տրուխինի եւ ռուս զօրամասերի անվերապահ համակրանքն ու քաջալերութիւնը:

Բուն խորհրդակցութիւնը երկար չտեւեց: Այնուհետեւ սկսուեց ուրախ ժամանցը, որին պիտի յաջորդէր ընկերական ընթրիքը: Ընթրիքի պատրաստութեան հոգսը իր վրայ էր առել Դրօն՝ կամաւորական գնդերի եւ ռուս զօրամասերի չփացած այս գաւակը:

ARAM webaram.com

Արեւը դեռ չէր մօտեցել հորիզոնին, երբ ժողովը վերջացաւ եւ Դաշնակցական Ակչօն դուրս եկաւ.

— Տղե՛րք, ով որ քալ է՝ ինձ հետ թող պայ, երթանք լիճ, լողանալու:

Առանձին քալուքեան պէտք չկար: Լիճը վարից անվանելի ուժով իրեն էր քաշում մարդուն: Կարելի չէր չարձականդել Ակչոյի հրաւէրին:

Ես ամէնից ուշ մտայ ջուրը: Մօտ տասը–տասներկու քալեր, բոլորովին մերկ, Ակչոյի առաջնորդութեամբ, արդէն ջրի մէջ էին եւ իրար հրմշտկում, ջրախաղ էին անում՝ աղմուկ–ժխոր տարածելով չուրջը:

Եւ ա՛յնքան համայիլ էր բնութիւնը: Ա՛յնքան դեղեցիկ, հեքիաթային լիճ էր կարծես: Առջեւը ցից, կարծես մի քանի կանգուն հեռու, ճախոնական բնանկար լինէր, բարձրանում էր ձիւնապատ Սիփանը: Դէպի ձախ, Ալաթի ծոցից վեր, Նեմրութ–Գրգուռի դորշ տեսարանը: Անդին, դէպի հիւսիս–արեւելք, հեռու, Բերկրիի ուղղութեամբ, անծայրածիր տարածութիւնը կապտաւուն ջրերի: Եւ հարաւից՝ լեռների չղթաներ. մինչեւ Եղերով, մինչեւ Հայոց Ձոր, մինչեւ բարձրահայեաց Վարագը ջրառատ: Եւ բոլորի վերեւ՝ հրաշք երկինքը, վերջալոյսի հազար ու մէկ խաղերով...

Եթէ դուք չէք տեսել հայոց վերջալոյսը Վանի լճի վերեւ, Ակնձորկիների եղերքին, նշանակում է ոչինչ չէք տեսել այս անցաւոր աշխարհում: Եւ ես իմ տկար գրչով անզօր եմ մօտաւոր պատկերն իսկ փոխանցելու ձեզ...

Ջուրը հանդարտ էր, տա՛ք ու հաճելի: Մարդ չէր ուզում դուրս գալ ցամաք: Ակռից ու լողալուց յոգնած՝ նստել էինք ջրում, խճճուտ ափի մօտ: Ու Ակչօն դուարթ կատակներով բացեց երգերի շարքը.—

Բաց խուրջինը, տուր դանակը,
Խնձոր կտրեմ տամ եարիս
Տիլիմ, տիլիմ, տիլիմ, տիլիմ...

Ես յաճախ չէի հանդիպել Ակչոյին եւ ամէն անգամ տեսել էի նրան խոհուն ու լուրջ: Մի այն քէֆի մէջ նա բացւում էր եւ երգ ու կատակով վարակում ամէնքին: Այս անգամ նրա դուարթութիւնը անսահման էր: Եւ լռեց միայն երբ սկիզբը մեղմ, ապա ուժեղ հնչեց Աղբալեանի համայիլ եղանակը.—

Դուն էն գլխէն իմաստուն իս...

ARAM webaram.com

Արեւը արդէն ծածկուել էր լեռների հետեւը, երբ մենք վերադարձանք Վարդանի վրանը: Սեղանը պատրաստ էր՝ բաց երկնքի տակ, աստղերի լոյսով: Այստեղ էլ երգ ու չէնուքիւն: Իմ ուշադրութիւնը, սակայն, Ախչոյի վրայ էր: Մինչ ամէնքը ուրախանում էին՝ կեր ու խումով տարուած, նա անխօս նստած էր ծալապատիկ, գլուխը յենած բազուկին եւ կարծես այս աշխարհում չէր: Ընդհանուրի ուշադրութեան առարկան Աղբալեանն էր իր սրախօսութիւններով եւ Սայաթ Նովայի երգերով, որոնց աննման վարպետն էր նա: Ախչօն լուռ էր, բացակայ լինէր կարծես:

Ես դիտէի՝ նա «հետաքրքրուած» էր իմ հայրենակից Օր. Հեղինէ Մեծպայեանով: Այս վերջինն էլ անտարբեր չէր դէպի նա: Ինձ ծանօթ էր նրանց վէպը: Հեղինէն, այդ սքանչելի աղջիկը, տիպար վարժուհի եւ տիպար դաշնակցական, պատմել էր ինձ իր սրտի մրմունների մասին: Ախչոյի եւ Հեղինէի ռոմանսը ինձ յիշեցնում էր Կարոյի եւ Մարոյի սիրավէպը:

Արդեօք Հեղինէի չո՞ւրջ էին դառնում Ախչոյի խոհերը, թէ սեւ նախազգացումները յօշոտում էին նրա սիրտը: Լճի ջրերում ա՛յնքան կենսուրախ ու խանդավառ՝ նա այժմ նստել էր լուռ, անտարբեր եւ անհաղորդ չուրջի աղմուկին, ինքը իր մէջ, ինքը իրեն համար, կարծես կախարդուած մի սփինքս...

*
**

Ցաջորդ օր, վաղ առաւօտեան, վերսկսուեցին կռիւները: Թագմաճակատը ալեկոծուեց: Հրացան, գնդացիր, թնդանօթ, երկու կողմից, որոտով լցրին լեռներն ու ձորերը: Օդը յղի էր նոր դէպքերով:

Նոյն օրը Վարդանի անունով վանից հասաւ մի հեռագիր: Արամը խնդրում էր, որ Աղբալեանն ու ես անմիջապէս վերադառնայինք Վան: Մեզ միացաւ նաեւ Ա.-Դօն, որ եկել էր Վասպուրական տեղեկութիւններ հաւաքելու բնակչութեան ազգագրական կազմի եւ տնտեսական վիճակի ու պատերազմի ընթացքին ունեցած կորուստների մասին:

Վանում Արամը այտնեց, թէ ես չտապով պէտք է մեկնեմ Երեւան՝ Ռոստոմի հրահանգով: Եւ գուժեց նաեւ ...Ախչոյի մահը: Մեր մեկնումից յետոյ, սկսուել էր ընդհանուր յարձակումը: Ախչօն, ձիաւորների գլուխը, գրոհ էր տուել Թահվա դաշտով, որտեղից բանակը պիտի ներխուժէր Մշոյ դաշտ: Մի չարագէտ գնդակ վերջ էր

ARAM webaram.com

տուել նրա կեանքին: Մարմինը բերում էին Վան՝ թաղելու համար Իշխանի կողքին... Արամը չփոթ խօսքերով հաղորդում էր սարսափելի լուրը եւ լալիս ...

Ես արցունք չունէի, — դիտէ՞ք ինչ ասել է անարցունք լացը. իմ աչքերիս առջեւ կեցած էր նոճի հասակով Ֆէչօն, ջրի մէջ, խլեակորկինի եզերքին, ծաւի աչքերը վերջալոյսին յառած, գուարթ երգը շրթունքներին.—

Բա՛ց խուրջինը, տո՛ւր դանակը,
Խնձոր կտրեմ տամ եարիս
Տիլիմ, տիլիմ, տիլիմ, տիլիմ...

Եւ իմ աչքերի առջեւ պատկերանում էր Հեղինէ Մեծպայեանի անուշիկ հայեացքը, այնպիսի՛ ապահուիթեամբ ուղղուած Ֆէչոյի դէմքին, երբ սա քէֆի ժամանակ, աջ ձեռքը դրած թուշին, դիլ ձայնով երգում էր գուարթ մեղեդիներ ու բացագանչում.

— Հէ՛յ, խաթաքեարներ, ձէն տուէք...

Վերջին հանդիպումին, մի հարսանիքի միջոցին, ես տեսայ նրանց միասին պարելիս: Երկսի աչքերից երջանկութիւն էր ծորում: Իսկ հիմա...

Ֆէչոյի մարմինը բերում էին Վան, թաղելու Իշխանի կողքին...

Արամին յայտնեցի, թէ մեկնումս կը յետաձգեմ մէկ–երկու օրով, որպէսզի ներկայ լինեմ Ֆէչոյի յուղարկաւորութեան:

***

Ցուլիսեան արեւոտ, տաք օր էր. այնպէ՛ս դեղեցիկ էր Այգեստանը Վարագի ստորոտին՝ ծաղիկ ու ծառաստանով պարուրուած: Մահից ազատուած վանեցին կենսուրախ՝ եռուզեռի մէջ էր: Փողոցները լիքն էին աշխոյժ բազմութեամբ: Մանաւանդ անհոգ եւ աղմկոտ երեխաներով: Ծանօթ–անծանօթ իրար էր ողջունում բարեկամական ուրախութեամբ: Վանը ազատ էր, Վանը, մահուամբ մահը կոխելով, վերածնւում էր արագ, — հայկական նահանգ Վանը՝ կորիզը նորածին հայկական պետականութեան...

Մենք գնում էինք թաղելու Ֆէչոյին...

Արամը պատմում էր — քանիերորդ անգամ, անպաճոյճ ու չփոթ խօսքերով — թէ ինչպէս Վան հասան հայ կամաւորները — հայկական այրուձին Դաշնակցական Ֆէչոյի դլխաւորութեամբ: Թէ ինչպէս փախուստի դիմեցին ճէվտէթի վոհմակները: Թէ ինչպէս ազատուեց Վանը — խելացեղ ոգեւորութիւնը ժողովուրդի, երբ մուտք

ARAM webaram.com

էին զործում հայ մարտիկները Ռէչոյի առաջնորդութեամբ:

Արեւը մօտենում էր վենիտին՝ սուր ճառագայթներով ողողելով արար աշխարհ: Ողողելու նաեւ վերեզմաննոցը, ուր խոնուած էր անհաշիւ բազմութիւն:

Նոր փորուած փոսի եզերքին դրուած էր պարզ տախտակէ մեծ դագաղ: Ռէչոն էր:

Շուրջը՝ հոգեւորականներ, պզեստաւորուած, նահանգապետ Արամը իր պաշտօնակիցներով, ընկերներ, զինուորներ հրացանակիր, եւ անհաշիւ բազմութիւն՝ այր եւ կին: Ազատուածները եկել էին յարգանքի տուրք տալու իրենց ազատարարին...

Օդի մէջ հնչում են ազօթքի լալկան մեղեդիները խունկի քուլաների հետ միախառնուած: «Ի վերին Երուսաղէմ»ը արցունք է քամում բոլորի աչքերից: Լալիս են ամէնքը — մեծ թէ փոքր, այր թէ կին — ամէնքը:

Եւ ապա՝ վրէժի կոչեր: Բուռն դամբանականներ: Իշխանի նահատակութիւնն է յիշատակւում: Հնչում է Իշխանի սիրած երգը.

Դու էղ վերկացար վաղ արշալոյսին...

Ցիշւում է ննջեցեալ թշնամու դաւադրութիւնը վռամեանի դէմ: Ու վրէ՛ժ, անողոք կռիւ ու վրէժ...

Յաւէրժ յիշատակ հերոս նահատակներին... Որոտում են զինուորական վաշտի հրացանները: Եւ պարզ տախտակէ դագաղը յամրօրէն իջնում է փոսը, որ արագ լցւում է թարմ հողով: Իշխանի գերեզմանի կողքին կազմւում է մի նոր շիրիմ.

— Վանի ազատութեան հերոս Դաշնակցական Ռէչոյի շիրիմը...

Յաջորդ օրը ես մեկնեցի Վանից:

Բերկրիում հանդիպեցի Ալճաւազից փախչող հայերին, որոնք տարօրինակ բաներ էին պատմում: Իբր թէ Թուրքերը ընդհանուր յարձակման էին անցել, իբր թէ ռուս բանակը նահանջում էր անկարգ իբր թէ...

Իսկ միւս կողմից՝ նորանոր ուղեւորներ էին երեւում, որոնք կովկասից գալիս էին Վան: Բայազիտ Աղայում տեսայ Մոսկուայի կոմիտէի խումբը, որ Ցովսէփ Թադէոսեանի գլխաւորութեամբ շտապում էր դէպի Վան, բժշկական եւ խնամատարական օգնութիւն հասցնելու ժողովրդին:

Առում էին՝ Օր. Հեղինէ Մեծպայեանն էլ այդ խմբի մէջ էր: Կամ ուրի՞շ խմբի հետ նոյնպէս շտապում էր Վան: Արդէն լուր առե՞լ էր արդեօք Ռէչոյի մահուան մասին: Չգիտեմ:

ARAM webaram.com

Գիտեմ միայն, որ Հեղինէն մինչեւ մահ հաւատարիմ մնաց իր սիրելի Ռէչոյին եւ նրա իդէալներին:

Երբ Հայաստանը ընկաւ բոլշեւիկեան լծի տակ եւ Դաշնակցութեան ղեկավարութիւնը տարագրուեց օտար երկիրներ, Հեղինէն իրեն նման ուրիշ դաշնակցականների հետ, անվախ բռնեց հեռացածների տեղը՝ անդաւաճան հաւատարմութեամբ ծառայելով Ռէչոյի պաշտած գաղափարներին: Եւ եղաւ բոլշեւիկեան մողոքի առաջին զոհերից մէկը: Բանտարկուեց ու աքսորուեց Ռուսաստանի խորքերը: Ու այլեւս Հայաստան չվերադարձաւ: Ո՞վ գիտէ՝ ո՛ւր է գտնւում նրա հողակոյտը:

Ո՞վ գիտէ, թէ ինչ եղաւ եւ Ռէչոյի հողակոյտը, Վանի գերեզմաննոցում, Իշխանի կողքին: Հայկական Վանը այլեւս գոյութիւն չունի: Վանի գերեզմաննոցը մնացե՞լ է: Մնացե՞լ է արդեօք եւ Վանի ազատասէր Դաշնակցական Ռէչոյի գերեզմանը Իշխանի կողքին...

1955, Ապրիլ
Գահիրէ

ARAM webaram.com

ՓՐՈՖԸ

Մի օր էլ մեր հորիզոնի վրայ երեւաց մի տարօրինակ մարդ:

Նստած էի իմ աշխատանքի սեղանի դլուխը, «Հայրենիք»ի խմբագրատան մէջ, երբ ներս մտաւ, դլխի սեւ մազերով, սեւ մօրուքով, սեւ դէմքով, պսպղուն սեւ աչքերով, սեւ հագնուած մի պարոն: Կանդ առաւ սենեակի մէջտեղը, կարծես մէկին որոնում էր:

— Ի՞նչ կը հրամայէք, հարցրի ես:

— Հրամա՞ն, զարմացաւ նա. անօթի մարդը կրնա՞յ հրամայել:

— Որո՞ւ հետ պատիւ ունիմ խօսելու:

Ես յայտնեցի իմ անունը:

— Ա՛ա, իմ փնտռածս էք: Պատիւ ունիմ ներկայացնելու իմ անձը. ես փրոֆ. Գալֆայեանն եմ:

— Համեցէք, աթոռ առէք, փրոֆէսոր, հրաւիրեցի ես:

— Ի՞նչ փրոֆէսոր, ախբար, ես անօթի երգիչ մըն եմ... եկած եմ Փարիզէն: Կը ճանչնամ Արշակ Զօպանեանը եւ Սիամանթօն: Նիւ Եորք մնացի, դործ փնտռեցի, չդտայ: Երաժիշտ մարդը այս նզովեալ երկրին մէջ դործ կրնա՞յ դտնել... Երբ Եւրոպայէն կը մեկնէի, Սիամանթօն ըսաւ. «Եթէ անօթի մնաս, դնա «Հայրենիք»ի խմբագրատունը. մեր տղաքը քեզի հաց կու տան: Իշտէ եկեր եմ...»

— Բարով էք եկել, ընդմիջեցի ես տեսնելով, որ մարդը տրամադիր է չատախօսելու, ինչո՞վ կարող եմ օգտակար ըլլալ ձեզի:

— Կարծեմ ըսի, զարմացաւ մարդը. եւ ասաց, բնականաբար, դործ, հաւատ, յոյս, սէրի պէս բան մը...

— Հիմա ո՞ւր տեղաւորուած էք, հարցրի ես:

— Հիմա հոս տեղաւորուած եմ, — կացարանս էլ հոս է: Փա-

ARAM webaram.com

հանայի առջեւի պէս խոստովանիմ. դրպանս ծակ է, ստամոքս դատարկ է — օր մըն է բերանս լոխում չեմ դրած...

— Ես ալ լոխում չեմ կերած, խնդացի ես:

— Չխկում պիտի ըսէի, լոխում դուրս եկաւ, սրբագրեց նա:

Սովորական մարդ չէր երեւում: Հետաքրքրուեցի:

— Գարեգին, կանչեցի ես:

Կողքի դռնից ծիծաղելով ներս մտաւ Գարեգին Տէր Սահակեանը, որ դրաչարի օգնական էր մեր տպարանում չաբաթական երեք ու կէս տոլարով:

— Գարեգին, ասացի ես, տար այս պարոնին Գոգոյի ճաշարանը, թող լաւ մը կշտացնէ: Վերջը ետ բեր:

Այո, հետաքրքրական մարդ էր եւ անհրաժեշտ էր մի բան անել, բայց ի՞նչ կարող էի անել իմ 8 տոլար չաբաթականով: Ցիշեցի Տուրգինեւի արձակ բանաստեղծութիւնը.

— Առնենք որբուկին մեր տունը, ասում է ամուսինը կնոջ:

— Բայց մենք նոյն իսկ ապղ դնելու դրամ չունենք, ապուրը ապելու, պատասխանում է կինը:

— Էհ, ի՞նչ կայ որ, մենք էլ ապուրը առանց ապի կ'ուտենք, վճռում է ամուսինը:

Էհ, ի՞նչ կայ որ, ես էլ իմ սենեակում երկրորդ մահճակալ կը դնեմ, մտքումս որոշեցի:

Ես այն տարի ապրում էի Զլսխում, բաւական մեծ, լուսաւոր, բայց պղտ սենեակ ունէի: Ամսական մի տոլար աւելացնելով փրոֆին եւս մօտս առի: Փրոֆ. Գալֆայեանը ինձ համար միշտ մնաց փրոֆէսոր, թէեւ ոչինչ չկար մէջը փրոֆէսորական:

Ուրախ եւ անհոգ մարդ էր: Գիշերները ուշ էր քնում. մտածում էր իր յօրինելիք երաժշտական դլուխ գործոցների մասին: Գանգատւում էր.

— Մեղք որ սենեակի մէջ դաշնակ չկայ, ինչեր պիտի նուագէի քեզ...

Մտաները արագ սահեցնում էր սեղանի վրայ, իբր թէ դաշնակ էր նուագում:

Արդէն առանց դաշնակի էլ դլուխս դդում էր դառնում նրա չատախօսութիւնից. ի՞նչ պիտի լինէր վիճակս, եթէ դաշնակ էլ լինէր սենեակում:

Բայց չուտով դաշնակ էլ դտաւ: Տանտիկինը 8 – 9 տարեկան մի աղջիկ ունէր, որի համար դաշնակ դնեց, անչուշտ թաքուն հաշուով: Շուտով այդ հաշիւը պարզուեց: Մի չաբաթ չանցած փրոֆը

ARAM webaram.com

դարձաւ աղջկայ դաշնակի դասատու։ Իրրեւ վարձատրութիւն տանտիկինը հրաժարուեց մի տոլար յաւելեալ վճարից սենեակի համար եւ երբեմն առաւօտները ուսուցչին տալիս էր մի բաժակ սուրճ եւ մի կտոր թոստ։ Բացի այդ, սկսեց նրան կոչել Հեռ Փրոֆէսոր, թէեւ տանտիկինը դերմանուհի չէր։

Առաւօտները Փրոֆէսորը ուշ էր վեր կենում անկողնից։ Կէսօրին դալիս էր խմբագրատուն եւ միասին ճաշում էինք Գոգոյի հռչակաւոր ճաշարանում։ Սիրահար էր ֆասուլիա փլաքիի։ Այդ բաժինը Գոգոն տալիս էր նրան ձրի։ Երկուսը չուտով խաս բարեկամներ դարձան։

Ճաշից յետոյ Փրոֆը գնում էր Բոստոնի նշանաւոր մատենադարանը երաժշտական բաժնի մէջ աշխատելու, բայց ես կասկածում էի. աշխատող մարդու երեւոյթ չունէր։

Այլեւս գործ փնտռելու մասին չէր մտածում։ Փորձը ցոյց տուեց, որ իմ 8 տոլար շաբաթականը բաւական էր երկուսիս համար։ Նա հրաշքի էր սպասում. մի յիմար միլիոնատէր, իր անունը անմահացնելու համար, կարող էր նրան խոշոր գումար տալ երաժշտական մի գլուխ – գործոց յօրինելու համար։ Կամ աւելի հաւանական էր մի անխելք միլիոնատիրուհի կարող էր սիրահարուել եւ ամուսնանալ հետը, այն ժամանակ ես էլ «Հայրենիք»ը օրաթերթ կը դարձնէի։

— Ցիմար, ծիծաղում էի վրան, հայելիի մէջ նայո՞ւմ ես. այդ սուռաթիդ վրայ ո՞վ պիտի սիրահարուի։ Գոնէ մօրուքդ վեր առ։

— Կ'ուզես, որ ամերիկացի կապի՞կ դառնամ, առարկում էր նա. միլիոնատէր ամերիկուհիները խենթ են. օրիժինալ բաներ կը սիրեն։

Երեկոյեան նորից այցելում էինք Գոգոյի հաստատութիւնը կամ թեթեւ բան էինք ուտում պատահած լընչռումում եւ վերադառնում էինք Զըսլի։

Փրոֆի հետ կարելի չէր ձանձրանալ. նա խօսում էր, ես լսում էի։ Ամէն բան դիտէր եւ ամէն բանի մասին կարող էր հաճելի խօսել, թէեւ խօսածի մէջ շատ կուռ չկար։

Ամերիկայի մեր գործիչ Սնարի պնդումին վրայ մեր Շրջանային ժողովը գործիչի, քարտուղարի եւ խմբագրի ռոճիկների վրայ յաւելում էր արել. 8 տոլար շաբաթականը բարձրացել էր տասնի։ Այդ լուրը առանձնապէս ուրախացրեց Փրոֆին։ Նա երբեմն յիշում էր խղճի խայթի մասին. այժմ կարող էր խղճի խայթ չզգալ, որ ծանրացել էր իմ վրայ։

ARAM webaram.com

Մի կէսօրից առաջ Փրոֆը խմբագրատուն եկաւ ինձ անծանօթ մէկի ընկերակցութեամբ: Այծի չէկ մօրուքով, կապուտաչեայ տըժդոյն, անօթի դէմքով մի երիտասարդ էր: Հագուստը վաղուց արդուկ եւ կօշիկը նորկ չէին տեսել:

— Քեզի հայրենակից մը բերի, ասաց Փրոֆը վարանումով:

Երիտասարդը ինձ հայրենակից չէր, բուլղար էր: Անունը, եթէ չեմ սխալւում, Փաւլով էր, Թերեւս Վոլքով — լաւ չեմ յիշում: Ուսել էր Օդեսայում նկարչութիւն. համեստ, ամօթխած, 22 - 23 տարեկան տղայի տպաւորութիւն էր թողնում:

Ճաշի ժամանակ էր, տարի Գոգոյի նոյեան տապանը, բոլոր անկուտինների փրկութեան կայանը: Բուլղար է, ասացի, ըստ այնմ կերակուր որոշէ: Անօթի է, քանակը ի նկատի ունեցիր:

— Այս ոչխարները որտեղէ՞ն կը գտնես, ծիծաղեց Գոգօն:

Ճաշի վրայ երիտասարդը պատմեց իր ողիսականը: Ռուսաստանից անցել էր Փարիզ իր նկարչութիւնը զարգացնելու նպատակով: Մի քանի տարի չարչարուել էր անօթի: Փարիզում բարեկամացել էր իրեն պէս անօթի Փրոֆ. Գալֆայեանի հետ: Վերջինս ներշնչել էր նրան Ամերիկա գալու միտքը: Ամերիկայի մէջ յիմար միլիոնատէրներ կան, ասել էր նա, որոնք քո մէկ նկարի համար հարիւր հազարներ կը վճարեն: Եկել էր, նկարներ էր բերել հետը: Մի քանի ամիս մնացել էր Նիւ Եորքում, ուր իր նկարների համար տասը փարա առաջարկող չէր գտնուել: Մի քանի ամիս էր՝ Ամերիկայի Աբէնք՝ Բոստոնում էր, անգործ եւ անտէր: Մի քանի չարաթ է սենեակի վարձք չէր վճարել: Տանտէրը երէկ փողոց էր նետել իրեն: Գիշերը անցկացրել էր Սաուր Ստեշընում:

Հաճելի անուշեղէն Գոգոյի համեղ ճաշի վրայ:

— Այժմ ի՞նչ էք մտածում անել, հարցրի ես:

— Չգիտեմ, եղաւ պատասխանը:

Փրոֆ. Գալֆայեանն էլ չգիտէր: Այսինքն գիտէր — չէ՞ որ ես այժմ 10 տոլար չարաթականն էի ստանում — գիտէր, բայց չէր համարձակւում ասելու:

Կենճռոտ հարցի լուծումը ընկնում էր իմ վրայ:

— Այս գիշեր կը տանենք մեզ մօտ, կը խօսենք մխիթ Սեսիլի հետ: կաթոլիկ է, սիրտը փխրուն է, մի բան կ'անենք:

Մխիթ Սեսիլը, լսելով բուլղարի պատմութիւնը, ախ ու վախ քաշեց: Հայեացքը ձգեց սենեակի վրայ եւ յայտարարեց:

— Այս մահճակալը մի կողմ կը քաշենք, այս սեղանը միւս

ARAM webaram.com

կողմը կը դնենք: Այստեղ անկողինի տեղ կը բացուի պարոնի համար: Երկու տոլարի փոխարէն կը վճարէք երեք տոլար:

— Ես ալ այդպէս կը մտածէի, մխիթարեց ինձ Փրոֆը, բան մը չէ: Մատռնայի նկարը կը նկարէ, ան մէկ տոլարն ալ կը պեղչէ:

Երբ մեր բանակցութեան արդիւնքը իմացաւ, բուլղարը քիչ մնաց արտասուէր ուրախութենից:

Այնուհետեւ երեքով յաճախում էինք Գոզոյի ճաշարանը:

— Եկան մեր ոչխարները, ուրախութեամբ տեղեաւորում էր մեզ Գոզօն եւ իր կողմից էլ թերթանուշ հրամցնում մեզ:

Մի ամսից աւելի էլ երեքով ապրեցինք, երկու արուեստապէտներ եւ մի անարուեստ խմբագիր: Փրոֆի դուշակութիւնը արդարացաւ: Մի շաբաթ վերջը, երբ երեկոյեան տուն վերադարձանք, իմ մահճակալի վերեւ, պատին տեսանք սիրուն շրջանակով մի նկար.— մի պեղեցիկ մատուռ. մուտքի առջեւը, վիզը ճուկ, կանգնած են Փրոֆը եւ Փաւլովը — մուտքի չէմքին, շուրջառը վրաս, ես օրհնում եմ նրանց. տակը գրուած՝ Սուրբ Սեսիլի մատուռը:

Միսիս Սեսիլը շատ հաւանեց: Ինդրեց իրեն նուիրել նկարը, փոխարէնը հրաժարուեց սենեակի վճարի մէկ տոլար յաւելումից:

— Բախտ կը բերէ քեզ, ասաց տանտիկինը:

Եւ իսկապէս, ես ռուսերէն թերթում կարդացի մի յայտարարութիւն. ինչ որ մի քաղաքում օրթոտոքս եկեղեցի էին շինում: Փնտռում էին ռուսական ոճին ծանօթ նկարիչ, նկարազարդելու համար նորաշէն եկեղեցին:

Փաւլովը անմիջապէս նամակով իր ծառայութիւնը առաջարկեց: Մի քանի օրից ստացուեց հրաւէր եւ հրաւէրի հետ մի չէք ճանապարհածախսի համար: Փաւլովը վերադարձաւ ուրախ. ստացել էր ճաքը, եւ յաջորդ օրն իսկ մեկնեց գործի:

— Բախտի բան է, փիլիսոփայեց Փրոֆը, որ համբերութեամբ սպասում էր երաժշտասէր միլիոնատէրի այցելութեան:

Մի ամսուայ բացակայութենից յետոյ, Փաւլովը վերադարձաւ յաղթական. բոլորովին նոր մարդ էր դարձել: Այլեւս մեր հետ «դու»ով էր խօսում:

— Հասկանո՞ւմ ես, ասաց նա Փրոֆին, անպիտանները ինձ շահագործեցին, երկու հազար արժող գործի համար վճարեցին ութ հարիւր տոլար, այն էլ երկար սակարկելուց յետոյ:

Բուլղարը, մեզանից գաղտնի, օրը օրին արձանագրել էր, թէ ինչ էի ծախսել ես իր վրայ. աւելիով վերադարձրեց ամբողջ դրամը

ARAM webaram.com

եւ վճարեց նաեւ Փրոֆի ծախքերը: Մի քանի շաբաթ էլ մնաց մեզ հետ. այդ օրերի ամբողջ ծախքը ինքը վճարեց:

Շուտով նա մի նոր ճաք ստացաւ Շիքագոյի կողմերը: Թերթերում գովեստով գրել էին նրա արուեստի մասին, եւ նա այլեւս գործի նեղութիւն չկրեց:

— Բախտ բան է, ասաց Փրոֆը:

Փաւլովը արցունքով բաժանուեց մեզանից:

— Երբեք, երբեք չպիտի մոռանամ ձեզ, ասաց նա յուզուած սեղմելով ձեռքս:

*
**

Անցան մի քանի տասնեակ տարիներ

Այնքան փոթորիկներ ապրեցանք: Այնքան սիրելի դէմքեր եկան ու գնացին:

Փրոֆ. Գալֆայեանն էլ, բուլղար նկարիչն էլ անհետացան իմ մտքի հորիզոնից:

1930ին, երկրորդ անգամ այցելելով Ամերիկա, դուր փնտռեցի բուլղար բարեկամիս: Չգտայ: Ո՞ղջ էր, մեռա՞ծ էր — չիմացայ:

Փրոֆ. Գալֆայեանը փոխադրուել էր Քալիֆորնիա, Ֆրէզնօ հայաքաղաքը: Քալիֆորնիա երթալու առիթ չունեցայ: Լսեցի միայն իր յօրինած երգերը, որոնց մէջ հայաստանցիներիս ականջին անսովոր չեչտ կար: Բոստոնում Փրոֆը յափշտակուած էր վագներով, երազում էր դերման մեծ երաժշտագէտի հանճարին արժանի մի գործ յօրինել: Վագներութիւն էր բուրում եւ նրա երգերից, որոնք դեռ Ամերիկայի սահմաններից դուրս ծանօթ չէին:

Ճակատագիրը ինձ երրորդ անգամ նետեց Կոլոմպոսի աշխարհը, Երկրորդ Համաշխարհային Պատերազմի նախօրեակին, եւ 1940ին ես այցելեցի Ֆրէզնօ:

Ասացին, որ Փրոֆը դպրապետ էր մայր եկեղեցիում:

Չեմ յիշում, ուր եւ ինչպէս եղաւ մեր հանդիպումը: Փրոֆը այնքան փոխուած էր, որ ես չճանաչեցի մէկէն: Ծերացել էր: Նախկին չքեղ սեւ մազերից ոչինչ չէր մնացել: Պէտք էր ուշադրութեամբ դիտել համոզուելու համար, որ տեսածդ նախկին խրոխտ ու չէն Փրոֆն էր: Միայն չէր բարեփոխուել, աւելի եւս զարգացել էր ըզգայնութիւնը: Դարձել էր յոռետես, ամէնքից եւ ամէն բանից դառնացած ու դժգոհ: Աչ ու ձախ՝ բոլորին քննադատում ու հայհոյում էր անզուսպ:

ARAM webaram.com

— Փրոֆ, հարցրի ես, ի՞նչ եղան քո յիմար միլիոնատէրն ու տիրուհիները:

Չհասկցաւ մէկէն: Ցիշեցի Բոստոնի իր արամադրութիւնը:

— Միլիոնատէրերը չէին, յիմարը ես էի, պատասխանեց նա կծու դառնութեամբ: Եթէ ես ցնորքներու ետեւէ չիյնայի, այժմ, թերեւս, ես ալ միլիոնատէր ըլլայի:

— Ինչի՞ պէտք են այդ միլիոնները:

— Որպէսզի այս աւանակներու ձեռքէն ազատէի:

Աւանակները Ֆրէզնոյի ազաներն էին Փրոֆի աչքին:

Ցիշեցինք մեր հին օրերը, Զըլսիի մեր ապարանքը, մխիթ Սեսիլին, բուլդար նկարիչին. նա էլ բուլդարի մասին ոչինչ չդիտէր:

— Ո՞ղջ է, թէ մեռած, ասաց, չեմ դիտեր: Կրնայ ողջ ըլլալ, բայց հաւանական է, որ մեռած է:

— Ես ալ այդպէս կը կարծեմ, եթէ մեռած չէ, ողջ է, եթէ ողջ չէ, մեռած է....

Ուշադրութեամբ աչքերիս նայեց. լո՞ւրջ էր խօսածս, թէ ձեռք էի առնում իրեն: Ծայր աստիճանի կասկածամիտ էր դարձել:

Ցաճախ հանդիպում էի Փրոֆի հետ, ակղբի օրերին: Վերջը, կարծես, պաղեց ինձանից: Երեւի ես էլ անզգոյշ եղայ հետը:

Հանդիպում էինք, ընդհանրապէս, բարեկամների տունը կամ հռչակաւոր «Հարթա» ճաշարանում՝ Ֆրէզնոյի անկուտիների, անաչխատ ծոյլերի և բամբասաէրների ժամադրավայրում, ուր 15 սենթով կարելի էր մի գաւաթ սերով սուրճ եւ մի համեղ էփըլ փայ — խնձորակարկանդակ — ուտենալ: Փրոֆը յամառ կերպով թոյլ չէր տալիս, որ ես վճարեմ:

Միշտ իր խօսքի առարկան նոյնն էր. կեանքում ձախողած մարդու դժգոհութիւններ աչքարհիծ:

Մարդիկ ամէնքը վատ էին, յանցաւոր՝ որ չէին հասկացել, չէին գնահատել իր հանճարը, անտեսել էին իրեն: Մի օր ես նրան հարցրի.

— Փրոֆ., ո՞վ է քո կարծիքով ամենամեծ հայ երաժշտագէտը:

Նա զարմանքով նայեց ինձ եւ անմիջապէս պատասխանեց.

— Ես, Փրոֆ. Գալֆայեանը.

Այս պատասխանի մէջ էր ամբողջ Փրոֆը: Իրենից զատ նա մեծութիւն չէր ճանաչում: Շատ – շատ իր առաջնութիւնը կարող էր դիջել Կոմիտասին, այն էլ մի չարք «բայց»երով ու «եթէ»ներով:

Ես մի քանի անգամ ցանկութիւն յայտնեցի այցելելու նրա

ARAM webaram.com

սենեակը: Մի օր, վերջապէս, որամադրութիւն ցոյց տուեց ընդունելու: Ես սպասում էի, որ պիտի տեսնեմ Արշակ Չոպանեանի սենեակի նման մի բան:

Թէեւ գաղափարական հակադիր բեւեռների վրայ, «Անահիտ»ի խմբագիրի հետ մենք, կարելի է ասել, բարեկամ էինք, եւ մի քանի անգամ այցելել եմ նրա բնակարանը: Երեւակայեցէք ոչ մեծ, ոչ փոքր մի սենեակ, որ ժամանակին լուսաւոր եւ մաքուր էր եղել: Այժմ մահճակալի վրայ դիրք ու լրագիր, աթոռների վրայ դիրք ու լրագիր, յատակին՝ դիրք ու լրագիր, սեղանի վրայ՝ դիրք ու լրագիր եւ կերակուրի մնացորդով ամաններ: Եւ բոլորի վրայ երբեք սրբիչի երես չտեսած փոշի...

Կարծում էի, որ Փրոֆի մօտ էլ նման երեւոյթի պիտի հանդիպեմ, բայց յուսախաբ եղայ:

Փրոֆը հայկական թաղում, եկեղեցուց ոչ հեռու, երկրորդ յարկի վրայ մի սենեակ ունէր: Աստիճաններից որ բարձրանայիր, սենեակի դրսի դրան վերեւ, ցուցատախտակի վրայ գրուած էր.

— Ո՞վ է ազգի թշնամին: — կղերը, սատանայի ընկերը:

Ֆրէզնոյի հոգեւորականների հետ կռուել էր եւ իր առելութիւնը այս ձեւով էր յաւերժացրել:

Սենեակի ներսը մաքուր էր, կոկիկ: Գիրք ու թուղթ տեղաւորուած էին կանոնաւոր կերպով: Զարմացայ, եւ իմ զարմանքը ուրախութիւն պատճառեց իրեն: Երեւի լաւ որամադրութեան էի հանդիպել: Բայց չուտով նորից սկսեց դանգատները: Երգեր ունէր տպագրելիք, դրամ չկար: Պատարագը ունէր ձայնագրած, որի համեմատութեամբ Կոմիտասի եւ Եկմալեանի ձայնագրութիւնները խեղճ բաներ էին, դրամ չկար հրատարակելու: Ուրիշ մեծ գործեր ունէր կամ ծրագրած էր յօրինելու, բայց նոյնպէս դրամ չկար: Այս ազգը արժանի՞ էր, որ մարդ իր հանճարը փչացնէր նրա համար: Չարկաւ, ոչ:

— Փրոֆ., փորձեցի մխիթարել նրան, Կոմիտասը մեռաւ, առանց իր երկերի մեծ մասի հրատարակութիւնը տեսնելու: Նրա պատարագն էլ չէ հրատարակուած մինչեւ այժմ:

— Ինձի ի՞նչ, խօսքս կտրեց Փրոֆը, ինձի ի՞նչ, թէ Կոմիտասը ինչ եղաւ կամ ինչ ըրաւ: Ես ես եմ եւ իմ մասին կը խօսիմ: Այս բոլոր թուղթերը օր մը պիտի այրեմ: Հայ ազգը արժանի չէ անոնց...

Վիճելը անօգուտ էր նրա հետ: Անարդար էր: Ֆրէզնոյի հայու-

ARAM webaram.com

թիւնը տուել էր նրան ապրելու եւ աշխատելու հնարաւորութիւն: Հայ արուեստագէտներից եւ դրողներից ո՞վ աւելի լաւ պայմանների մէջ էր գտնւում:

Եկեղեցու հոգաբարձութեան հետ ինչ որ մի խնդիր էր ունեցել: Որտեղից որտեղ մի ոչխար էր գտել, կերակի, պատարագի ժամանակ, տարել էր ոչխարը, կանգնեցրել էր եկեղեցու առջեւ եւ վրան խաւաքարտի վրայ դրել էր·

— «Ֆրէզնոյի Եկեղեցիի Հոգաբարձութիւն»:

Քահանան սատանայի ընկեր էր, հոգաբարձուները՝ ոչխար եւ դեռ սպասում էր, որ այս մարդիկ գնահատեն իր հանճարը:

Մեր ակրտէրները եւ հոգաբարձուները չատ մեղքեր ունեն անկասկած, բայց Փրոֆ· Գալֆայեանի հանճարի չգնահատուելու մէջ չեմ կարծում, թէ մեծ մեղք ունեցած լինէին:

Արդէն Փրոֆի դպրապետութիւնից քաշուելուց յետոյ ես մի անգամ էլ այցելեցի նրա սենեակը: Ընկճուած էր երեւում, աւելի քան երբեք: Բերեց, դրեց իմ առջեւ իր պատարագի ձեռագիրը:

— Ա՛ խ՛նչ պէտք է ըլլայ, ասաց զայրացած, դրեթէ պոռալով վրաս: Առ, այրէ···

Կարծես ես լինէի յանցաւորը, որ այդ ձեռագիրը անտիպ էր մնացել: Ա՛յն էլ չեմ կարող ասել, թէ այդքան արժէքաւոր գործ էր:

— Առ, այրէ կ՛ըսեմ, աւելի եւս բարկացաւ: Եթէ դու չայրես, ես կ՛այրեմ իմ ցնծութիւն սատանաներու:

Զգիտեմ, այրե՞ց: Մահուանից յետոյ խօսք չլսեցի այդ ձեռագրի մասին:

Փրոֆ· Գալֆայեանը, անտարակոյս, արուեստագէտ էր՝ որոշ տաղանդով օժտուած: Այդ վկայում են եւ նրա երգերը: Մի քանի անգամ ես լսեցի հանդէսներում, նրա ներկայութեամբ, իր երգերը երգելիս, երեւի, պատահաբար, միշտ աղջիկների կողմից:

— Փրոֆ·, ասացի նրան, մի հանդէսից յետոյ, քո երգերը աւելի յարմար են այր երգիչների համար, ինչո՞ւ ամէն անգամ օրիորդներին ես տալիս երգելու:

— Որովհետեւ, պատասխանեց նա սրամտութեամբ, Ֆրէզնոյում բոլոր այրերը աղջիկի նման են··· Մէկ մարդ միայն կայ Ֆրէզնոյի մէջ, որ իմ երգերը հասկանալով կ՛երգէ՝ Ռուբէն Պապոյեանն է, ան ալ հոս չէ այժմ:

Ռուբէն Պապոյեանը Թիմարցի խոհարար էր, որ աւելի համով կ՛երգէր, քան կերակուր կ՛եփէր···:

ARAM webaram.com

Չէի կարող առարկել. Ռուբէնը իսկապէս քաղցր եւ ուժեղ ձայն ունէր եւ հիանալի կերպով կը մեկնաբանէր Փրոֆի երգերը:

Ֆրէզնոյից մեկնելիս ես դնացի հրաժեշտ տալու Փրոֆին:

— Փրոֆ, ես կ'երթամ, կարծեմ վերջին անգամն է, որ կը տեսնուինք:

Եւ, իսկապէս, վերջին անգամն էր:

Չեմ կարծում, թէ Փրոֆը խաղաղ սրտով մեռաւ: Անպատճառ ըմբոստացաւ, հայհոյեց Գաբրիէլ Հրեշտակապետին, որ եկել էր իր հոգին առնելու: «Ոչխար» հոգաբարձուները առանձնեցին նրա յուղարկաւորութեան պարտականութիւնը: «Սառանայի ընկեր»ը աւետարան կարդաց նրա դադաղի վրայ: Եւ նա դնաց հանդչելու Աբրահամի գերեզմանոցում, Ֆրէզնոյի աղանների կողքին, որոնց այնպէս անկեղծ առում էր:

Բարձր կարելիութիւններով օժտուած, բայց կեանքում չյաջողուած մարդ — այսպէս կարելի է բնորոշել երաժշտագէտ Փրոֆ. Գալիֆայեանին: Բազում են կոչեցեալք, բայց սակաւ են յաջողեալք— Փրոֆը չեղաւ սակաւներից մէկը:

Երբ ես, 1914 թ. Մայիսին, մեկնում էի Ամերիկայից՝ Փրոֆը, դրեթէ լալով, ինձ ճանապարհ դրեց:

— Ճամբադ, ասաց, թող ոսկի ըլլայ:

— Ճամբաս ովկիանոս է, Փրոֆ, նկատեցի ես:

— Ովկիանոսը թող արծաթ ըլլայ:

— Բեղի ալ, ասացի ես, կը մաղթեմ, որ չուտով գտնես մի յիմար միլիոնատէր կամ մի անխելք միլիոնատիրուհի:

Ոչ իմ ճամբան ոսկի կամ արծաթ եղաւ, ոչ էլ Փրոֆը գտաւ իր սպասած միլիոնատէրերին: Ապրեց օգային դղեակներ կառուցանելով եւ խրճիթ անգամ չունեցաւ ամբողջ կեանքում:

Պատկ չդրի Փրոֆի հոդակոյտի վրայ, բայց եթէ դնէի, վրան պիտի դրէի լատիներէն.

— Sit tibi terra levis!

—Թող հողը թեթեւ լինի քեզ:

ARAM webaram.com

ԲԱՆՈՒՈՐ ՌԱՇԻԴ

— Վերջապէս, աս սատանայից պիտի ազատէ՞ք ինձ, բարկացած առաջս կտրեց Դաւիթ Անանունը Աբովեան պողոտայի վրայ:

— Ո՞վ, ի՞նչ սատանայ, զարմացայ ես:

— Իբր թէ չես հասկանում՝ ո՞վ, ի՞նչ. այս նզովեալը...

«Նզովեալը» բանուոր Ռաշիդն էր, որ քիչ հեռու, մայթի վրայ, ծիծաղում էր՝ ուժեղ ատամները ցոյց տալով:

— Ի՞նչ է պատահել, հետաքրքրուեցի ես:

— Պատահելս ո՞րն է, եղբայր պատուական, այս անզգամը հոդից հանեց: Որտեղ մուրացկան է գտնում, հաւաքում է գլխիս, թէ՝ «էս ապուռ հարուստ է. գրամ խնդրեցէք, կը տայ»... Ազատում չունեմ մուրացկանների ձեռքից: Բանտարկել տուէք այդ թոկից փախածին...

Բանուոր Ռաշիդը՝ դուարթ՝ ծիծաղում էր մայթին վրայ:

— Տղա՛յ, ի՞նչ ես խրխնջում, մի աստ տեսնենք, ի՞նչ ես արել, զարճայ ես նրան:

— Բան չեմ արել, ծիծաղը հազիւ զսպելով պատասխանեց Ռաշիդը: Աբեւը վկայ՝ բան չեմ արել:

— Ո՞նց թէ բան չես արել, հապա ինչո՞ւ է բարկանում Դաւիթ Անանունը:

— Ես ի՞նչ գիտեմ... եթէ Դաւիթ է, հապա ինչի՞ է անանուն. եթէ անանուն է, ինչի՞ է Դաւիթ, արախօսեց Ռաշիդը: Բան չեմ արել, հաւատա՝, ընկեր Վրացեան: Աբեւը վկայ՝ բան չեմ արել:

— Թո՛ւհ, անպատկառ, գայլրացած՝ արագ հեռացաւ Անանունը:

ARAM webaram.com

Բանուոր Ռաչիդը հետեւեց նրան՝ ծամածռութիւններ անելով ու խնդալով...

Ռաչիդը Բագուի մեր բանուոր երիտասարդ ընկերներից էր: Երբ ես խմբագիր էի Թիֆլիսի «Հորիզոն» օրաթերթի, նա, անվարժ գրչով, փոքրիկ թղթակցութիւններ էր գրում Բալախանիի գործաւորների կեանքից: Թղթակցութիւններին կցում էր անձնական նամակներ, որոնցից երեւում էր եռանդուն, ուսման ծարաւի մի երիտասարդ, որ ձգտում էր ինքնազարգացման:

1917ի ամառը Ռաչիդը երեւաց Թիֆլիսում: Եկել էր կուսակցական ինչ որ յանձնարարութեամբ: Առանց դուռը ծեծելու, մբտաւ խմբագրատան դրասենեակս, կարծես հին բարեկամներ լինէինք: Ջինուորական բարեւ տուեց եւ ներկայացրեց իրեն.

— Բանուոր Ռաչիդ...

Աչքոյժ, հարցասէր երիտասարդ էր: Վրաս անհաւատարակշիռ ուղեղի տպաւորութիւն թողեց: Դժուար էր հասկանալ՝ խելօք տղա՞յ էր, թէ՞ կապելիք գիժ...

Այնուհետեւ չարունակեց թղթակցութիւնները: Մտերիմ նամակներ էր գրում: Ու, յանկարծ, անհետեցաւ իմ հորիզոնից:

Եթէ չեմ սխալւում, 1919ի ամառը Ռաչիդը յայտնուեց Երեւանում եւ եկաւ մօտս: Ցած ձայնով, չուրջը նայելով՝ ինչ որ խորհրդաւոր բաներ էր ասում, գաղտնի ծրագիրներ պարզում՝ անկապ ու հակասական խօսքերով: Հիւսիսային Կովկասից ինչ որ տարօրինակ պատմութիւններ էր անում... Պարզ էր, խեղճ տղան խելքը թոցրել էր...

Այնուհետեւ, Երեւանում ամէն կողմ կարելի էր տեսնել Ռաչիդին: Ջինուորական հագուստով, երկարավիզ կօշիկներով, ահագին փափախը գլխին ծուռ՝ ամէն տեղ էր նա — փողոցում, հորհրդարանի նիստերին՝ ժողովրդի մէջ, դասախօսութիւններին, այլեւայլ հաւաքոյթներում, նախարարական նախասենեակներում — ամէն տեղ: Բանուոր Ռաչիդ... Ենէթ Ռաչիդ... Ռաչիդ — նրան ամէնքը ճանաչում էին Երեւանում:

Երբ Թիֆլիսից Երեւան ժամանեց հայ միակ ապագայապաշտ գրողը՝ Գարա Դէրվիշը, Բանուոր Ռաչիդն էր, որ Արշօ Շահխաթունի հովանաւորութեամբ կազմակերպեց նրա ընդունելութիւնն ու դասախօսութիւնը:

Դասախօսութեան երեկոյին, Ռաչիդը սրահ առաջնորդեց Գարա Դէրվիշին մայրաքաղաքի Պարէտ Շահխաթունի տրամադը-

ARAM webaram.com

բած ինքնաշարժով, եափունջին վրան, նստած ապաղայապաչա բանաստեղծի կողքին:

Երբ ինքնաշարժը կանգ առաւ սրահի չէնքի առջեւ, Ռաչիդը թռաւ ինքնաշարժից եւ դերասանական չարժումով եափունջին փռեց մայթի վրայ, Գարա Դէրվիշի ոտքերի տակ: Ֆուտուրիստ բանաստեղծը, ղլուխը բարձր, հպարտ քայլուածքով անցաւ եափունջու վրայից:

— Հայոց Ֆուտուրիստ մեծ բանաստեղծ Գարա Դէրվիշին ողջո՛յն Հայաստանի Ֆուտուրիստների կողմից, գոչեց Բանուոր Ռաչիդը: Շէնքի առջեւ խռնուած երիտասարդների խուռն բազմութիւնը ծափահարում էր խելայեղ:

— Այս խենթը հազար խելօք արժէ, ասում էր Ռաչիդի մասին դրող Ստեփոն Զօրեանը ի պատասխան Դաւիթ Անանունի պնդումներին, բայց Դաւիթը չէր հանդստանում: Մի օր նա զարմանալի բաներ պատմեց Ռաչիդի մասին, որին ճանաչում էր դեռ բադուից: Ռաչիդը, իրրեւ գործօն դաշնակցական, այնտեղ էլ հակառակ է եղել սոցիալ-դեմոկրատ Անանունին:

— «Հիւսիսային Կովկասում էինք, պատմեց Դաւիթը, Հանքային Ջրերում, ուր հաւաքուել էր ամէն տեսակ մտաւորականութիւն: Քաղաքացիական պատերազմի տաք ժամանակն էր: Մի օր բոլշեւիկներն էին գալիս, միւս օր՝ սպիտակները: Ամէնքն էլ աւերում, կողոպտում, սպանում էին անխնայ: Հասարակական տանկանքներն էին կացութեան տէրը:

«Մի օր նստած էինք Պեատիգորսկի նշանաւոր պարտէզում: Քաղաքացիական կռիւը բորբոքում էր չուրջը, մօտ տարածութեան վրայ: Մտածում էի՝ ի՞նչ անել, ի՞նչպէս ազատէի կաշիս...

«Մէկ էլ հեռուից տեսայ՝ ազմուկով մեր կողմ մօտեցող մի խումբ: Մօտեցան, մօտեցան, բա՛հ, քո տունը չքանդուի, էն անընդգամն էր — Ռաչիդը: Շրջուն դինարան լինէր կարծես: Զինուորական հագուստ, գօտու երկու կողմը՝ մէկ – մէկ Նագան ատրճանակ եւ ձեռքի ռումբ, կողքին՝ սուր, կրծքին՝ հեռադիտակ, փափախը՝ ծուռ... Շուրջը իրեն նման ուժ – տասը ղլուխ թռչնողներ...

«Մօտեցաւ, ինձ որ նկատեց, կանգ առաւ: Ուժոռ հայեացք նետեց վրաս: Երեւակայիր, վախից ոտքի ելայ:

— Բարե՛ւ, Ռաչիդ, դու ի՞նչ ես անում այստեղ, իբր թէ անվախ՝ բարեւեցի նրան:

«Աչքամարհական հայեացք ձգեց վրաս ու հրամայեց հետի աւազակներին.

ARAM webaram.com

— «Ձերբակալեցէ՛ք այս հակայեղափոխականին...

«Կատա՞կ էր, լո՞ւրջ էր — ի՞նչ կարող էի ասել: Խեղճից ամէն բան սպասելի էր: Փորձեցի կատակի տալ:

— «Ռաչիդ ջան, ի՞նչեր ես ասում...

— «Լռի՛ր, կեղտոտ հակայեղափոխական, տարէ՛ք սրան, պոռաց Ռաչիդը:

«Ցարձակուեցին վրաս ու քաշքշելով առաջնորդեցին երկաթուղու կայարանի պահականոցը: Դուռը պինդ փակեցին վրաս:

«Ա՛յ քեզ խայտառակութի՛ւն... ինչքա՛ն վտանգներից ազատուեցի, հիմա այս խեղճի՞ց զոհուելու համար:

«Մի քանի ժամ մնացի փակուած մութ սենեակում: Վերջը եկան երկու սուինաւոր զինուորներ եւ տարին հարցաքննութեան: Մեծ սեղանի ղլուխը անփոյթ բազմած էր Ռաչիդը՝ գէնք ու զրահը վրան: Շուրջը՝ իր բաշիբոզուկները:

«Կանգնեցրին սեղանի առջեւ: Երկու կողմս՝ երկու սուինաւոր զինուոր: Ռաչիդը դաժան երեսոյթով սկսեց հարցաքննել: Մէկ ուրիշը արձանագրում էր:

— «Անուն – ազգանո՞ւնդ:

— «Գիտես անունս, ինչո՞ւ ես հարցնում...

— «Անունդ եմ հարցնում, կեղտոտ հակայեղափոխական, պոռաց երեսիս Ռաչիդը:

— «Դաւիթ:

— «Ազգանո՞ւնդ:

— «Անանուն:

— «Դաւիթ Անանո՞ւն... Եթէ Դաւիթ ես, ինչի՞ Անանուն... Եթէ Անանուն ես, ի՞նչ Դաւիթ: Ո՞րտեղացի ես: Զբաղո՞ւմդ: Ի՞նչ ես անում այստեղ: Ի՞նչ կուսակցութեան ես պատկանում: Եւ բազմաթիւ նման հարցումներ:

«Բոլորին էլ պարտաւորուեցի պատասխանել: Մի ժամից աւելի տեւեց այս խեղկատակութիւնը: Վերջը կարդալ տուեց արձանագրութիւնը եւ պահանջեց ստորագրել: Ստորագրեցի:

— «Վ ազմիտէ վ ռասխոդ, տարէք ծախսելու, հրամայեց Ռաչիդը:

«Երկու սուինաւոր զինուորներ քաշեցին ինձ դուրս դէպի նախկին մութ սենեակը: Ճակատագիրս որոշուած էր — վ ռասխոդ նշանակում էր գնդակահարել: Չեմ կարող ասել, ի՞նչ էի մտածում, ի՞նչ էի զգում, ի՞նչ պիտի անէի: Պարապ տոպրակի պէս փռուեցի աղտոտ յատակին: Ի՞նչ ուզում է, թող լինի...

ARAM webaram.com

«Երկար տեւեց, կարճ տեւեց, նորից բացուեց դուռը: Դուռը արդէն մութ էր: Զինուորները եկան, ոտքի կանգնեցրին ինձ եւ թեւս մտած՝ հանեցին սենեակից: «Վպերե՛դ», հրամայեց մէկը — «յառա՛ջ»: Դանդաղ չարժուեցի ցոյց տրուած կողմը: Անցանք պահեստների առջեւից, գծերի ուղղութեամբ: Կասկած չկար. տանում էին կայարանի սահմաններից դուրս, նշանակուած վայրում, ընդդակահարելու: Հազիւ չարժում էի ոտներս...

«Բայց չէ, մօտեցրին գծի վրայ կանգնած գնացքին: Երեւի, ուրիշ տեղ էին տանելու...

«Զինուորներից մէկը օգնեց, որ բարձրանամ աստիճաններով: Դուռը բացուեց եւ... Լուսաւոր սալոն – վագոնում, առատ ուտելիքներով ու խմելիքներով բեռնաւորուած սեղանի դլուխը, ժպիտը դէմքին բազմած էր Հանուար Ռաշիդը:

— «Նստի՛ր, վախկոտ սոլիալ – դեմոկրատ, ասաց նա խընդումերես, ձեռքս սեղմելով. կե՛ր, խմի՛ր, ուրախացիր, կեանքդ քեզ եմ բաշխում...

«Կարո՞ղ ես երեւակայել վիճակս... Եւ ի՞նչ ես կարծում Ռաշիդի մասին. ինչ որ ճեղկոմի կողմից նա նշանակուել էր Արմաւիր – Վլատիկաւկազ երկաթուղու կոմիսար՝ բացարձակ լիազօրութիւններով: Իրաւունք ունէր ուզած մարդուն ձերբակալել, առանց դատ ու դատաստանի դնդակահարել... Ամենազօր աստուած էր իր չրջանում եւ ո՛վ դիտէ, ինչքան մարդու դլուխ էր կերել»...

Լաւ հիւրասիրելուց յետոյ, Ռաշիդը ազատ է արձակում Դաւիթ Անանունին.

— Գնա՛, ուր կարող ես. արա ինչ ուզում ես, բայց մէկ էլ ձեռքս չընկնես...

Այսպիսի խենթերն էին յեղափոխութիւնը վարում Ռուսաստանի չատ վայրերում...

Այնուհետեւ, ի՞նչպէս էր ազատել իր դլուխը, ի՞նչ ճանապարհով Ռաշիդը ընկել էր Հայաստան, չեմ կարող ասել: Նախկին ամենազօր կոմիսարը այժմ խենթ Ռաշիդ էր Երեւանի փողոցներում, Դաւիթ Անանունի մահացու թշնամի՞ն...

Բոյիւք Վէդիի կռիւների օրերին Ռաշիդը եկաւ մօտս: Ծուռուած էր երեւում: Աչքերը փայլում էին ներքին կրակից: Ես սովորական կատակով ընդունեցի նրան, բայց նա չատ լուրջ էր:

Հանեց ծոցից լրագրի մէջ փաթաթած մի տետրակ ու դրեց առջեւս:

— Կարդա՛: Եթէ պէտք ունենաս, հրամայիր, կը դամ...

ARAM webaram.com

Ու հեռացաւ առանց մէկ խօսք աւելացնելու: Տարբեր մարդ էր դարձել կարծես:

Է՛հ, Ռաշիդն էր, ի՜նչ խենթ բաներ գրած պիտի լինէր...

Տետրակը դրի մէկ կողմ եւ չարունակեցի աշխատանքս:

Երեկոյեան բացի տետրակը ու... կարդացի հեւ ի հեւ: Աչքերիս չէի հաւատում:

Ռաշիդը այցելել էր Բոյիւք Վէդիի շրջանի բոլոր զօրամասերը, իրրեւ հանրածանօթ խենթ, նաեւ ու պառկել էր զինուորների հետ, սպաների վրաններին տակ կատակաբանութիւններ էր արել, լսել ու տեսել էր ամէն բան: Եւ զեկուցման ձեւով, մանրակրկիտ ու փաստացի, պատկերացրել էր բանակի նիւթական ու բարոյական վիճակը: Չեմ կարծում, թէ ոեւէ զինուորական մասնագէտ աւելի լաւ կարող էր ներկայացնել մեր զօրամասերը, աւելի ճշգրիտ ու յստակ ձեւով... Զեկուցումը սառրապրուած էր խենթ Ռաշիդ:

Ռաշիդի զեկուցումը, այնքան տպաւորիչ, ես իսկոյն ներկայացրի զինուորական իշխանութեան: Այնտեղ սուզել էին ու ճիշդ գտել նրա հաղորդած տեղեկութիւնները: Զօրավար Նազարբէկեանը ուզեց անձամբ տեսնել Ռաշիդին եւ չատ գոհ մնաց:

Այնուհետեւ Ռաշիդը ուրիշ զօրամասեր էլ ուղարկուեց բոլշեւիկեան դաւադրութիւնները մերկացնելու համար...

Չեմ յիշում, ո՞ր ամսին էր, Ռաշիդը եկաւ մօտս տուն: Ամաչելով, առանց բացատրութեան, տուեց ինձ մի թղթի կտոր, որի վրայ գրուած էր կանացի մի անուն:

— Ո՞վ է սա, հարցրի նրան:

—Նա է, ասաց Ռաշիդը կարմրելով:

— Ո՞վ՝ նա:

— Նշանածս:

Ռաշիդը զանգեզուրցի էր: Ծնողները նրան նշանել էին եւ լուր ուղարկել, որ գայ տէր կանգնի նշանածին: Ինքը որոշել էր երթալ Զանգեզուր եւ ուզում էր, որ օգնեմ իրեն:

— Ի՞նչ ես ուզում, որ անեմ, հարցրի ես:

Փափախի ծալուածքից հանեց մի ուրիշ թղթի կտոր եւ անխօս՝ դրեց սեղանիս: Վրան գրուած էր.

— Զի, սարճանակ, չոր:

Զանգեզուր ուղարկելիք մարդու պէտք ունէինք. Ռաշիդի դիմումը իւրայ էր: Մի քանի օրից նա ստացաւ «ձի, սարճանակ, չոր» եւ նաեւ՝ գրամ: Եւ զինուորական նախարարութեան կողմից հարցաբան – հրահանգ ռազմական գործերի համար:

ARAM webaram.com

Ռաչիդը Զանգեզուրում ճշդրիտ կերպով կատարել էր իրեն եղած յանձնարարութիւնները ու նաեւ ամուսնացել ծնողների խօսքից դուրս չգալու համար: Մի անգամ էլ եկաւ Երեւան՝ զանազան տեղեկութիւններով ու նիւթերով բեռնաւորուած: Ու նորից գնաց Զանգեզուր նոր յանձնարարութիւններով: Գնաց ու այլեւս ես նրան չտեսայ:

Երբ Փետրուարեան ապստամբութիւնից յետոյ, անցնում էինք Զանգեզուրից, ես հետաքրքրուեցի բանուոր Ռաչիդով եւ հետքը չգտայ: Մէկը չկարողացաւ ստոյգ բան ասել նրա մասին. դէպքերի ժամանակ թողել էր տունը եւ հեռացել, ո՞ւր, ինչո՞ւ համար, ի՛նչ էր եղել վերջը — ոչ ոք ոչինչ չգիտէր: Ծնողները մնացել էին գիւղում, երիտասարդ հարսն էլ՝ նրանց հետ...

Եւ հիմա, երբ մտածում եմ Ռաչիդի մասին, չեմ կարողանում որոշել, իրապէ՞ս խենթ էր նա, թէ՞ մեզ էր խենթի տեղ դնում...

ARAM webaram.com

ՎԱՉԳԷՆ ՇՈՒՇԱՆԵԱՆ

Ամէն անգամ Մարսէլ այցելելիս ես սիրում էի չրջել Հին Նաւահանգստի մթնոլորտում։

Հին դարերի այս եռուն ծովակալները, որ ճարպիկ փիւնիկեցիներին է տեսել, եւ Քրիստոսի աշակերտներին, ծովահէնների արկածներին է ականատես եղել եւ ֆռաչակիրներին ճանապարհ դրել դէպի Սուրբ Վայրերը, այժմ խաղաղ աւազան էր, ուր ձկնորսներն էին երեւում եւ դրօսաշրջիկները։

Մի կողմ, վերը, Աստուածամայրը իր հովանին է տարածած քաղաքի վրայ։ Վերելակը տանում է քեզ այդ սրբավայրը, ուր, մեծ քաղաքի ժխորից հեռու, հանդարտ մտքով կարող ես խոկալ աշխարհի բանների մասին՝ առանց մի եղրակացութեան հասնելու։ Ուխտաւորների հարիւրաւոր արձանագրութիւնները պատերին, ամէն լեզուով, ուր տեղ ունի նաեւ մեր մեծասքանչը, մարդկային ունայնամտութիւնն է վկայում։

Միւս կողմ, ծովափին, հին բերդի մնացորդները։ Այստեղ բանտարկուել էին Բանք Օթոմանից խարէութեամբ դուրս բերուած հայ քաջերը՝ Ամէն Գարօ, Հրաչ Թիրեաքեան, անձնուէր սքանչելի տղաներ։ Փարիզի Շէյլոկները իրենց ոսկիները փրկելու համար օգնութեան էին փութացել արիւնարբու Աբդիւլ Համիտին։

Հաճելի է չրջել արեւի տակ, նաւահանգիստ-աւազանի չորս կողմը, քաղաքի վրայ։ Այստեղից նաւ են առնում դէպի Շաթօ դ'Իֆ, Մոնթէ Քրիստոյի արգելարան կղզին։ Քարափի ճաշարաններում կարելի է բուրումնաւէտ բույաբէս ճաշակել։ Քանըրիէռի անկիւնի սըրճարանի այս տեռասից հիանալի տեսարան է պարզւում դէպի Հին Նաւահանգիստը, որ Թատերական բեմի տեսարանի պէս բացւում է

ARAM webaram.com

աչքերիդ առջեւ: Մի պատառ անուշահոտ սուրճ առ, նստիր եւ ժամերով խոկա մտամոլոր չրջելով հին-հի՛ն դէպքերի ոլորտներում: Եթէ անցեալի յիշատակները չլինէին, ի՞նչ համ կ'ունենար մարդուս կեանքը...:

Անզուգական է Քանէբիէոը, լայն պողոտան, որ Հին Նաւահանգստից տանում է դէպի վեր: Կարճ, բայց պատմական յիշատակներով հարուստ: Դանդաղ քայլերով անցիր մայթերով՝ դեղեցիկ խանութների եւ արճարանների առջեւից: Այստեղից, նեղ փողոցից դէպի ալ, աղմկոտ չուկան է, եւ ծայրում ընկեր Գարեգին Շահլամեանի հաւկիթի բանուկ խանութը: Համակրելի ընկեր է Շահլամեանը, պատկառելի կազմով, բամբ ձայնով, միշտ լաւատես եւ կենսուրախ: Տրապիզոնցի է: Գրագէտ Տիգրան Զէօկիւրեանի քեռին եւ հաւատաւոր դաշնակցական:



ՎԱԶԳԻՆ ՇՈՒՇԱՆԵԱՆ


Ներելի չէ անցնել Քանէբիէոով եւ փոքրիկ շեղում չկատարել տեսնելու համար ընկեր Գարեգին Շահլամեանին:

Քիչ վերը Քանէբիէոը վերջանում է: Դէպի ձախ՝ բարձրացիր լայն աստիճաններով Մարսէլի երկաթուղային կայարանը՝ դնացք առնելու համար դէպի Լիոն եւ Փարիզ:

Քանէբիէոի դլխին, համեստ արճարանի մայթի վրայ, սեղանի մօտ, կափէ կրէմի պարապ դաւաթի առջեւ անպատճառ նստած կը գտնես Նշան Կակոսեանին, որ անհանգիստ աչքերով հսկում է ալ ու ձախ տարածուող փողոցների եւ Քանէբիէոի վրայ: Ի՞նչ է փնտռում, ինքը միայն դիտէ: Բայց ամէն մարդ էլ կարող է ասել, որ Կակոսը դիրք է բռնել Դաշնակցութեան հակառակորդներին հետապնդելու համար:

ARAM webaram.com

Զարմանալի ընկեր է Նշան Կակոսեանը: Ծաբրեզդի մի դիւղից է: Երեւի եկել է Ամելիկա անցնելու համար եւ մնացել է Մարսէլում: Պանդոկ է պահում Նասիոնալ փողոցի վրայ ճամբորդների համար: Համակրելի կին ունի եւ երկու նոյնպէս համակրելի մանչուկներ: Բոլոր մտերիմները նրան կոչում էին Կակոս, իսկ ո՞վ մտերիմ չէր Կակոսեանին Մարսէլում եւ Մարսէլից դուրս: Եթէ ասէիր՝ Նշան Կակոսեան, դուցէ շատերը չիմանային, թէ ով է: Եթէ ասէիր՝ «Մեր Կակոսը», ամէնքը կը ճանաչէին:



ՆՇԱՆ ԿԱԿՈՍԵԱՆ

Նշան Կակոսեանը ծանօթութեան հէնց առաջին օրից ինձ համար դարձաւ «Մեր Կակոսը»: Մարսէլ այցելելիս նա միշտ ինձ հետ էր, աւելի ճիշդ՝ ես նրա հետ էի: Ե՛ւ լաւ, ե՛ւ վատ օրերին: Մարտկոցականն շարժումից յետոյ վատ օրեր տեսանք Կակոսի հետ. նոյնիսկ դնդակ պարպեցին մեր վրայ դիշերով: Կակոսը երբեք չտատանուեց, մնաց պողպատի պէս ամուր դաշնակցական: Հիասթափութիւններ ունեցաւ, անշուշտ, մարդկանցից, բայց ոչ դաղափարից:

Առաջին տարին էր, որ ծանօթացել էի Նշանի հետ, եւ նստած Քանաբիէռի դլխի իր սրճարանի տեռասում դրուցում էինք, երբ փոթորիկի պէս ներս խուժեցին մի քանի տղաներ: Մէկը, մանաւանդ, դրաւեց իմ ուշադրութիւնը: Ամուր կազմով, արեւահար, բայց դէմքով, չտեսնուած մազերի խուրձ դլխին, անօձիք շապիկ՝ մազոտ կուրծքը բաց, պարզ, արդուկի երես չտեսած հագուստ, աղմկոտ խօսելաձեւ...:

— Կը ներկայացնեմ, ասաց Կակոսը, մեր երիտասարդ ընկերներէն, դիւղատնտեսութեան ուսանող Վազգէն Շուշանեանը...:

Մի տարուց յետոյ, թէ ով էին: Դէպի Շուշանեանը, հէնց առաջին վայրկեանից, ջերմութիւն զգացի:

ARAM webaram.com

Ձեռքին հին կազմով մի դիրք ունէր։

— Ի՞նչ ես կարդում, հարցրի։

Առանց դիրքը ինձ տալու, բացեց առաջին էջը. Գ. Հախվէրդեանի Սայեաթ Նովայի հատորն էր։

— Այս ո՞րտեղից է, զարմացայ ես։ Ինչպէ՞ս ձեռքդ ընկաւ այս անգտանելի դիրքը։

Խնդաց եւ դիրքը օդում չարժելով՝ պատասխանեց.

— Թողուցի։

Վերջը իմացայ, որ պարզապէս դողացել էր ընկեր Գ. Շահլամեանից, որ գրասէր մարդ էր եւ սիրում էր հին դրքեր ունենալ։ Շահլամեանը երկար փնտռել էր «կորած» դիրքը, Վազգէնին էլ հարցրել էր, թէ արդեօք լուր ունէ՞ր դրքից, բայց Վազգէնը ...տեղեկութիւն չունէր։

Երբ ես նրան նկատողութիւն արի, նա պատասխանեց անտարբեր.

— Ի՞նչ պիտի ընէ ընկեր Շահլամեանը Սայեաթ Նովան։ Թող հաւկիթ ծախէ...

Ըստ էութեան, դուցէ եւ իրաւունք ունէր Վազգէնը, բայց ձեւը անտանելի էր։ Վազգէնի տրամաբանութեամբ Շահլամեանը, դուցէ, ոսկի ժամացոյցի էլ պէտք չունէր, Բոմոնի իր մեծ տունն էլ շատ էր նրա համար, ուրեմն, Վազգէնը իրաւունք ունէր ա՞յդ էլ «թոցնելու»։

Երբ խօսակցի այդ իմաստով, խնդաց եւ, երեւի, մտածեց.

— Ա՛հ ի՛նչ հին գլուխ մարդ է...

Հիմա էլ կան Սայեաթ Նովայի սիրահարներ, որոնք ուրիշ անխտիրականութիւնը «թոցնելը» «նորոգխութիւն» են համարում։ «Թրոցընելը» ի պատուի է չատերի աչքին։

Քանի Վազգէնը ուսանող էր, կարծեմ, հաթնատնտեսական դպրոցի եւ Մարսէլի շրջանում էր գտնւում, հետը յաճախ տեսնուելու առիթ չէի ունենում։ Հանդիպելիս մեր խօսակցութեան գլխաւոր նիւթը գրականութիւնն էր։ Նա ապրում էր գրական հարցերով։ Ագահութեամբ լսում էր ամէն բան որ կապ ունէր գրականութեան, մանաւանդ, հայ գրականութեան հետ։ Անյագ՝ մայց անկարգ ընթերցող էր։ Կարդում էր, Նիկոլ Աղբալեանի պէս, ամէն բան, որ ձեռքը ընկնէր։

Փարիզ փոխադրուելուց յետոյ, մեր հանդիպումները դարձան յաճախադէպ։ Ի՞նչ էր անում Փարիզում, դժուարանում եմ ասել։ Իր պրպտումը, կարծեմ, գործ փնտռելն էր։ Նիւթական վիճա-

ARAM webaram.com

կը լաւ չէր, բայց, գոնէ սկզբի չըջանում, նրան օգնելը դժուար էր: Հպարտ էր եւ ուրիշին ձեռք չէր մեկնում: Եթէ մէկից դրամ էլ առնար, խնամքով արձանագրում էր «վերջը վերադարձնելու» համար:

Փարիզում վազդէնը ոտքով-դլխով խրուեց, ամբողջ էութեամբը յափշտակուեց գրական-հասարակական հարցերով:

Ֆռանսական թուականների երկրորդ հնգամեակը եւ երեսնամեակի առաջին հնգամեակը, Փարիզը դարձել էր տարագիր հայութեան մայրաքաղաք: Այստեղ էին Ազգային եւ Հանրապետական գոյգ պատուիրակութիւնները, իրենց չուրջը համախմբուած մտաւորականութեամբ ու գործիչներով: Այստեղ էին Հ. Յ. Դաշնակցութեան եւ Ռամկավար-Ազատական կուսակցութեանց ղեկավար դէմքերը՝ իրենց մամուլով: Հանրային-բարեսիրական կազմակերպութիւնները, Ջափահաս Որբերի Միութիւն (ՋՈՄ), Գրական Ակումբ, թատերասէրներ, երգչախումբեր, ընդհանուր եռուզեռ: Ներկայութիւնը զգացնող տարրը Մեծ Եղեռնից ազատուած եւ որբանոցներից դուրս եկած սերունդն էր:

Երէցները բերել էին իրենց հետ ոսկրացած զաղափարներ ու սովորութիւններ: Նորերը անցեալի աւանդութիւններ չունէին, ոչ էլ յատուկ կերպով բանաձեւուած զաղափարներ եւ կենցաղ: Լոյս Քաղաքը մէկէն յափշտակեց նրանց, չչմեայրեց: Շատերը անպայքար, անձնատուր եղան Փարիզին: Գինի, աղջիկ ու հեչտանք, վայելել ինչով եւ ինչպէս կարող ես: Ա՞զգ, զաղափարական իդէալներ՞, զոհաբերութի՞ւն հայրենիքի կամ զաղափարի համար — յիմար բաներ են: կե՛ր, ա՛րբ եւ ուրախ լեր — ա՛յս է կեանքը: «Նահանջը առանց երգի»: Ո՞վ կարող է ասել, թէ քանիներ պոռնկացան մոքով, հոգիով եւ մարմնով, փչացան, կորան:

Ոմանք էլ հրապուրուեցին բոլշեւիկեան գայթակղիչ դոլարներով կամ անիրագործելի խոստումներով: Լողանից յետոյ՝ մանաւանդ: Սարսափահար անօթի տարագրութիւնից կամ յուսահատ անորոշ ապագայից՝ սկսեցին փոխել դիրքերը: Քաջազնունին բացառութիւն չէր. նրան հետեւեցին Զալխուշեանները, Սիմոն Յակոբեանները, Զապէլ Եսայեանները, մինչեւ հայդուկային զրականութեան վարպետ Հայ Գուսանը՝ «Աբու Լալա Մահարի»ի հեղինակ Աւետիք Իսահակեանը. դիրքերը փոխելով՝ ոմանք պսակուեցին մինչեւ Ստալինեան լաւրէատի դափնիներով, իսկ մեծ մասը նոյն իսկ գերեզման չհասցրեց իր եռեւը:

ARAM webaram.com

Եւ, վերջապէս, չաւերը մնացին հին դիրքերի վրայ՝ բարձր պահելով մարտերում սրբացած դաղափարական դրօշը Հայկական Ազատամարտի: Վազգէնը հաւատարիմ մնաց այս դրօշին:

Դաշնակցական կամ համակիր երիտասարդութեան շրջանում էլ մտքերը հանդարտ չէին, մանաւանդ ՁՈՄի անդամների մէջ եւ շրջապատում: Անդոհացում, դժգոհութիւն կար: Արդէն հասուն երիտասարդներ կային, որոնք դործ էին պահանջում երէցներից, որոնք, սակայն, ի վիճակի չէին դոհացնելու: Դաշնակցական թերթերի դլխին ամուր նստել էին հները, նորերուն տեղ չէր մնում: Խմբագիր, դործիչ, պատասխանատուութիւն, ազդային իշխանութիւն, կուսակցական դեկավարութիւն հների ձեռքն էր: Նորերը, որ կարծում էին, թէ նոր խօսք ունին ասելիք, դժգոհ էին: Այստեղից ծնունդ առաւ «Մեճէ» պարբերականը, որ առակի թռչունի նման խոստացաւ ծովը այրել, բայց իսկապէս ինքը այրուեցաւ: Այս հանգեպանութիւնից անոնք ստացան հետագային եւ այսպէս կոչուած «Մարտկոցական չարժումը»:

Ըստ էութեան, Վազգէնը հին դիրքերի վրայ էր եւ «հին Գուարդիա»յի մէջ: Մտերիմ էր երէց ընկերներից չաւերի հետ, ուռանդով մասնակցում էր «Դրօշակ»ի կուսակցական աշխատանքին, մօտ էր խմբագրութեան, որին, ի վերջոյ, դործօն աշխատակից դարձաւ, մանաւանդ, ընկերվարական նիւթերով: Հաւատարիմ էր Դաշնակցութեան քաղաքական եւ ընկերային դաւանանքին: Մի բանում, սակայն, նա չկարողացաւ համակերպուել. դժգոհ էր, ինչպէս ինքն էր ասում, դաշնակցական մամուլի մէջ, իր կարծիքով, իշխող մենաիրաւութիւնից:

Գլխաւորապէս Վազգէնի դաղափարն էր Փարիզում մեծ դրական թերթ հրատարակելու միտքը: Նրան քաջալերում էին այդ ուղղութեամբ եւ Մեսրոպ Գույումճեանն ու Լեւոն Մոզեանը: Մի օր Վազգէնը խնդրեց ինձ ներկայ դտնուել ընկերական խորհրդակցութեան՝ կափէ դ'Արբուրում: Ներկայ էին 10—15 երիտասարդներ: Խորհրդակցութեան նիւթը՝ դրական թերթի հրատարակութիւն, «Նուվել Լիտերեր»ի նման եւ նոյն ծաւալով: Առաջարկում էին, որ ես առանձնեմ նոր թերթի պատասխանատու խմբագրի պաշտօնը: Ես վճռական կերպով մերժեցի, իրենց էլ խորհուրդ տուի հրաժարուել նման մտքից. այնուհետեւ դրական թերթի մասին խօսք չեղաւ:

Որտեղից պիտի դտնէին թերթի հրատարակութեան համար պահանջուած դրամը, չիմացայ. բայց ես լաւ հոտ չառի, մանա-

ARAM webaram.com

ւանդ որ ժողովում ներկայ էին իմ աչքում կասկածելի համարուած տիպեր:

Վերջը, երբ Վազգէնի հետ դնում էի մեթրոյի կայարանը, ես հարցրի նրան.

— Ո՞րտեղից առնելու էք թերթի հրատարակութեան համար անհրաժեշտ բաւական պատկառելի դումարը:

— Կը դոնուի, պատասխանեց Վազգէնը եւ բացատրեց, թէ իմ վրայ էին յոյս դրել:

Ինձ համոզեցուցիչ չթուաց այս բացատրութիւնը: Վազգէնը, ի հարկէ, մեղք չունէր, բայց կարծում եմ գործի մէջ կային նենգամիտ մարդիկ, Սովետական Դեսպանատան հետ կապուած:

Ի՞նչ կար որ. արժէր մի քանի հազար դոլար Վրացեանին եւ Շաւարշ Միսաքեանին իրար դէմ հանելու եւ Դաշնակցութեան մէջ պառակտումի թոյն սրսկելու համար:

Իմ այս կասկածը հետագային արդարացաւ չօշափելի փաստերով:

Վազգէնի հոգեբանութիւնը ինձ համար հասկանալի էր: Նրա մէջ բուռն էր ստեղծագործելու, հրապարակաւ երեւալու փափաքը: Այնքա՛ն բան ունէր ասելիք, իր կարծիքով, նոր եւ հետաքրքրական բաներ, բայց ասպարէզ չէր գտնում: «Ցառաջ»ի հետ յարաբերութիւնները դրեթէ խզել էր, չեմ յիշում, ի՞նչ պատճառով: «Հայրենիք»ից դառնացած էր, խմբագրական, իր կարծիքով, անտեղի կըրճատումների համար: «Ցուսաբեր»ի հետ էլ հաշտ չէր: Բնական եւ հասկանալի էր սեփական թերթ ունենալու պահանջը:

— Է՛, հարցրի ես, ուզում էիք ինձ պատասխանատու խմբագիր նշանակել նոր թերթի: Չե՞ս կարծում, որ ես էլ կարող էի «գրիչ չարժել» ձեր գրածների վրայ: Վե՛րջը... իմ դէմ էլ չէի՞ր ըմբոստանայ... երեւոյթը նոյնն է ամէն տեղ եւ բոլորի մօտ. խմբագիրները միշտ անարդար են աշխատակիցների աչքում:

Մի քանի օր վերջը ես Վազգէնին յանձնեցի հետեւեալ առակը, որ հրաչքով մնացել է իմ թղթերի մէջ.

Ա Ռ Ա Կ

ՄԵԾ ՓՈՔՐԵՐԻ ՀԱՄԱՐ

Ցուրտ ձմեռ է, կը ձիւնէ,
Այդ ի՞նչ տխուր հծծիւն է
Եկաւ վազգէնը Շուշան,
Դէմքի վշտի սեւ նշան.

ARAM webaram.com

— Աստուած սիրես, սանամար,
Անկիւն մը տուր ինձ համար,
Տա՛ւր անկիւն մը, ես տաճանամ,
Դուրսը ցուրտ է, ո՞ւր գնամ...

— «Բարի եկար, կնճահայր,
Այդ ի՞նչ խօսքեր են յիմար,
Ի՞նչ ես ասում, — մի անկի՞ւն,
Հապա ո՞ւր է տունդ ֆո,
Թափառում ես դատարկիւն,
Առաւօտ ու երեկոյ:
Ի՞նչպէս այդպէս հառաչում,
Գնա՛, բնիր «Ցառագ»ում:

— Ե՞ս, «Ցառագ»ում, սանամար,
Թո՛ղ կատակը այդ տխմար,
Թշնամի եմ «Ցառագ»ին,
Իմ օրրանը առաջին:

— Լա՛ւ, «Հայրենիք»ը չերքա՞ս,
Այդ փառաւոր բաղաքը,
Ուր խմեցին գինու թաս
Ֆո արկածի տղաքը:

— Խելառե՞ր ես, «Հայրենիք»,
Ֆանի Կոստանը սինիֆ
Այդ բաղաքը կը նստի
Հոն տեղ չունիմ հանգստի:

— «Ցուսաբեր»ը չգնա՞ս,
Տաֆ անկիւն է, հոն մնաս:

— Վա՛յ, ֆո տունը չաւերի,
Ծանօթ դառնաս հաւերի,
«Ցուսաբեր»ի ոստանը
Գրաւեր է Կոստանը:

— Հապա «Մենիֆ»ը...

ARAM webaram.com

— «Մեմֆ»ը՝ ե՞ս,
Կուգես դառնամ սեւերե՞ս
«Մեմֆ»ը «Դուֆ» է, չգիտե՞ս,
Անկիւն մը տուր տաբանամ ես...

— Դէ, որ այդ է ֆո բանը,
Գնա՛, մտիր «Սիփանո»ը,
Երգէ, խաղա, պարէ պար,
Ես տեղ չունեմ ֆեզ համար:

Յունուար 8, 1932

*
**

Վազգէն Շուշանեանի կենսագրութիւնը չեն այս տողերը, այլ մի քանի յուշ իր կեանքից եւ մեր յարաբերութիւններից: Կենսագրութիւնը, ի հարկ է, կը գրուի այդ չնորհալի եւ ինքնատիպ, գրական տաղանդով եւ հանրային ապրումներով օժտուած երիտասարդի:

Վազգէն Շուշանեանի հետ ես առնուազն տասնեակ տարիներ մօտ եմ եղել: Չեմ տառում «մտերիմ» որովհետեւ Վազգէնը իր բնաւորութեամբ չունէր եւ չէր կարող մտերիմ ունենալ, որքան այլասէր եւ լայնախոհ էր երեւում, խորքում եսակենտրոն էր, դժուար հանդուրժող ու դժուար հանդուրժելի: Ինքս չեշտուած անհատականութիւն էր: Այդպիսի մարդիկ պէտք է մենատէր լինէին, բայց Վազգէնը մենատիրութեան հիմնական պայմանից՝ բռնակալութիւնից զուրկ էր: Ընդհակառակը, նա ոխերիմ թշնամի էր ամէն կարգի բռնակալների: Անիշխանութիւնը նրան աւելի կը սազէր՝ պայմանազրական բոլոր կապանքներից ազատ:

Վազգէնի հետ ես առիթ եմ ունեցել աշխատելու զանազան ասպարէզներում, եւ հաճելի էր նրա հետ գործելը: Պարտաճանաչ, չափազանց բծախնդիր դէպի իրեն յանձնուած գործը, անյոգնում ու յարատեւ՝ ճիշդ հակառակը Արշակ Ջամալեանի, միակ մարդը, որի հետ Վազգէնը, թերեւս մտերիմ էր կամ մտերիմի պէս մի բան. Արշակն էլ բազմաչնորհ, կարելի է ասել, մեծատաղանդ, յարաշարժ անհատականութիւն էր, բայց աշխատելիս՝ տեւականապէս յարատեւ չէր. մէկ ժամում տասը մարդու գործ կը կատարէր, բայց երբեմն էլ տասը ժամում մէկ մարդու գործ չէր կատարի: Վազգէնը,

ARAM webaram.com

այս տեսակէտից, հակապատկերն էր իր ուսուցչի: Ասում եմ ուսուցչի, որովհետեւ ընկերային հարցերում եւ ընկերվարական գործերում Վազգէնը շատ բան պարտական էր Զամալեանին:

Յիշում եմ Վազգէնին ընկերվարական Միջազգայնականի Մարսէյլի համագումարում: Երկրորդ Միջազգայնականի ամենամեծ համագումարն էր առաջին համաշխարհային պատերազմից յետոյ: Եւրոպայի ընկերվարական կուսակցութիւնները ներկայացուած էին բազմամարդ պատուիրակութիւններով եւ ականաւոր գործիչներով: Հ. Յ. Դաշնակցութիւնն էլ մասնակից էր առանձին պատուիրակութեամբ, որի կազմի մէջ էին Լեւոն Շանթը, Արշակ Զամալեանը, Շաւարշ Միսաքեանը, ես եւ մի քանի երիտասարդներ, որոնց թւում եւ Վազգէն Շուշանեանը: Վազգէնը իր տարերքումն էր: Շատ արագ ընտելացաւ համագումարի սովորութիւններին և ծանօթացաւ ու բարեկամութիւն հաստատեց պատգամաւորներից շատերի հետ: Նրա միտքը զբաղեցնում էին ոչ միայն ընկերվարական շարժման առօրեայ գործնական խնդիրները, այլ եւ տեսաբանական հարցեր: Որբերի սերունդից դուրս եկած մեր երիտասարդ մտաւորականութեան մէջ ես չգիտեմ մէկը, որ այնքան ծանօթ լինէր ընկերվարութեան տեսական եւ գործնական հարցերին, այնքան կարգացած, ուսած եւ ապրած լինէր որքան Վազգէնը: Նա, անկասկած, պիտի դառնար Մ. Վարանդեանի եւ Ա. Զամալեանի արժանաւոր յաջորդը եւ փայլուն կերպով պիտի ներկայացնէր Հ. Յ. Դաշնակցութիւնը ընկերվարական աշխարհում, եթէ տեղի չունենար անակնկալ սայթաքումը, որ ճակատագրական հետեւանքներ ունեցաւ իրեն համար:

Վազգէնը արագ կերպով մեծանում եւ տեղ էր գրաւում նաեւ կուսակցութեան մէջ. նա համոզուած դաշնակցական էր: Դաշնակցական նուիրապետութեան համարեա բոլոր աստիճաններից անցաւ՝ խմբից մինչեւ կենտրոնական կոմիտէի անդամութիւն:

Մասնակցել է Շրջանային ժողովների՝ եռանդով ու խանդավառութեամբ, երբեմն նոյնիսկ չափազանցած:

Այսպէս, Լիոնի Շրջանային ժողովում Վազգէնը մի բուռն բախում ունեցաւ Դէսինի անուանի ընկերներից Կակոյեանի հետ: Մոռացել եմ առիթը ինչ էր: Ամէնօտ մի նիստում մէկ էլ Վազգէնն ու Կակօն կոկորդ կոկորդի եկան: Մեծ դժուարութեամբ բաժանեցինք ու հանգստացրինք: Արդիւնքը եղան՝ մի քանի ապտակ Վազգէնին ու Կակոյին եւ իմ ջարդուած ակնոցը...

ARAM webaram.com

Այս Կակոյի մասին էլ արժէ մի քանի խօսք ասել:

Կակոյեանը — մեր մէջ Կակօ – Վասպուրականցի «խին» դաշնակցական էր, տարիքով վաթսունի մօտ, բնաւորութեամբ՝ հազիւ քսանը անցած: Ապրում էր Դէսինում: Ի՞նչ գործ էր անում՝ ինքը միայն գիտէր: Սիրում էր, որ իրեն «աւագ ընկեր» կոչէին: Ասում էր՝ «Արամ փաշան եւ ես»... Դէսինը առանց Կակոյի դժուար էր պատկերացնել:

Լիոնի չրջանային ժողովի ընթացքին Կակոն մեզ ճաշի հրաւիրեց՝ «խաւ» ուտելու: Մի խմբով գնացինք Դէսին: Կակոն հիանալի սեղան էր պատրաստել. հինգ-վեց հաւ էր մորթել, «չահրաղու» դինի չարել սեղանի վրայ. մեզանից զատ Դէսինցի իր հարեւանին էլ հիւր էր հրաւիրել: Մի խօսքով, փառաւոր քէֆ ունեցանք: Կակոն հիւրասիրում էր հարեւանին.

— Դրացի, կե՛ր, անուշ արա... քո մալիդ պէս կեր...

Յաջորդ օր Չրջանային ժողովի դիւանը բողոք ստացաւ հարեւանից իր դրացիի դէմ. Կակոն գիշերով հարեւանի հաւանոցից գողացել էր հինգ-վեց հաւ, գլուխները փրցրել եւ տուն էր տարել մեզ համար ճաշ պատրաստելու: Անիրաւ հաւերը արեան հետք էին թողել հաւանոցից մինչեւ Կակոյի խոհանոցը...

Եթէ չեմ սխալւում, այդ հիւրասիրութիւնից յետոյ էր, որ կռիւ ծագեց Վազգէնի եւ Կակոյի միջեւ:

Առաջի արդէն՝ Վազգէն Շուչանեանի բնական տարերքը գրականութիւնն էր, որ ապրում էր նրա համար: Նա գրում էր շատ եւ արագ, հատ-հատ, մանր ու յստակ գրերով լեցուն տետրակներ, որոնք մնում էին գզրոցում անշարժ. տեղ չէր գտնում ամբողջ հասակով երեւան գալու: Մի ժամանակ «Ցառագ»ի դռները լայնօրէն բաց էին նրա առջեւ. Շաւարշը գնահատում էր նրա գրիչը: Վերջը ի՞նչ անցաւ-դարձաւ, Վազգէնը, պաղեց «Ցառագ»ից: «Հայրենիք» ամսագրում յաճախ էր երեւում իսկական կամ ծածկանունով: Բայց ամսագրից էլ պաղեց: Անհանգարտ մտքի տէր՝ որոնումների մէջ, հետը յաճախ գրական գրոյց էինք ունենում. երբեմն վիճում էինք. ես սիրում էի նրա բուռն, բայց անկեղծ եւ բաց արտայայտութիւնները, մտածածը առանց ծամծմելու յայտնելու սովորութիւնը. ընիտասարդութիւնը պէտք է լինի անկեղծ եւ բաց: Շատ անգամներ քացախը աւելի հաճելի է, քան վարդաջուրը:

Բնականաբար, տեղը չէ խօսելու Վազգէնի գրական ստեղծա-

ARAM webaram.com

գործունեության մասին: Պէտք է ասել, սակայն, որ նա դեռ իր լինելության էր. դեռ հապիւ գինի դարձած չիրա՝ ապագայ մեծ կարելիութիւններով հարուստ: Հիանալի հայերէն էր գրում, ինքնատիպ ոճ, ճոխ երեւակայութիւն, ասելու բովանդակալից խորք ու ձեւ: Երկարապատում էր, երբեմն չատախօս լինելու աստիճան, մտքերն ու պատկերները յորդում էին նրա գրչից, եւ ինչ որ ասում էր՝ անկեղծ էր, իսկ անկեղծութիւնը առաջին պայմանն էր ոչ միայն կեանքի յարաբերութիւնների մէջ, այլեւ գրականութեան եւ արուեստի գործերում:

Շուշանեանի թողած գրական ժառանգութիւնը արժանի է առանձին ուսումնասիրութեան եւ ներկայացման:

Մի գիծ, որ ես առանձնապէս հաւանում էի՝ վազգէնի անձնական անշահախնդրութիւնն էր գրական ու հանրային հարցերում, նախանձի բացակայութիւնը՝ ինչ որ, ընդհանրապէս, անսովոր է մեր երիտասարդ — և ինչո՞ւ միայն երիտասարդ — գրողների մօտ: Ես չլսեցի նրա բերանից մի խօսք, որ ցոյց տար, թէ նա նախանձում էր որեւէ մէկին, կամ լաւ չէր զգում իրեն՝ տեսնելով որեւէ մէկի բացառիկ յաջողութիւնը: Ես յիշում եմ, նա բարձր էր գնահատում Շահան Շահնուրի «Նահանջը առանց երգի»ն, ոչ իբրեւ գեղարուեստական կատարեալ գործ, այլ որպէս իրապաշտ ներկայացում ընկերային մի երեւոյթի: Ես ինքս էլ հաւանում էի Շահնուրի վէպը, բայց դիտմամբ դիտել տուի. «Ցիմար բաներ է գրել Շահնուրը»: Վազգէնը զարմանքով ու ցասումով պատասխանեց. «Զեզմէ չէի ապասեր այդպիսի խօսք. այդ գործով Շահնուրը մնայուն տեղ գրաւեց մեր գրականութեան մէջ»:

Բացատրեցի, որ կատակ էի անում անկասկած: Շահան Շահնուրի վէպը արժէքաւոր եւ մնայուն գործ է: Ես զարմանում եմ թէ ինչո՞ւ «Նահանջ առանց երգի»ն չէ հրատարակուած երեւանում մինչեւ հիմա, երբ ամէն տեսակ գեւգեկութիւններ արժանանում են Պետհրատի նիւթական հետաքրքրութեան, բաւական է, որ Սփիւռքի հայութեան նահանջը ցոյց տան:

Շուշանեանը նախանձախնդիր եւ հոգածու էր առհասարակ, դէպի հայ գրականութիւնն ու հայ հեղինակները: Այդ ես տեսայ Հայ Նահատակ Գրագէտների Բարեկամների Ընկերակցութեան հիմնադրութեան եւ հետագայ աշխատանքների նրա բերած մասնակցութիւնից: Նահատակ Գրագէտների Բարեկամների ընկերակցու-

ARAM webaram.com

թիւնը կարճատեւ, բայց հետաքրքրական երեւոյթ էր Սփիւռքահայ կեանքում: Իրրեւ համեստ, բայց գնահատելի ձեռնարկ, նա արժանի է յիշատակութեան: Ինչ չափով ես մաս ունեցայ այդ ձեռնարկում՝ որոշ չափով պարտական եմ Վազգէն Շուշանեանին:

Մեր զրոյցներում մենք յաճախ էինք չօշափել Մեծ Եղեռնին զոհ գրագէտների գործերի հրատարակութեան հարցը: Ոչ միայն խղճի պարտք էր այդ հանգուցեալների հանդէպ, այլեւ ընդհատուած գրական ստեղծագործութիւնը նոր թափով շարունակելու հարց՝ սերունդների միջեւ բացուած անջրպետը որոշ չափով լեցնելու պահանջ:

Մի օր Վազգէնը եկաւ մօտս, շաւիղ հրաւիրելու ինչ որ մի խորհրդակցութեան, եւ ուրախ, անտառի միջով, քայլեցինք մինչեւ Սէն Քլու: Ճանապարհին նա բացատրեց, որ երեկոյեան խորհրդակցութիւն պիտի լինի, նահատակ գրագէտների գործերի հրատարակութեան մասին:

— Գրական չարաթաթերթի՞ պէս, հարցրի ես:

Վազգէնը խնդաց ու չպատասխանեց, բայց ասաց.

— Ան ուրիշ, աս ուրիշ:

Փարիզեան արճճրանի վարի յարկում, կիսախաւարի մէջ, հաւաքուած էին 10—12 ընկերներ, որոնցից յիշում եմ Դոկտ. Լ. Գրիգորեանին, Լ. Մոզեանին, Մ. Պարսամեանին, Վ. Շուշանեանին եւայլն:

Մտքերը պատրաստ էին: Երեւում էր, որ ներկաները նախօրօք խորհրդակցել էին եւ համակարծիք էին: Մնում էր կազմակերպական ձեւ տալ եւ նիւթական ու վարչական գործերը կարգադրել ու գործունէութեան ծրագիր մշակել, եւայլն:

Որոշուեց հիմնել Հայ Նահատակ Գրագէտներու Բարեկամներ անունով ընկերութիւն, հրատարակելու համար նահատակ գրագէտների գործերը՝ հետեւեալ կազմով.— Ս. Վրացեան, Մ. Պարսամեան, Բժ. Լ. Գրիգորեան, Լ. Մոզեան, Վ. Շուշանեան, Կարօ Սասունի, Շ. Նարդունի, Մ. Երիցանց, Օհան Կարօ:

Ընտրուեցին նախագահ՝ Ս. Վրացեան, քարտուղար՝ Մ. Պարսամեան, գանձապահ՝ Բժ. Լ. Գրիգորեան:

Անդամներից մի քանիսը տուին հարիւրական ֆրանք՝ փոխառութիւն անունով, եւ գոյացած 4—500 ֆրանքով ընկերութիւնը ձեռնարկեց գործի:

Որոշուեց, առաջին հերթին, հրատարակել 12 հեղինակներից

ARAM webaram.com

հատորները՝ սկսելով Ռուբէն Զարդարեանից:

Եւ հետզհետէ լոյս տեսան Ռուբէն Զարդարեանի, Մելքոն Կիւրճեանի, Գեղամ Տէր Կարապետեանի, Գեղամ Բարսեղեանի, Արփիար Արփիարեանի, Գրիգոր Զոհրապի, Տիգրան Չէօկիւրեանի, Օհան Կարոյի եւ ուրիշների երկերը, գեղեցիկ ու մաքուր տպագրութեամբ: Մատենաշարի կողքի նկարը գծեց տպանդաւոր գծանկարիչ Մելքոն Քեպապճեանը:

Վազգէնը գործօն մասնակցութիւն ունէր հատորների կազմութեան, խմբագրութեան եւ տպագրութեան աշխատանքներում:

Աշխատակցութեան հրաւիրեց նաեւ Վենետիկից Հայր Ղազիկեանը. որոշ վարձատրութեամբ նա հին թերթերից նիւթեր էր արտագրում պատրաստուելիք հատորների համար:

Իւրաքանչիւր հատորի լոյս տեսնելու առթիւ, ընկերութեան անդամները եւ հրաւիրուած մտաւորականներ որեւէ սրճարանում խմբուում էին համեստ սեղանի շուրջ, տօնելու նոր հատորի երեւումը:

1930-ին, ես Նիւ Եորքում կազմեցի Նահատակ Գրադէտների բարեկամների մասնաճիւղ՝ նախագահութեամբ դրամէր աստամնաբոյժ Դոկտ. Երկանեանի եւ անդամութեամբ Ասատուր Խաբրեանի, Եդուարդ Սահակեանի եւ ուրիշների: Այս մասնաճիւղը օժանդակեց Փարիզի ձեռնարկին նիւթապէս եւ գրքերը տպառելով:

Մարտկոցական չարժումը Նահատակ Գրադէտների բարեկամների գործին էլ հարուած տուեց. մի քանի անդամներ հեռացան գործից: Երկրորդ համաշխարհային պատերազմի օրերից, Նահատակ Գրադէտների բարեկամները վերածուեցին Հայ Գրադէտների բարեկամների Ընկերակցութեան, որ լոյս ընծայեց մի չարք հատորներ՝ նորագոյն հեղինակների երկերից: Փարիզի հայ դաղութի խամբումով, այս ընկերակցութեան եւս վերջ տրուեց եւ գրքերի մնացորդը փոխանցուեց Համազգային Մշակութային Ընկերութեան:

Մարտկոցական չարժումով Վազգէն Շուշանեանը ոչ միայն չէզոքացաւ Նահատակ Գրադէտների բարեկամներից, այլ կորաւ եւ Հ. Ց. Դաշնակցութեան, ինչպէս եւ Հայ գրականութեան համար: Բոլորովին անսպասելի էր, աւելի շատ դէպքերի չարաբաստիկ դարաւորութեան հետեւանք էր՝ Շուշանեանի մասնակցութիւնը հակադաշնակցական մարտկոցական չարժման: Մասնաւորապէս ինձ համար ցաւալի անակնկալ էր: Մինչեւ մարտկոցական ելոյթը, Վազգէնը գրեթէ բոլոր դեկավար ընկերների հետ լաւ յարաբերու-

ARAM webaram.com

թեան մէջ էր: Ինձ հետ յաճախ էր տեսնւում եւ զժգոհութեան որեւէ նշան ցոյց չէր տալիս:

Երբ 1930-ի սկիզբը, առաւօտ կանուխ, Ամերիկա մեկնելիս դնացք էի առնում, իմ հաւանութեամբ, միայն Վազգէնը եւ Սահակ Տէր Թովմասեանը Սէն Լազար կայարանը եկան բարի ճանապարհ մաղթելու: Վազգէնը բերել էր հետը մի հատ տետրակ իր գրուածքներու, «Հայրենիք» ամսագրում հրատարակել տալու համար: Գրեթէ մի տարի մնացի Ամերիկայում, եւ Վազգէնը սիրալիր նամակներ էր գրում:

1932—33-ին Վազգէնը Հ. Յ. Դաշնակցութեան Արեւմտ. Եւրոպայի կենտր. կոմիտէի անդամ էր: Գիտէինք, որ ինչ որ գժգոհութիւններ ու գժգոհներ կային կենտր. կոմիտէի կազմի մէջ, բայց անակնկալի եկանք, երբ Շրջանային ժողովում կենտր. կոմիտէն բացայայտ կերպով ըմբոստացաւ վերին մարմնի դէմ: Առաջին հարուածը ես ստացայ, իբրեւ վերին մարմնի ներկայացուցիչը ժողովում: Ըմբոստութեան պարագլուխներն էին Աբօ Աբոյեանը, Մեսր. Գուլումճեանը եւ մէկ երկու ուրիշներ, որոնց անուններով չ'արժէր կեղտոտել այս թուղթը: Վազգէնը, յանուն համերաշխութեան, ըմբոստների հետ էր: Սկզբունքային կամ գաղափարական հարց չկար մէջտեղը. ըմբոստները պահանջում էին կուսակցութեան ղեկավարութիւնը յանձնել երիտասարդութեան, այսինքն՝ իրենց: Եւ որովհետեւ իշխանութիւնը, սովորաբար, չի տրւում այլ առնւում է, ելել էին կռուի...

Շուտով որոշ կերպով յայտնի եղաւ, որ ըմբոստների հաւը կեցած էր բոլշեւիկեան Չէկան, որ Մ. Գուլումճեանը իր ընկերների անունով բոլշեւիկեան ներկայացուցիչ Ա. Փիրումեանից ստացել էր ժամանակի համար բաւական խոշոր գումար: Ըմբոստների դէմ առաջին ըմբոստացողը եղաւ Վազգէն Շուշանեանը: Լեւոն Մոզեանի հետ նա հրատարակեց մի թռուցիկ, որով բողոքում եւ դատապարտում էր իր ծախուած ընկերների արարքը: Ես հաւատում եմ, որ Վազգէնի ցասումը անկեղծ էր. նա ընդունակ չէր վատութեան: Սխալուելը մարդկային է, եւ նա սխալուել էր:

Մարտկոցական խմբակը արտաքսուեց Դաշնակցութիւնից: Ոմանք փչացան եւ անհետ կորան: Ոմանք, ինչպէս Մ. Գուլումճեանը, զղջացին եւ անյաջող փորձեր արին վերադառնալու Դաշնակցութեան չարքերը: Վազգէն Շուշանեանը, որքան ինձ յայտնի է, նման

ARAM webaram.com

փորձ չարաւ. նրա հպարտութիւնը թոյլ չէր տալիս նման բան անելու: Բայց ես հաւատում եմ, նա մտքով ու սրտով մինչեւ մահ մնաց դաշնակցական:

Դաշնակցական լինելու համար բացարձակ պայման չէ գրպանում անդամատեսը ունենալը. կարեւոր է սրտում ունենալ:

Եւ, ի հարկէ, վազգէնը գերեզման իջաւ Դաշնակցութեան անդամատեսը սրտում:

Պէյրութ, Դեկտեմբեր 1960

ARAM webaram.com

ԻՄ ԲԱՐԵԿԱՄ ՄԱՆՋԻԿԸ

Փոքր տարիքիս իմ ամէնէն մտերիմ բարեկամներից էր մեր հովիւ Մանջիկը:

Մանջիկը խալմուխ էր: Նեղ ու խորամանկ աչքերով, յաղթանդամ, կոշտ արտաքինով մի մարդ: Իրապէս՝ բարի սրտի տէր, հանդարտաբարոյ եւ աղնիւ:

Մանջիկը իր մեծ ընտանիքով ապրում էր մեր կալուածքի անասուններին յատկացուած մասում, տնակի նմանող կիբիտկայում (վրան): Կինն էլ՝ իրեն պէս մարմնեղ ու բարի: Վեց թէ եօթը երեխաները, ամառը մեր այն մէկ չապիկով, ձմեռը՝ չապիկի վրայ ոչխարի մորթէ մուշտակով, մեծանում էին գառնուկների եւ հորթերի հետ միասին:

Կիբիտկայի ամբողջ կահկարասին՝ մի քանի թաղիք փռած գետինը, մի քանի խոտէ բարձ. վրանի մէջտեղը՝ կրակարան եւ համեստ աման-չաման: Իրրեւ անկողին ծառայում էին թաղիքի կտորներ — տակը թաղիք, վրան թաղիք, գլխի տակ՝ խոտէ բարձ:

Սեղանի պաշտօնն էլ թաղիքն էր կատարում. թաղիքի վրայ տիկին Մանջիկը խմոր էր բաց անում, ապա լեցնում էր կրակարանի կաթսայի հալած ճարպի մէջ, եւ երեխաները ագահութեամբ լափում էին խմորի մազոտ պատառները:

Երբեմն, երբ սատկում էր մի անասուն, մանաւանդ, եթէ սատկածը ձի էր, Մանջիկենց կիբիտկայում ուրախ էր լինում: Խալմուխները սիրում էին սատկած կենդանու միսը: Այդպիսի դէպքերում հիւրեր էին գալիս մօտակայ կիբիտկաներից, եւ սկսւում էր խրախճանքը. մինչեւ լոյս լսւում էին նրանց ողբաձայն մեղեդիները:

ARAM webaram.com

Մեր շրջանում 10–15 կիրիականներ կային: Տարին մէկ անգամ, չգիտեմ որտեղից, գալիս էր նրանց հոգեւոր հովիւը: Այն ժամանակ բոլոր կիրիականերից խալմուխները, մեծով-պզտիկով, հաւաքւում էին մեր Մանջիկի մօտ՝ ուշնական հագուստներ հագած եւ շատ լուրջ: Կրօնական պաշտամունքից յետոյ, ամբողջ օր խալմուխի չայ էին խմում, ճարպի մէջ տապակուած խմոր ու խաշած միս ուտում եւ մինչեւ ուշ գիշեր երգում էին Սարմատեան գաչաերի պէս անծայրածիր մեղեդիներ: Յաջորդ օր ամէնքը ցրւում էին իրենց տեղը, իսկ հոգեւոր հովիւը առատ նուէրներով բեռնաւորուած՝ վերադառնում էր տուն:

Մանջիկի հետ մենք խաս բարեկամներ էինք, հակառակ որ ինքը վիթխարի մի աժդահա էր, իսկ ես, նրա համեմատութեամբ, մատնաչափ մի պզոճ: Յաճախ նա թանկագին նուէրներ էր բերում ինձ գաչից՝ լրամարզի հաւկիթ, նապաստակի ձագ, հոտաւէտ ելակ, կամ թթուաշ կոկան: Եւ ազատ ժամերին սիրում էր պատմութիւններ անել — դեռ Թիբեթից բերուած հրաշալի հէքեաթներ հրէշների ու հերոսների մասին: Եւ միշտ, իրրեւ վերջաբան, եզրակացնում էր.

— Հապա, այսպիսի բաներ, եղբայր պատուական: Հիմա ի՞նչ է որ. այդպիսի հերոսներ այժմ չկան...

Ու սկսում էր կեանքի փիլիսոփայութիւններ անել, որոնք բոլորն էլ հոգեկան ազնուականութիւն եւ բարոյական բարձր սկզբունքներ էին արտայայտում:

— Խալմուխը ոսկի մարդ է, ասում էր յաճախ հայրս. քանի տարի է Մանջիկը մեր հովիւն է, մէկ հատ հորթ չի կորել: Հապա եթէ աւազակ կապակը լինէր նրա տեղը...

Եւ, իսկապէս, խալմուխները ամէնքի կողմից նկատուած էին ազնիւ եւ հաւատարիմ մարդիկ: Իսկ մեր Մանջիկը, իմ աչքին, այն բարի ոգին էր, որ հէքեաթներում օգնում էր նեղը ընկած հերոսներին:

Իմ բարեկամ Մանջիկին յիշեցի, երբ լրագիրներում կարդացի, որ Գերմանիոյ ճամբարներից 700 խալմուխներ, Գաղթականական Միջազգային կազմակերպութեան միջոցով, փոխադրուել են Պարապուայ: Ո՞րտեղից որտեղ...

Դարեր ու դարեր առաջ, մոնղոլ խաների հարստահարութիւններից ազատուելու յուսով, հովիւ խալմուխները ձգեցին Միջին Ասիայի անապատները եւ անցան դէպի Վոլգայի եզերքները, ցարերի իշխանութեան ներքեւ, բայց այստեղ էլ հանգստութիւն չգտան: 1771ին, մէկ օրուայ մէջ մօտ 300,000 խալմուխներ, իրենց անասուն-

ARAM webaram.com

նները առած, թողին Վոլգայի ափերը եւ դաղտագողի փախան դէպի Չինաստան: Ճանապարհին մի մասը կոտորուեց վաչկատուն խըրխըզ-ների եւ բաշկիրների ձեռքով. մի մասը սովահար կամ ցրտահար՝ փչացաւ. հազիւ մէկ երրորդը հասաւ տեղ եւ դրկաբաց ընդունուեց չինացիներից:

Մի մասը, սակայն, մնաց ցարերի հպատակութեան տակ: Ջալմուխների այս մասը տեղաւորուեց Վոլգայի աջ ափին, Հաչտարխանից վեր՝ վարելով վաչկատուն հովիւների կեանք: Բուդդայական կրօնի հետեւորդներ՝ խալմուխները խաղաղասէր ու հեզաբարոյ ժողովուրդ էին, հնազանդ օրէնքի եւ իշխանութեան եւ, իրրեւ պինուոր, քաջ կռուողներ: Քաղաքակրթութիւնը նրանց դրեթէ չէր հասել. ինչ որ էին Միջին Ասիայում, Ջինգիս Ջանի օրերին, համարեա նոյնն էլ մնացել էին: Ոչ գիր ու գրականութիւն ունէին, ոչ էլ դրոց-բրոց-ներ: Մեր քիւրդերի նման էին ցեղային վիճակով. տարբերւում էին միայն բարքերով. քիւրդը՝ աւազակ, խալմուխը՝ ընդհանուր առ-մամբ՝ խաղաղ ու բարի:

Եւ ահա՝ այս վաչկատուն, Աստուած եւ անասունների հօտեր միայն ճանաչող ժողովուրդին էլ բոլշեւիկները ուղեցին քաղաքակըր-թել. նրանց համար դիր ստեղծեցին, դպրոցներ բացին եւ վերջ տը-ւին վաչկատուն կենցաղին: Այսքանը, ի հարկէ՝ լաւ: Ցաւոյ՝ վերջ տուին նաեւ խալմուխների անհատական սեփականութեան, բռնագը-բաւեցին նրանց անասունները եւ իրենց էլ դարձրին պետական անաս-նապահներ: Այսինքն, խալմո՛ւխ, ոչխարը դո՛ւ պահիր, բուրդն ու միսը մեզ տուր. տաւարի պահպանութիւնը քեզ, իսկ կաթն ու կարա-դը՝ մեզ: Չհնազանդողներին՝ գնդակահարութիւն կամ աքսոր՝ սի-բիրեան հիւրընկալ տայգաները:

Եւ զարմանալի չէ, որ երբ գերմանացիները մօտեցան Վոլգա-յին, խալմուխներն էլ, ուրիշ ժողովուրդների պէս, համակրանքով ընդունեցին «ազատարարներին»: Իսկ երբ նացիները պարտուած՝ յետ քաշուեցին, խալմուխների մի մասն էլ, զլխաւորապէս տղամար-դիկ, թողեց տեսակները եւ հետացաւ նրանց հետ: Եւ այստեղից ծայր տուեց նրանց ահաւոր ողբերգութիւնը:

Ջալմուխները մենակ չէին, պատերազմի ընթացքին, սովե-տական իշխանութեան տասմ ցոյց տուողը. բոլշեւիկների դէմ զէնք վերցրին եւ ուկրաինացիները, եւ բելոռուսները, եւ Ղրիմի թաթար-ները, եւ կարաչայները, եւ ինգուշները, եւ օսերն ու սուանները: Յաղթական Ստալինը սրանց հաշիւը տեսաւ ամենադաժան ձեւով, բացի սուաններից եւ օսերից, որոնք մաս էին կազմում Վրաստանի:

ARAM webaram.com

Գրչի մէկ հարուածով՝ Սով. Միութեան քարտէսից ջնջուեցին Երիմի թաթարների, կարաչայների ինքնավար հանրապետութիւնները. սրբ եւ պնդացրի ճարակ դարձան ուկրայնական «հակայեղափոխականները»: Բառի տառացի իմաստով բնաջնջուեց եւ խալմուխների ինքնավար շրջանը: Եւ բոլոր խալմուխները անխտիր աքսորուեցան Սիբիրի խորքերը: Քանի՞սը տեղ հասաւ, ինչքա՞նը ողջ մնաց եւ ի՞նչ եղաւ մնացածների ճակատագիրը — Բերիան միայն կարող էր պատասխանել...

Ի դէպ, երբ պատերազմի ընթացքին, սովետական իշխանութեան դէմ ապստամբութիւն ծագեց եւ վրաստանում, Բերիա անձամբ գնաց այնտեղ եւ ապստամբներին որոշ զիջումներ անելով՝ խաղաղութիւն հաստատեց: Մինչդեռ նոյն Բերիան արեան մէջ խեղդեց միւս տեղերի ապստամբութիւնները:

Դառն եղաւ եւ Գերմանիա ապաստանած խալմուխների վիճակը: Նացիները օգտագործեցին նրանց միամտութիւնը եւ վերջը մի կողմ չպրտեցին քուրջի կտորի պէս: Մի քանի տասնեակ հազար էին հաշւում խալմուխ տարագիրների թիւը. ո՞ր մասը փշացաւ եւ ինչքա՞ն ողջ մնաց, յայտնի չէ: Ողջ մնացածներից 700 հոգի ԻՐՕ–ն ուղարկել է Պարապուայ, աշխարհի մի ծայրից միւս ծայրը...

Սովետական իշխանութեան առջեւ խունկ ծխողները, ի միջի այլոց, փառաբանում են եւ բոլշեւիկների ազգային իմաստուն քաղաքականութիւնը. տեսէ՛ք, ինչպէս լուծեցին ազգային հարցը: Ահա ձեզ մի պերճախօս օրինակ ազգային հարցի լուծման Սովետստանում. դարեր ու դարեր խաղաղ ապրող մի ժողովուրդ հողմացրիւ եղաւ ու ջնջուեց աշխարհի երեսից այդ իմաստուն քաղաքականութեան հետեւանքով: Եւ խալմուխները բացառութիւն չեն:

Սովետներով հիացողները առարկում են. պէտք է պատժուէին, քանի որ անհնազանդ դտնուեցան իշխանութեան: Բայց իրլանտացիք էլ ապստամբուեցան Անգլիայի դէմ պատերազմի ընթացքին, 1915ին, պատժուեցան միայն ապստամբները եւ ոչ թէ ամբողջ իրլանտացի ժողովուրդը: Չեխերն էլ ապստամբուեցան Աւստրօ–Հունգարիայի կայսրութեան դէմ, չեխ ժողովուրդին Դանուբը չթաւիեցին ու չընաջնջեցին: Եւ քանի՛ քանի ժողովրդական ապստամբութիւններ են տեղի ունեցել այս կամ այն տիրակալութեան դէմ, պատժուել են ապստամբութեան անմիջական մասնակիցները: Երկրագնդի վրայ երկու պետութիւն միայն կայ, որ պատժելու համար իր վարչաձեւից դժգոհներին՝ ամբողջ ժողովուրդ է բնաջնջում մեծով ու փոքրով. մէկը՝ Թուրքն է, միւսը՝ բոլշեւիկը:

ARAM webaram.com

Երեւութապէս ազգային հարցը «լուծուած» է Սովետ. Միութեան սահմաններում — ինքնորոշման իրաւունք, մինչեւ անկախութիւն: Սահմանադրական յօդուած նոյնիսկ կայ, որ իրաւունք է տալիս ազգային ինքնաւար հանրապետութիւններին յօժար կամքով դուրս գալու Սով. Միութիւնից: Բայց հապա մէկը փորձէ «յօժար կամքով» դուրս գալը, եթէ Սիբիր կամ Պարապուայ էլ ողջ հասնի, Թող փառք տայ Աստծոյ:

Պատմութիւնը մեզ ազգային հարցի լուծման երկու դասական ձեւ է ցոյց տալիս. մէկը ամերիկեան ձեւն է, միւսը՝ բոլշեւիկեան:

Ազատ եւ ժողովրդավար ամերիկացիք, երբ ասում են անկախութիւն, հասկանում են անկախութիւն: Փաստ՝ Քուբա, Ֆիլիպին. փաստ՝ Ամերիկայի միջազգային քաղաքականութիւնը վերջին պատերազմից յետոյ:

Բոլշեւիկը, երբ ասում է անկախութիւն, հասկանում է՝ Սիբիր կամ Պարապուայ: Փաստ՝ Կովկասեան ու Բալտեան հանրապետութիւններ, Լեհաստան ու Չեխոսլովակիա, Բալկաններ ու Կորէա, կարաչայներ ու խալմուխներ...

Եւ ո՞վ գիտէ, դուցէ իմ բարեկամ Մանջիկի զաւակներն էլ, եթէ ողջ են մնացել, այժմ իրենց խուրջինները կապած, եօթը ծովերից անդին՝ հեռաւոր Պարապուայ են հասել ու հաստատուել են իրենց կիբիտկաները:

— Հապա՛, այսպիսի բաներ, եղբայր պատուական, պիտի ասէր Մանջիկը:

Մանջիկը իմաստուն մարդ էր, իսկական փիլիսոփայ: Նա երբեմն մտքեր էր յայտնում, որ եթէ դարեր առաջ խօսած լինէր, անպատճառ Աստուածաշունչի կամ Ղուրանի մէջ կը դրուէին, իբր յաւիտենական ճշմարտութիւններ:

Այսպէս, երբ ես զօր էի տալիս երեւակայութեանս եւ աշխատում էի նրան հաւատացնել, թէ կարող եմ իմ ձեռքերով մի գայլ սպաննել, նա բարձրացնում էր ցուցամատը օդի մէջ եւ ասում հանդիսաւոր լրջութեամբ.

— Սուտ մի խօսիր, որովհետեւ տասը սուտը հաւասար է մէկ ճիշդի:

Ես չէի հասկանում, ինչպէ՞ս թէ սուտը հաւասար է ճիշդի: Եւ իմ մանկութեան օրերին ոչ ոք չէր հասկանում, որովհետեւ այն ժամանակ դեռ Էյնին–Սպալինիզմի փիլիսոփայութիւն չկար: Հիմա ամէն մարդ գիտէ, որ տասը սուտը մէկ ճշմարտութեան էլ հաւասար չէ. իսկական մարդարէ էր Մանջիկը:

ARAM webaram.com

Մի անգամ էլ Մանջիկը հարցրեց ինձ.

— Ի՞նչ ես ուզում լինել, երբ մեծանաս:

— Ձա՛ր, պատասխանեցի ես առանց մտածելու:

Մանջիկը յօնքերը կիտեց, մատը ցցեց օդի մէջ եւ ասաց չատ լուրջ.

— Ձիմար, ցարերը դժբախտ մարդիկ են. կարծում ես մարդ կառավարելը դիւրի՞ն բան է: Մարդիկ հօ ոչխար չեն, որ գիրլիգը(*) ձեռքիդ՝ քշես ուզած տեղդ: Եթէ ուզում ես երջանիկ ապրել, հովիւ եղիր ինձ պէս:

— Դու երջանի՞կ ես, հարցրի ես թերահաւատութեամբ:

— Ինչո՞ւ չէ, ասաց նա խնդալով, ի՞նչս է պակաս:

Այժմ, երբ ես ճանաչեցի աշխարհ եւ մարդկանց, երանէ եմ տալիս Մանջիկին, որ հովիւ էր եւ ոչ ցար:

— Վազող ձիու սանձը չեն քաշում, խրատում էր ինձ Մանջիկը: Մեղք է կենդանին, ձգիր, որ վազի: Աղբիւրի ակը քարով չեն փակում, Աստուած աղբիւրը ստեղծել է հոսելու համար: Կ'ուզես ցար եղիր, կ'ուզես մարդ եղիր, բայց ամէնից առաջ մարդ եղիր: Մարդուց վեր միայն Աստուած կայ, հասկանո՞ւմ ես, եղբայր պատուական:

Ես ասում էի, թէ հասկանում եմ, եւ զարմանում էի, թէ ի՛նչ խելացի բաներ դիտէր իմ բարեկամը:

Հայրս ասում էր. «Մանջիկը խելօք խալմուխ է, բայց չորանի համար չատ խելք ունենալը աղէկ չէ»:

Մամաս ասում էր. «Շիտակ է, խալմուխը չատ խելք ունի, բայց մեր կովերը քիչ կաթ կու տան: Մանջիկին կառավարողը իրեն սուտաթողզ կնիկն է»:

Զարմանալի էր, ի՞նչ կապ կար Մանջիկի խելքի եւ մեր կովերի կաթի միջեւ...

(*) Ոչխարի հովիւի ցուպ՝ ծայրը կարթի ձեւով՝ ոչխարի ոտից բռնելու համար:

ARAM webaram.com

ՄԻ ԴՐՈՒԱԳ ՀԱՅՐԻԿԻ ԿԵԱՆՔԻՑ

Ինչքան ես ծանօթ եմ Հայոց Պատմութեան, չեմ յիշում Էջմիածնի մի զահակալ, որ այնպիսի, կարելի է ասել, համազգային խանդավառութեամբ եւ վստահութեամբ ընտրուած լինի Ամենայն Հայոց Կաթողիկոս, որքան Խրիմեան Հայրիկը: Նրա ուղեւորութիւնը Երուսաղէմից Էջմիածին, համաժողովրդական ցոյցերով եւ հանդիսութիւններով, նախընթաց չունի:

Նոյն Պատմութիւնից չեմ կարող ցոյց տալ մի հատիկ օրինակ, որ Լուսաւորչի Աթոռի վրայ բազմած մի կաթողիկոս այնքան անակնկալ եւ արագութեամբ իրենից վանած լինի հիասթափուած համակիրներին, որքան Հայրիկը:

Հայրիկին կաթողիկոս էր ընտրել դվխաւորապէս կովկասահայ մտաւորականութիւնը, իբրեւ յաջորդ Մակար կաթողիկոսի, որի մասին ժողովուրդը ասում էր.— Մակար քանդեց ազգի տունը: Ռուս քաղաքականութեան հաւատարիմ ապաւարկու էր համարւում Մակարը՝ պահպանողական հակումներով: Ժողովուրդը եւ մտաւորականութիւնը հաւատացած էին, որ Հայրիկի կաթողիկոսութեամբ ապատական դարաշրջան պիտի բացուի Հայոց Պատմութեան մէջ:

Էջմիածին եկաւ-չեկաւ, Հայրիկը ճիշդ հակառակ ուղղութիւն որդեգրեց: Նրա առաջին գործը եղաւ վանքից եւ ճեմարանից հեռացնել ազատամիտ համարուող միաբաններին եւ ուսուցիչներին: Աշակերտական ամենամեծ խռովութիւնները ճեմարանում Հայրիկի կաթողիկոսութեան առաջին շրջանում պատահեցին, երբ նոյնիսկ ոստիկանութեան միջամտութիւնը հրաւիրուեց:

Կովկասահայ ազատամիտ մտաւորը պահանջում էր պատրաստել բարձրագոյն կրթութեամբ հայ հոգեւորականութիւն: Հայրիկը,

ARAM webaram.com

Արշէն Երէց ծածկանունով, «Լումայ» պահպանողական պարբերաթերթում յօդուած գրեց, որով ջատագովում էր համեստ կրթութեան տէր խոնարհ քահանաների գերադասութիւնը, ի զարմանս եւ յոգչութիւն ազատամիտ շրջանների:

Տարօրինակ եւ ընդհանուր վրդովում առաջ բերող գործ էր եւ Մայր Տաճարի որմնանկարների ջնջումը: Էջմիածնի տաճարի պատերը զարդարուած էին նշանաւոր հայ նաղաշների որմնանկարներով: Անհասկնալի է ինչ նկատումներով Հայրիկը դաճով ներկել տուեց պատերը՝ ահագին դժգոհութիւն առաջ բերելով թէ՛ մխաբանների եւ թէ՛ հասարակութեան մէջ:

Մաքրադործեց Վանքի եւ Ճեմարանի ծառայողներին՝ պաշտօնի հրաւիրելով ընդհանրապէս վանեցիներ: «Էջմիածինը Վարագ դարձրեց» ցաւումով ասում էին վաղարշապատցիները:

Կառավարական շրջանների հետ էլ եղա չդնաց: Մանաւանդ ռուս բարձր իշխանութիւնը խէթ աչքով էր նայում Տաճկաստանից եկած «յեղափոխական» կաթողիկոսի վրայ:

Մի խօսքով՝ շատ չտեսով Հայրիկի եւ իր կուսակիցների միջեւ բացուեց խորունկ վիհ:

Դժգոհութիւնը Հայրիկի դէմ սաստկացաւ, մանաւանդ, 1894ին Հնչակեանների Սասունի ապստամբութեան ճնշումից յետոյ, երբ բազմահազար հայեր Թուրքիայից փախան Կովկաս՝ հակառակ ռուս կառավարութեան արգելքի: Գաղթականութեան թշուառ վիճակը մեծ յուզում առաջ բերեց ժողովրդի մէջ: Ամէնքը ապաստում էին, որ Ամենայն Հայոց կաթողիկոսը դիմէ ցարին՝ հայցելով նրա պաշտպանութիւնը ի նպաստ թուրքահայերի, բայց Հայրիկը տեղից չէր շարժւում:

Ի վերջոյ, Կովկասի զանազան կողմերից պատգամաւորներ եկան էջմիածին, համախօսականներով, ստիպելու համար Հայրիկին, որ անձամբ ներկայանայ ցարին:

Թուրքահայ գաղթականութեան, Հայրիկի դէրքի եւ հասարակութեան վերաբերումի մասին փաստական տեղեկութիւններ է տալիս իր անտիպ նամակներում ժամանակի նշանաւոր հոգեւորականներից մէկը՝ Բագրատ վրդ. Թաւաքալեան, յեղափոխական ծածկանունով Զաքի: (Տես Հ. Յ. Դ. կենտր. Դիւան):

Բագրատ վրդ. Թաւաքալեանը յեղափոխական առաջին առաքեալներից էր, տարիներով գործել էր Թուրքահայաստանում եւ Հ.Յ. Դաշնակցութեան հիմնադրութիւնից յետոյ Ատրպատականում էր՝ ծրագրելով հաստատուել Թաւրէզի վանքում, իբրեւ վանահայր եւ յե-

ARAM webaram.com



ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

ARAM webaram.com

դափոխական դործիչ Երկրի ճամբու վրայ: Հայրիկը կանչել էր նրան էջմիածին, դրել էր դաղթականների հոգատարութեան դործի վրայ եւ թոյլ չէր տալիս վերադառնալ Պարսկաստան: Թունդ «հայրիկական»՝ Թաւաքալեանը հիասթափուած՝ օրը օրին նամակներ է դրել Ատրպատականի ընկերներին՝ տեղեկութիւններ տալով Հայրիկի դործունէութեան մասին: Առաջ բերենք այստեղ քաղուածքներ այդ նամակներից:

Այսպէս, Բագրատ Վարդապետը, որ Կաթողիկոսի կարդադրութեամբ դբաղւում էր դաղթականների հոգատարութեան դործով, 1894 թ. Ապր. 22 նամակում շատ մռայլ դոյներով է նկարագրում Թուրքիայից Կովկաս թափուած դաղթականութեան վիճակը:

«Դաղթականները հազար հազարներով են թափուած կարսից մինչեւ էջմիածին՝ բոլորն էլ սոված, մերկ ու թշուառ: Նոյն վիճակի են ենթակայ եւ Աբարանը, եւ Նոր Բայազէտը եւ այլ շատ տեղեր: Կրօնափոխութիւնը ընդարձակ ծաւալ առնելու վրայ է: Ալաչկերտից սարսափելի լուրեր են դալիս՝ սպանութիւն, թալան, հիւանդութիւններ եւ ընդհանուր հալածանք ու սով»:

«Ոուս կառավարութիւնն էլ միւս կողմից չի թողնում, որ դաղթականութիւնը մնայ հայկական շրջանում եւ պահանջում է հեռանալ: Բայց ո՞ւր դնալ, ինչպէ՞ս: Ոմանք խօսում են Մակու փոխադրելու մասին: Ուրիշներ յորդորում են վերադառնալ Թուրքիա»:

«Բոլորի յոյսը, դրում է Թաւաքալեանը, ՆրԱ. — Հայրիկի — վրայ է մնացել ... Նա էլ մինչեւ հիմա ոչ մի դրական ճանապարհ բռնած չէ ... Շարունակ տատանւում է ... Մարտից մինչեւ այսօր — 11 Մայիս — պատրաստւում է դնալ, դիմումներ անել, բողոքել, չարժուել, բայց միշտ մնում է անշարժ, դանդաղ եւ վհատուած ... կարծես թէ մի ճնշող ձեռքի տակ ճմլուած՝ անկարող է նոյնիսկ իր համարձակ սովորական յանդուգն լեզուն չարժելու ... աննկարադրելի է ընդհանուր յուսահատութիւնը»:

Դրութիւնը աւելի եւս ծանրանում է Սասունի անկումից յետոյ:

Եւ այս ընդհանուր յուսահատութեան մէջ, ամէն կողմ, ծադում է Կաթողիկոսի վրայ բարոյական ճնշում բանեցնելու եւ դործի մղելու միտքը: Թիֆլիս, Բաքու, Գանձակ, Բաթում եւ այլուր հասարակական ժողովներ են դումարւում, բանաձեւեր հանւում, համախօսականներ են կազմւում, պատդամաւորներ ուղարկւում էջմիածին՝ ազդի կամքը Հայրիկին հաղորդելու համար: 1894 թ. Դեկտ. 12ին Թաւաքալեանը արձանագրում է.—

ARAM webaram.com

«Այս երեկոյ, նամակագրութեանս միջոցին, մէկը այցելեց ինձ եւ ասաց, թէ Թիֆլիսից եկել են Աւետիք Արասխանեանը — «Մուրճ» — Համբարձում Առաքելեանը, Յակոբ Մեղաւորեանը եւ ոմն Գեորգ Տէր Մարտիրոսեանը: Սրանց մխիան օրուայ հրատապ խնդիրն է, որի համար ՆՄ. — Հայրիկը — ոչ մի քայլ մինչեւ այսօր առած չէ, թէեւ խորհրդակցելու համար, երկու շաբաթ առաջ, իշխան Բեհբութեան Կոստանտինին կանչել էր իր մօտ, թէեւ նոյն օրը եկել էր Մարտիրոս Շաթիրեանը՝ բերելով իր հետ 1000ից աւելի ստորագրութիւններով բաժակցող խնդիրը՝ միջնորդելու համար, բայց միշտ քնած է. ու միայն խօսում է եւ խօսում եւ երբեմն լացում է...»:

Յաջորդ օրը, արձանագրում է.

«Այսօր առաւօտ իմացայ, որ Յակորոս Մեղաւորեանը(*) մշեցիների կողմից է. միւս երեքի մասին դեռ ոչինչ չգիտեմ — ում կողմից են — Աւետիք Արասխանեան, Համբարձում Առաքելեան եւ Գեորգ Տէր Մարտիրոսեան»:

Ու քիչ վերջ.

«Գանձակի եւ Թիֆլիսի պատգամաւորները այս առաւօտ գընացին: Բոլորն էլ տեսնուեցան ինձ հետ: ՆՄ. — Հայրիկը — խօսք է տուել, որ Շաբաթ օրը դուրս կը գայ:

Դեկտ. 15 նամակում Թաւաքալեանը պատմում է պատգամաւորութեան դալու չարժառիթները: «1894 թ. ամառը առանձնապէս ծանրանում է դաղթականութեան վիճակը: Ամէն կողմից խընդրում են կաթողիկոսին՝ գնալ Պետերբուրգ դաղթականների խնդիրը կարգադրելու համար: Սակայն, բոլոր դիմումները մնում են ապարդիւն. էջմիածինը մնում է անշարժ: Յունիսին էջմիածին են հասնում կարսի շրջանից դաղթականների պատգամաւորները, որոնք ամենախիստ եւ ամենադառն կերպով նկարագրում են ՆՐՄ. մօտ իրերի անելանելի վիճակը, ապագայի վտանգը եւ ներկայումս անելիք դիմումների անհրաժեշտութիւնը, եւ, ի վերջոյ պահանջում են, որ ՆՄ. — Հայրիկը — չարժուի իր տեղից եւ ազէտներին վերջ տալու համար բոլոր կարելի եւ ներելի ջանքերը յանձն առնէ չութափոյթ ի կատար ածելու: Դարձեալ բարձրադոյն հաւանութեան նշաններ, ցաւակցական արտասուք եւ վերջ ամենայնի կրկին — փուր — ոչինչ:

(*) Յ. Մեղաւորեանը այն ժամանակուայ Հնչակեան աչքի ընկնող գործիչներից էր:

ARAM webaram.com

Սրանից յետոյ, բազմաթիւ ստորագրութիւններով տեղում են աղերսագրեր՝ Գիւմրիից եւ ապա այլ եւ այլ մանր քաղաքներից, եւ նոյնիսկ անհատների կողմից բանաւոր ու գրաւոր դիմումներ նոյն իմաստով — բոլորին էլ խոստումներ եւ ապա կրկին փառաւոր ու հանդիսաւոր փիւր եւ փիւր: Գալիս են եւ Սասունից, Տարօնից ու այլ տեղերից մարդիկ — բոլորին ընդունում, բոլորի առաջ արցունք թափում, բոլորին էլ խոստումներ չռայլում եւ կրկին փիւրով վերջացնում:

«Լրագիրներից արդէն դիտէք, թէ ի՞նչ չարժում է տիրում Եւրոպայում թէ՛ հայերի եւ թէ՛ օտարների մէջ: Երեւի դիտէք նոյնպէս, որ Եւրոպայի հայերն էլ դիմեցին ՆՐԱՆ — Հայրիկին — թէ թղթով եւ թէ բազմաթիւ հեռագիրներով, եւ ահա բոլոր այդ դիմումներից յետոյ, մի ամիս առաջ, ՆՄ. կանչեց հեռագրով իշխան Կոստանեանին Բնհբուէանին՝ խորհելու համար, որը նոյնը առաջարկեց ինչ որ մի տարի է բոլորն էլ կրկնում են: Իշխանի գալու օրը հասաւ այստեղ եւ ինձ մօտ իջաւ Բաթումի պատգամաւորը, իմ վաղեմի ծանօթ Մարտիրոս Շաթիրեանը, որը 1000ից աւելի ստորագրութեամբ խնդիր էր բերել ՆՐԱ. միջամտութիւնը խնդրելով: Սրանց մօտ էլ լաց եղաւ. սրանց էլ խօսք տուեց: Սրանց ճամբայ դնելուց յետոյ, Սինոդին կոնդակով հրամայեց, որ իր գնալու պատրաստութիւնները տեսնեն — էլի փիւր դարձաւ...»

Վերջապէս, այս Դեկտ. 12ին, երկուշաբթի երեկոյեան հասան Ս. Էջմիածին Թիֆլիսի կողմից Ա. Աբասխանեան, Համ. Առաքելեան, Գանձակի կողմից՝ երեւանցի ուսուցիչ՝ Պետրոս Տէր Մարտիրոսեան — եղբայրը «Մշակ»ի Թղթակից Սիրեկանի — եւ մշակների կողմից՝ Յակոբոս Մեղաւորեանը — սպասւում էր եւ Բագուի պատգամաւորը, բայց նա չեկաւ, որովհետեւ եկողները Ս. Էջմիածնից հեռագրել էին Բագու, որ նա Դեկտ. 17ին, Շաբաթ օրը, գնալու է: Սրանց հետ միացել էր Երեւանից, բայց ոչ որպէս պատգամաւոր, Շուշիից արձակուած ուսուցիչ Ղարաջանեանը: Սրանց մօտ էլ արտասուեց, լացեց ու խոստացաւ, որ անպատճառ Շաբաթ օրը, այսինքն՝ վաղը կ'ուղեւորուի, բայց կոնդակ է տուել — երկրորդ անդամ է. չատերը երրորդին էլ են սպասում — որ Կիրակի օրն է գնալու, այսինքն վաղը չէ միւս օրը»:

Դժբախտաբար, պատգամաւորների եւ Կաթողիկոսի խօսածները Թաւաքալեանը չի տալիս, բայց հետեւեալ տողերից պարզ երեւում է, որ տրամադրութիւնները այնքան էլ խաղաղ չեն եղել:

ARAM webaram.com

Թաւաքալեանն արձանագրում է, թէ պատգամաւորները ՆՐԱ հետ, ի հարկէ, այնքան սուր, կտրական եւ պարզ չեն համարձակուել խօսել, բայց Յորէն Յրիմեանի հետ Աւ. Արամեանեանը խօսելուց բոլորովին պարզւում է. «Դուք, Պ. Յրիմեան, լաւ նկատած կը լինէք, որ մեր կուսակցութեան մամուլի մէջ՝ «Մուրճ»ը ամենահամբերող դիրքն է բռնել դէպի Պապիկը — Հայրիկը, — բայց այսուհետեւ էլ եթէ ես տեսնեմ, որ Վեհարանը կրկին չարունակում է ՍԻՍՏԵՄԱՏԻԿԱԲԱՐ ԵՒ ՆՈՑՆԻՍԿ ԱՌԱՆՁԻՆ–ԱՌԱՆՁԻՆ ԱՆՀԱՏՆԵՐԻՆ հալածել մեր բոլոր հիմնարկութիւններից եւ հէնց այստեղ, միաբանութեան մէջ, այն ժամանակ դուք լաւ իմացէք, որ «Մուրճ»ը սոխ–ուած կը լինի իր դիրքն էլ փոխել դէպի ՆԱ: Դուք մի կարծէք թէ փոդերը Ծառուր Ապէրներից էք առանում. մենք այնպէս կ'անենք, որ ոչ մի կոպէկ չէք ունենայ, ՔԱՆԻ ՈՐ ՈՉ ՄԻ ՀԱՇԻՒ ԶԻՔ ՈՒԶՈՒՄ ՏԱԼ: Մենք չենք կարող երկար համբերել... Դուք եթէ մեղադրում էք Երեմիա եւ Աբիսաակէս սրբազաններին, այդ էլ դեռ առանձին հարց է, թէ դուք որքան իրաւացի էք ձեր մեղադրանքների մէջ: Վերջապէս, դիցուք թէ նրանք մեղաւոր են Պապիկի առաջ, սակայն, այդ բանը իրաւունք չի կարող լինել ձեզ համար, որ սիստեմատիկաբար հալածանք յարուցանէք մի ամբողջ կուսակցութեան դէմ, որը ժողովուրդն է ներկայացնում եւ որին դուք պարտական էք ըստ ամենայնի»: Եւայլն ըստ կարգին: Իսկ Մեղաւորը ՆՐԱ երեսին ասել է. «Ըշտէ, մենք այստեղ 4 զլուխ չենք ներկայացներ, այլ հազարաւորների զլուխներ ի մի ամփոփած՝ հոս եկել ենք՝ անոնց ԿԱՄՔԸ ՁԵԶ յայտնելու: Դուք, փակուած սենեակի մէջ, դաղափար անգամ չունիք, թէ ի՞նչ կը մտածէ, ի՞նչ կը պահանջէ եւ ի՞նչ կը սպասէ ձեզմէ յուսահատ ժողովուրդ մը, որու զլուխն էք դուք»: Արամեանեանի վերջին խօսքն էլ այս է եղել. «Պ. Յրիմեան, եթէ ՆԱ չարունակէ իր ընթացքը, այն ժամանակ հաստատ խօսք եմ տալիս ձեզ, որ փոշմանողը եւ խիստ փոշմանողը ՆԱ եւ դուք կը լինէք եւ ոչ թէ մենք... Լաւ յիշեցէք իմ սասծները եւ նոյնը հաղորդեցէք ՆՐԱՆ»:

Այստեղից երեւում է, որ հասարակութեան դժգոհութիւնը էջմիածնից միայն զաղթականական հարցում դանդաղելը չէր, այլ կային եւ ուրիշ պատճառներ: Գրգռումը էջմիածնի դէմ շատ մեծ էր: Հայրիկն, իսկապէս, էջմիածին հասնելուց յետոյ շատ շուտով կարողացաւ իր դէմ հանել հասարակութեան յառաջադէմ մասի կարծիքը, մանաւանդ ներքին անվարձապիտութեամբ եւ մշակական հոգեւորականների եւ ուսուցիչների դէմ սկսած բացայայտ հալածանքներով:

ARAM webaram.com

Վերադառնալով մեր հարցին՝ պէտք է արձանագրենք, որ Թաւաքալեանի թերահաւատութիւնն այս անգամ չարդարացաւ. Դեկտ. 18ին Հայրիկը էջմիածնից մեկնեց Երեւան՝ այնտեղից Թիֆլիս անցնելու համար: Մի խարանների առջեւ արտասանած ճառում նա յայտնեց, որ ճամբորդում է դաղթականների եւ Թուրքահայերի վիճակը բարելաւելու նպատակով.

«Կ'երթամ Թիֆլիս, հոնտեղ ազդայնոց հետ կը խորհրդակցինք. եթէ հարկ ըլլայ նէ՝ Փեթերսպուրկ ալ կ'երթանք՝ ամենաողորմած կայսեր միջամտութիւնը խնդրելու մեր ազդայնոց համար»:

Բնորոշ են Թաւաքալեանի տուած տեղեկութիւնները նաեւ Հայրիկի ուղեւորութեան մասին. «Երեւանը ոչ մի ընդունելութիւն չէ արել ՆՐԱՆ, այնինչ մի տարի չորս ամիս առաջ միլիոնաւոր ճըրագներ, հազարներ արժեցող յաղթական կամարներ եւ անթիւ անհամար, ԱՄԲՈՂՋ ՆԱՀԱՆԳԻՑ ժողվուած սրտեր, անհուն սիրով ու հրով վառուած զարդարուած ակնապիշ աչքով սպասում էին տեսնել միայն ՆՐԱ պաշտուած դէմքը...»:

Դեկտ. 28ին Թաւաքալեանը արձանագրում է.

«Գնալուց յետոյ ՆՐԱ մասին ոչ մի մխիթարական լուր չենք առել: Ասում են, որ սաստիկ վատ ընդունելուց յետոյ, աւելի վատ էլ ճանապարհ են դրել Թիֆլիս: Ասում են, որ խիստ դանդաղ է ճանապարհորդում: Ասում են, որ մի դիշեր մնացել է մինչեւ Դիլիջան հասնելը, երկու դիշեր էլ մնացել է Դիլիջանում: Եթէ այդպէս է, ուրեմն ՆԱ այսօր կամ վաղը կը մտնի Թիֆլիս»:

Այնինչ՝ ամէն կողմից խորհուրդ էին տալիս, որ մինչեւ Դեկտ. 25 Թիֆլիս հասնի, որպէսզի ռուսական ծննդեան տօներին հեշտ լինի կառավարչապետ Շերեմետեւեւի եւ ուրիշ բարձրաստիճան պաշտօնեաների հետ տեսնուելը:

1895 թ. Յունուար 4ին Թաւաքալեանը գրում է.

«Այսօր մի շատ տխուր լուր առայ. ասում են, իբր թէ, Շերեմետեւեւը եւ Երեւանի փոխ-նահանգապետը այնքան անքաղաքավարի են դտնուել, որ ՆՐԱ վիպիտին չեն պատասխանել»:

Հայրիկը ի՞նչ է անում Թիֆլիսում, ո՞ւմ հետ է տեսնւում, ի՞նչ արդիւնքներով, Թաւաքալեանի նամակներից չի երեւում: Կովկասեան բարձր իշխանութիւնը նրան բաւարարութիւն չի տալիս:

Հարիկը չարունակում է իր ճանապարհը դէպի Պետերբուրգ:

Ռոստով – Նոր Նախիջեւանում նա կանգ է առնում եւ երկար ժամանակ սպասում է կարգադրութիւնների մայրաքաղաքից, ուր

ARAM webaram.com

նոյնպէս լաւ աչքով չէին նայում նրա վրայ։ Ըստ երեւոյթին, ձեւական անհարթութիւններ էլ կային. «յեղափոխական» կաթողիկոսը լրիւ կերպով չէր դործադրել ցարական բիւրոկրատիայի պահանջները։

Երկար եւ սրտմաշուք բանակցութիւններից յետոյ, ստացւում է արտօնութիւն, եւ Հայրիկը չարունակում է ճանապարհը, տեսնըւում է ցարի հետ, ստանում է խոստումներ, որոնք, սակայն, խոստումից անդին չեն անցնում։

Նոր Նախիջեւանում եղած միջոցին, Հայրիկը այցելում է եւ շրջակայ հայկական դիւղերը։ Մասնաւորապէս հանդիսաւոր ընդունելութիւն է ցոյց տրւում մեր՝ Մեծ Սալա դիւղում, որտեղից նա բաւական աջահամբոյր է ստանում։ Մեծ Սալան մեծ տպաւորութիւն է դործում Հայրիկի վրայ իր հարստութեամբ ու բարեշինութեամբ, իր մանչերի ու աղջիկների դեղեցիկ դպրոցներով եւ իր Սուրբ Աստուածածնի փառաւոր եկեղեցիով։

ARAM webaram.com

ԱՌԱՋԻՆ ՏՊԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐՍ ՀԱՅՐԻԿԻՑ

1.— ՄԵԾ ԳԼՈՒԽԸ

Երբ ես Էջմիածին հասայ, ինձ տեղաւորեցին Հայրիկապատում – վանքի պարիսպներից դուրս, Ներսիսեան լճի մօտ միայարկ մի երկար շէնք ուխտաւորների համար:

Ներսիսեան լիճ կոչուածը մի մեծ քարապատ աւազան էր, որից ջրում էին կողքի Ներսիսեան անտառը:

Լճի չորս կողմը տարածուած էին սալայատակուած շաւիղներ, որոնց վրայ չարուած էին նստարաններ:

Այստեղ, ստուերախիտ ծառերի տակ հանդստանում էին միաբանները եւ վիճում ճեմարանի աշակերտները: Ծառերի ճիւղերը եւ լճի ջուրը ծառայում էին, իբրեւ հանդստավայր մոծակների: Ներսիսեան լճի մոծակները հռչակաւոր էին եւ արժանացած Հայրիկապատի հիւրերի յատուկ ուշադրութեան: Հայրիկը յարմարագոյն տեղն էր ընտրել հիւրանոց չինելու Էջմիածին այցելող հիւրերի համար:

Եւ Հայրիկապատ հիւրանոցն ինքն էլ նշանաւոր էր, իբրեւ ճարտարապետական կառուցում:

Սեւ քարից միապաղաղ երկար մի շէնք, նեղ պատուհաններով, մոծակներին իբրեւ մուտք: Նեղ միջանցքի վրայ բացուող կողքկողքի անզարդ խուցեր փոշոտ յատակներով, մի երկաթէ երեքուն մահճակալ խոտէ մահիճով, անսաւան, անորոշ գոյնի եւ որակի վերմակով, մի սեղանի նման բան, մօտը կապ աթոռով, անզուսպ ճանճեր եւ առատ մլուկ անկողնում:

ARAM webaram.com

Եւ այս բոլորի վրայ սաւառնում էր վանեցի սպասաւորի ոգին: Անունը մոռացել եմ, բայց կարող էր լինել Մկո:

Մկոն միշտ մանր էր գալիս լայն դոզնոցով, որ, հաւանաբար, մի ժամանակ սպիտակ էր եղել: Այդ դոզնոցով սրբում էր թէյի բաժակները: Ի հարկին, սրբում էր նաեւ քիթը, որ բնաւ հայկական չէր:

Առաւօտները Մկոն դնում էր սամավառը, երկար փչում էր մրթմրթալով, որ ածուխը բորբոքուի: Հիւրերի սեղանի վրայ շարում էր մի մի կապոյտ չինգօ բաժակ, մէկ հատ բոմբի հաց, անորոշ դոյնով մի ափսէի մէջ մի քանի կտոր պանիր: Ապա լեցնում էր թէյը եւ ասում.

— Համէ, անուշ արա:

Էջմիածին հասած օրս Հայրիկապատում անուշ անող երկու հոգի կար: Շիրակեցի նորընծայ մի քահանայ, որ քառասունքի մէջ էր եւ «Աբարատ»ում գողտրիկ բաներ էր գրում Շիրակի բարբառով: Մի ակնոցաւոր, թուխ, շատ լուրջ դէմքով, պոռպոռացող ձայնով, բարձրահասակ ու նիհար պարոն:

— Ղարաբաղցի է, բացատրեց Մկոն, եկած է վարդապետ ձեռնադրուելու:

Ես Հայրիկապատի երրորդ հիւրը եղայ: Տեղական պայմաններին անծանօթ, անփորձ մի պատանի: Պէտք է սպասէի ձեմարանի բացուելուն, քննութիւն տայի եւ ապա փոխադրուէի ձեմարան: Առ այժմ մէկ մտահոգութիւն ունէի՝ տեսնել Հայրիկին եւ նրան յանձնել մօրս նուէրը:

Տնից մեկնելիս մայրս տուեց ինձ ոսկի տասը ռուբլիանոց եւ պատուիրեց.

— Կ'երթաս, Հայրիկի սուրբ աջը կը պագնիս եւ կ'ասիս. մամաս տուից ժամուցք:

Դիւրին է ասել՝ կ'երթաս, ձեռքը կը պագնիս, բայց ես ի՞նչպէս կարող էի տեսնել Հայոց Կաթողիկոսին: Ո՞վ էի ես. մի խլինքոտ լակոտ, ինչպէս ասում էր Մերկեան հօրեղբայրս. ինչպէ՞ս կարող էի ներկայանալ Հայրիկին:

Սակայն, բախտը որ ուզէ, անկարելին էլ կարելի կը դառնայ:

Բախտը ծանօթացրեց ինձ թուխ դէմքով ակնոցաւոր պարոնի հետ: Անունը Նիկողոս Մելիք-Թանգեան էր: Ջանգեզուրցի էր, ձեմարանաւարտ, ուսուցիչ: Ձիշդ էր ասում Մկոն, եկել էր վարդապետ ձեռնադրուելու եւ շուտով արեղայութեան աստիճան ստացաւ Մայր

ARAM webaram.com

Տաճարում Ներսէս անունով — Ներսէս աբեղայ Մելիք-Թանդեան՝ Ս.որպատականի ապագայ նշանաւոր առաջնորդը:

Երեւի յողնելով մեղ առանձին-առանձին նախաճաշ տալուց՝ Մկօն սեղանները միացրեց եւ մենք երեքս միասին էինք նախաճաշում՝ Ներսէս հայր սուրբը, չիրակեցի նորընծան եւ ես: Խօսում էին աբեղան ու տէրտէրը, ես ունկնդիր հասարակութիւն էի, ազահութեամբ մտիկ էի անում նրանց: Ինձ համար նոր ու հետաքրքրական բաներ էին պատմում հայ ժողովրդի անցեալից ու ներկայից: Մանաւանդ քահանան, սրամիտ ու ծիծաղաշարժ պատմութիւններ էր անում Շիրակի գիւղացիութեան կեանքից: Նոյնիսկ լրջամիտ հայր Ներսէսը ծիծաղում էր մեծաղմուկ:

Մի առաւօտ էլ Ներսէս հայր սուրբը իմացաւ իմ ցանկութիւնը տեսնելու Հայրիկին:

— Անհոգ եղիր, ասաց նա, ես կը կարգադրեմ: Եւ չուտով տարաւ ինձ Վեհարան:

Երբ Վեհարանից մտանք ներս, Ներսէս հայր սուրբը ինձ ներկայացրեց եղի աչքերով երկարամօրուս մի ուրիշ հայր սուրբի, որ ինչպէս վերջը իմացայ, Հայրիկի սիրելի կորիւն վարդապետն էր, Գանձակի ապագայ առաջնորդ, որ տաժանակիր աշխատանքի դատապարտուեցաւ Հ. Յ. Դաշնակցութեան մեծ դատավարութեան մէջ, Պետերբուրգում:

Կորիւն վարդապետը ինձ բացատրեց կաթողիկոսին ներկայանալու ձեւը. պէտք էր մօտենայի պատկառանքով, ծունկի իջնէի Հայրիկի առջեւ երկու ձեռքերիս ափերը բաց, Հայրիկը պիտի դնէր իր սուրբ աջը ափերիս վրայ, եւ ես երկիւղածութեամբ պէտք էր համբուրէի:

Շատ բարի: Բայց ո՞ւր պիտի դնէի ես մօրս տուած տասը ռուբլիանոցը, ի՞նչպէս պիտի յանձնէի Հայրիկին:

Մեծ, հէքեաթային թուացող սրահի մէջտեղը, պատի մօտ, կեցած էր կաթողիկոսական փառաւոր գահը եւ գահի կողքին, պատուհանի տակ, մինառրի վրայ, ծալապատիկ բազմած էր Նա, որի մասին մենք երգում էինք ոգեւորուած.

Խրիմեան Հայրիկ, իմիճն է փառաւոր,
Ե՞րբ պիտի օձես, Հայրիկ ջան, Հայոց թագաւոր:

Հանդարտ, իր զմայլելի աչքերով, կարծես հեգնանքով, նայում էր ինձ:

Անպարտելի յուզումի եւ չփոթի մատնուած, ինչպէս պատ-

ARAM webaram.com

ուխրուած էր, պատկառոտ քայլերով մօտեցայ եւ ծունկի իջայ Հայրիկի առջեւ: Պարզեցի ձեռքերս՝ ամուր սեղմած մատներիս արանքում անիրաւ տասը ռուբլիանոցը, որը, սակայն, անհնազանդ՝ ընկաւ մինաարի վրայ:

Հայրիկը աչը դրեց ափերիս վրայ: Համբուրեցի՝ չփոթուած:

— Ա՛ս ի՞նչ է, խնդալով ասաց Հայրիկը եւ առաւ ոսկեդրամը, դրեց մինաարի տակ:

Թոթով լեզուով, կցկտուր, հազիւ կարողացայ բացատրել մօրս պատուէրը:

Հրամայեց, որ ոտքի ելնեմ: Հարցրեց անունս, որտեղացի լինելս:

— Լա՛ւ, կը յիշեմ ձեր դիւղը, ասաց. աղուոր դիւղ է, փառաւոր եկեղեցի ունիք, լաւ դպրոցներ: Սիրեցի ձեր ժողովուրդը: Օրհնեալ ըլլան անոնք:

Հայրիկը, եթէ չեմ սխալւում, առանց պաշտօնական ճանապարհով արտօնութիւն ստանալու, 1895ին, հայ կեանքի ամենատագնապալից օրերին, էջմիածնից մեկնել էր մայրաքաղաք, ներկայանալու համար ցարին: Դժուարութեան հանդիպելով՝ երկար ժամանակ մնացել էր Նոր-Նախիջեւանում՝ հիւրասիրուելով մեծահարուստ Գէորգ Կրասիլնիկեանի չքեղ ապարանքում: Այցելել էր եւ շրջակայ հայկական դիւղերը եւ առանձնապէս փառաւոր ընդունելութիւն էր գտել մեր Մեծ Սալա դիւղում: Այդ չէն ու հիւրասէր դիւղից ջերմ յիշատակ էր մնացել նրա սրտում:

Դիւղում ասում էին, որ իմ Մխիթիկա քեռին հազար ռուբլի էր տուել Հայրիկին աջահամբոյր: Ես չէի հաւատում, բայց ի՞նչ գիտենաս, կարող էր տուած լինել:

Մեծ Սալայի մասին իր դովեստը վերջացնելով՝ Հայրիկը վերից վար իմ հասակը դիտեց եւ ասաց քմծիծաղով.

— Լսէ նայինք, աղ դլուխդ ինչո՞ւ այդքան մեծ է:

Եւ իմ չփոթութիւնը տեսնելով, կարծես ուրախացած, աւելացրեց.

— Մեծ դլուխը պարապ կ'ըլլայ... Մեր Գարեգինի դլուխն ալ մեծ է — պարապ է:

Պաղ քրտինք եկաւ վրաս յուզումից: Ես իմ դլխի մասին վատ կարծիքի չէի: Եթէ պէտք լինէր, փաստերով էլ կարող էի ապացուցանել, որ պարապ չէր: Գոնէ շատ պարապ չէր: Բայց ինչո՞ւ էր ծաղրում ինձ այս մարդը: Ի՞նչ էի արել ես նրան: Եւ ո՞վ էր այդ

ARAM webaram.com

թչուառական Գարեգինը, որի դլխի հետ էր համեմատում Հայրիկը իմ դլուխը: Ի՞նչու այսպիսի անարդական վերաբերում...

Անձայն՝ չփոթահար կանդնած էի Հայրիկի առջեւ՝ մահաւճիռ առացած յանցաւորի վիճակում:

Հայրիկը քահ-քահ խնդաց՝ չոյելով իր փառաւոր մօրուքը:

— Տղաս, ասաց, չնեղանաս... Բան մըն էր՝ ըսի: Եկուր, Հայրիկի աչքը համբուրէ: Տէրը քեզ հետ, դնա...

Մորթուածի պէս դուրս եկայ Վեհարանից Կորիւն վարդապետի առաջնորդութեամբ: Ներսէս հայր սուրբը տեսնելով վիճակս՝ հարցրեց պատճառը: Անկօր էի պատասխանելու: Կորիւն վարդապետը պատմեց Հայրիկի օյինները: Ասաց թէ Հայրիկը սիրում է նման կատակներ, բայց պէտք չէ վշտանալ, նրա սիրտը բարի է...

Ես անիծում էի այն վայրկեանը, երբ համաձայնուեցի էջմիածին դալ: Եթէ Կաթողիկոսը այսպէս էր, ի՞նչ կարելի էր սպասել մեւաներից: Ես ի՞նչ գործ ունէի այսպիսի մարդկանց հետ: Եթէ հընարաւոր լինէր, անմիջապէս կը թողնէի ու կը հեռանայի էջմիածնից առանց ձեմարանի երես տեսնելու:

Ներսէս հայր սուրբը քնքշութեամբ թեւս առաւ եւ տարաւ լճի ափ՝ ջանալով ամոքել իմ վիշտը: Երկար քայլեցինք քարափին:

Ճաշի ժամանակն էր արդէն: Գնացինք վանքի սեղանատունը, ուր մոտ կամարների տակ, քարէ սեղանների չուրջ, միաբանների հետ միասին ուտում էինք մեր համեստ կերակուրը: Որքան մեծ եղաւ զարմանքս, երբ սպասաւորը առջեւս, սեղանի վրայ դրեց համեղ ուտելիքներ եւ առատ պտուղ: Հայրիկն էր ուղարկել յատկապէս ինձ համար:

— Տեսա՞ր, ասաց Ներսէս հայր սուրբը, Հայրիկը բարի մարդ է, մտածել է քո մասին:

Տարօրինակ բարութիւն էր, սակայն:

*
**

Արդէն ձեմարանի աշակերտ էի, ամիսներ վերջ, մեր վերակացու Գէորգ Ղազարեանը ինձ կանչեց մօտը եւ պաշտօնապէս յայտնեց.

— Հայրիկը պատուիրել է, որ դու պարապես Գարեգին Խըբիմեանի հետ, օգնես դասերը պատրաստելու:

Գարեգինը Հայրիկի ազգականն էր, ինձանից մեծ տղայ: Ձեմարանում յայտնի էր, իբրեւ սկզբունքով դասարան կրկնող աշա-

ARAM webaram.com

կերա։ Մինչեւ տարուայ վերջը ես պարապեցի նրա հետ։

Իրաւունք ունէր Հայրիկը. դլուխը, ճիշդ է, առանձնապէս մեծ չէր, բայց առանձնապէս պարապ էր։ Անտակ տակառ։ Ինչքան լեցնէիր, մէջը բան չէր մնայ։

Ինքը՝ Գարեգինը մեղաւոր չէր։ Աչխատասէր, բարի տղայ էր, բայց խելք չունէր։

Կարդում էի դասագրքում.

— Արեւը մայր մտաւ։

— Գարեգին, կրկնիր, պատուիրում էի։

— Արեւ մտաւ մայր։

Աւելնք՝ վանեցի էր, կարող էր ուտել արեւի ըթը։

— Գարեգին, ո՞րն է էնթական այս նախադասութեան մէջ, հարցնում էի ես։

— Մայր։

— «Արե՞ւ»ը ինչ է հապա։

— Հայկական հոլով, սեռի խնդիր...

— Ինչո՞ւ «մայր»ն է էնթակայ եւ ոչ «արեւ»ը։

— Որովհետեւ «մայր»ը շնչաւոր է, իսկ «արեւ»ը անշունչ։

Եօթը-ութ ամիս տառապեցի իմ աշակերտի հետ, եւ երեւակայեցէք, ուսումնական տարուայ վերջը Գարեգինը փոխեց դասարանը։ Քննութիւնների ժամանակ չատ փայլուն դուրս չեկաւ, բայց ...Հայրիկի ազգականն էր։ Եւ իմ աշակերտը, մտածում էի ես...

Իմ չահը եղաւ այն, որ տարուայ ընթացքին մի քանի անգամ հրաւիրուեցի վեհարան ճաշելու կորիւն հայր սուրբի եւ Գարեգինի հետ միասին։ Երբեմն իր մօտ էր կանչում Հայրիկը, կատակներ էր անում կամ խրատներ էր տալիս մեզ։

Երբ Գարեգինը, յաջող քննութիւնից յետոյ անցաւ յաջորդ դասարան, Հայրիկը ինձ նուիրեց իր «Պապիկ եւ Թոռնիկ» հեղինակութիւնը անձնական մակագրութեամբ։

Այս պատուին ես արժանացայ իմ դլխակից աշակերտ Գարեգին Յրիմեանի շնորհիւ։

2.— ՓԱՆՈՍԸ...

Իննսնական թուականներին, երբ Յրիմեան Հայրիկը բարձրացաւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Աթոռը, էջմիածինը դեռ լուսեցած էր Գէորգ Զորրորդ Մեծապատիւ Կաթողիկոսի յիշատակով։

ARAM webaram.com

Գէորգի յաջորդը՝ Մակար, համեմատաբար, կարճ իշխեց եւ իրրեւ ռուս կառավարութեան թեկնածու, ժողովրդական չէր: «Մակար քանդեց ազգի տունը», ասում էր ժողովուրդը, թէեւ Մակարը ազգի տունը քանդելու չափ էլ կարողութիւն չունէր:

Երբ ինսնական թուականների սկիզբը էջմիածին ժամանեց Վասպուրականի Արծիւը, որ Կովկասի ազատամիտ տարրերի թեկնածուն էր, ամէնքը ցնծութեամբ ընդունեցին նրան: Սակայն, ուրախութիւնը երկար չտեւեց. մի շարք անյաջող քայլեր շուտով հիասթափութիւն պատճառեցին իր համակիրներին: Համեմատաբար, փոքր բաներով սկսուեց. Հայրիկը նախ փոխեց Վանքի եւ ճեմարանի ծառայողներին. ամէն պաշտօնի վրայ դրեց վանեցիներ, կարծես էջմիածինը Վարագ լինէր: Ճեմարանից հեռացրեց ազատամիտ ուսուցիչներին, որոնք իր անունովն էին երդւում: Հաշուի չէր առնում Միաբանութեան կարծիքը, մանաւանդ ազատամիտ համարուող բարձրաստիճան եպիսկոպոսների, ինչպէս Արիստակէս Սրք. Սեդրաքեանը, եւ Գերմանիայում բարձրագոյն կրթութիւն ստացած վարդապետներին:

Իրրեւ կաթողիկոս, մանաւանդ, իր աթոռակալութեան առաջին տասնամեակում, Հայրիկը ինչի որ ձեռք զարկեց, անյաջող դուրս եկաւ, մանաւանդ պակս իր չինարարութիւնը: Իր չինած թանգարանի անճոռնի չէնքը երբեք թանգարան չեղաւ, այնքան անյարմար էր: Ճեմարանի համար սեղանատուն չինել տուեց իր գծած յատակագծով, որ աւելի մարապի էր նման: Լճի ափի հիւրանոցը արդէն տեսանք: Բայց ամէնից նշանաւոր էին Հայրիկի կառուցած արուաքնոցները ճեմարանի չէնքի շուրջ, որոնք Եւրոպա անունով էին յայտնի:

Հայրիկը չէր սիրում Գէորգ Դ-ի գործերը: Գուցէ չափազանցութիւն կը լինէր ասել նախանձում էր, բայց յայտնապէս չէր սիրում: Ինչո՞ւ, ես դժուարանում եմ ասել: Գուցէ այդ զգացումը Պոլսից էր գալիս, ուր Գէորգը խիստ պահպանողական էր, եւ, ուրեմն, սիրելի չէր Հայրիկի նման յեղափոխական մէկին: Գուցէ Բերլինի վեհաժողովի օրերից էր գալիս, երբ Գէորգ Դ. չէր քաջալերում պոլսահայերի դիմումները Եւրոպային: Գուցէ ուրիշ պատճառ կար, յամենայնդէպս, մենք ճեմարանում տեսնում էինք, որ Հայրիկը բաւականաչափ չէր դէպի Գէորգ Դ-ի գործերն ու յիշատակը:

Պէտք է ասել որ Հայրիկը, առհասարակ, գեղարուեստական արժէքները գնահատող չէր: Ցայտնի է նրա վերաբերումը դէպի Մայր Տաճարի մոնանկարները՝ հայ նկարչութեան ընտիր նմոյշները. Հայ-

ARAM webaram.com

բիկը դաճով ծեփել տուեց այդ ոմնանկարները առանց նոյնիսկ մասնագէտ նկարիչների կամ Միաբանութեան կարծիքն առնելու:

Իմ ժամանակ Հայրիկը մտահոգուած էր Գէորգեան ճեմարանը դեղեցկացնելու ծրագիրներով:

Ճեմարանը, սրբատաշ քարերով, ժամանակի համար հոյակապ շէնք էր՝ ներկուած աղիւսի դոյնով: Շէնքի հարաւային կողմը, մուտքի վրայ բարձրանում էր կանաչ դոյնով ներկուած դեղեցիկ գմբէթը հանդիսարանի դլխին:

Հանդիսարանը ճեմարանի ընդարձակ եւ լուսաւոր սրահն էր, որի մեծ լուսամուտներից երեւում էր ամբողջ հասակով Մասիսը: Այս սրահում, հայեացքը Մասիսին, Կոմիտասը յօրինում էր իր անմահ երգերը՝ դաշնամուրի առջեւ:

Կլորաձեւ ընդարձակ սրահի պատերէն կախուած էին Այվազովսկիի մեծ նկարը՝ Նոյը իջնում է Արարատից, Գէորգ Բաշինջաղեանի էջմիածինը եւ դիմացը՝ կաթողիկոսի բազկաթոռի վերեւ՝ Գէորգ Դ-ի եւ Խրիմեան Հայրիկի փառաւոր նկարները:

Մուտքից դէպի ալ, սրահի կէսը բռնուած էր միաձեւ բարձր ու ներդաշնակ նստարաններով աշակերտների համար: Միւս կիսում դրուած էր դաշնամուրը, եւ հանդէսների ժամանակ երգում էր երգչախումբը եւ նստում էին վանքի միաբանները, ճեմարանի ուսուցիչները իրենց ընտանիքներով եւ հիւրերը Վաղարշապատից, Երեւանից եւ երբեմն աւելի հեռաւոր վայրերից:

Սրահի մէջտեղը, գմբէթից կախուած էր քառասուն մոմանոց չքեղ մի ջահ, որ առաջ լոյսով պայծառացնում էր հանդիսարանը:

Հայրիկը բարեկարգումը սկսեց նստարաններից. հանել տուեց Գէորգ Դ-ի օրերից մնացած նստարանները եւ տեղը չարել տուեց արճադոյն ներկուած հասարակ իշտոնուկներ: Սրահը կարծես մերկացաւ եւ այլանդակուեց: Աթոռները դժգոհ էին, բայց ո՞վ կը համարձակուէր բողոքել Վեհափառի կարգադրութեան դէմ: Այն ժամանակ Վեհափառը դեռ Վեհափառ էր...

Գէորգեան տօնի օրուայ հանդէսին, Հայրիկը նստած իր ոսկեզօծ բազկաթոռի վրայ՝ գոհունակութեամբ դիտում էր իշտոնուկների վրայ բազմած աշակերտներին, ի վրդովումն Կոմիտաս հայր սուրբի:

Բայց իշտոնուկները դեռ կարելի էր հանդուրժել: Յաջորդ հարուածը հասաւ հանդիսարանի պարծանքը կազմող փառաւոր ջահին:

Մի քանի օր հազիւ անցել էր, մի երեկոյ, վանքի դռնից ճե-

ARAM webaram.com

մարանի բակը մտաւ Հայրիկը՝ հանդարտ քայլերով յառաջանալով դէպի ճեմարանը: Նրան հետեւում էր չաթիրը՝ ինչ որ մի բան ձեռքին: Կիսախաւարում չէր տեսնւում, թէ ինչ էր ձեռքում բռնածը:

Սերտողութեան ժամն էր: Տեսուչը եւ ուսուցիչները բացակայ էին ճեմարանից: Վերակացուները սերտարանում էին կամ իրենց սենեակում: Բակը գրեթէ դատարկ էր: Միայն ծառերի տակ ելեւէմ էին դուրսը պարապելու արտօնուած մեծ տղաները, որոնց մէջ էի եւ ես:

Հայրիկը ձեռքով նշան արաւ մեզ եւ հրամայեց բանալ հանդիսարանի դուռը: Ձեռ ու ոտ ընկանք, դռանը բանալին եւ բացինք:

Հայրիկը, մոմերի ազօտ լոյսի տակ, դնաց, նստաւ իր բազկաթոռի վրայ անխօս: Լուռ դիտեց չուրջը, վեր ու վար. վրայ հասան եւ վերակացուները չփոթուած: Ամէնքս դիտում էինք լարուած ուշադրութեամբ եւ վախով Հայրիկի տարօրինակ շարժումները:

«Ձխարա» մը վառեց եւ մի քանի վայրկեան հանդարտ ծխեց: Վերջը, կարծես քնից զարթնած, ձեռքի շարժումով հրամայեց.

— Վար առէք սա ջահը:

Առաջին վայրկեանից չհասկացանք, թէ ինչ էր ուզում: Բայց երբ բարկացած կրկնեց հրամանը, առաջ նետուեցինք եւ մեծ դժուարութեամբ իջեցրինք ծանր ջահը, որի բիւրեղեայ աղիողորմ զրնգոցով լեցուեց հանդիսարանը: Օդում կախուած մնաց որբացած չղթան:

Հայրիկը տեղից հանդարտ դիտում էր մեր աշխատանքը: Երբ գործը արդէն աւարտած էր, դարձաւ չաթիրին.

— Տղայ, փանոսը բեր:

Չաթիրը իր ձեռքի տոպրակից հանեց մի փոքր լապտեր — փանոսը:

Հայրիկը փարոս էր ասել, մենք փանոս էինք լսել, եւ մինչեւ վերջն էլ այդ լապտերը մնաց «փանոս», անվերջ սրախօսութիւնների առարկայ:

Հայրիկի հրամանով՝ չաթիրը վառեց փանոսը եւ կախեց դրսի չղթայից: Հանդիսարանի խաւար կամարների տակ պլպլաց փանոսի խղճուկ լոյսը... Հայրիկը դոհունակ սրտով հեռացաւ ճեմարանից:

Զրնգուն բիւրեղներով դեղեցիկ ջահը անհետացաւ. եւ այնուհետեւ, մինչեւ Հայրիկի մահը, ճեմարանի հանդիսարանը լուսաւորուում էր դաւեչտական փանոսով: Եւ աշակերտները, փոխանակ պատկառելի նստարանների, նստում էին իշոտնուկների վրայ: Եւ

ARAM webaram.com

բացի Հայրիկից մէկը չկար Վանքում ու ձեմարանում, որ դոհ լինէր այս բարենորոգումից:

3.— ՀԱՅՐԻԿԸ ԵՒ ՈՒՍԵԱԼՆԵՐԸ

Հայրիկը չէր սիրում Եւրոպայում ուսում առած մխաբաններին, ինչպէս Կարապետ Վարդ. Տէր Մկրտիչեանն էր, Գարեգին, Յուսիկ եւ Կոմիտաս վարդապետները: Վերջիններն էլ նոյն դպացումով փոխադարձում էին նրան:

Իր վերաբերումը դէպի հայ հոգեւորականութիւնը Հայրիկը արտայայտել էր մի յօդուածով «Լումայ»ում, Արշէն Երէց Ծածկանունով: Հայ հոգեւորականի իդէալը նրա աչքին իր հօտին անձնուիրութեամբ ծառայող քահանան էր: Մէկից աւելի անգամներ նա մեզ՝ ձեմարանցիներիս էլ քարոզել էր.

— Քահանայ եղէք մեր գիւղերը լուսաւորելու համար: Հեռու վանեցէք փիլիսոփայութեան դոկտորի գաղափարը: Մեր ժողովուրդը լոյսի եւ հացի պէտք ունի, ոչ թէ սոփայի:

Ձեմարանի տեսուչ Կարապետ Վարդ. Տէր Մկրտչեանը եւրոպական իմաստով լայն զարգացման եւ բազմակողմանի հմտութեան տէր անձնաւորութիւն էր: Աշակերտները նրան սիրում էին պաշտելու աստիճան: Հայրիկը, սակայն, դոհ չէր այդ փիլիսոփայութեան դոկտորից:

Թարգմանչաց տօնի առթիւ, ձեմարանի հանդէսում, աշակերտութեան եւ Մխաբանութեան առջեւ, ըստ ընկալեալ սովորութեան, Կարապետ հայր սուրբը դիտական մի շարադրութիւն կարդաց, եթէ չեմ սխալւում, Պաւղիկեան աղանդի մասին: Սրահը լարուած ուշադրութեամբ հետեւում էր նիւթի զարգացման հայ մատենագրութիւնից առաջ բերուած վկայութիւններով: Մէկ էլ լսուեց Հայրիկի սրտնեղած ձայնը.

— Կարապետ Վարդապետ, կը բաւէ:

Մեր տեսուչը չփոթուած, կարմրելով կեցաւ, թղթերը հաւաքեց եւ իջաւ ամբիոնից:

Կարապետ Վարդապետը գաղափարներով պահպանողական, բայց լայնախոհ ու լուսամիտ մարդ էր՝ արտասովոր աշխատունակութեան տէր: Տեսուչ էր եւ դասատու ձեմարանում, խմբագիրը էր «Արարատ»ի, ուր տալիս էր հետաքրքրական յօդուածներ, ուսում-

ARAM webaram.com

նասիրում էր մատենադիրները, պատրաստում էր Աստուածաշնչի քննական հրատարակութիւնը, որի համար թուղթ էլ էր ապահովել, հետեւում էր հայ եւ օտար գրականութեան ու մամուլին, մի խօսքով բացառիկ հմտութեան եւ կարողութեան տէր մարդ էր: Նրա ապաքրէկը վանքն էր եւ ճեմարանը: Հայրիկը նրան հեռացրեց և՛ ճեմարանից և՛ վանքից՝ վարչական պաշտօն տալով գաւառում:

Մի ուրիշ անգամ Կոմիտասի հետ նման ձեւով վարուեց Հայրիկը: Դարձեալ Թարգմանչաց տօնի հանդէսն էր: Աշակերտներից եւ մխիթարեներից զատ մեծ թուով էլ հիւրեր էին ներկայ՝ տիկիններ եւ պարոններ:

Հանդէսը պիտի բացուէր քառաձայն երգչախումբի երգով, Կոմիտաս Վարդապետի ղեկավարութեամբ: Պիտի երգուէր Թադէոս առաքեալին ձօնուած ծանօթ երգը, որ երգչախումբը առանձնապէս յաջող էր երգում:

Տեսուչի բացման խօսքից յետոյ, Կոմիտասը անցաւ երգչախումբի դլուխը, եւ հանդիսարանը լեցուեց ներդաշնակ ու թրթռուն մեղեդիով.

— Թադէոս առաքեալ, ընդէ՞ր կաս հեռի...

Իսկապէս որ զմայլելի էր: Ներկաները, չունչերը կտրած, լսում էին: Հայրիկը, որ աչքերը խփած մտիկ էր անում, յանկարծ բացագանչեց.

— Կոմիտաս Վարդապետ, ադ չեղաւ, կեցիր: Ադ չեղաւ: Այդպէ՞ս կ'երգեն: Ես երգեմ, լսէ:

Երգչախումբը մէկէն լռեց: Կոմիտասը շփոթուած, այլայլուած էր:

— Հոս եկուր, լսէ, չարունակեց Հայրիկը: Ու ձերունիի բեկբեկուն ձայնով երգեց առաջին տունը:

— «Թադէոս առաքեալ, ընդէ՞ր կաս հեռի»... վերջացրեց դողդոջուն: Եւ չունչ առնելով ասաց.

— Իշտէ, ասանկ կ'երգեն, հասկցա՞ր:

— Այո, Վեհափառ Տէր, կմկմաց սրտաբեկ խեղճ Կոմիտասը եւ դլխիկոր քաշուեցաւ իր տեղը: Քառաձայն երգը մնաց անաւարտ:

Կարծես պաղ ջուր թափեցին հանդիսականների դլխին:

Առհասարակ Հայրիկը առիթ չէր փախցնում վշտացնելու համար Կոմիտասին: Այս բանում նրան օդնում էր Մայր Տաճարի լուսաբարապետ Ղեւոնդ Եպիսկոպոսը, որ Կոմիտասից առաջ ճեմարանում երգեցողութեան ուսուցիչ էր եղել:

ARAM webaram.com

— Ֆարմասոն, նեռում էր նա Կոմիտասի յետեւից։

— Չալղըճի, արհամարհանքով փոխադարձում էր Կոմիտասը։

Զարմանալի էր, որ Հայրիկը կարծես աւելի համակիր էր «Չալղըճի»ին, քան թէ ժամանակակից գիտութեամբ զինուած, երաժշտական տաղանդով օժտուած Կոմիտասին եւ մինչեւ մահ էլ, կարելի է ասել, Հայրիկը չկարողացաւ սրտի լեզու գտնել ուսեալների հետ։

Էջմիածնում, ուսեալները, մանաւանդ դերմանական կրթութիւն ստացած մխաբանները, Հայրիկին չէին սիրում։ Տեղն է ասելու. «Յիւրսն եկ եւ իւրքն զնա ոչ ծանեան»։

Բնորոշ էր Հայրիկի վերաբերումը դէպի ձեմարանականները։

Երկրորդ լսարանում էինք, կարծեմ, Մայիսի վերջերը, Ներսէսեան անտառում, ծառերի տակ, քննութեան էինք պատրաստւում։ Մէկ էլ մեր դլխին կանգնած տեսանք Հայրիկին, որ եկել էր զբօսանքի չաթիրի ընկերակցութեամբ։ Կայծակնահար ոտքի թռանք։

— Հոս ի՞նչ կ'ընէք, հարցրեց մտերմօրէն, ըսէք նայինք, հոս ի՞նչ կ'ընէք։

— Քննութեան կը պատրաստուինք, պատասխանեցինք։

— Քննութե՞ան, զարմացաւ կարծես, ի՞նչ առարկայի քննութիւն։

Չեմ յիշում աստուածաբանական ո՞ր ճիւղն էր։ Պատասխանեցինք, թէ ինչ էինք սովորում։

— Այա, աստուածաբան պիտի ըլլաք, հեգնեց նա կարծես արհնեղութեամբ, դոկտոր պիտի ըլլաք, խա...

Եւ մի քիչ մտածելուց յետոյ, դարձաւ մեր ընկերներից Աբշալոյա Փէոսապատեանին.

— Դո՞ւն ինչ պիտի ըլլաս ձեմարանը աւարտելէ ետքը։

Ինձ Աբշալոյան, որ վերջը գինուորական դարձաւ, կմկմաց անհամարձակ, թէ արտասահման պիտի երթայ ուսումը շարունակելու։

Այդքանը բաւական էր, որ Հայրիկը մի լաւ լուացողական տար Աբշալոյին եւ բոլորիս.

— Արտասահման... Աստուածաբանութիւն... Գիւղ գացէք։ Քահանայ եղէք։ Ուսուցիչ։ Ամուսնացէք, զաւակներ ունեցէք։ Արտասահման...

Ու բարկացած՝ ձգեց հեռացաւ։

Հայրիկը խիստ հակառակ էր, որ ձեմարանի աշակերտները

ARAM webaram.com

բարձր ուսման հետեւէին: Նա յորդորում էր, որ ձեմարանականները աւարտելուց յետոյ մտնէին ժողովրդի մէջ, իբրեւ ուսուցիչ կամ քահանայ:

Մի օր, երբ Մեծ Գլուխ Գարեգինի հետ վէհարանում էի, Հայրիկը հարցրեց ինձ.

— Ի՞նչ կ'ուզես ըլլալ ձեմարանը աւարտելէ վերջը:

Որպէսզի հաճելի երեւամ Հայրիկին, արագ պատասխանեցի.

— Վարդապետ:

— Ապուշ, արագ եղաւ եւ Հայրիկի պատասխանը:

Եւ տեսնելով իր խօսքի իմ վրայ թողած ծանր տպաւորութիւնը՝ անուշ ժպիտով բացատրեց.

— Վանքի հացը ուտողներ շատ կ'ըլլան, տղաս, դուն մեղք ես: Վրադ նայէ. եղի պէս ուժով ես: Գնա, ամուսնացիր, կամ տէրտէր եղիր, կամ վարժապետ եւ կամ գիւղատնտես: Գարեգինն ալ գիւղատնտես պիտի ըլլայ:

Ցիշում եմ Հայրիկի տուած խրատականը եւ Համազասպ Բաղէշցեանին, որ նոյնպէս յաճախ լինում էր Վեհարանում:

— Դո՞ւն հապա ինչ կ'ուզես ըլլալ, մի օր Հայրիկը ասաց Համազասպին:

— Եղբայրս կ'ուզէ, որ ժըննեւ երթամ ուսումս չարունակելու, պատասխանեց Համազասպը:

— Եղբա՞յր, բարկացաւ Հայրիկը, Գարեգի՞նը ... Դո՞ւն խենթ ես անոր պէս, թէ՞ ան խենթ է քեզ պէս ... Վան ձգած ժըննե՞ւ — ի՞նչ գործ ունիս հոն: Վան դնա, վարժապետ եղիր ...

Համազասպը, սակայն, այդ աքանչելի տղան, վերջը ծանր թոքախտ ստացաւ, եւ եղբայրը տարաւ նրան ժըննեւ, ուր եւ հոգին աւանդեց անբուժելի հիւանդութիւնից:

Գլխաւորապէս Հայրիկի ազդեցութեան չնորհիւ էր, որ վանեցի ձեմարանականների մեծ մասը վերադարձաւ հայրենիք եւ այնտեղ կարեւոր դեր կատարեց կրթական եւ յեղափոխական ասպարէզներում:

Հայրիկը առանձնապէս մեծ ուսում չունէր, համալսարանի երես չէր տեսել, կարդում էր միայն հայերէն, զարմանալի չէր, որ բարձրագոյն կրթութիւնը նրան չէր ոգեւորում, մանաւանդ որ նա տեսնում էր, որ բարձր կրթութիւն ստացած հայերը, յաճախ, կորչում էին հայ իրականութիւնից եւ խորշում էին աշխատել ժողովրդի մէջ: Նրան ոգեւորում էին հայ հողը եւ հայ ժողովուրդը, որոնց լեզուն հասկանում էր, որոնց սիրտը հարազատ էր իր սրտին

ARAM webaram.com

եւ որոնց համար գործելն ու զոհուելը երջանիկ պարտականութիւն էր համարում ամէն գիտակից հայ անհատի համար:

Երբ Հայրիկը Բեռլին էր գնում Հայկական Դատը պաշտպանելու համար, շատերը նրան ասում էին.

— Հայրիկ, հայերէնից զատ դու ոչ մի լեզու չգիտես, ինչպէ՞ս պիտի ներկայացնես դու հայ ազգի պահանջները:

— Ես, պատասխանում էր նրանց Հայրիկը, ես գիտեմ բոլոր մարդոց ծանօթ լեզուն՝ արտի լեզուն:

Արտի լեզուն ամենապերճախօս լեզուն է, երբ նա անկեղծ է եւ բխում է ժողովրդի հոգուց:

ARAM webaram.com

ԼՈՒԳԱՆՍԿԻ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ

Ճակատագիր է, երեւի, մինչեւ այժմ էլ իմ մէջ այն համոզումն է տիրում, որ առաւելապէս դժուար եւ անախորժ գործեր բաժին էին ընկնում ինձ կուսակցութեան մէջ: Օրինակի համար՝ իմ քեռի Միքիչքայի պարագան, կամ Սիւնիի գործը, եւ կամ, ինչո՞ւ չէ, Հայաստանի Հանրապետութեան «լիկուիդացիա»յի պարտականութիւնը:

Ի՞նչ է պատճառը, արդեօք բացառիկ չնո՞րհք էին վերագրում ինձ ընկերները: Ինաւ երբեք: Աւելի շուտ, պատճառը այն էր, որ ես կուսակցական որեւէ աշխատանք մերժել չգիտէի: Ռոստոմը այդպէս էր. նրա համար մեծ ու փոքր կամ լաւ ու վատ, պատուաւոր կամ անպատիւ աշխատանք գոյութիւն չունէր կուսակցութեան մէջ:

Ես էլ այդպէս էի կարծում. եթէ կուսակցութիւնը որոշել է, նշանակում է կարեւոր է եւ պատուաւոր: Ամէն մարդ Ռոստոմ չէ. բայց այս հասկացողութիւնը ընդհանուր էր Հայ Յեղափոխական Դաշնակցութեան մէջ: Մեծ ու փոքր, կամ պատուաւոր եւ անպատիւ գործ չկար. կային միայն գործեր:

Մի խօսքով, առաջ այդպէս էր, երբ մեր հոգիները դեռ կոյս էին: Վիեննայի Ընդհ. ժողովից՝ ես նոր էի վերադարձել դինովցած՝ Զաւարեանների եւ Ռոստոմների գաղափարական մթնոլորտով: Նալբանդի կենտ. կոմիտէի վրայ մի անախորժ պարտականութիւն կար. կուսակցութեան Լուղանսկի ներկայացուցիչը ինչ որ խըվըռ-զըվըռ բաներ էր արել. չտապով կարգադրութիւն էր պահանջւում:

— Դու պէտք է երթաս, մաքրես այդ կեղտոտութիւնը, ասաց կենտ. կոմիտէի դանճապահ Նաւասարդը, որ ինձ սիրում էր, բայց աւելի սիրում էր կուսակցութիւնը:

ARAM webaram.com

— Արդէն պատրաստել ենք քո վկայականը եւ գինու բագաժը — աւելացրեց անիրաւ Նաւասարդը: Նա գիտէր, որ ես պիտի չկանայի խուսափել այդ անախորժ պարտականութիւնից եւ ահա կատարուած փաստի առջեւ էր դնում ինձ:

Ինչ կարող էի առարկել. ես դեռ, թէեւ անուանապէս, պահում էի շրջիկ տիպոսը, ծանօթ էի չրջանին, ցարական որսկան շների բարքերին եւ գինեվաճառութեան նրբութիւններին. իսկապէս ինձանից աւելի յարմար մէկը դժուար էր ճարել Լուգանսկի առաքելութեան համար:

Սովորաբար, շրջիկի պաշտօնով ես չրջան էի դուրս գալիս, իբրեւ «Արաքս» գինեվաճառատան ներկայացուցիչ — կոմի վուայաժոր — գինիի շիշերով լեցուն պայուսակը ձեռքիս: Տեղ հասնելիս այցելում էի մի քանի գինի ծախող խանութներ՝ առաջարկելով իմ ապրանքը. պատահում էր, որ ապագրանքներ էլ էի ընդունում... ապա անցնում էի իմ բուն գործին: Ջգուշանում էի, որ գինու պայուսակիս մէջ որեւէ անուն կամ հասցէ չգտնուէր, որպէսզի հետք չծառայէր ոստիկանութեան ինձ հետապնդելու:

Լուգանսկում ուրիշ անգամ էլ եղել էի, գէնքի փոխադրութեան գործով, ընկերուհի Շահդէլդեանի հետ, բայց մեր ներկայացուցիչ Մեծիկեանին չէի հանդիպել: Պայուսակը ձեռքիս, ներկայացայ իր շաքարեղէնի նշանաւոր գործարանը, որ երեւոյթով կարող էր ամէն բան լինել, բացի գործարանից: Երեւակայեցէք, քաղաքի ծայրում, մի տախտակէ ախոռ խարխուլ դռներով: Ներսը, կիսախաւարում, աշխատում էին մի երկու տասնեակ մարուշկաներ: Այստեղից դուրս էին գալիս Լուգանսկ քաղաքի եւ չրջակայ գիւղերի երեխաներին սիրելի դոյնդոյն թղթերով կանֆէտները, չամիչի միջուկով պրեանիկները, շաքարէ աքաղաղները փայտի կոթերի վրայ, բալի եւ ծիրանի մուրաբաներ: Լուգանսկում հռչակաւոր էր Միցիկովի անուշեղէնի, ամօթ է ասել, գործարանը:

Բայց իմ վրայ աւելի մեծ տպաւորութիւն արաւ գործարանատէրը ինքը: Պատկառելի երեւոյթ ունէր ընկեր Մեծիկեանը: Ցաղթանդամ, խոշոր աչքերով, երկփեղկեալ մօրուքով, գուռնա քիթով՝ կարծես Աղեքսանդր Երկրորդի ժամանակներից մնացած մէկը լինէր:

Բարեւեցի եւ «գինիի ներկայացուցիչ եմ» ասացի ռուսերէն:

— Սխալ տեղ էք եկել, պարոն, այս անուշեղէնի գործարան է, պատասխանեց նա՝ հպարտութեամբ չեչտելով գործարան բառը:

— Եկել եմ ձեր գործարանից պրեանիկ գնելու, արտասանեցի ես պայմանագրական նախադասութիւնը հայերէն:

ARAM webaram.com

— Դէ, հէր օրհնած, այդպէս ասա, է՛, ձեռ ու ոտ ընկաւ նա եւ հրաւիրեց նստելու մի խարխուլ աթոռի վրայ:

Յոյց տուի նրան Նալբանտի կենտ. կոմիտէի կարմիր կնիքով վկայականը: Նա կարդաց ուշադրութեամբ եւ ասաց վճռական կերպով:

— Գիտե՞ս ինչ, հիմա չուտով ընթրիքի ժամանակ կը լինի, անօթի փորով լուրջ բաների մասին կարելի չէ խօսել: Երթանք, մի պատառ հաց ուտենք միասին, ապա խօսենք:

Խոստովանւում եմ, ինքս ինձ մոռածեցի, այս անպիտանը ուզում է ինձ ընթրիքով կաշառել:

Տարիներ վերջը ես լսեցի Ալաշկերտի վանահայր Յովհաննէս եպիսկոպոսի պատմութիւնը, ճիշդ իմ պարագային յարմար:

Ալաշկերտի հարուստ եւ հռչակաւոր Ս. Յովհաննու վանքի նոյնքան հռչակաւոր վանահայր Յովհաննէս եպիսկոպոսը տարիներ շարունակ, զանազան պատրուակներով, մերժում է Պոլսի Պատրիարքարանին հաշիւ ներկայացնել: Պատրիարքարանը, ի վերջոյ, պալաքեան վարդապետին ուղարկում է Ալաշկերտ, վանքի հաշիւները քննելու համար:

Պալաքեանը տեղ է հասնում եւ պահանջում է:

— Սրբազան, տեսնենք վանքի ելեմուտքի մատեանները:

— Օրհնեալ, պատասխանում է վանահայրը, առաջ մէկ փորբերնիս կշտացնենք, վերջը մուտքն էլ կը տեսնես, ելքն էլ:

Եւ մի փառաւոր ճաշով հիւրասիրում է Պատրիարքի քննիչին:

Ճաշից յետոյ, Պալաքեան վարդապետը խնդրում է նորից:

— Սրբազան, ցոյց տուր վանքի մուտքն ու ելքը:

— Հէր օրհնած, պատասխանում է սրբազանը, ի՞նչ մուտք, ի՞նչ ելք... Ահա մուտքը, ցոյց է տալիս ձեռքով բերանը: Ահա ելքը, ցոյց է տալիս յետոյքը...

Գրիգորիս վարդ. Պալաքեանը, ինչպէս եկել էր Ալաշկերտ, այնպէս էլ վերադառնում է Պոլիս, ձեռնունայն:

— Մեծիկեանը, մոռածում էի ես ճաշարանի ճանապարհին, պիտի խայտառակէ ինձ:

Ճաշարանն էլ Մեծիկեանի գործարանի նման մի բան էր. փայտէ, առանց սիւռոցի սեղաններ, պատերին ճանճերի հետքերով ճոխ զարդարուած աժաննոց նկարներ: Ճաշարանի տէրը, կապոյտ գոգնոցով մի Իվան տեղաւորեց մեզ Մեծիկեանի նախասիրած անկիւնում եւ հարցական ձայնով ասաց.

ARAM webaram.com

— Վոտկա՞, բո՞րշչ, կոտլե՞տի...

Ես օղիից հրաժարուեցի, Մեծիկեանը խմեց մի գաւաթ:

Բորշչն ու կոտլետը համեղ էին, բայց աւելի սիրեցի Մեծիկեանի խօսածները: Ճաշարանում դեռ մարդ շատ չկար, մեզ չէին խանգարում:

— Հիմա, Ընկեր Երչիկ, սկսեց Մեծիկեանը, կոտլետի վերջին պատառը կուլ տալով: Հիմա, ուզում էք, ես ասե՞մ, թէ ինչու համար ձեզ ուղարկել են ինձ մօտ:

«Դու»ն փոխեց «դուք»ի եւ հանդիսաւոր տեսք առաւ:

— Երկար ժամանակ է սպասում էի, որ գաք, որ մէկը գայ կիսատ մնացած գործերն ու հաշիւները ստանձնելու: Գրել եմ, լուր եմ ուղարկել... երեւի, պէտք է եղել, որ ուրիշները գրեն...

Այստեղ էլ կան բարի պատուղները, որոնք նախանձում են Մեծիկեանի վայելած դիրքին քաղաքում, Մեծիկեանի գործարանին... Իսկապէս, նախանձելի դիրք, մանաւանդ, նախանձելի գործարան, ծիծաղում էի ես մտքումս:

— Այո, նախանձող բարի պատուղները, անշուշտ, յայտնել են կենտ. կոմիտէին, թէ Մեծիկեանը անպիտան մարդ է, չարաշահութիւններ է անում, կուսակցական դրամ է վատնել, գոյքեր է իւրացրել, ոսոխականութեան հետ է տեսնուում, եւ ուրիշ ո՞վ գիտէ ինչեր... Խոսոովանեցէք՝ ճիշդ չե՞մ ասում:

Խոսոովանուելու հարկ չկար. հէնց այդ եւ նման ամբաստանութիւնների հիման վրայ էր կենտ. կոմիտէն ինձ ուղարկել Լուպանակ:

Առանց անուններ տալու, ես յայտնեցի, որ կենտ. կոմիտէն նման ամբաստանութիւններ է ստացել, եւ ես ահա եկել եմ քննելու:

— Շատ ուրախ եմ, շատ, շատ: Հիմա երթանք եւ իմ պատասխանը լսեցէք:

Վերադարձանք գործարան, ուր արդէն աշխատանքները դադարած էին, եւ մարդ չէր մնացել ներսը: Մեծիկեանը պինդ գոցեց դուռը եւ ինչ որ տեղից հանելով թղթերի մի տրցակ՝ բերեց առջեւս դրեց:

Միասին մէկ մէկ աչքէ անցկացրինք:

Ահաւասիկ պատճէնները այն նամակների, որ Մեծիկեանը գրել է կենտ. կոմիտէին, որ առնեն իրենից գործերն ու հաշիւները:

Այդ նամակները ես տեսել էի կենտ. կոմիտէի թղթերում Մեծիկեանի գործերին ծանօթանալիս:

ARAM webaram.com

Ահաւասիկ եւ մուտքի հաշուեմատեանը, ուր խնամքով արձանագրուած էին մուտքի եւ ելքի դումարները: Վերջը ինձ անծանօթ ձեռքով գրուած էր. «կենտ. կոմիտէի կողմից քննեցի ելեւմուտքը եւ գտայ համապատասխան փաստաթուղթերին: Մնացորդ դումարն է»... Ջեմ յիշում, ինչքան էր...

Ստուգեցի փաստաթուղթերը, որոնք համապատասխան էին հաշուեմատեանին:

Վերջը յայտնի եղաւ, որ անծանօթ ձեռքը ինձ լաւ ծանօթ Գր. Բեղելեանինն էր, կենտ. կոմիտէի նախկին անդամ: Հաշիւին, առանձին պահարանով, կցուած էր մնացորդ դումարը՝ մի քանի հարիւր ռուբլի:

Ահա եւ ապրանքի հաշիւը. խնամքով արձանագրուած էր, թէ ինչքան գէնք էր գնուած, ինչքան փամփուշտ, ինչ գնով: Ե՞րբ, ո՞ւր էր ուղարկուած այդ ապրանքը, ո՞ւմ միջոցով: Եւ այս հաշուի տակ էլ անծանօթ ձեռքի արձանագրութիւնը, թէ ստոյգ եւ համապատասխան է փաստաթուղթերին:

Այս փաստաթուղթերն էլ աչքէ անցկացրինք մէկիկ-մէկիկ: Ստոյգ էր:

Այնքան ստոյգ էր եւ այնքան կանոնաւոր, որ մարդ սկսում էր կասկածել, թէ արդեօք տակը մի բան չկա՞ր...

Երիտասարդ էի եւ դեռ անփորձ սեւը ճերմակից չոկելու համար: Տարիներ վերջը ես լսեցի Ռոստոմի խրատը.

— Մաքուր ներկայացուած հաշիւներից զգուշացիր:

Աւելի վերջը աչքերովս տեսայ ալաշկերտցի թուրք դիւղացու կոյս թղթի վրայ մաքուր հայերէն լեզուով գրուած ստացական. «Ես Ալաշկերտի այսինչ դիւղի բնակիչ Հասան Մահմէտ Օղլի ծախեցի կամաւոր այսինչին այսքան հարիւր խուրձ եոնջա եւ ստացայ այսքան ռուբլի»:

Ցայտնի չէ, թէ ամբողջ տիեզերքում Հասան Մահմէտ Օղլի հայագէտ թուրք դոյութիւն ունեցե՞լ է, բայց մեր կամաւորական խմբի թղթերի մէջ, եթէ պահուել են, այդ երեւելի ստացականը կարելի է գտնել: Կասկածում եմ, որ կամաւորների ձիերն էլ վայելած լինէին այդ եոնջան...

Ցամենայնդէպս Մեծիկեանի հաշիւները իմ վրայ խորունկ տպաւորութիւն գործեցին: Ես համոզուեցի, որ մարդը անմեղ էր:

— Հիմա ի՞նչ, հարցրի ես. ես բաւարարուած եմ:

— Հիմա պէտք է երթալ, քնել, ուշ է արդէն:

ARAM webaram.com

Եւ, «դուք»ը նորից փոխելով «դու»ի՝ աւելացրեց.

— Վաղը կ՚առնես հաշիւները ու փողը, ինձ մի ստացական կը տաս եւ կը մեկնես:

— Ստացականի ի՞նչ պէտք կայ, առարկեցի:

— Պարզ չէ՞ մինչ: Որպէսզի վաղը մի ուրիշ հաշուեքննիչ չգայ նոր քննութիւն կատարելու:

Եւ, կարծեմ, իրաւունք ունէր: Եթէ հաշուեյարդարի ստացական լինէր կենտ. կոմիտէի արխիւում, ես ի՞նչ պէտք պիտի ունենայի այժմ լուգանակ գալու:

— Հիմա ես քեզ կը տանեմ Գրանդ Օթէլ, վաղը՝ Ատուած ողորմած է: Գրանդ Օթէլը բարեկամիս պանդոկն է, մի բան չէ, բայց ոչինչ, մէկ գիշեր է, կը լուացնես:

Գրանդ Օթէլը, իսկապէս որ «մի բան չէր»: Մեծիկեանի գործարանին համարժէք մի հաստատութիւն:

Սպասաւորը տեղաւորեց պայուսակս սենեակի անկիւնում, բացեց ամայութեան վրայ նայող պատուհանը եւ զննող հայեացքով նայելով աչքերիս՝ հարցրեց:

— Ընկերուհի ուզո՞ւմ էք:

Չհասկացայ: Մեծիկեանը խնդաց եւ դուրս արաւ սպասաւորին.

— Գնա, այս պարոնը քո գիտցած մարդկանցից չէ:

— Ի՞նչ էր ասում այդ աւանակը, հետաքրքրուեցի:

— Ոչինչ, ասում էր ի նոցանէ ուզո՞ւմ էք, չանհանգստանաս: Գիշեր բարի: Առաւօտ կը գամ:

Բայց առաւօտեան գալու պէտք չեղաւ:

Առաւօտուայ ղէմ էր, երբ ընդոստ զարթնեցի դրսի աղմուկից: Միջանցքից եւ կողքի սենեակներից լսում էին կանացի ճիչեր, դռների ուժեղ հարուածներ, տղամարդկանց հայհոյանքներ: Ի՞նչ էր կատարւում արդեօք: Ես արագ հագնուեցի:

Աղմուկը արագ սաստկանում էր եւ, կարծես, մօտենում էր իմ սենեակին:

Մէկը ոտքով խփեց իմ դրան: Բռունցքով հարուածեց.

— Բաց առէք դուռը:

Ո՞վ էր, ի՞նչ էր ուզում:

— Բացէք դուռը, դանչում էր մի խռպոտ ձայն, ոստիկանութիւնն է:

Ահա թէ ինչ: Ուրեմն, առնէտի պէս ընկանք թակարդը:

ARAM webaram.com

Առանց մտածելու, թէ ինչ եմ անում, մօտեցայ պատուհանին. բարձր չէր, առաջին յարկի վրայ: Գետինը կակուղ էր: Լոյսը դեռ չէր բացուած: Անհետացայ մթութեան մէջ:

. . . . . .

Երբ կենտ. Կոմիտէի նիստում վերջացրի զեկուցումս, նաւաստիը հարցրեց.

— Չե՞ս կարծում, որ Մեծիկեանի մասը կար այս գործում:

Այդ ուղղութեամբ ես չէի մտածել. այնքան անկեղծ երեւացին ինձ Մեծիկեանի խօսքերը:

— Այնուամենայնիւ, քննենք ու տեսնենք, որոշեց կենտ. Կոմիտէն:

Մի շաբաթ անցած եկաւ Մեծիկեանը: Անձամբ բերեց մօտի թղթերն ու դրամը եւ ասաց.

— Ցաւում եմ պատահածի համար: Դուք, երեւի, մտածեցիք՝ Մեծիկեանի խաղերն են: Արեւովս վկայ՝ ես մեղք չունեմ. Գրանդ Օթէլը վատահամբաւ կանանց պանդոկ է: Այդ դիշեր կռիւ է ծագել կանանց եւ յաճախորդների միջեւ: Ոստիկաններ են կանչել: Երբ դուռը կոտրելով բացել են, գտել են որ սենեակը պարապ է: Գրաւել են պայուսակը եւ որպէսզի գինին մնայ իրենց, փախստականի մասին լուր չեն տուել: Այս է ամբողջ պատմութիւնը:

Այս բացատրութիւնն էլ չպարզեց հանելուկը. աւելի եւս կասկածելի դարձրեց. Մեծիկեանի մասը դեր ունէ՞ր այս պատմութեան մէջ, թէ չունէր:

— Ունէր, պնդում էր Նաւաստիը, որ առհասարակ բարեմիտ եւ յաւատես մարդ էր:

Կասկածը էլ աւելի սաստկացաւ, երբ մի տարի վերջը լուր եկաւ Լուգանակից, թէ Մեծիկեանի անուշեղէնի գործարանը հիմնայատակ այրուել էր: Մեծիկեանը մի քանի շաբաթ առաջ ապահովագրել էր խոշոր գումարով: Նաւաստիի բերանում Մեծիկեան անունը հաւասար էր հայհոյանքի: Գործարանի հրդեհի պարագան իմ մէջ էլ խախտեց հաւատս, բայց...

Անցան տարիներ: Պատահաբար, ես էջմիածնում էի Իմիրլեան կաթողիկոսի աթոռակալութեան օրը: Մեծ բազմութիւն կար Վեհարանի առջեւ եւ տաճարի շուրջը:

Իմիրլեանի տաճար մտնելուց յետոյ, աչքիս ընկաւ մի դէմք Գէորգ Զորբորդի տապանաքարի կողքին: Տէր Աստուած, ո՞ւր էի

ARAM webaram.com

տեսել այս չաթալ մօրուքը, ո՞ւր էի տեսել: Նա էլ ինձ էր նայում ուշադիր:

Աա՛, չաքարեղէնի նշանաւոր գործարանատէր Մեծիկեանն էր, կարծէք բնաւ չէր փոխուել: Մօտեցայ: «Ձեզ ծանօթ դիմելաճառն եմ», ասացի: Ծիչեց: Ուրախացաւ:

— Ի՞նչ էք անում դուք այստեղ, հարցրի:

— Նոյնը ինչ որ դուք, եկել եմ ուխտի, մեղքերս քաւելու կատակեց:

Պարզուեց, որ գործարանի այրուելուց յետոյ, երկար դատ է ունեցել ապահովագրական ընկերութեան հետ: Կասկածել են, որ Մեծիկեանը ինքն էր այրել գործարանը: Ի վերջոյ, դատարանը վճռել էր յօգուտ Մեծիկեանի: 10·000 ռուբլի էր ստացել:

Իրաւունք ունի մեղքերը քաւելու, մտածեցի ես, բայց...

— Այդ գումարը, 10·000 ռուբլին դրել եմ դրամատուն մեր գիւղի անունով, որպէսզի մեր գիւղում դպրոց չինուի, շարունակեց նա:

Նաւասարդը որ լսէր, հիմա ի՞նչ պիտի ասէր: Կարելի՞ էր որ մարդ իր ձեռքով գործարանը այրէր, որպէսզի խարդախութեամբ ստացած գրամով դպրոց չինէր:

Հայ մարդուց ամէն բան կարելի է սպասել, պիտի ասէր Նիկոլ Աղբալեանը:

Այնուհետեւ չիմացայ. Մեծիկեանը իսկապէս դպրոց չինե՞ց, թէ խօսք էր միայն, ինձ պէս միամիտների աչքին փոշի փչելու համար:

Համոզուած էլ չեմ վերջնականապէս, թէ Մեծիկեանի ներկայացրած մաքուր հաշիւները իսկապէ՞ս մաքուր էին եւ թէ Գրանդ Օթէլի պատմութեան մէջ նրա մատը չկա՞ր...

Տէր, ներէ ինձ, եթէ մեղաւոր եմ...

ARAM webaram.com

ՍԱՐԳԻՍ ՍՐԱՊԻՈՆԵԱՆ — ԼՈՒԿԱՇԻՆ

Մեր կեանքի արշալոյսին, երբ դեռ մանուկ էինք եւ մեր հոգիները պղտորուած չէին զանազան վարդապետութիւններով, Սարգիսն ու ես մտերիմ ընկերներ էինք: Հետագային, երբ սկսեցինք կարծել, թէ արդէն մեծ ենք ու խելահաս, մեր ճանապարհները բաժանուեցին, ու հեռացանք իրարից. նա գնաց դէպի մարքսիզմը, ես՝ դէպի Հ. Յ. Դաշնակցութիւնը:


Ընկեր լինելուց բացի — կամ ընկեր լինելուց աւելի — Սարգիսն ու ես նաեւ ազգականներ էինք: Սարգսի մայրը եւ իմ մայրը երկու հարազատ քոյրերի զաւակներ էին ու շատ մտերիմ ընկերուհիներ:

Ընդհակառակը, Սարգսի հայրը եւ իմ հայրը յայտնապէս իրար չէին կարողանում տանել:

Սարգսի մայրը, բնաւորութեամբ քնքոյշ լինելու աստիճան մեղմ, դիւրահաւատ, նոյնիսկ միամիտ, բարի եւ հեզ կին էր, իր ամուսնու ստուերը՝ դուրսը, թէ տանը: Ամուսինը, Լուսանդէն Սրապիոնեանը, կամ գիւղում եւ գիւղից դուրս ամէնքին ծանօթ Լուկաչ աղան, հիմնովին հակառակ բնաւորութեան եւ նկարագրի տէր մարդ էր. մինչեւ հասակով, թուխ եւ արտայայտիչ դէմքով, անփոյթ ցրիւ եկած մազերով, միշտ դայեակը ձեռքը — բալենիի ճիւղից ամուր գաւազան — թափանցող ու խորամանկ աչքերով, ամէն բան գիտցող, գիւղ ու քաղաք տեսած, ամէնքին ծանօթ, համարձակ, ինքնավստահ, բարձր խօսող եւ ուրիշի խօսքին կարեւորութիւն չտուող մէկն էր: «Հանած-վարած մարդ է, ասում էին նրա մասին գիւղացիները, մէկ գաւաթ ջուր որ ուզէ, չապիկդ վրայդ կ'առնէ»... Նաեւ նշանաւոր ճիրու դողի համբաւ էր վայելում:

ARAM webaram.com

Սարգիսեանք ապրում էին Թուխախ գիւղում, մենք՝ Մեծ-Սալայում, իրարից ութ-տասը քիլոմեդր հեռու: Թուխախն մեծ, հարուստ գիւղ էր, բայց բնակիչները համաբուում էին մի քիչ կոպիտ՝ բարքերով ու լեզուով, եւ մի քիչ պահպանողական ու խնայասէր: Մեր գիւղը Թուխախից էլ մեծ էր, նոյնպէս՝ հարուստ, բնակիչները աւելի յղկուած եւ աչքառու տեսած, եւ ըստ այնմ էլ աւելի ծախսող: «Փոքրիկ Փարիզ» ասում էին Մեծ Սալայի մասին: Թուխախի եւ Մեծ Սալայի միջեւ ընկած էր Փոքր Սալա գիւղը, որ նկարագրով էլ միջակութիւն էր կազմում հարեւան երկու գիւղերու համեմատութեամբ:



ՍԱՐԳԻՍ ՍՐԱՊԻՈՆԵԱՆ – ԼՈՒԿԱՇԻՆ

Տարին հինգ-վեց անդամ Սարգիսեանք ընտանեքով ամառ կամ ձմեռ հիւր էին գալիս մեր տունը: Նոյնքան էլ մենք գնում էինք նրանց մօտ: Մեր գիւղի ուխտին, Ատուածածնի մօնին, կամ ձմեռը, մնում էին մի քանի օր: Նոյնպէս վարուում էինք եւ մենք: Լուկաշ աղան եւ հայրս, սովորաբար, բարեւ-ասած-ողջոյրեւից ու կեցակուրիչ վերջ, բաժանուում ու գնում էին ամէն մէկը իր սիրած մարդկանց մօտ: Սարգսի եւ իմ մայրերը, գլուխ-գլխի, առանձնանում անվերջ խօսակցութիւններով՝ «կարօտը առնելու» իրարից: Մենք՝ երեխաներս, Սարգիսն ու իր փխրուն քոյրիկը, ես եւ իմ քոյրերը զբաղուում էինք տունն ու բակը աղմկալի խաղերով: Երջանիկ մանկութիւն՝ անհոգ ու անվիշտ:

Սարգիսը սովորում էր իրենց գիւղի ծխական դպրոցում: Ընդունակ, բայց անառակ աշակերտ էր: Հայրը երես էր տալիս նրան: Ուսուցիչները օձիք էին թօթուում: Թաղի կատուները եւ ազաւնիները հանգիստ չունէին նրա ձեռքից:

ARAM webaram.com

Ես նոր էի սկսել հայանալ, մեր դիւղի ծխական դպրոցում։ Սարգիսը ծաղրում էր իմ հայերէնը, բայց ես յաղթում էի նրան իմ ուսերէնով։ Խաղերի եւ հնարամտութեան մէջ եւս նա գերազանց էր։ Սիրում էր, որ ինքը լինէր նախաձեռնողն ու գլխավորը եւ ուրիշները հետեւեն իրեն։ Մի բանում մենք զրեթէ հաւասար էինք. երգելու ընդունակութեամբ։ Ներդաշնութիւն — անընդունակութեամբ...

Մեր մտերմութիւնը Սարգսի հետ չարունակուեց եւ Նոր Նախիջեւանի թեմական դպրոցում։ Նա ինձանից մի դասարան բարձր էր։ Այստեղ էլ նոյն Սարգիսն էր. դասերի մէջ՝ ընդունակ, վարք ու բարքով՝ անառակ, բայց ոչ առաջուայ նման չար։ Գոնէ ուսուցիչները նրանից չատ չէին գանգատւում։

Դպրոցում եւ դուրսը խաղընկերների մտերիմ շրջանակ ունէինք։ Ինձ առանձնապէս մօտ էին Սարգիսը, որա համագիւղացի Համբարձում Տէրտէրեանը, Սարգիս Տիրացուեանը, Զալիբը գիւղից, հօրից զուրկ, լաւ սովորող, խելօքիկ, չատ կարդացող, ինձ նստարանակից գիշերօթիկ մի տղայ, Սահակ Մխանիկեանը, ինձ համագիւղացի Սերովբէ Տիրցաուեանն ու Եղիա Ախայեանը։ Երբեմն մեր խմբին, այս կամ այն առիթներով, միանում էին Սահակի կրտսեր եղբայրը՝ Ալեքսան Մեսանիկեանը, Թոմանոս Մելիքեանը՝ ապագայ երաժշտագէտ, Ստեփան Զօհրապեանը՝ մեր գիւղից եւ ուրիշներ։ Դեռ կուսակցական խնդիրները չէին պղտորել մեր միտքն ու սիրտը։ Համերաշխ ու սիրով՝ անհոգ պատանիներ էինք։ Արեւը մեր վերեւ եւ մեր սրտերում։ Եւ գիրք ու խաղ՝ մեր երջանիկ կեանքի բովանդակութիւնը։

Այստեղ էլ Սարգիսը, կարելի է ասել, պարագլխի դերում էր։ Ծրագրում ու վարում էր խաղերը։ Գիտէր, թէ որի՞ բոստանից ձմերուկ կամ վարունգ կարելի էր թռցնել. որի՞ պարտէզում պտուղները արդէն հասել էին եւ ինչպէ՞ս կարելի էր մաքրագործել ծառերը։

Երբեմն իջնում էինք Դոնի ափը — եալին — լողալու։ Գրեթէ ամէնքս լաւ լողացող էինք։ Դոնը, լայն ու հանդարտ, մեզ գրաւում էր տօթ օրերին։ Մանաւանդ, հրապուրիչ էին բոստանները գետի միւս եղերքին։ Լողալով կտրում էինք ջրային տարածութիւնը, ապա դաղտագողի ամէնքս քաղում էինք մի գոյգ ձմերուկ, իրար էինք կապում կօշիկներից եւ նետում ջուրը թեւերի տակ առած։ Ձմերուկները դիւրացնում էին ջրի երեսը մնալը, եւ համեղ աւարով վերադառնում էինք մեր եղերքը խրախճանքի համար։

Երբ պտուղները սկսում էին հասնել, Սարգիսը մեզ առաջնորդում էր ամառանոցները, երկաթուղու երկու կողքը, ուր կարելի

ARAM webaram.com

էր հիանալի ծիրան, սալոր կամ խնձոր թողնել պահապանների քթի տակից: Գողցուած պտուղը այնպէս համեղ էր լինում, մանաւանդ, երբ համեմուած էր պարտէզի պահապանի հայհոյանքով:

Այդպիսի արշաւանքների ժամանակ Սարգիսը միշտ առաջին գծի վրայ էր թէ՛ յարձակուելիս, թէ՛ նահանջի ժամանակ, նշանաւոր փախչող էր: Ճեմին շարքերում միշտ մնում էր Ալեքսան Մեսրոպեանը, որին երբեմն պահապանների ծեծն էլ բաժին էր հասնում: Պէտք է խոստովանեմ, որ ես էլ առանձին ճարպիկութիւն չէի ցուցադրում:

Մի անգամ, մեր դիւղում, Սարգիսը մեծ պահանջ զգաց մազդաթի ծամելու: Ծամոնը կարելի էր գնել մօտակայ խանութից՝ հատը մէկ կոպէկով կամ մէկ հաւկիթով: Կոպէկ, ի հարկէ, չունէինք: Սարգիսը հանճարեղ գաղափար յղացաւ հաւկիթ թողնելու մօրաքոյր Հռիփսի fոմՀէսից՝ հաւաբոյնից: Ինքը պիտի հսկէր, որ մարդ վրայ չհասնէր, ես պէտք է մտնէի եւ հաւերի բոյնից հաւկիթներ առնէի:

Այդպէս էլ արինք: Սարգիսը պահակ կանգնեց, իսկ ես փորձեցի մտնել հաւաբոյնը: Նղովեալ դուռը նեղ էր, հազիւ յաջողուեց մինչեւ մէջքս սողոսկել հաւաբոյնի մէջ եւ մի քանի հաւկիթներ առնել ածամանից: Մէկ էլ մարմնիս դուրսը մնացած կակուղ մասին՝ փայտի ուժեղ հարուած, երկրորդը, երրորդը...հազիւ պրծայ դուրս՝ ձեռքերս կոտրուած հաւկիթների մէջ կեղտոտած... մօրաքոյրս էր՝ փայտով զինուած, ցասումը աչքերին: Սարգիսը փախել էր, չկար...

Մեր դիւղերում հարսանիք հրաւիրելու նախնական ձեւ էր մնացել: Հարսանիքի տէրը, մի չարաթ առաջ, պատրաստել էր տալիս խորիզով դաթա: Ապա մի քանի պատանիներ կամ երիտասարդներ, դաթաները լեցրած հէպկէի մէջ, ձիու վրայ, տնից տուն դաթա էին բաժանում՝ յատուկ հրաւէրով: Ձիաւորը կանգնում էր դրան առջեւ եւ գանչում, օրինակ.

— Մելքոն աղա, դուռը բաց:

Մելքոն աղան երեւում էր դրան չէմքին: Ձիաւորը գանչում էր.

— Մելքոն աղա, հարսնիք հրամայեցէք Պապուչի Լուսապատոնի Սերոբի տունը էկող ժէքշաբթի:

Եւ հէպկէից հանելով՝ երկարացնում էր մի դաթա:

— Շէն կենաս, տառոսը քեզի, կեցիր մէկ գաւաթ ոսխի տամ, պատասխանում էր Մելքոն աղան եւ օղիով հիւրասիրելուց յետոյ, բաց էր թողնում ձիաւորին: Հարսանիքի հրաւէրը ընդունուած էր:

Իմ հօրաքրոջ տղայի հարսանիքին դաթա բաժանողներից էր

ARAM webaram.com

Սերոբ Տիրացուեանը, որ կարիճ տղայ էր: Երեկոյեան, արդէն մութը ընկած, նա կանգ է առնում դիւղի տղաներից՝ Դոմբայի Մուկասի Լուսեղէնի դրան առջեւ ու դանչում՝ դաթան ձեռքին.

— Հէյ, Լուսեղէն տղա...

Յանկարծ, անից դուրս է թռչում Լուսեղէնը եւ ապտակի ուժեղ հարուածով ձիուց գետին է գլորում Սերոբին...

Սկսւում է դատ ու դատաստան Սերոբի ծնողների եւ Լուսեղէն տղայի միջեւ, որ վերջանում է տուգանքով վերջինիս կողմից:

Պարզուեց, որ նոյն երեկոյ, մի ուրիշ դաթա բաժնող ձիաւոր դուրս էր կանչել Լուսեղէն տղային եւ հարսանիք հրաւիրելով դաթա տուել եւ անմիջապէս անհետացել էր: Լուսեղէն տղան ներս մանելով՝ տեսել էր, որ դաթայի փոխարէն իրեն տուել են եաթմա (կլոր աթար)... Երբ քիչ վերջը եկել էր Սերոբը, Լուսեղէն տղան, նրան կարծելով եաթմա բերող, ծեծել էր:

Վերջը, շատ ուշ, յայտնի եղաւ, որ եաթմա հրամցնողը Սարգիսն է եղել, որ այդ օրերին հիւր էր մեզ մօտ եւ կռիւ էր ունեցել Լուսեղէն տղայի փոքր որդու հետ: Այնուհետեւ Լուսեղէն տղայի անունը մնաց եաթմա Լուսեղէն...

Մեր թեմական դպրոցի տեսուչն էր «պետական խորհրդական եւ ասպետ» Գալուստ Կարպովիչ Զաբրխեանը, կարճահասակ, այծի կերպարանքով, անդիկի պէս շարժուն, տարօրինակ մի անձնաւորութիւն: Պարոն տեսուչը ապրում էր դպրոցի բակում, եւ իր տնից մինչեւ դպրոցի պատը երկարած պարանի վրայ, աշնան, չորացնում էին ապուխտ, երշիկ, ոչխարի լեղու: Ձմռանի եւ սխտորի հոտը գրգռում էր աշակերտների ախորժակը եւ հրաւիրում ոչ-օրինական քայլերի, բայց պետական խորհրդականը եւ ասպետը աչալուրջ հսկում էր չարագործներիս, մանաւանդ, կատուներին, որոնք սիրահար էին ապուխտի: Մէկ էլ տեսար, Զաբրխեանը ընդհատում էր մեր լատիներէնի դասը եւ վազում դէպի պատուհանը.

— Փռիշտ, անպիտան... փիշ, սատկած, քշում էր ապուխտին թաթը երկարող կատուին: Ու վերջը, դասի մնացած մասը, բարոյախօսութիւն էր կարդում կատուների եւ մեր դլխին: Եթէ կատուն յամառէր, օդնութեան էր կանչում սպասուհուն կամ կնոջ.

— Մաշինկա՛, իդա սատկած կատուին նայէ, ապուխտը կերաւ...

Մաշինկան, լեցուն մարմինը շարժելով, մերկ ոտքերը մուճակների մէջ, աւելը ձեռքին, ազմուկով, վազում էր դէպի կատուն:

ARAM webaram.com

Դպրոցի պատուհանները չխկոցով փակուում էին, միւս դասարանների դասերն էլ խանգարուում էին...

Մի օր էլ տեսանք, որ ապուխտով եւ երշիկով ծանրաբեռնուած պարանը անընդհատ շարժուում էր, բայց կատու չէր երեւում: Կասկածելի շարժում էր, մեզ համար էլ լաւիններէնից խուսափելու մի միջոց:

— Պարոն տեսուչ, կատու կայ, բացագանչեց մօտս նստած Սարգիս Տիրացուեանը:

Տեսուչը դիրքը ձգած՝ վազեց դէպի պատուհանը: Կատու չէր երեւում, բայց պարանը շարժուում էր:

— Փռիշա... փռիշա, պոռաց տեսուչը... Մաչինկա՛, ապուխտը նայէ...

Մաչինկան, ապաստուհին, տեսչի երեխաները դուրս թռան տընից: Բակը լեցուեց ազմուկ-ժխորով, երեխաների ճչոցով... ամէնքը վազեցին դէպի անկիւնը, որ աննկատելի էր մեր դասարանից: Եւ չուտով, պոռում-պոչումով առաջ քաշեցին...Սահակ Մեսրոպեանին: Ջարբխանը չտապեց վար իջնել: Բակում ազմուկը սաստկացաւ:

Սահակ Մեսրոպեանը դիչերօթիկ էր, որկրամոլ տղայ: Սարգիսը հրապուրել էր նրան երշիկով: Որոշել էին միասին դասից բացակայել եւ ապուխտ ու երշիկ «կազմակերպել»: Սարգիսը կանգնել էր պահակ վարի յարկի պատուհանում, իսկ Սահակը աննկատելի անկիւնից ապուխտ ու երշիկ պիտի թռցնէր ու Սարգիսին յանձնէր, վերջը միասին անուշ պիտի անէին: Սակայն, հաշուի չէին առել պարանի շարժումը, որ մատնել էր նրանց: Երբ ազմուկը բարձրացել էր, Սարգիսը աւարը առած կծիկ էր դրել. մէջտեղը քաւութեան նոխազ էր մնացել Սահակը...

Գործը, վերջը, լուրջ հանգամանք ստացաւ: Մանկավարժական ժողովն էլ դրաղուեց: Քիչ մնաց Սահակին արտաքսէին դպրոցից: Սարգիսը մնաց անխոցելի. Սահակը չմատնեց նրան...

Մեր երջանիկ չրջանակը չուտով ցրիւ եկաւ: Ես մեկնեցի էջմիածին՝ Գէորգեան Ճեմարանը: Այնտեղից իմացայ, որ Սարգիսը հեռացել է Բագու, դիմնազիա մտնելու նպատակով: Բագուն նաւթարդիւնաբերական կենտրոն էր, արագ հարստացող դրամատէրերի եւ անսիրտ շահագործման ենթակայ բանուորութեան դասակարգային բախումների ասպարէզ: Սարգիսը ընկնում է այստեղ սոցիալ-դեմոկրատների չրջանակը, Ստեփան Շահումեանի ազդեցութեան տակ, եւ, ի վերջոյ, յարում է սոցիալ-դեմոկրատ կուսակցութեան,

ARAM webaram.com

առանց նախօրօք դաշնակցական դառնալու, ինչպէս հայ սոցիալ-դեմոկրատներից չատերը: Ես, Գէորգեան ճեմարանում, ամբողջ էութեամբ յափշտակուեցայ դաշնակցական գաղափարախոսութեամբ եւ այնուհետեւ իմ ամբողջ կեանքը ընթացաւ ազգային մթնոլորտի մէջ: Բնական կերպով, Սարգսի հետ մեր ճանապարհները բաժանուեցին:

Այս գաղափարական բաժանումը, անխուսափելի կերպով, առաջ բերեց եւ բնական, եթէ ոչ պաղութիւն, դէթ անտարբերութիւն նաեւ անհատական յարաբերութիւնների մէջ, մանաւանդ, որ հեռաւորութեան պատճառով, առօրեայ որեւէ շփում չունէինք իրարու հետ: Ի՞նչ էր անում նա Բաքւում, ես չգիտէի: Նա էլ տեղեակ չէր իմ գործերից էլմխիածնում:

Չեմ յիշում՝ ո՞ր թուականին, ամառուայ սկիզբը, Սարգիսը երեւաց էլմխիածնում: Չեմ կարողանում վերյիշել նոյնպէս՝ որի՞ հետ էր: Երկուսով եկան մօտս ճեմարան: Սարգիսի մէկ ձեռքի մատները կապուած էին սպիտակ թաշկինակով: Ամառուայ արձակուրդին ուրքով ճամբորդում էին հայկական գաւառներում: Եղել էին Ղազախ, Դիլիջանի շրջանը, Սեւան, Երեւան: Էլմխիածնից պիտի անցնէին Անի, Կարս, Ալեքսանդրապոլ: Սարգիսը հետը փշտով ունէր, մի փոքրիկ ատրճանակ, որը անզգոյշ գործածելիս, ճանապարհին, վիրաւորել էր ցուցամատը: Այնուհետեւ, մինչեւ մահ, այդ մատը մնաց կարճ:

Սարգիսը գոհ եւ ուրախ էր երեւում: Շատ տպաւորուած էր հայկական շրջաններից: Ցոյց տուի նրանց էլմխիածնի բոլոր հետաքրքրական վայրերն ու պատմական յուշարձանները: Մոքումս մնացել է նրա մի բացատրութիւնը. վանքի թանգարանը դիտելիս՝ նա ցոյց տալով թանկագին քարերով զարդարուած անօթներն ու խաչերը՝ ասաց.

— Այս ամէնով ինչքա՜ն գլուխներ կարելի էր պահել ժողովրդի համար:

Ժողովուրդը մեր բոլորիս հոգածութեան եւ սիրոյ առարկան էր այն օրերին, բայց ժողովուրդ բառի հասկացողութեան չուրջ արդէն կային սուր տարակարծութիւններ: Մեզ՝ Դաշնակցականներիս համար գլխէ ամբողջ հայութիւնն էր կամ նրա աշխատաւոր մասը, մանաւանդ, թրքահայութիւնը: Սոցիալ-Դեմոկրատների համար ժողովուրդը գերապանծացած արդիւնաբերական գործաւորութիւնն էր: Չեմ յիշում, ընկերային կամ կուսակցական հարցերի մասին որեւէ խօսակցութիւն ունեցա՞նք Սարգիսի հետ: Ցիշում եմ միայն, որ նա շատ

ARAM webaram.com

հետաքրքրուած էր հայկական շրջաններով ու հնութիւններով, շատ դոհ էր ճամբորդութիւնից, եւ երկուսս էլ ուրախ էինք նորից իրար հանդիպելուց:

Այնուհետեւ, մինչեւ 1908 թ. ես առիթ չեմ ունեցել տեսնուելու Սարգսի հետ: Լուր ունէի, որ նա լաւ սովորող աշակերտ էր գիմնազիայում եւ գործօն մասնակցութիւն ունէր Բազուի սոցիալ-դեմոկրատական կազմակերպութեան մէջ: Ինչ սահմաններում էր նրա մասնակցութիւնը, ի՞նչ գործ էր անում կամ ի՞նչ պաշտօն էր վարում, որքա՞ն էր նրա ազդեցութիւնը բանուորական շրջաններում կամ իր կուսակցութեան անդամների մէջ, չեմ կարող ասել:

Ամառուայ արձակուրդներին ես երբեմն վերադառնում էի Նոր-Նախիջեւան: Այցելում էի եւ Թոփխի դիւղը, ի հարկէ, եւ Սարգիսեանց ծնողների տունը: Մայրը կարօտով ու քնքշութեամբ էր խօսում զաւակի մասին: Հայրը՝ Լուկաչ աղան խօսում էր հպարտութեամբ: Նրա աչքին Սարգիսը արդէն նշանաւոր մարդ էր եւ աւելի մեծ մարդ դառնալու ճամբու վրայ էր: Գիւղացիները մօտ պարծենում էր իր տղայով, գիւղացիք նախանձում եւ մի քիչ էլ վախենում էին նրանից:

Վախենում էին, որովհետեւ Լուկաչ աղան արդէն լիովին արդարացրել էր հանրութեան աչքին ձիու գողի համբաւը: Նա հողագործական մեծ ձեռնարկներ չունէր, բայց, յայտնի չէ ինչ ճանապարհով, պատկառելի հարստութիւն էր դիզել եւ այսօրուայ բառով, տիպար կուլակ էր գիւղում: Շատ ծանօթ եւ բարեկամներ ունէր Թոփխից դուրս էլ, Ռոստովում եւ շրջակայ ռուսական գիւղերում:

Դոնի շրջանում երկրագործութիւնը եւ հաղորդակցութիւնը մեծ չափով կատարւում էին ձիերով: Հայ գիւղերում էլ ամէն գիւղացի մի քանի ձիու տէր էր: Ձիու կորուստը անդամալուծում էր գիւղացու տնտեսութիւնը: Ձին թանկագին հարստութիւն էր գիւղացու համար: Եւ ձիու գողութիւնը՝ մեծ աղէտ:

Առաւօտ արթնանում էր գիւղացին եւ տխուր զոնում էր պարապ. գողերը քշել-տարել են իր ձիերը: Ում դիմել: Կառավարութե՞ն — անօգուտ ժամավաճառութիւն: Ֆալչէի՞ . . . գիւղում կային մասնագէտներ, որոնք կարող էին օգնել գողերը գտնելու: Լուկաչ աղան դրանցից էր: Եւ խեղճ գիւղացին դիմում էր նրան.

— Լուկաչ աղա, ոտքդ պագնիմ, սապախտաւ տեղէս էլայ, ձիերս՝ չկան: Դուն դիտես, ինչ անես-չանես, ձիերս գտնես:

— Ծօ՛, գոմէշի գլուխ, գիշերը կնկանդ քով պառկելու տեղ՝

ARAM webaram.com

ձիերդ պէճէրէիր. ես ի՞նչ է՝ փալի՞ս իմ, քու ձիերուդ վրակեցո՞ւն իմ. դնա, ուրիշ տեղ փնտռէ կորուստդ, բարկանում էր Լուկաչ աղան՝ արդար ցասումով, որ այդպիսի բանի համար դիմում էին իրեն. ինքը ի՞նչ գործ ունէր ձիու գողութեան հետ...

— Լուկաչ աղա, աղաչում էր մարդը, գաւակներուս մեղքը՝ գիր, բան իմ արա, ես տակը չիմ մնար. դուն ալ տղի տէր իս:

Զգիտեմ «տղի տէր իս»ն էր պատճառը, թէ «տակը չիմ մնար»ը, Լուկաչ աղայի սիրտը կակղում էր:

— Էհ, կ'ասես համա, այդ չուներու բերանը օսկոռ պիտ ձգուի, ատոր կը դիմանա՞ս:

— Զդիմանամ նը, ի՞նչ պիտ անիմ, համաձայնում էր մարդը:

Ի վերջոյ, տեղի էր ունենում սակարկութիւնը եւ, «օսկոռ»ի մեծութիւնը որոշւում էր:

— Նայինք, ինչ կ'ըլլայ, սապախտաճ արի քովս, պէքիմ սրան կը դոնենք:

Ճաչորդ առաւօտ մարդը տանում էր «օսկոռ»ը եւ լսում Լուկաչ աղայի բանաձեւը.

— Իրիկուն կ'երթաս խապախի տէրան, չոռխախին մէկալ եոռոխը, օպային դիմաց, ոռշչայի մէջ կը դոնես ձիերդ...

Մարդը գնում էր ցոյց տրուած տեղը եւ դոնում էր ձիերը: Առում էին՝ Լուկաչ աղան ձիու գող էր. ի՛նչ անարդար մեղադրանք: Լուկաչ աղան օգնում էր միայն համապիտպայիներին՝ գողացուած ձիերը գտնելու...

Լուկաչ աղան, յաճախ, բարձրաձայն երազում էր.

— Սա մեր Սարգիսը զիմնազը կը վերջացնէ, արլաֆաք կը դառնայ Թոռոսովի մէջ, չէ բանը ան տեղը նայէ...

Սարգիսը փայլուն կերպով աւարտեց Բագուի զիմնազիան եւ գնաց Պետերբուրգի համալսարանը իրաւաբանութիւն ուսանելու: Ես ևս ուսանող էի նոյն համալսարանում:

Ես սենեկակից էի Համբարձում Տէրտէրեանի հետ, որ նոյն պէս համալսարանի իրաւաբանութեան ուսանող էր: Սարգիսը ամուսնացել էր Բագուում եւ ապրում էր կնոջ հետ: Մենք այլեւս որոշ կերպով տարբեր բանակների էինք պատկանում. Համբարձումն ու ես Պետերբուրգի դաշնակցական ուսանողական կազմակերպութեան անդամ էինք եւ ունէինք մեր չրջանակը: Սարգիսը սոցիալ-դեմոկրատ էր մի քանի ուրիշ ուսանողների հետ — Արտաշէս Կարինեան,

ARAM webaram.com

Խաչատրեան եւայլն: Որպէս հանդիսման ընդհանուր գեղին ունէինք մայրաքաղաքի հայ ուսանողական միութիւնը «Ժողով» անունով:

Կուսակցական տարակարծութիւններ ու վէճեր ունենում էինք, անշուշտ, բայց ընդհանուր առմամբ ապրում էինք համեբաչխ, կարելի է ասել նոյնիսկ՝ սիրով: «Ժողով»-ում տիրական էին դաշնակցականները, բայց սոցիալ-դեմոկրատներն էլ տեղ ունէին կոալիսիոն վարչութեան մէջ: Տեղական սուր հարցեր չունէինք մեզ բաժանող, կովկասեան հարցերը մինչեւ որ մեզ էին հասնում, արդէն մեղմացած կամ այժմէութիւնը կորցրած էին լինում: Ես չեմ յիշում մէկ հատիկ կարեւոր հարց, որի շուրջ լուրջ բախումներ տեղի ունեցած լինէին «Ժողով»-ում եւ նոյն իսկ ուրիշ հասարքոյթների մէջ: Գայլ եւ դառնուկ միասին էին արածում Արկադիայում, այն երանելի օրերին...

Մեր ազգականական կապից շատ քիչ բան էր մնացել Սարգսի հետ, բայց ընկերական յարաբերութիւնները, անհատական գեղնի վրայ, շարունակւում էին մնալ կենդանի: Սակայն, Սարգիսը աւելի մտերիմ էր Համբարձումի հետ, իբրեւ համագիւղացի ու մանկութեան ընկերներ, իբրեւ ռուսական գիմնազիայի ընթացասարոներ, թերեւս, նաեւ բնաւորութեամբ էլ աւելի մօտիկ մարդիկ:

Համբարձումի հետ մենք ապրում էինք կոմունալ տնտեսութեամբ: Այսօրուայ բառով՝ Համբարձումը մեր կոլխոզի վարիչն էր եւ ընդհանուր մատակարարը: Երբեմն վազ առաւօտեան, Սարգսի հետ գնում էր չուկայ ժամն մթերք ճարելու համար: Պէտք է խոստովանուել, որ, իբրեւ Թոփտիկի, երկուսն էլ, մեղմ ասած, բաւական խնայասէր էին...

Այն ձմեռ Պետերբուրգում քոլերա կար եւ պատուղները չափազանց ժան էին: Մենք օգտւում էինք այդ պատեհութիւնից մեր յաճախ խախտուող ելեւմուտքը հաւասարակշռելու համար:

Մի անգամ Համբարձումն ու Սարգիսը վազ առաւօտեան, գրեթէ դիշերով, գնացին կենտրոնական չուկայ եւ վերադարձան՝ բերելով մի մեծ արկղ խնձոր: Ես դեռ անկողնում էի, թէեւ արթուն: Դրին արկղը սենեակի մէջտեղը, ծալապատիկ նստան մօտը եւ սկսեցին բաժանել երկու մասի — կէսը Սարգսին ու կնոջը, միւս կէսը Համբարձումին եւ ինձ: Առնուազն մէկ ժամ տեւեց բաժանումը՝ աղմուկով, վէճով, կռիւով, փոխադարձ մեղադրանքներով, թէ՝ դու քեզ մեծ խնձոր առիր, ինձ փոքր տուիր... Վերջապէս, երկու մասի բաժանելուց յետոյ, վիճակ ձգեցին, թէ ո՞ր մասը ում է պատկանելու:

ARAM webaram.com

Սարգիսը իր բաժինը չալակեց ու գնաց: Համբարձումը մեր բաժնից փոխելու նշան ունեցող խնձորները մի կողմ դրեց անմիջապէս ուտելու համար, միւսները դեռեղեց իր պայուսակի մէջ, գոցեց եւ բանալին դրեց գրպանը: Ապա թղթի վրայ հաշիւ արաւ, քանի՞ խնձոր ունէինք, օրական քանի՞ հատ պիտի ուտէինք, քանի՞ օր պիտի տեւէր եւայլն... Զարմանալի չէ, որ վերջը ելեւմտական նախարար եղաւ:

Այնուհետեւ ամէն առաւօտ բաց էր անում պայուսակը, կոկում էր փոխելու նշան ունեցող խնձորները, հանում էր այդ օր ուտելու համար եւ միւսները նորից գոցում էր պայուսակի մէջ: Ճեւոյ իմացանք, որ համարեա նոյն ձեւով էլ Սարգիսն էր վարւում: Դուրս էր գալիս, որ ամէն օր կէս փտած խնձոր էինք ուտում խնայողութեան համար...

Սարգիսը օրինակելի ուսանող էր, օրէնսգիտութիւնը սովորում էր բարեխղճօրէն եւ քննութիւնները անցնում էր յաջողութեամբ, բայց չատ կարդացող չէր, մանաւանդ, գրական-գեղարուեստական հարցերի հետ գլուխ չունէր եւ տեսական հարցեր չատ չէր սիրում: Ձեմ կարծում, թէ Կարլ Մարքսի երկերն էլ լրիւ կարդացած լինէր, թէեւ մարքսեան տեսութեան քաջածանօթ էր: Իր հետաքրքրութիւնը աւելի գործնական հարցերի սահմանում էր. գործնական խելքով եւ ձեռներէցութեամբ օժտուած մարդ էր:

Այնուամենայնիւ, երեւում եւ խօսք էր առնում մեր ուսանողական գրական-գեղարուեստական կամ այլ կարգի հաւաքոյթներում, արտայայտւում էր եւ գրական ու գեղարուեստական խնդիրների մասին, թերեւս, աւելի չատ կնոջ դրդումով, քան սեփական ցանկութեամբ: Հասարակական հաւաքոյթներում սիրում էր ելոյթներ ունենալ. խելացի եւ պերճախօս, թէեւ ոչ խանդավառող հռետոր էր, բայց ունէր իր նախասիրած նիւթերը, որոնք հեռու էին տեսական կամ արուեստի ու գրականութեան վերաբերող հարցերից:

Համալսարանը աւարտելուց յետոյ Սարգիսը մնաց Պետերբուրգում, եկեղեցական հոգաբարձութեան քարտուղարի պաշտօնով: Ես մէկ էլ նրան հանդիպել եմ հայկական համադումարի օրերին, 1916 թ. Մայիսին, ուր նա, Արտ. Կարինեանի եւ ուրիշների հետ ներկայացնում էր սոցիալ-դեմոկրատական խմբակը:

Հ. Ճ. Դաշնակցութեան եւ սոցիալ-դեմոկրատների միջեւ բուռն պայքար կար այդ օրերին եւ համադումարում սուր բախում-

ARAM webaram.com

ներ էին տեղի ունենում, բայց դուրսը, մեր հանդիպումը Սարգսի հետ, անձնական դեռևս վրայ, այս անգամ էլ, սովորականին պէս, ջերմ էր, թէև նախկին մտերմութիւնից բան չէր մնացել: Մենք առնուում էինք, խօսում, քաղցրութեամբ վերյիշում էինք անցեալը, միասին նստում–ելնում, ուտում–խմում էինք, սակայն ժողովնեբում, յաճախ, բախումներ էինք ունենում:

Առհասարակ, որպէս բանավիճող Սարգիսը թէև բուռն, բայց վայելուչ էր, ոչ յօրինակ Վահան Տէրեանի, պիտէր յարգել հակառակորդի անձն ու խօսքը, բայց սրամիտ, անողոք քննադատող էր: Իր խօսքը յագեցած էր լինում փաստերով ու գործնական տրամաբանութեամբ եւ, հետեւաբար, կշիռ ունէր: Անձնապէս ես, ամէնից շատ վախենում էի Սարգսի քննադատութիւնից: Նա, կարծես պիտի էր այդ եւ աւելի անխնայ էր դառնում, երբ իր բառային դրդապատիրը իմ կողմն էր ձգձգում:

Ըստ էութեան, նրա արտայայտած մտքերը առանձին ինքնատրպութիւն չունէին. նոր, մարքսեան բարբառով նա, ինչպէս եւ միւս հայ սոցիալ–դեմոկրատները, կրկնում էին այն, ինչ որ վաղուց ի վեր ասել եւ ասում էին մեղուականները, նոր–դարականները, առհասարակ, պահպանողական ազգասէրները՝ անայլայլ հաւատարմութիւն ռուսական տէրութեան, հեռու կենալ Թրքահայ գործերից, ազգային ներքին կեանքում ինքնամփոփում եւայլն: Սոցիալ–դեմոկրատների բերած նորութիւնն էր՝ դասակարգային պայքար նաեւ հայ բուրժուազիայի դէմ եւ գործօն հաւատարմութիւն ռուսական յեղափոխութեան:

Պետերբուրգի համագումարը գործնական նշանակութիւն չունեցաւ, բայց որոշ չափով բիւրեղացրեց հասարակական մտքերը եւ աւելի սրեց կուսակցական հակամարտութիւնները: Այդ համագումարից յետոյ, ես այլեւս առիթ չունեցայ հանդիպելու Սարգսի հետ: Մեր փոխ–յարաբերութիւնը նախկինը չմնաց, թէև ես ուշադրութեամբ հետեւում էի նրա կեանքին ու գործունէութեան: Վստահ եմ, թէ նա էլ այդպէս էր անում: Մեր կեանքի ուղիները աւելի եւս հեռացան իրարից: Ես զնացի ազգային գծով, խոչ ու խոտոչներով, դէպի Հայաստանի անկախութիւն. Սարգիսը նետուեց բոլշեւիկեան յեղափոխութեան ալեկոծ ծովը՝ ռուսական նաւահանգիստ վերադարձնելու համար հայկական նաւը: Թուում է, թէ չատերի պէս նա էլ հիասթափութիւններ ունեցաւ եւ իրրեւ հայկական զգացումներով տոգորուած անհատ, զգաց, թէ սխալ է իր բռնած կեանքի ուղին,

ARAM webaram.com

բայց այլեւս ուշ էր. Ստալին–Բերիա արիւնռուչտ հրէշը նրա կեանքին էլ վերջ դրեց:

Մէկ անգամ էլ — վերջին անգամ — Սարդսի հետ մենք տեսնուեցինք տարիներ վերջը: Այս անգամ նա հայրենիքի տէր, իշխանաւոր, օրուայ մարդ էր, ես հայրենազուրկ, տարագիր, նախկին մարդ էի: Իմ վիշտն ու հոգեկան տառապանքը բնական էին: Բայց ակնյայտնի կերպով վիշտ ու տառապանք էին կարդացւում նաեւ նրա աչքերում: Ես պարտուած էի, նա՝ յաղթական, սակայն, յաղթողի տեսք չունէր նրա կեցուածքը: Դէմքը երկարել, նիհարել, օտարոտի ձեւ էր ստացել: Աչքերի նախկին փայլը կարծես մարել էր: կարծես կորել էր եւ նրա այնքան չեչտուած ինքնավստահութիւնը:

— Սարգիս, ի՞նչ է պատահել քեզ, հարցրի ես յուզումով: Դու փոխուել ես:

— Ոչինչ, կը խօսենք — կ'իմանաս...

Եւ մենք խօսեցինք: Ամբողջ գիշեր, մինչեւ լոյս: Ահ, եթէ ես կարողանայի հրապարակել մեր այդ գիշերուայ խօսակցութիւնը... եթէ կարողանայի եւ եթէ ինձ հաւատային...(*):

Այնուհետեւ ես Սարգիսի հետ չհանդիպեցի այս աշխարհում: Բայց կարծում եմ, որ միւս աշխարհում կը հանդիպենք, այլեւս ոչ իբրեւ հակառակորդներ, այլ որպէս գաղափարակիցներ...

Այժմ, երբ հանդարտ մտքով փորձում եմ տեսնել մեր անցած ուղին, քննել եւ հասկանալ դէպքերն ու դէմքերը, աւելի յստակ երեւում է ինձ սեւն ու սպիտակը մեր կեանքի ու գործի: Եւ համոզուած եմ, որ շատ հարցերում Սարգիսենք իրաւունք ունէին, աւելի շատ հարցերում էլ մենք իրաւունք ունէինք եւ այսօր էլ ունինք: Մեր տարակարծութիւնն ու պայքարը բնական էին, անխուսափելի եւ, եթէ ուզում էք, նոյնիսկ անհրաժեշտ: Պայքարի ձեւը միայն անբնական է, ոչ անխուսափելի եւ ոչ անհրաժեշտ: Բայց ձեւն էլ մարդուց էր կախուած, մարդու մտքից եւ հոգուց, անհատականութիւնից:

Սարգիսը մարդ էր: Բնութիւնը նրան ստեղծել էր լաւ, անշեղ տրամադրութեան մէջ, առանց յետին հաշիւների: Մարմնով՝ առոյգ, տեսքով՝ համակրելի, մտքով՝ սուր, հոգիով՝ ազնիւ —

(*) Մեր վերջին տեսակցութիւնը տեղի ունեցաւ Սարգսի նախաձեռնութեամբ Սովետ. Միութեան սահմանիներից դուրս: Ներկայ պայմաններում անկարելի է այդ մասին խօսել: Ես գրի եմ առել այդ տեսակցութիւնը «պատմութեան համար»:

ARAM webaram.com

փորձում եմ ասել՝ աղնուական, բարեկիրթ, ձեռներէց, եռանդուն, աշխատունակ, լուսամիտ, բարեկամութեան մէջ՝ հաւատարիմ, որպէս հակառակորդ՝ անխարդախ, հայրենասէր հայ, մաքուր եւ անկեղծ զգացումներով — կարելի է դեռ երկարել այս բնորոշումները: Նա, հաւանաբար, կարող էր ականաւոր դէմք դառնալ համառուսական չափանիշով, եթէ մնար Ռուսաստանում, բայց դերադասեց գործել Հայաստանում, որովհետեւ, ամէն բանից առաջ, իրեն զգում էր հայ՝ պարտաճանաչ հայութեան եւ Հայաստանի հանդէպ:

Անշուշտ, մեծ բարիք եղաւ, որ Կասեան – Ալիսի խելացնոր Ցեղկոմից յետոյ, իրրեւ ղեկավար, Հայաստան եկաւ Ալ. Մեսնիկեանը, բայց Մեսնիկեանն էլ, որոշ չափով, համակուած էր կուսակցական նախապաշարումներով, ներազանցապէս կուսակցական պայքարի մարդ էր:

Սարգիսը անպայման վեր էր նման նախապաշարումներից: Ես հանգիստ չունէ քաշեցի, երբ Հայաստանի վարչապետութեան աթոռը զբաւեց Սարգիս Սրապիոնեանը, որ Ռուսաստանում առել էր Լուկաշին անունը՝ հօր՝ Լուկաչ ազգի անունով: Դրանից առաջ արդէն, Հայաստանում, նա ցոյց էր տուել իր բացառիկ կարողութիւնը, իրրեւ պետական անհատութեան եւ ներքին վարչական գործերի ղեկավար: Իրրեւ կառավարութեան նախագահ, այժմ նրա առջեւ պիտի բացուէր գործունէութեան աւելի լայն ասպարէզ:

Հայաստանի պատմութիւնը, խորհրդային վարչաձեւի ներքեւ, դեռ մնում է անծանօթ ոչ միայն արտասահմանում, այլեւ բուն երկրում: Նա ներկայացւում է մեկնաբանւում է քմահաճօրէն, ըստ կամս, նայելով, թէ ի՞նչ այժ է օրուայ տէրը, ի՞նչ ուղեգծի է հետեւում նա, ի՞նչ հաշիւներով ու չահերով է առաջնորդւում: Եւ որովհետեւ օրուայ տէրերը եւ ուղեգծերը փոփոխական են, փոփոխական է եւ Սովետական Հայաստանի պատմութիւնը:

Բայց եւ այնպէս, Հայաստանի կեանքին ուշադրութեամբ հետեւողը չի կարող նկատած չլինել, որ համայնավար վարիչների շարժապատկերի արագութեամբ իրար յաջորդող շարքում Սրապիոնեան-Լուկաշինը ամէնէն երկար տեղ գրաւած եւ ամէնէն կարկառուն դէմքերից մէկն էր: Հայաստանը եւ հայ ժողովուրդը նրան պարտական են շատ բանով:

Լուկաշինը Հայաստան եկաւ գրեթէ միաժամանակ Ալ. Մեսնիկեանի հետ, եւ մինչ վերջինը բարձր քաղաքականութիւն էր վարում եւ ճառաբանում ու կուսակցական հաշիւներ էր մաքրում, Լու-

ARAM webaram.com

կաչինը ամբողջ էությամբ եւ իրեն յատուկ բացառիկ աշխատունակությամբ ու եռանդով նուիրուեց չինարար գործունէութեան, կարելի է ասել, պետական կեանքի եւ ժողովրդական տնտեսութեան բոլոր մարզերում: Առաւելապէս Լուկաշինի թափած ջանքերով, հակառակ բոլշեւիկեան հարթող ղլանի, Հայաստանը առաջաւ, քիչ–չատ, ազգային դիմագիծ: Առաջ բերենք մի քանի փաստեր Լուկաշինի անհատական դերի խորհրդահայ իրականութեան մէջ:

Առաջին Յեղկոմի առաջ բերած նիւթական եւ բարոյական աւերից յետոյ, Հայաստանի ներքին կեանքի ձեւակերպումն ու կայունացումը — այսպէս ասած՝ կոնսոլիտացիան վարչական եւ տնտեսական կացութեան — առաւելապէս Լուկաշինի գործն էր: Մեռանիկեանի, վերջը Յանջեանի կատարեալ համագործակցութեամբ՝ նա չարժման մէջ եւ գործի վրայ դրեց ոչ միայն երկրում մնացած մտաւորական եւ մասնագէտ ուժերը, այլեւ Հայաստան վերադարձրեց երկրից հեռացածների մէկ մասը, ինչպէս Ակադ. Թամանեանը, նկարիչ Կոջոյեանը, տարագիրներ Պարսկաստանից եւայլն:

Լուկաշինի նախաձեռնութեամբ, ծրագրով եւ անմիջական հսկողութեան ներքեւ, Հայաստանի զանազան մասերում, կատարուեցին լուրջ աշխատանքներ լքեալ կամ աւերուած գիւղերի վերաբնակեցման ու վերաշինութեան, հիմնուեցին նոր աւաններ ներգաղթողներից ու որբերից, ինչպէս Լուկաշէնը, հաստատուեցին նոր տնտեսական ձեռնարկներ, քաջալերուեց չէնքերի կառուցումը ճարտարապետական ազգային ոճով: Ազգային որոշ դունաւորում ու թափ ստացաւ նաեւ մշակութային կեանքը:

Լուկաշինի անմիջական ղեկավարութեան տակ տեղի ունեցաւ եւ Սուէտ. Հայաստանի առաջին մարզահամարը: Մարզահամարի գործնական մասի վարիչ գիւղատնտես Յ. Փիրալեանը անձամբ պատմել է ինձ, թէ ինչ անգնահատելի դեր է խաղացել այդ գործում Լուկաշինը:

Լուկաշինը շատ աշխատանք թափեց Հայաստանի ինքնութիւնն ու ինքնուրոյնութիւնը ապահովելու եւ պաշտպանելու համար Անդրկովկասեան Դաշնակցութեան մէջ, մանաւանդ, ձերբազատուելու ճիգով վրացական գերակայութիւնից: Լուկաշինն էր Երեւան–Աղստաֆա երկաթուղու ծրագրի ոգին: Նա էր, որ հիմք դրեց սեփական շաքարի արդիւնաբերութեան՝ ազատելով Հայաստանը վրացական գործարանների չահագործումից: Եւ նման քայլերի պատճառով արժանացաւ վրացի Բերիայի զայրոյթին: Նա ոչ առաջինն էր, ոչ էլ

ARAM webaram.com

վերջինը. Հայաստանի պատմութեան խորհրդային շրջանի երեք մեծագոյն դէմքերը — Մեսրոպ Մեսրոպեան, Յովհաննէս Յովհաննիսեան եւ Սարգիս Սրապիոնեան — գոհերը եղան բերիականութեան:

Մեսրոպ Մեսրոպեանի եւ Յովհաննէս Յովհաննիսեանի մահուան պայմանները, ընդհանուր առմամբ, յայտնի են: Իո՞նչ պայմաններու մէջ մեռաւ Լուկաշինը, ո՞ւր, ե՞րբ, որի՞ ձեռքով, ինչպէ՞ս, ոչինչ յայտնի չէ: Նոյնիսկ գերեզմանի տեղը իմացող չկայ, եթէ, առհասարակ, Լուկաշինի գերեզման գոյութիւն ունի երկրագունդի մի անկիւնում:

Ինչ որ ատոյգ գիտենք՝ այն է, որ Յովհաննիսեանի սպանութիւնից յետոյ, Լուկաշինն էլ չնորհազուրկ եղաւ եւ աքսորուեց Ռուսաստան, իբր թէ, տնտեսական ինչ որ պաշտօնով: Այնուհետեւ ձերբակալուեց եւ անյայտացաւ հրապարակից: Ասում են, թէ ուղարկուել է Թիֆլիսի բանտը եւ այնտեղ գնդակահարուել: Ասում են, թէ մեռել է կամ սպանուել Երեւանի բանտում: Ասում են, թէ հայրը, ապաբախտ Լուկաշ աղան, ապաչել է գէթ որդու դիակը ցոյց տալ իրեն, բայց ի զուր... Շատ բան են ասում, սակայն, ոչ ոք ոչինչ չգիտէ ատոյգ: Ամէնքը գիտեն միայն, որ Սարգիս Սրապիոնեան–Լուկաշինը, Սովետ Հայաստանի մեծագոյն դէմքերից մէկը, այլեւս գոյութիւն չունի:

Գոնէ մի գերեզմանաքար դնէին վրան, որի վրայ յետնորդները կարդային.— Աստ հանգչի Սովետ. Հայաստանի մինիստրների խորհրդի նախագահ Սարգիս Սրապիոնեան–Լուկաշին...:

1955, Օգոստոս 15
Բուա–դը–Բուլոճ, Լիբանան

ՎԵՐՋ

ARAM webaram.com

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	Էջ
Հեղինակի կողմից	5
Թիֆլիսում 1914ին	9
Կամաւորական հարցը	24
Կամաւորական խումբեր	30
Ցարը Թիֆլիսում	38
Էնվէրի արկածախնդրութիւնը	45
1915 սեւ թուականը	58
Արարատեան ջոկատ	67
Վանում	80
Կամաւորների հետ	88
Փլուզում	95
1916 թուականը	108
118րդ պահեստի գումարտակում զինուոր	123
Կովկասը յեղափոխութեան նախօրեակին	136
Յեղափոխութիւն Ռուսաստանում	149
ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ	
Խորհրդաւոր պարտիզպանը	158
Մրջիւնն ու ճպուռը	169
Եզիդիների եւ պոչի մասին	176
Խէչոյի գերեզմանը Իշխանի կողմին	183
Փրոֆը	190
Բանուոր Ռաշիդ	200
Վազգէն Շուշանեան	207
Իմ բարեկամ Մանչիկը	223
Մի դրուագ Հայրիկի կեանքից	229
Առաջին տպաւորութիւններս Հայրիկից	238
Լուգանսկի առաքելութիւնը	252
Սարգիս Սրապիոնեան – Լուկաշին	260

ARAM webaram.com

ՑԱՆԿ ՆԿԱՐՆԵՐՈՒ

	էջ
Հ. Յ. Դ. Ցրդ Ընդհ. Ժողովը Կաբինում	10
Համբարձում Մելիքեան	12
Սուբէն Մելիքեան	13
Նար–Դոս	14
Աբշակ Ջամալեան	15
Ալեքսանդր Խատիսեան	16
Յովհաննէս Քաջազնունի	20
Նիկոլ Դուման	22
Բժ. Յ. Ջաւրեան	25
Աւ. Սահակեան	26
Մեպուհ	31
Հայ Կամաւորական Խումբերի Կարգադրիչ Մարմին	32
Արմէն Գարօ	35
Վարդան, Քեռի, Համազասպ	49
Մ. Վրացեան եւ Դրօ	54
Ներսէս Արք. Մելիք–Թանղեան	56
Կոմս	59
Ռուբէն	63
Անդրանիկ	68
Ալեքսանդրապոլ	69
Երեւանի Կամաւորական Շտաբը	70
Վարդան	72
Դրօ	73
Գէորգ Ե. եւ Էջմիածնի Միաբանները	75
Դաշնակցական Մէջօ	76
Յովակիմ Դաբբինեան	78
Վարոս Բաբայեան	81
Արամ Մանուկեան	84
Լեւոն Շաղոյեան	89
Նարեկ գիւղը եւ Վանքը	90

ARAM webaram.com

Շահխաթունի 96
Տիգրան Դէօյեանց 97
Գեբասիմ Բալայեան 104
Իշխան Ց. Արղուբեան 105
Սմբատ 107
Մ. Պապաջանեան 111
Քրիստափորի կիսանդրին 113
Քեռի 114
Ռուբէն Բերբերեան 115
Ց. Ց. Կոբոյեան 121
Ռոստոմ, կինը եւ աղջիկը 151
Ռ. Խանդատ, Նազարբէգ, Մարօ, Կաֆեան 165
Ա. Նազարբէգ իր զաւկին հետ 166
Սինջարի Եզիդիների ցեղապետը 178
Եզիդիների ցեղապետը եւ երեւելիները 181
Հեղինէ Մեծպայեան 184
Վազգէն Շուշանեան 208
Նշան Կակոսեան 209
Խրիմեան Հայրիկ 231
Սարգիս Սրապիոնեան – Լուկաչին 261

ARAM webaram.com

ARAM webaram.com

Տպաքանակ՝ 2000

Տպագրութիւնը աւարտած՝ 31 Օգոստ. 1963

Տպարան ՄՇԱԿ

կազմատուն ԼՈՅՍ

ARAM webaram.com

ARAM webaram.com

Կեդրոնատեղի՝

Librairie «HAMAZKAINE»
10, Rué Hussein Beyhoum
Beyrouth Liban

ARAM webaram.com